









Կ Ո Մ Ս

Մ Օ Ն Թ Է - Գ Ր Ի Ս Թ Ո Յ



ԿՈՄՍ

ՄՕՆՔԷ-ՔՐԻՍՔՈՅ



ՅԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՄԱՅԷ



ԹԱՐԳՄԸՆԵՑ.

ՏԻԳՐԱՆ ՔԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԿԱՆ



Մասն երրորդ




A 11 / 55555



ՋՄԻԲՈՒԵԱ

ՏԳՆԳՐԱՒԹԻՒՆ ՏԷՏԷԿԱՆ

1866







Կ Ո Մ Ս

# ՄՕՆՔԷ... ԲՐԻՍՔՈՅ

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳՂՈՐԲ ԱԲԱԶԻՍ

ՆԱԽԱՃԱԹԸ



**Ի**նչպէս որ արդէն ըսինք՝ կոմսը սակաւակեր էր, Ալլաէր վախնալով որ դուցէ առջի բերան Բարիղեան կեանքը ճանապարհորդին տհաճելի երևի ամենէն նիւթական բայց միանգամայն ամենէն կարևոր այս կէտին վրայօք,

— Սիրելիդ իմ կոմս, ըսաւ, կը վախնամ որ մեր Բարիղի կերակուրները ձեր Հռոմի կերակուրներուն չափ հաճելի չերևին ձեզ: Պէտք էի հարցընել և ձեր ասորժանաց համեմատ քանի մը պնակ կերակուր պատրաստել տալ:

— Եթէ զիս լաւելի աղէկ ճանչցած ըլլայիք, պարոն, պատասխանեց կոմսը ժպտելով, դրեթէ նուաստացուցիչ այսպիսի հոգ մը պիտի չընէիք ինծի պէս ճանապարհորդի մը, որ հետզհետէ Իտալիոյ, Տաճկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի տարբեր կերակուրներուն սովորած եմ: Ինծի պէս աշխարհաշրջիկ անձ մը մասնաւոր կերակուրներ չկրնար ու-

տել : Ամեն բան և ամեն տեղ , սակայն քիչ կ'ուտեմ . և այսօր որ իմ սակաւակերութեանս համար կը մեղադրէք զիս , ախորժակ ունեցած օրս է , քանզի երէկ առաւօտէն 'ի վեր ամենեին բան մը կերած չեմ :

— Ինչպէս , երէկ առաւօտէն 'ի վեր , պոռային կոչնականները , երէկ առաւօտէն 'ի վեր բան մը կերած չէք :

— Ո՛չ , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ . Նիւի շրջականերէն տեղեկութիւն մը ստանալու համար՝ պարտաւորեցայ ճամբայէս շեղիլ , և քիչ մը ուշ մնալուս չուզեցի կենալ :

— Ուրեմն կառքին մէջ կերաք , հարցուց Մորսէրֆ :

— Ոչ , այլ քնացայ միայն , ինչպէս կ'ընեմ ամեն անգամ որ կը տաղտկանամ և զբօսնուլ չեմ ուզեր , կ'անօթե՛նամ և ուտելու ախորժակ չեմ ունենար :

— Ուրեմն քունին կը հրամայէք դուք , պարոն , հարցուց Մորէլ :

— Գրեթէ :

— Եւ այս բանիս համար դեղ մը ունիք :

— Այո՛ , անվրիպելի դեղ մը :

— Ահա այդ դեղը մեր Ափրիկեցի զօրաց համար խիստ կարեւոր է . քանզի շատ անգամ ուտելու կերակուր չենք ունենար և քիչ անգամ խմելու ջուր կը գտնենք :

— Այո՛ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . դժբաղդաբար այն դեղը ինձի պէս տարօրինակ կեանք մը վարող մարդու մը համար ընտիր ըլլալով , կրնայ վտանգաւոր ըլլալ բանակի մը համար , որ պիտի չկրնայ պէտք եղած ժամանակը արթննալ :

— Կրնա՞նք այդ դեղին ի՞նչ ըլլալը զխտնալ , հարցուց Տրպրէ :

— Ո՛հ , այո՛ , ինչո՞ւ չէ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , ես գաղտնիք չեմ պահեր , այն դեղը խառնուրդ մի է յազնիւ աբիոնի , որուն անարատը գտնելու համար անձամբ Գանթոն գացած եմ , և խիստ ընտիր մանրագորի , որ Արեւելք կը գտնուի , այսինքն Տիգրիսի և Եփրատայ մէջ տեղը . հաւասար քանակութեամբ այս երկու դեղերը իրարու հետ խառնելով , դե-

դաճատեր կը շինուին, հարկ եղած ատենը կ'առնուին, և տասը վայրկեան ետքը ազդեցութիւնը կ'ըզզայ մարդ։ Հարցուցէք Պ. Ֆրանզ տ'Էբինէ սեպուհին, կարծեմ օր մը անոր համը նայեցաւ։

— Այո՛, սլատասխանեց Մորսէրֆ, այդ մանրազորին համար Ֆրանզ քանի մը խօսք ըսաւ ինձ, և որուն վրայ իւր մտաց մէջ խիստ քաղցր յիշատակ մը մնացեր էր։

— Ուրեմն, ըսաւ Պոշան՝ որ իբր խմբագիր չէր ուզեր հաւատալ այն խօսքերուն, այդ դեղաճատերը միշտ վրանիդ կը կրէք։

— Միշտ, սլատասխանեց Մօնթէ-Քրիսթօ։

— Արդեօք անքաղաքավարութիւն մը կրնայ ըլլալ եթէ այդ թանկադին դեղաճատերը տեսնել ուզենք, շարունակեց Պոշան՝ օտարականին ստախօսութիւնը բռնել յուսալով։

— Ոչ, սլարոն —, սլատասխանեց կոմսը և իւր ծոցէն միասլաղաղ զմրուխտէ փորուած հրաշագեղ աման մը հանեց, որուն բերանը ոսկի սլտուտակով մը կը գոցուէր։ Այս սլտուտակը բանալով՝ կանաչ դոյնով և ոլոռի մեծութեամբ գնտակ մը դուրս ելաւ, որ սաստիկ և բարկ հոտմը ունէր, ամանին մէջ շորս կամ հինգ հատ մը ևս կային, և երկոտասնեակ մը կրնային սլարունակել։

Սեղանակիցները ամանը ձեռքէ ձեռք անցընելով սեղանին բոլորտիքը դարձուցին՝ աւելի այն դեղեցիկ զմրուխտը քննելու քանթէ մէջի դեղաճատերը տեսնելու կամ հոտոտելու համար։

— Եւ ձեր խոհարարը կը շինէ ձեզ այս դեղերը, հարցուց Պոշան։

— Ո՛չ, սլարոն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, իմ ճշմարիտ զուարճութիւններս անարժան ձեռքերու չեմ յանձներ. ես բաւական քաջ քիմիագէտ եմ, և իմ ձեռօքս դեղաճատերս կը շինեմ։

— Խիստ հիանալի զմրուխտ մ'է այս, ըսաւ Շաթօ-Ռընօ և երբէք այս մեծութեամբ տեսած չէի, թէ և մայրս ընտանեկան խիստ երեւելի զոհարներ ունի։

— Ասոր նման երեք հատ ունէի, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, մէկը արևելեան կայսեր տուի, որ իւր սուրին վրայ հաղցընել տուաւ, միւսը մեր սրբազան պապին, որ իւր խոյրին վրայ զետեղել տուաւ՝ զրեթէ անոր նման, բայց ոչ այնչափ դեղեցիկ զմրուխտի մը գիմացը, զոր նաբուլէոն կայսրը Պիոս Է իւր նախորդին տուեր էր. երրորդը ինձ պահեցի և մէջը փորել տուի, որով թէև իւր արժողութեան կէսը կորսնցուց, բայց ուզած գործածութեանս խիստ յարմար եկաւ — :

Իւրաքանչիւր ոք զարմացմամբ Մօնթէ-Քրիսթոյի երեսը կը նայէր. վասն զի այնչափ պարզութեամբ կը խօսէր, որով յայտնի կը ցուցընէր թէ կամ ճշմարիտ կը խօսէր և կամ խենթ էր. սակայն ձեռքը բռնած զմրուխտը բնականաբար զինքը դէպ 'ի առաջին ենթադրութիւնը կը տանէր :

— Եւ այն երկու վեհապետները ձեր շքեղ նուէրին փոխարէն ինչ տուին ձեզ, հարցուց Տրպրէ :

— Վայսրը կնոջ մը ազատութիւնը շնորհեց, պատասխանեց կոմսը, և սրբազան պապը՝ մարդու մը կեանքը : Արով կենացս մէջ մէկ անդամ դահի աստիճաններուն վրայ ծնած մարդու մը զօրութիւնն ունեցայ :

— Բէբբինօն էր ազատածնիդ, այնպէս չէ, ըսաւ Մորսէրֆ :

— Գուցէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով :

— Պարոն, չէք կրնար երևակայել թէ որչափ զուարճութիւն կ'ըզգամ ձեր այդպէս խօսիլը լսելով, ըսաւ Մորսէրֆ : Ջձեղ իմ բարեկամացս իբր դիւցազն, իբր Հուր և Քի Քիշէրնէրուն մէկ դիւթիւնը կամ միջին դարուն կախարդը ներկայացուցի. բայց Բարիզեանները նորանշան իրաց վրայ այնչափ դժուարահաւատ կ'երևին, որ անվիճելի ճշմարտութիւնները երևակայութեան մտահաճոյքը կը կարծեն՝ երբ այս ճշմարտութիւնները իրենց հանապազօրեայ կենաց ամեն հանդամանաց չհամապատասխանեն : Օրինակի համար, Թօքի-Գլըպի յապաղեալ անդամի մը ծառուղիի մը վրայ բռնուին ու

կողոպտուիլը, Սէն-Տընի կամ Սէն-Ժէրմէն փողոցը չորս հոյիի սպաննուիլը, Թանքլի ծառուղւոյն սրճարանի մը, կամ Ժիւլիէնի աղբիւրներուն մէջ տասը, տասն ու հինգ, կամ քսան դողերու բռնուիլը ամեն օր Պոշանը կը տսլագրէ և Տըպրէն կը կարդայ. այսու ամենայնիւ չեն ուզեր հաւատալ Մարաննի, Հոռմի դաշտերուն կամ Բոնթէնի ճահիճներուն աւազակաց դոյութեանը: Ուստի կ'աղաչեմ, սլարոն կոմս, դուք ըսէք այս սլարոններուն որ ես աւազակներու ձեռքը ինկայ, և առանց ձեր մարդասէր բարեխօսութեանը, հաւանականարար այսօր Ս. Սեպտասթիանոյի ստորերկրեայ գէրեղմանատան մէջ յաւիտենական յարութեան պիտի քաանէի՝ փոխանակ այս Հէլտեր փողոցի փոքրիկ անարժան տանս մէջ անոնց ճաշ մը տալ կարենալու:

— Բայց չխոստացա՞ք որ այս փոքրիկ ծառայութեանս խօսքը երբէք պիտի չընէք:

— Համարեցէք թէ ուրիշի ըրիք այն ծառայութիւնը և ոչ ինձ, սլարոն կոմս, ըսաւ Սըպէր, և դան ինծի հետ կը շըփոթէք: Խօսեցէք, կ'աղաչեմ, ըստ որում եթէ այն պատմութիւնը ընելու հաճիք, դուցէ ոչ միայն քիչ մը դիտցածներս, այլ և չդիտցածներէս շատ բան պիտի պատմէք:

— Բայց կարծեմ թէ, ըսաւ կոմսը ժպտելով, դուք այն դործին մէջ բաւական մեծ խաղ մը խաղալնուդ համար պատահածները ինծի չափ դիտնալու էք:

— Ես իմ դիտցածներս կ'ըսեմ, ըսաւ Մորսէրֆ, բայց կը խոստանա՞ք ինձ որ չդիտցածներս ալ դուք ըսէք:

— Իրաւացի է այդ պահանջումը, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ:

— Ուրեմն մտիկ ըրէք, կրկնեց Մորսէրֆ, թէ և ընելու պատմութիւնս անձնասիրութեանս պիտի դպչի. երեք օրէ՛ի վեր դիմակաւորի մը սիրահարութեանց ենթակայն եղած էի, զոր Թուլլիայի կամ Բորէայի ընտանիքէն կը կարծէի, քանի որ սլարդասէս դեղջիուհւոյ մը սիրահարութեանց ենթակայն ևեղեր եմ: Բոլոր դիտցածս այս է որ ապուշի մը պէս խաբ

ուեցայ, և գեղջկուհւոյն տեղը՝ անմօրուք և բարակ մէջքով տասն ու հինգ կամ տասն ու վեց տարեկան ծաղկահաս աւագակ մը ելաւ առջևս, որուն անբիծ ուսին վրայ համբոյր մը զեանդելու համարձակութիւն առած միջոցիս՝ իւր ատրճանակը կոկորդիս բռնեց և իւր եօթը կամ ութ ընկերներուն օգնութեամբը զիս Սան-Սեպասթիանոյի դամբարանները տարաւ, ուր խիստ դիտուն աւագակապետ մը տեսայ, որ Ասարոս Յիշատակարանները կը կարդար, և իւր ընթերցումը ընդմիջելու հաճելով՝ ինձ դարձաւ ըսելու որ եթէ հետեւեալ առտու ժամը վեցին չորս հազար թալեռ իւր քսակին չյանձնեմ, ժամը վեցը քառորդ անցած՝ ապրելէ պիտի դադրիմ։ Նամակը կորսուած չէ, այլ իմ ստորագրութեամբս և Ղուիճի Ղանբային յետին գրութեամբը Քրանզին քովը պահուած է։ Եթէ տարակուսիք, Քրանզին կը դրեմ, ու ստորագրութեանց վաւերականութիւնը հաստատել կու տամ։ Ահա բոլոր դիտցածս այս է։ Հիմա չդիտցածս ալ այն է, պարոն կոմս, թէ ինչպէս կարելի է որ Հռոմի աւագակները ձեզմէ այնչափ կ'ակնածեն, որոնք ամենեւին մէկուն ակնածութիւն ընել չեն դիտեր։ Ստուգիւ Քրանզ և ես մեծ զարմանքի մէջ մնացինք։

— Զարմանալու հարկ չկայ, պարոն, պատասխանեց կոմսը, տարիէ աւելի ժամանակէ՛ ՚ի վեր Ղուիճի Ղանբան կը ճանչնայի։ Իւր պատանութեան մէջ, երբ տակաւին հովիւ մ'էր, օր մը ճամբաս ցուցընելուն համար՝ իրեն չեմ յիշեր ինչ ոսկի մը տուի. ան ալ ինձ պարտաւոր շինալու համար, անոր փոխարէն՝ իւր ձեռօքը քանդակեալ դաշոյն մը տուաւ ինձ, զոր զինուցս սրահին մէջ տեսած պիտի ըլլաք։ Թամանակէ մը ետքը՝ կամ այս փոխադարձ փոքր նուէրները մոռնալուն, որ մեր մէջը բարեկամութեան կապ մը պիտի ըլլար, և կամ զիս շճանչնալուն համար՝ զիս բռնելու փորձ փորձեց. բայց ընդ հակառակն՝ իւր երկոտասնեակի շափ մարդերովը ես զան բռնեցի։ Արնայի Հռոմի ոստիկանութեան յանձնել, որ այսպիսի պարագաներու մէջ դատապարտութեան վճիռը տալու չյապաղիր, և ՚ի շնորհս անոր այս անգամ կրնար ա-

ւելի արտորալ, այսու ամենայնիւ առանց ֆեսաս մը հասցընելու՝ զինքը և իւր ընկերները ազատ թողուցի:

— Այն դաշամբ որ ուրիշ անգամ նոյն յանցանքը չգործեն, ըսաւ խմբադիրը ծիծաղելով, ուրախութեամբ կը տեսնեմ որ իրենց խօսքը ճշդիւ բռներ են:

— Ո՛չ, պարոն, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, միայն այն դաշամբ որ թէ զիս և թէ իմիններս պիտի յարգեն միշտ: Գուցէ այս ըսածս տարօրինակ երևի ձեզ, ով ընկերասէր, յառաջադիմասէր և մարդասէր պարոններ, բայց դիտցէք որ ես նմանիս հոգը չեմ տանիր, չեմ ուզեր պաշտպանել այն ընկերութիւնը, որ զիս չպաշտպաներ և դուցէ դիտաւորաբար ֆեսսելու համար ինձ կ'ընկերանայ. թրտախ մէջէն անոնց յարդը ջնջելովս և անոնց դէմ չէզոքութիւն պահելովս կը պարտաւորեմ զանոնք որ փոխարէնն ինձ ընեն:

— Ահա քաջասիրտ մարդու մը բերանէն եսութեան վրայ օրինաւոր և տմարդի կերպով խօսուելը առաջին անգամ կը լսեմ, կեցցես, պարոն կոմս:

— Գոնէ համարձակ կը խօսի, ըսաւ Մորէլ, բայց ապահով եմ որ պարոն կոմսը զղջացած չէ այնպիսի բացարձակ կերպով մեզ ցուցուցած իւր սկզբանցը մէջ անգամ մը սխալելուն համար:

— Ի՞նչպէս սխալեցայ սկզբանցս մէջ, պարոն, հարցուց Մօնթէ-Քրիսթօ, որ չէր կրնար ինքզինքը զսպել Մաքսիմիլիէնի երեսը նայելու այնպիսի ուշադրութեամբ մը, որ անվեհեր երիտասարդը կոմսին այս յստակ և ակնդէտ նայուածքներուն դէմ արդէն երկու կամ երեք անգամ իւր աչքը խոնարհեցընելու պարտաւորեր էր:

— Ինձ այնպէս կ'երևի, կրկնեց Մորէլ, որ Պ. Մորէլ օէրֆը ազատելով, զոր չէիք ճանչնար, ձեր նմանին և մարդկային ընկերութեան ծառայութիւն մը մատուցիք:

— Որուն ամենէն ընտիր զարդը կը կազմէ, ըսաւ ծանրութեամբ Պոշան՝ Շամբանի գինիի բաժակը՝ ի մի ու մի պարպելով:

— Պարոն կոմս , ըսաւ Մորսէրֆ , դուք որ ամենէն երևելի բանադատներէն մէկն էք , ահա այս խօսքին մէջ բընուեցաք . և հիմա յայտնի պիտի ապացուցանենք ձեզ որ դուք ինքնասէր չըլլալնէդ զատ՝ ընդ հակառակն մարդասէր իսկ էք : Դուք ինքզինքնիդ Արևելեան , Մալայեան , Հնդիկ , Չինացի և Ասորեանի կը կոչէք . դերդաստանական անուամբ Մօնթէ-Քրիսթօ , և մկրտութեան անուամբ Սէնպաստնաւաստի կ'անուանէք զձեզ , և ահա ոտքերնիդ Բարիզ կոխած առաջին օրէն մեր այլակերպոն Բարիզեաններուն ամենէն մեծ ձիրքերը և ամենէն մեծ պակասութիւնները բնազդամբ ունիք , այսինքն ձեր չունեցած մոլութեանց տէր կ'ըլլաք և ձեր ունեցած առաքինութիւնները կը պահէք :

— Սիրելիդ իմ դերակոմս , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , բոլոր ըսածներուս և ըրածներուս մէջ՝ ձեր և այս պարոններուն կողմէն ինձ եղած դովեստից արժանի բան մը չեմ տեսներ : Դուք անծանօթ չէիք ինձ , ըստ որում կը ճանչնայի զձեզ , ըստ որում ձեզ երկու սենեակ տուեր էի , ըստ որում իմ կառքերէս մէկը ձեզ թողուցած էի , ըստ որում Գորսօ վարդոցէն դիմակաւորներուն երթեկութիւնը միատեղ տեսանք , վերջապէս ըստ որում տէլ Բորբոլօ հրապարակին վրայ մի և նոյն պատուհանէն ականատես եղանք այն սպանման հանդէսին , որուն ազդեցութենէն քիչ մնաց պիտի հիւանդանայիք : Արդ՝ կը հարցընեմ բոլոր այս պարոններուն , միթէ կրնայի իմ հիւրս՝ ինչպէս որ կ'ըսէք՝ այն սոսկալի աւաղակներուն ձեռքը թողուլ : Ասկէ զատ՝ ինչպէս որ գիտէք , զձեզ ազատելով՝ դադարնի խորհուրդ մը ունէի , որ էր ձեր միջոցաւ կարենամ Գաղղիա պարտելու եկած ժամանակս Բարիզի ակումբները մտել : Ի սկզբան այս դիտաւորութիւնս անորոշ և անցաւոր խորհուրդ մը կարծեցիք , բայց այսօր յայտնի կը տեսնէք որ ստոյգ իրողութիւն մ'է , և կը յուսամ որ խօսքերնիդ պիտի պատուէք :

— Այո , ըսաւ Մորսէրֆ , բայց դուք որ հրաշաղեղ վայրերու , զարմանալի դէպքերու և մտացածին հորիզոններու



սովորած էք, կը վախճամ որ մեր երկիրը ձեզ հաճելի չե-  
րեւի, սիրելիդ իմ կոմս, ձեր դիպուածալի կենաց սովորական  
եղած վիպասանական դէպքերէն և ոչ մէկը պիտի տեսնէք մեր  
երկրին մէջ: Մեր Քիմսպորասոն՝ Մօնմարթրն է, մեր Հիմա-  
լայան՝ Ալալէրիէն լեռը, մեր ընդարձակ Անասպատը՝ Արը-  
նէլի դաշար, որուն մէջ թէև Արդէղեան հորեր բացուած են  
կարաւաններուն ջուր մատակարարելու համար: Մենք ալ դո-  
ղեր ունինք, սրոնք բազմաթիւ իսկ են, թէև ըսուածին  
չափ չկայ, բայց այս գողերը ամենէն փոքր լրտեսը ինչպէս  
նաև ամենէն մեծ իշխանը կը սոսկացընեն. վերջապէս Գաղ-  
ղիա այնպիսի ազատ երկիր մը և Բարիդ այնչափ շատ քաղա-  
քակրթեալ քաղաք մ' է, որ մեր ութսուն և հինգ նահան-  
գաց մէջ փնտռելով՝ (ութսուն և հինգ նահանգաց կ'ըսեմ,  
ըստ որում Քորսիան մէջը չեմ դներ,) ամենեւին լեռ մը պիտի  
չգտնէք, որուն վրայ հեռագիր մը չըլլայ, և խիստ փոքր  
քարայր մը՝ որչափ ալ մուծ ըլլայ, որուն մէջ ոստիկանու-  
թեան պաշտօնակալը կազի լոյս մը դրած չըլլայ: Ուստի մի-  
այն մէկ ծառայութիւն կրնամ մատուցանել ձեզ, սիրելիդ իմ  
կոմս, և որուն համար միշտ պատրաստ պիտի ըլլամ, այն է՝  
իմ կամ բարեկամացս միջոցաւ զձեզ ամեն տեղ ներկայա-  
ցընել, թէև այս բանիս համար ամենեւին մէկու պէտք չունիք.  
քանզի ձեր անունովը, հարստութեամբը և խելքովը (Մօն-  
թէ-Քրիսթօ հենդնական թեթև ժպիտով մը խոնարհութիւն  
մը ըրաւ) ինքնին ամեն տեղ կը ներկայացուիք և ամեն տեղ  
աղէկ ընդունելութիւն կրնաք դանել, ուստի իրօք միայն մէկ  
բանի մէջ կրնամ օգտակար ըլլալ ձեզ, եթէ բարիզեան կե-  
նաց սովորած ըլլալովս, կամ բարեկեցութեան փորձառու-  
թեամբս և կամ մեր շուկաները ճանչնալովս կրնամ ձեզ ծա-  
ռայութիւն մը ընել, ձեզի համար յարմար տուն մը գըտ-  
նելու յանձն կ'առնում: Չեմ համարձակիր առաջարկել ձեզ  
որ բնակակից ըլլաք ինծի հետ, ինչպէս որ ես Հռոմի մէջ  
ձեզի հետ եղայ, ես որ եսութիւնը չեմ սիրեր, բայց սա-  
կայն չափազանցութեամբ ունիմ. ըստ որում իմ տանս

մէջ ինձմէ զատ մէկուն ստուերը չերեիր, բայց 'ի երբ այդ ստուերը կնոջ մը ըլլայ:

— Ամուսնական զգուշութիւն մ'է այդ, ըսաւ կոմսը, իրօք, պարոն, առաջարկեալ ամուսնութեան մը վրայ խօսեցաք ինձ չոմ, միթէ ձեր մօտակայ երջանկութեանը խնդակից պիտի ըլլամ:

— Միայն խօսք մը կայ, պարոն կոմս:

— Խօսքը կրնայ արդեամբ կատարուիլ, կրկնեց Տըպլէ:

— Հայրս մեծ փափագ ունի զայն կատարելու, և կը յուսամ թէ քիչ ժամանակէն եթէ ոչ կ'ինս՝ դոնէ նշանածս՝ օրիորդ Էօժէնի Տանկլարը ձեզ ներկայացընեմ:

— Էօժէնի Տանկլար ըսիք, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ. կեցիք կ'աղաչեմ, հայրը սեպուհ Տանկլարը չէ:

— Այո, պատասխանեց Մորսէրֆ. բայց իւր ասպետութեան տիտղոսը մօտ ժամանակներս ստացած է:

— Հոգ չէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, բաւական է որ Տէրութեան այնպիսի ծառայութիւններ մատուցած ըլլայ, որոնց համար այն տիտղոսին արժանանայ:

— Խիստ մեծ ծառայութիւններ ըրաւ, ըսաւ Պոշան. թէև ազատասիրտ անձ մ'է, սակայն 1829ին փոխառութիւն մը ըրաւ Կարոլոս Ժէն համար, որ զինքը պատուոյ Լէդէոնի սեպուհ և ասպետ ըրաւ, այնպէս որ ժապաւէնը ոչ եթէ իւր ծոցին մէջ կը կրէ, ինչպէս որ կը կարծուի, այլ պարզապէս իւր կոճակնոցին վրայ:

— Պոշան, Պոշան, ըսաւ Մորսէրֆ ծիծաղելով, այդ ծաղրաբանութիւններդ օրագրիդ բանասիրականին համար պահէ, և իմ առջիս աներիս մի գպչիր—:

Ետքը Մօնթէ-Քրիսթոյի կողմը դառնալով՝ ըսաւ.

— Ասկէ քիչ մը առաջ այնպիսի կերպով սեպուհին անունը արտասանեցիք, որով զան ճանչնալնիդ կը ցուցընէիք:

— Չեմ ճանչնար զան, ըսաւ անտարբերութեամբ Մօնթէ-Քրիսթօ. բայց հաւանականաբար մօտերս պիտի տեսնուիմ ա.

նոր հետ, քանզի Լընտընի Տիչարտ և Պլընթ վաճառատան, Վեննայի Արսթէյն և Էսքելէս ու Հոռմի Թոմսըն և Ֆրէնչ վաճառատանց կողմանէ բաց վարկ ունիմ — :

Վերջին երկու անունները արտասանած ատենը՝ Մօնթէ-Քրիսթօ աչքին ծայրովը Մաքսիմիլիէն Մորէլին նայեցաւ :

Եթէ օտարականը յուսացեր էր որ այս անունները Մաքսիմիլիէն Մորէլի վրայ ազդեցութիւն պիտի ընեն, ամենեին սխալած չէր, վասն զի Մաքսիմիլիէն ելեկտրական սարսուռ մը ընդունածի պէս սարսուեցաւ :

— Թոմսըն և Ֆրէնչ ըսիք, հարցուց անոր, այդ վաճառատունը կը ճանչնա՞ք, պարոն :

— Հոռմի մէջ իմ սեղանաւորներս են, պատասխանեց կոմսը հանդարտութեամբ. միթէ դործ մը ունի՞ք անոնց հետ և կըրնամ ձեզ ծառայութիւն մը ընել :

— Ո՛հ, պարոն կոմս, արդեօք կրնայի՞ք մեր խուզարկութեանց մէջ օդներ լնալ, որոնցմէ մինչև ցարդ օդուտ մը չի կրցանք տեսնել. ժամանակաւ այդ վաճառատունը մեծ ծառայութիւն մը ըրաւ մերինին, և չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ իւր այս դործը ամեն անգամ ուրացաւ :

— Պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու, պարոն, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ խոնարհութիւն մը ընելով :

— Բայց Պ. Տանկլարի պատճառաւ մեր խօսակցութեան կարգէն զարմանալի կերպով շեղեցանք, ըսաւ Մորսէրֆ. խօսքերնիս Մօնթէ-Քրիսթօ կոմսին համար յարմար բնակարան մը գտնելուն վրայ էր. ադէ մտածենք, պարոններ, մեծ Բարիզի այս նոր հիւրը ո՞ւր կրնանք բնակեցընել :

— Ֆոպուր Սէն-Ժէրմէն, ըսաւ Շաթօ-Ռընօ. պարոնը կրնայ այն տեղ պարտէզով գեղեցիկ փոքր տուն մը գտնել :

— Բա՛, ադէկ գիւտ, Շաթօ-Ռընօ, ըսաւ Տըպրէ. այդ տխուր և տաղտուկ արուարձանէն ուրիշ տեղ չէք ճանչնար. ականջ մի գնէք անոր, պարոն կոմս, և Շոսէ տ' Անդէն բընակեցէք, որ Բարիզի ճշմարիտ կեդրոնն է :

— Ըստ իս՝ ըսաւ Պոշան, Պ. կոմսը Օբէրայի ծառուղին :

առաջին դատիկանը տուն մը կրնայ գտնել պատշգամով, որու վրայ իւր արծաթակուռ բարձերը դնել կու տայ, և իւր ծըխափողը ծխելու և կամ դեղահատերը կլլելու ատենը՝ բոլոր մայրաքաղաքը իւր աչքին առջևը կը տեսնէ:

— Գուք ի՞նչ կը մտածէք, Մորէլ, ըսաւ Շաթո-Ռընո, գուք ալ առաջարկութիւն մը չունիք:

— Այո՛, ըսաւ երիտասարդը ժպտելով. ընդ հակառակն ես իսկ առաջարկութիւն մը պիտի ընեմ. սակայն կ'ըսպասէի որ պարոնը իրեն եղած այս մեծ առաջարկութեանց մէկն ընդունի. բայց որովհետեւ չպատասխանեց, կարծեմ թէ կրնամ առաջադիւրս խիստ փոքր բայց վայելուչ տուն մը, զոր քոյրս տարիէ մը 'ի վեր վարձած է Մէսլէյ փողոցին մէջ:

— Քոյր մը ունիք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Այո՛, պարոն, խիստ ազնիւ քոյր մը:

— Ամուսնացեալ է:

— Գրեթէ ինը տարիէ 'ի վեր:

— Երջանիկ է, հարցուց վերստին կոմսը:

— Մարդկային արարած մը երջանիկ ըլլալու ներքին եղածին չափ, պատասխանեց Մաքսիմիլիէն. իւր սիրած մարդուն հետ ամուսնացաւ, այն անձը որ մեր դժբաղդութեանը մէջ մեզ հաւատարիմ մնաց, այն է՝ Էմմանուէլ Հէրպօ—:

Մօնթէ-Քրիսթօ անյայտ կերպով ժպտեցաւ:

— Վեցամսեայ հանդստեան ժամանակս հոն կ'անցընեմ, շարունակեց Մաքսիմիլիէն, և իմ Էմմանուէլ աներիս հետ Պ. կոմսին պէտք ունեցած տեղեկութիւնները տալու պատրաստ պիտի ըլլանք:

— Ներեցէք, պարոն Մորէլ, ըսաւ Ալպէր՝ Մօնթէ-Քրիսթօյի խօսելու սկսելէն առաջ. արդեօք դիտաւորութիւննիդ ճանապարհորդ մը Սէնպատ Նաւաստին ընտանեկան կենաց մէջ բանտարկել է. սլատրիա՞րք ընել կ'ուզէք այնպիսի մարդ մը որ Բարիդ տեսնելու համար եկած է:

— Ո՛հ, ամենեին, պատասխանեց Մորէլ ժպտելով, քոյրս քսան ու հինգ տարեկան է և աներս երեսուն, երկուքն ալ

առայր , զուարթ և երջանիկ են . ասկէ զատ՝ Պ . կոմսը իւր տունը եղածին պէս պիտի ըլլայ հոն , և իւր հիւրընկալուները՝ միայն տեսնելու համար իջած ժամանակը պիտի տեսնէ :

— Ընտրհակալ եմ , պարոն , շնորհակալ եմ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . ձեր քրոջը և աներին ներկայացուելով դո՛հ պիտի ըլլամ , եթէ բարեհաճիք ինձ այս պատիւը ընել . սակայն կը ջաւիմ որ մեր սեղանակցաց և ոչ մէկուն առաջարկութիւնը պիտի կրնամ ընդունիլ , ըստ որում իմ բնակելու տեղս արդէն պատրաստուած է :

— Ի՛նչպէս , ըսաւ Մորսէրֆ , ուրեմն պանդո՞ղը պիտի իջնէք . ձեզի համար խիստ տղեղ բան մը պիտի ըլլայ այդ :

— Ինչո՞ւ , միթէ Հոոմի բնակարանս տղեղ էր , հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Հոոմ տարբեր խնդիր մ' է , ըսաւ Մորսէրֆ . հոն յիսուն հազար թալեռ ծախք ըրեր էիք ձեր բնակարանը կահելու համար . բայց կարծեմ ամեն օր այսպիսի ծախքեր ընելու դիտաւորութիւն չունիք :

— Այդպիսի խորհուրդ մը զիս չարդիւնեց , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ , այլ ես միաքս դրեր էի որ Բարիզի մէջ ինձ սեփհական տուն մը ունենամ . ուստի առաջէն սենեկասպանս զրկեցի , և անշուշտ տուն մը գնած և կահած պիտի ըլլայ :

— Բարիզը ճանչցող սենեկասպան մը ունիք կ'ըսէք , հարցուց Պոշան :

— Ինձի պէս ան ալ առաջին անգամն է որ Քաղղիա կը մտնէ . խաբշիկ մ' է և ամենեին չլսուիր , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Ուրեմն Ալին է , ըսաւ Ալպէր 'ի զարմացումն ամենուն :

— Այո՛ , պարոն , նոյն ինքն Ալին է , իմ Նուպիացիս , համբոս , զոր կարծեմ Հոոմ տեսաք :

— Այո՛ , շատ աղէկ կը յիշեմ , պատասխանեց Մորսէրֆ . բայց ինչպէս յանձնեցիք Նուպիացիի մը որ Բարիզի մէջ ձեզի տուն մը գնէ , և համբի մը՝ որ զայն կահէ : Ողորմելին գուցէ ամեն բան ձեր կամաց հակառակ ըրաւ :

— Կը սխալիք, պարոն. ընդ հակառակն ես վստահ եմ որ ամեն բան իմ կամացս համաձայն պատրաստած է, վասն զի ինչպէս գիտէք իմ կամքս ամեն մարդու կամքին համաձայն իր: Ասկէ ութ օր առաջ Բարիզ հասնելով՝ առանձին որսացող քաջ շան մը ունեցած բնազդմամբը բոլոր քաղաքը պտըտած է. իմ ամեն մտային հաճոյքս, յօժարութիւններս և պէտքերս կը ճանչնայ, և ամեն բան ըստ իմ քմացս 'ի դործ դրած է: Գիտէր որ այսօր ժամը տասին Բարիզ պիտի հասնէի, և ժամը իննէն 'ի վեր Փօնթէնըսլո դուռը ինձ կ'ըստպասէր, ու այս տոմսակը տուաւ ինձ, որ տանս հասցէն է. նայեցէք, կարդացէք —:

Եւ Մօնթէ-Քրիսթօ Ալպերին տոմսակ մը տուաւ:

— Շանդ-Էլիզէ, թիւ 30, կարդաց Մորսէրֆ:

— Ահա՛ ճշմարիտ տարօրինակ գործ մը, ըսաւ Պոշան՝ չի կրնալով ինքզինքը զսպել:

— Իշխանական գործ մը, յաւելցուց Շաթօ-Ռընօ:

— Ի'նչպէս, ձեր տունը տակաւին չէք ճանչնար, հարցուց Տըպրէ:

— Ո՛չ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ. արդէն ըսի թէ ժամադրութեան մէջ սխալել չեմ ուզեր. ուստի հազիւ կառքիս մէջ վրաս գլուխս շիտկեցի, և դերակոմսին դուռը իջայ —:

Երիտասարդները իրարու երես նայեցան. չէին գիտեր թէ արդեօք Մօնթէ-Քրիսթոյի խօսքերը կատակաբանութիւն մ'են. բայց այս մարդուն տարօրինակ բնութեանը չնայելով՝ անոր բերանէն ելած խօսքերը պարզութեան այնպիսի կնիք մը ունէին, որ չէին կրնար ենթադրել թէ ճշմարիտ չխօսիր: Մանաւանդ թէ ինչ բանի համար պիտի ստէր:

— Ուրեմն, ըսաւ Պոշան, ըստ մեր կարողութեանը Պ. կոմսին փոքրիկ ծառայութիւններ մատուցանելով պէտք է գոհ ըլլանք. ես իբր խմբագիր, Բարիզի բոլոր թատրոնները անոր առջևը կը բանամ:

— Շնորհակալեմ, պարոն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով:

գործակատարս արդէն հրաման ընդունած է ինձմէ՝ բոլոր  
թատրոններէն մէկ մէկ օթեակ վարձելու :

— Գործակատարնիդ ալ նուպիացի և համր է , հարցուց  
Պոշան :

— Ա՛չ , սլարոն , այլ սլարդասլէս ձեր հայրենակիցներէն  
մէկն է , եթէ սակայն Գորսիացի մը մէկուն հայրենակիցը  
կրնայ ըլլալ . բայց դուք կը ճանչնաք զան , պարոն Մորսէրֆ :

— Արդեօք սլարոն Պերթոնչիօն է , որ այնպէս յաջողակու  
թեամբ պատուհանները վարձեր էր :

— Ճիշտ ան է , զձեզ ճաշի հրաւիրելու պատիւ ունեցած  
օրս դուք իմ տունս տեսաք զան : Խիստ բարի մարդ մ'է , որ  
քիչ մը ղինտորութիւն , քիչ մը մաղսանենդութիւն և քիչ մը  
ինչ որ վերջասլէս մարդս կրնայ ընել՝ ըրած է : Արհամ հաս  
տատել իսկ որ ոստիկանութեան հետ անդամ չնչին կռիւ մը  
ըրած է , դանակի հարուածի պէս բան մը :

— Եւ այն պարկեշտ քաղաքացին ձեր գործակատարը ը  
րած էք , պարոն կոմս , ըսաւ Տըպրէ . տարին սրչափ կը գողնայ  
ձեզմէ :

— Հաւատացէք որ ուրիշէ մը աւելի չգողնար , ըսաւ կոմ  
սը . սակայն իմ գործս կը կատարէ . ամենեին անկարելիու  
թիւն չգիտեր , և այս պատճառաւ քովս կը պահեմ զան :

— Ուրեմն , ըսաւ Շաթօ-Ռընօ , ամեն բան պատրաս  
տուած է . Շանդ-Էլիզէի մէջ սուն մը , ծառաներ և գործա  
կատար մը ունիք . բայց տիկին մը կը պակսի ձեզ — :

Ալդէր ժպտեցաւ . քանզի գիտէր որ կոմսը գեղանի Յոյն  
կին մը ունէր , զոր ինքը Վալ և Արճէնթինա թատրոն  
ներուն մէջ տեսեր էր :

— Ունեցածս աւելի ընտրելի է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ .  
աղախին մը ունիմ ես : Գուք ձեր տիկինները Օբերայի , Վո  
տրվիլի , Վարիէթէի թատրոններուն մէջ կը վարձէք , սա  
կայն իմս Աոստանդնուպօլիս գնած եմ . թէև սուղի նտուա  
ինձ , բայց այս կողմանէ ցաւելու տեղ չունիմ :

— Բայց կը մոռնաք , ըսաւ Տըպրէ ծիծաղելով , թէ Գաղ

դիացիքս ազատ ենք անուկով և բնութեամբ, ինչպէս ըսաւ  
Կարողոս Թաղաւորը. ձեր աղախինը Գաղղիոյ հողը կոխելուն  
պէս ազատած է:

— Ո՛վ պիտի ըսէ իրեն այդ խօսքը:

— Ո՛վ, ամեն մարդ:

— Յունարէնէն ուրիշ լեզու չխօսիր:

— Այդ ուրիշ խօսք է:

— Բայց դոնէ պիտի տեսնենք զան, հարցուց Պոշան. և  
միթէ համրէն զատ ներքինիներ ալ ունիք:

— Ո՛չ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. արեւելահանութիւնս մինչև  
այդ կէտը չեմ տանիր. քովս եղողը ազատ է ինձմէ բաժ-  
նուելու, և քովէս բաժնուողը ոչ ինձ և ոչ ուրիշի պէտք  
կ'ունենայ. և ահա դուցէ այս պատճառաւ է որ ինձմէ բաժ-  
նուիլ չեն ուզեր:

— Սիրելիս, ըսաւ Տըպրէ ոտք ելլելով, ժամը երեք ու կէս  
է. կոչնականդ անհամեմատ մէկն է, բայց որչափ և ընտիր ըլլայ  
ընկերութիւն մը, սլարտաւորեալ է մարդ բաժնուելու. ըստ ու-  
րում պէտք եմ պաշտօնատուներ երթալ. կոմսին վրայօք պաշ-  
տօնեային պիտի խօսիմ, որպէս զի անոր ո՛վ ըլլալը իմանանք:

— Զվուշացիր, ըսաւ Մորսէրֆ. ամենէն խորամանկներն  
անգամ անորմէ ետ կեցած են:

— Ոստիկանութիւննիս երեք միլիոն Ֆրանք ոռճիկ ունի.  
ստոյդ է որ գրեթէ միշտ կանխաւ ծախք կ'ընէ. բայց հող չէ,  
միշտ յիսուն հազարի չափ Ֆրանք կրնայ մնալու այս գործին  
համար:

— Եւ երբ անոր ո՛վ ըլլալը իմանաս, ինձ ալ պիտի հա-  
ղորդես:

— Ար խոստանամ: Նորէն տեսնուինք, Ալպէր. սլարոններ,  
ձեր ամենախոնարհ ծառան եմ —:

Տըպրէ դուրս ելնելով՝ նախասենեկին մէջ բարձրաձայն  
սլոռաց.

— Մօտեցուր կառքը:

— Այսօր խորհրդարանը չպիտի երթամ, ըսաւ Պոշան Ալ-



պէրին . քանզի Տանկլարի ատենարանութենէն աւելի ընտիր յօգուած մը ունիմ ընթերցողներու հաղորդելու :

— Շնորհք ըրէ , Պոչան , ըսաւ Մորսէրֆ , դեռ խօսքը մի ըներ , կ'աղաչեմ . զան ներկայացընելու և անոր վրայ խօսելու արժանաւորութենէն մի գրիւք զիս : Մտոյդն ըսէ , հետաքրքրական մարդ մը չէ :


— Հետաքրքրականէն աւելի է , պատասխանեց Շաթո-Ռընօ , կենացս մէջ սեսած ամենէն տարօրինակ մարդերէս մէկն է : Մորէլ , հետս պիտի դամ :

— Ներէ ինձ որ կոմսին իմ այցատոմսս տամ , որ բարեհաճեցաւ մեզ փոքրիկ այցելութիւն մը խոստանալ , Մէսլէ փողոցը , թիւ 14 :

— Աստիճակ եղիք որ պիտի չմոռնամ , միայն — . ըսաւ կոմսը խոնարհութիւն մը ընելով :

Եւ Մաքսիմիլիէն Մորէլը Շաթո-Ռընօ սեպուհին հետ դուրս ելաւ . Մօնթէ-Քրիսթօն Ալպէրին հետ մինակ թողլով :

A 59545



ԳԼՈՒԹ Բ.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



**ԵՐԱ** Ալպէր Մօնթէ-Քրիսթոյի հետ առանձին մնաց .

— Պարոն կոմս , ըսաւ անոր , ներեցէք ինձ որ ամուրիի մը բնակարանը պարտցընելով զձեզ , իմ առաջնորդի պաշտօնս սկսիմ : Ինչ որ Իտալիոյ պալատները բնակելու սովորած էք , պիտի տեսնէք թէ քանի քառակուսի ոտք տեղի մը մէջ կընայ բնակիլ Բարիդի երիտասարդներէն մէկը , որ աղէկ բնակութիւն մը ունեցողներէն կը համարուի : Մէկ սենեակէն միւսը անցնելու ատեննիս պէտք ենք պատուհանները բանալ որ շունչ առնէք — :

Մօնթէ-Քրիսթօ արդէն կերակուրի սենեակը և դեանայարկի սրահը կը ճանչնար :

Ալպէր նախ իւր արուեստանոցը տարաւ զան , որ ինչպէս արդէն ըսուեցաւ՝ իւր ամենէն սիրելի սենեակն էր :

Մօնթէ-Քրիսթօ Ալպէրի այս հաւաքածոյից յարդը կը ճանչնար , որոնք էին հինօրեայ մորթարկղեր , ճաքոնի յախճապակիներ , Արեւելեան կերպասներ , Ասիական ապակեղէններ , աշխարհիս ամեն երկիրներէ բերուած զէնքեր , ամենն ալ կը ճանչնար , և մէկ նայուածքով անոնց դարը , երկիրը և ծագումը զիտէր :

Մորսէրֆ կարծեց թէ ինքն է այն առարկաներուն բացատրիչը . ընդ հակառակն ինքը կոմսէն հնախօսութեան ,

Տանքարանութեան և բնական պատմութեան վրայ տեղեկուած թիւններ կ'ըստանար :

Առաջին դասիկոնք իջան :

Ալպէր իւր կոչնականը սրահը մտցուց , որուն պատերը արդի պատկերահաններուն դարձքերովը ծածկուած էին : սրահը էին՝

Տիւրբէի վայրահարները՝ երկար եղէղներով , բարձրաբերձ ծառերով , բառաչող կովերով և սքանչելի երկինքով :

Տըլադրուայի արարացի ձիաւորները՝ իրենց սպիտակ երկար վերարկուներովը , փառաւոր դօտիններովը և արծաթապատ դէնքերովը , որոնց ձիերը կառաղութենէ զիրար կը խածնէին , իսկ ձիաւորները երկաթեայ լախտերով զիրար կը ջախջախէին :

Պուլանժէի նկարները , որոնք այնպիսի ճարտարութեամբ 'Նեխրը-Տաճ' քը Բարձն կը ներկայացընէին , որ բանաստեղծին ախոյեան կը կանդներ նկարիչը :

Տիադի պատկերները , որոնք ծաղիկները բնականէն աւելի գեղեցիկ և արեւը աւելի լուսաւոր կը ներկայացընէին :

Տըղանին՝ Սալվաթօր Ռօզայի քաշածներուն նման բայց աւելի բանաստեղծական նկարները :

Թիրոյի և Մուլէրի ներկախառն կապարով նկարները , որոնք հրեշտակի գլխով տղաներ և կուսի գէմքով կիներ կը ներկայացընէին :

Տօղայի Արեւելեան Ճանապարհորդութեան նկարատետրէն առնուած ծրագիրեր , որոնք քանի մը վայրկեանի մէջ ուղտի մը թամբին վրայէն կամ մզկիթի մը դմբէթին տակը կապարեայ դրշաւ նկարուած են . վերջապէս ինչ որ նախընթաց դարերուն հետ կորուսեալ կամ մոռցուած արուեստին փոխարէնը արդի արուեստը կրնար տուժել՝ հոն ամփոփուած էր :

Ալպէր կը յուսար որ գոնէ այս անգամ այն զարմանալի Ճանապարհորդին նոր բան մը պիտի ցուցընէ . բայց շատ զարմացաւ երբ տեսաւ որ Մօնթէ-Քրիսթօ , առանց հեղի-

նակներուն ստորագրութիւնները քննել պէտք ունենալու և որոնցմէ թէև մէկ քանին միայն սկզբնական նշանադիրները ունէին, իւրաքանչիւր դործին հեղինակին անունը իսկոյն կու տար, որով յայտնի կ'երևէր թէ ոչ միայն այն անուններուն ամեն մէկը իրեն ծանօթ էր, այլ և անոնց իւրաքանչիւրին տաղանդը ինքը քննած և յարգած էր:

Մրահէն պատկերլու սենեակը անցան. այս վերջինը խիստ վայելուչ և ընտիր շէնք մը ունէր. միայն մէկ պատկեր մը կ'ախուած էր փառաւոր ոսկի շրջանակի մէջ առնուած և Լէոբոլտ Ռոպէրի ստորագրութեամբը:

Այս պատկերը Մօնթէ-Քրիսթոյ կոմսին անմիջական ուշագրութիւնը գրաւեց. վասն զի կոմսը երեք արագ ընթաց քայլերով սենեկին մէջ յառաջանալով՝ յանկարծ անոր առջևը կանգնեցաւ:

Այս պատկերը քսան և հինգ կամ քսան և վեց տարեկան կին մը կը ներկայացընէր թուխ դոյնով և վշտահար արանանանց տակը հրացայտ աչօք:

Քաթալանցի որսորդուհիներուն նկարելի հազուստը հազած էր՝ կարմիր և սև կուրծքնոցով և մազերը ոսկի ասեղներով զարդարուած:

Իւր նայուածքը ծովուն վրայ յարած էր, ու կողմնակի վայելուչ պատկերը ալեաց և երկնից կրկնակի կապոյտէն կ'անջատուէր:

Բարեբաղդաբար սենեակը այնչափ լուսաւոր չէր, եթէ ոչ՝ Ալպէր պիտի կարենար կոմսին այտերուն վրայ պատող կապարադոյն գունատութիւնը տեսնել, և անոր ուսերուն և կուրծքին ջղական սարսուռը դիտել:

Այրկեան մը լռութիւն եղաւ, ինչ ատեն Մօնթէ-Քրիսթօ պատկերին դիմացը ակնկառոյց մնաց:

— Գեղեցիկ տիկին մը ունիք հոս, դերակոմս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ կատարեալ անխռով ձայնով մը, և այս հազուստը, որ անտարակոյս պարահանդէսի հազուստ մը պիտի ըլլայ, սքանչելի կերպով կը վայլէ անոր:

— Ո՛հ, պարոն, ըսաւ Ալլէր, այդ սխալմանը համար չէի ներեր ձեզ, եթէ այս պատկերին քովը ուրիշ մը տեսած ըլլայիք. մայրս չէք ճանչնար դուք, պարոն, և ահա այս շրջանակին մէջ տեսածնիդ իմ մայրս է. վեց կամ ութ տարի առաջ այս հազուատով ինքզինքը նկարել տուաւ, որ ինչպէս կ'երևի մտային հաճոյք մ'է, սակայն նմանութեան կողմանէ այնպէս ճիշդ է, որ կարծեմ թէ 1830-ին մայրս կը տեսնեմ: Առմաստին այս պատկերը կոմսին բացակայութեանը ժամանակ շինել տուաւ. անտարակոյս կը կարծէր թէ անոր դարձին՝ հաճելի զարմանք մը պատճառէ: Քայց, զարմանալի բան, այս պատկերս հօրս տհաճելի երեցաւ. և նկարչութեան արժէքը, որ ինչպէս կը տեսնէք, Լէոբոլա Ռոպէրի ամենէն ընտիր դործերէն մէկն է, կարող չեղաւ անոր վրայ ստացած հակակրութեանը յաղթել: Քաղտնի կ'ըսեմ, սիրելիդ իմ կոմս, հայրս թէև Ալիքսանպուրի դործունեայ ասե՛նակալներէն մէկը և համբաւաւոր վարժ զօրապետ մ'է, սակայն արուեստները այնչափ սիրող չէ. մայրս ընդ հակառակն հիանալի կերպիւ նկարել զիտէ, և այսպիսի երեւելի դործի մը յարդը աղէկ ճանչնալուն՝ չուզեց բռնորովին իրմէ հեռացընել զայն, այլ ինձ տուաւ, որպէս զի հօրս տհաճելի չերևի, որուն պատկերն ալ հիմա պիտի ցուցընեմ ձեզ Արօէն քաշուած: Այսպէս ընտանեկան խօսքեր քննելու ներեցէք ինձ, սակայն՝ որովհետև զձեզ կոմսին սենեակը տանելու պատիւը պիտի ունենամ, այս բաներս կը պատմեմ ձեզ՝ որպէս զի չըլլայ թէ անոր առջևը այս կենդանագրին վրայ դովութեան խօսք մը բերաննէդ փախցընէք: Սակայն և այնպէս այս պատկերը աղետալի աղդեցութիւն մը ունի, վասն զի շատ քիչ անգամ կը պատահի որ մայրս սենեակս եկած ժամանակ անոր չնայի, և դրեթէ ամեն անգամ անոր նայած ժամանակը կու լայ: Միայն այս պատկերին շինուելուն պատճառաւ դրեթէ դժտութիւն մը մտաւ կոմսին և կոմսուհւոյն մէջ, որոնք թէև քսան տարիէն աւելի ժամանակէ՛ր վեր ամուսնացած են, սակայն առջի օրուան պէս իրարու հետ սիրով են — :

Մօնթէ-Քրիսթօ հարեանցի նայուածքով մը Ալլէրին երեսը նայեցաւ, որպէս զի իմանայ թէ արդեօք այս խօսքերուն տակը երիտասարդը դիտաւորութիւն մը ունի՞. սակայն յայտնի կ'երևէր որ բոլորովին պարզմտութեամբ խօսեր էր :

— Ասոնք են, ըսաւ Ալլէր, իմ բոլոր հարստութիւններս, որչափ և անարժան ըլլան ձեզ, պարոն կոմս, ներեցէք ինձ որ ձեր հրամանին յանձնեմ զանոնք. համարեցէք թէ ձեր տան մէջ կը գտնուիք, և որպէս զի աւելի դո՛հ ըլլաք, հաճեցէք ընկերանալ ինձ Ե. տը Մորսէրֆին սենեակներթալու, որուն Հռոմէն գրեցի ձեր ինձ ըրած ծառայութիւնը, և ձեր խոստացած այցելութիւնը անոր իմացուցի. կրնամ ըսել թէ կոմսն սւ կոմսուհին անհամբերութեամբ ձեր գալստեանը կ'ըսպասէին որ ձեզ շնորհակալ ըլլալ կարենան. Գիտեմ որ ամեն բանէ յափրացած էք, պարոն կոմս, և ընտանեկան տեսարանները Սէնտատ Նաւաստիին վրայ շատ ազդեցութիւն չունին, ըստ որում այնչափ ուրիշ տեսարաններ տեսած էք. Այսու ամենայնիւ ընդունեցէք իմ առաջարկութիւնս իբր Բարիզեան կենաց, ընկերութեանց, այցելութեանց և ներկայացմանց մէջ մտնելու սկիզբ մը — :

Մօնթէ-Քրիսթօ առանց պատասխանելու խոնարհութիւն մը ըրաւ. առանց այլայլելու և ուրախութեամբ այս առաջարկութիւնը կ'ընդունէր իբրև ընկերութեան այնպիսի պատշաճութիւն մը, զոր ամեն պատուաւոր մարդ ընդունելու պարտաւորութիւն ունի :

Ալլէր իւր սենեկապանը կանչեց և հրամայեց որ երթայ պարոն և տիկին Մորսէրֆին իմացընէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին հասնիլը :

Ալլէր և Մօնթէ-Քրիսթօ անոր ետեէն գացին :

Երբ կոմսին նախասենեակը հասան, սրահին վրայ բացուող սենեկին դրան վրայ զինանշանի վահան մը տեսան, որուն փառաւոր շրջանակը և զարդերը կը ցուցնէին թէ այս տան տէրը որչափ յարգ կ'ընծայէր այն զինանշանին :

Մօնթէ-Քրիսթօ անոր դիմացը կեցաւ և ուշադրութեամբ քննեց զայն :

— Անտարակոյս ձեր ընտանեկան զինանշանը պիտի ըլլայ այս, ըսաւ. թէեւ ազգատոհմական նշանները կը ճանչնամ, սակայն ինչ տատճառաւ հնարուիլը չեմ դիտեր. ես որ գիտուածով կոմս մ'եմ, ու այս տիտղոսը Ս. Ստեփաննու աստեւական աստիճանի միջոցաւ Թոսկանայի մէջ ստացած եմ, այս տիտղոսով դո՛ւ հրնայի ըլլալ եթէ ինձ կրկնած չըլլային թէ շատ ճամբորդութիւն ընողին այս տիտղոսն ու ննալը խիստ կարեւոր բան է. քանզի իբօք պէտք է կառքին դրան վրայ զինանշան մը ունենալ զոնէ մաքսաւորներուն այցելութենէն ազատ ըլլալու համար. ներեցէք այսպիսի խնդիր մը բանալուս :

— Երաւացի է ըսածնիդ, պարոն, ըսաւ Մորսէրֆ համազեալ պարզմտութեամբ մը, և դուք աղէկ դուշակեցիք թէ այս մեր զինանշանն է, այսինքն հօրս դերդաստանական զինանշանը. սակայն ինչպէս որ կը տեսնէք՝ անոր հետ խառն ուրիշ զինանշան մը կայ կարմիր գունով արծաթ շրջապատով, ան ալ մօրս դերդաստանական զինանշանն է. մօրս կողմանէ Սպանիացի եմ, բայց Մորսէրֆի ընտանիքը Գաղղիացի է, և լսածիս նայելով՝ Վաղղիոյ հարաւային կողմի ամենէն հիներէն մէկը :

— Այո՛, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, թռչուններն ալ նոյնը կը ցուցնեն : Սուրբ երկրին տիրելու համար դացող կամ փորձն ընող զբեթէ ամեն զինեալ ուխտաւորները՝ զինանշանի տեղ կամ խաչեր կը կրէին՝ ի նշան իրենց նահատակութեանը, որուն համար ուխտ ըրած էին, և կամ չուող թռչուններ՝ ի նշան իրենց երկար ճանապարհորդութեանը, զոր հաւատոյ թևերով կը յուսային կատարել : Ձեր նախահայրերէն մէկը այն խաչակրաց մէկը եղած պիտի ըլլայ, և եթէ միայն Ս. Լուդովիկոսի ժամանակէն հաշուենք, դարձեալ երեքտասաներորդ դարէն ըսել է, որ նոյնպէս շատ հին է :

— Արեւի է, ըսաւ Մորսէրֆ. հօրս սենեկին մէկ կողմը ազգաբանական ծառ մը կայ, ուրկից կրնանք տեղեկանալ :

և որոնց վրայ ժամանակաւ յիշատակութիւններ աւելցուցած եմ, բայց հիմա անոնք մտքէս անդամ չեն անցնիր. այսու պմենայնիւ, պարոն կոմս, կրնամ ըսել թէ մեր ժողովրդայնական կառավարութեան ուշադրութիւնը անոնց վրայ զբաղելու սկսած է:

— Ձեր կառավարութենէն աւելի երջանիկ էք դուք, ըստ որում զինանշաննիդ ստուգապէս աւելի ընտիր և աւելի որոշ է: Յայտնի կ'երևի որ դուք Ռրովանսէն և միանդամայն Սպանիայէն էք, ինչպէս կը ցուցնէ նաև այն ազնիւ Բաթալանուհւոյն դիմաց վրայի այն թուխ դոյնը, որուն վրայ այնչափ հիացայ, եթէ ձեր ցուցուցած պատկերը ճշդիւ կը նմանի անոր —:

Պէտք էր որ Եդիպոս մը կամ Սիլինքս մը ըլլար որ կոմսին այս խիստ մեծ քաղաքավարական խօսքերուն երևութիւն տակ բքողեալ հեղնական խօսքերը դուշակէր:

Այլպէր ժպիտով մը շնորհակալ եղաւ անոր, և ճամբան ցուցնելու համար անոր առջևը անցնելով՝ զինանշաններուն ներքեւ եղած դուռը հռեց, որ ինչպէս արդէն ըսինք՝ սրահին վրայ կը բացուէր:

Այս սրահին ամենէն նշանաւոր տեղը նոյնպէս պատկեր մը կախուած էր, որ երեսուն և հինգ կամ երեսուն և ութ տարեկան մարդ մը կը ներկայացընէր ընդհանուր զօրապետի միազգեստով, այս պատկերը ներկայացընող անձը՝ ի նշանիւր բարձրագոյն աստիճաններուն՝ ոլորածոյ կրկին ուսագիրներ կը կրէր, Պատուոյ Լէգէոնի պատուանշանը պարանոցէն կախուած էր, որ իւր հրամանատար ըլլալը կը ցուցընէր, և կուրծքին վրայ աջ կողմը՝ մեծ պաշտօնատարի շքանշանը և ձախ կողմը՝ մեծ խաչ մը կը կրէր, որոնցմէ յայտնի կ'երևէր որ այս անձը Յունաստանի և Սպանիոյ պատերազմներուն դացած էր, և կամ, այն երկու երկիրներուն մէջ քաղաքական երևելի պաշտօններ վարած էր:

Մօնթէ-Քրիսթօ միւս պատկերին ըրածին պէս այս պատկերին վրայ մանրակրկիտ ուշադրութեամբ մը զբաղած մի-



Զոյին՝ կողմնակի դուռը բացուեցաւ և Մորսէրֆ կոմսը ներկայացաւ :

Գրեթէ քառասուն և հինգ տարեկան մարդ մ'էր, բայց դոնէ յիսուն տարեկանի երևոյթն ունէր, և որուն ընչացքն ու ընքւիները տարօրինակ կ'երեւէին զինուորական ձևով կտրուած խողանակի նման դրեթէ ճերմակ մազերուն հետ :

Քաղաքացիի զգեստ հազած էր և իւր կոճակնոցին վրայ ժապուէն մը կը կրէր, որուն զանազան դոյները շքանշանի զանազան աստիճանները կը յիշեցընէին :

Այս մարդը բաւական շնորհալի քալուածքով և արտորնօք կոմսին դիմացը ելաւ :

Մօնթէ-Քրիսթօ առանց քայլ մը յառաջանալու՝ սկսաւ դիտել զան. կարծես թէ իւր ոտքերը գետինը բեռներ էին, ինչպէս և աչքերը Մորսէրֆ կոմսին դիմաց վրայ :

— Հայր իմ, ըսաւ երիտասարդը, պատիւ ունիմ ձեզ Պ. Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ներկայացընել, այն ազնիւ բարեկամը, զոր՝ ինչպէս ըսի՝ դժուար պարազաներու մէջ ճանչնալու բարեբաղդութիւնն ունեցայ :

— Բարի եկաք, ըսաւ Մորսէրֆ կոմսը ժպտով մը Մօնթէ-Քրիսթօն բարեւելով. մեր դերդաստանին միակ ժառանգը սողատելով՝ այնպիսի ծառայութիւն մը ըրիք, որուն համար յաւիտեանս երախտապարտ պիտի մնանք — :

Այս ըսելով՝ Մորսէրֆ կոմսը Մօնթէ-Քրիսթոյին թեւաթող մը կը ցուցընէր, ու մի և նոյն ժամանակ ինքն ևս անոր դիմացը նստաւ :

Իսկ Մօնթէ-Քրիսթօ թէև Մորսէրֆի նշանակած թեւաթողը ստաւ, բայց այնպիսի տեղ մը որոշեց, ուր թաւշեայ մեծ վարադոյրներուն ստուերին մէջ դտնուելով, կոմսին յոգնած և բազմահոգ դիմաց վրայ վաղ կնճռած խորշերուն մէջ դրոշմեալ դադտնի ցաւոց ամբողջ պատմութիւնը կարդաց :

— Տիկին կոմսուհին, ըսաւ Մորսէրֆ, իւր վրան դուրսը շտկելու պայած էր, երբ դերակոմսը ձեր այցելութիւնը ընդունելու բարեբաղդութեան լուրը իմացուց. հիմա պիտի իջնայ և պիտի դայ զձեզ բարեւելու :

— Մեծ պատիւ է ինձ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, որ այսպէս Բարիդ հասած օրս յարաբերութիւն ունեցայ այնպիսի անձի մը հետ, որուն արժանաւորութիւնը ունեցած համբաւոյն կը հաւասարի, և որուն բազդը իրաւամբ կը ժպտի, և միթէ կրնայ զլանալ ձեզմէ Միթիճայի դաշտերուն մէջ կամ Ատլասի լեռներուն վրայ մարաջախտի դաւազան մը:

— Զինուորական պաշտօնս թողուցած եմ, պարոն, ըսաւ Մորսէրֆ քիչ մը շառաղնելով: Թաղաւորութեան վերահաստատութեան ժամանակ՝ ատենակալ կոչուելով՝ առաջին անգամ պատերազմի դացի, և Պուրմոն մարաջախտին հրամանին տակն էի. կրնայի այն ատեն բարձրագոյն հրամանատարութիւն մը պահանջել, և ո՞վ դիտէ ինչ պիտի պատահէր եթէ անդրանիկ ցեղը դահին վրայ հաստատ մնար: Սակայն ըստ երեւութից յուլիսի Յեղափոխութիւնը բաւական փառաւոր ըլլալուն՝ չէր կրնար ապերախտ չհամարուիլ. իրօք կայսերական ժամանակէն չեղող բոլոր պաշտօնները շուղեց ճանչնալ, հետեւաբար ես իսկ իմ հրաժարականս տուի. ըստ որում պատերազմի դաշտին մէջ ուսագիրները շահող մարդու դահլիճներուն սահուն յատակին վրայ դորձ տեսնելը դժուար է: Սուրը թողուցի, քաղաքականութեան մէջ մխուեցայ, և օգտակար արուեստներու պարապեցայ: Քսան տարի շատ ջանքեր ըրի, բայց միայն բազմանք մը ունեցայ, և ժամանակս չներեց:

— Այդպիսի ընթացքներն են որ ձեր ազդին միւս երկիրներուն վրայ ունեցած դերազանցութիւնը կը յայտնեն, պարոն, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ. ազնուական ընտանիքէ և մեծ հարստութեան տէր ըլլալով, նախ և առաջ զիջաքաննչան զինուորի մը աստիճանին որ խիստ հազուադիւր է, ետքը զօրապետ, Գաղղիոյ ատենակալ, Պատուոյ Աէդէոնի հրամանատար ըլլալէ ետե՛ կը հաւանիք վերստին արուեստներ սորվելու սկսիլ, ոչ ուրիշ յուսով և ոչ ուրիշ վարձքով, բայց եթէ ձեր նմաններուն օգտակար ըլլալու համար. . . : Ա՛հ, ստուգիւ, պարոն, այս դովելի դորձ մ'է, կրնամ իսկ ըսել՝ վսեմ դորձ մը — :

Ալպէր զարմացմամբ Մօնթէ-Քրիսթոյի խօսքերը մտիկ կ'ընէր. անոր այսպիսի յուզեալ խորհրդոց մէջ նետուիլը տեսնելու սովորած չէր :

— Ափսոս, շարունակեց օտարականը՝ անտարակոյս այս խօսքերէն Մորսէրֆին ճակատին վրայ տեսնուած հաղիւ նշմարելի ամպը փարատելու համար, Իտալիոյ մէջ գործերը ասոնց հակառակն են. մենք մեր յերդին և տեսակին համեմատ կ'ապրինք, և մեր բոլոր կենացը մէջ մի և նոյն աստիճանը, մի և նոյն չափը և շատ անգամ իսկ մի և նոյն անօդ տակարութիւնը կը սլահենք :

— Բայց, պարոն, պատասխանեց Մորսէրֆ կոմսը, Իտալիա ձեզի տէս անձի մը հայրենիքը ըլլալու արժանի չէ, և Պաղղլիա իւր գիրկը կը բանայ ձեզի, պատասխանեցէք անոր կոչմանը, Պաղղլիա դուցէ ապերախտ չըլլայ ամեն մարդու համար. իւր զաւակներուն հետ խստութեամբ կը վարուի, սակայն սովորաբար օտարականաց լաւ ընդունելութիւն կու տայ :

— Հայր իմ, ըսաւ Ալպէր ժպիտով մը, յայտնի կ'երևի որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը դուք չէք ճանչնար : Իւր հաճութիւնները այս աշխարհէս դուրս են. ամենեին պատուոյ չփափաքիր, միայն թէ իրեն եղածը չմերժեր :

— Իմ վրայօքս ասկէ աւելի ճիշդ բացատրութիւն մը երբէք լսած չէի, պատասխանեց օտարականը :

— Պարոնը իւր ապագային տէրը եղած է, ըսաւ Մորսէրֆ կոմսը հառաչանքով մը, և այս պատճառաւ կենաց ծաղիլալի ճամբան ընտրած է :

— Ստուղիւ այդպէս է, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ այնպիսի ժպիտով մը, զոր պատկերահան մը պիտի չկրնար նկարել, և գիմագէտ մը զան լուծելու համար յուսահատելու էր միշտ :

— Պ. կոմս, եթէ զձեզ յողնեցընելէն չվախնայի, ըսաւ զօրապետը՝ Մօնթէ-Քրիսթոյի ձեւերուն վրայ յայտնի զմայլած, զձեզ խորհրդատուներ կը տանէի, ուր մեր արդի ատենակալները չճանչցողի մը համար հետաքրքրական ատեան մը պիտի կազմուի այսօր :

— Խիստ երախտադէտ պիտի ըլլամ ձեզ, պարոն, եթէ այս առաջարկութիւնը ուրիշ անգամ կրկնելու բարեհաճիք. բայց այսօր տիկին կոմսուհւոյն ներկայացուելու յոյս տուիք ինձ, ուստի պիտի սպասեմ:

— Ո՛հ, ասո՛ւ մայրս —, պոռաց դերակոմսը:

Իրօք Մօնթէ-Քրիսթօ աշխուժիւ գլուխը դարձընելով, տիկին Մորսէրֆը տեսաւ, որ զօրապետին մտած դրան դիմացը եղած ուրիշ դրան մը սեամին վրայ անշարժ և դունատեալ մնացեր էր. Մօնթէ-Քրիսթօ իւր կողմը դարձած ժամանակը՝ չդիտցուիր ինչ պատճառաւ՝ դրան ոսկէզօծեալ շրջանակին կոթընցուցած իւր ձեռքը ինքնին վար սահեցաւ. քանի մը վայրկեանէ՛ ՚ի վեր հոն կեցած ըլլալով՝ անդրալեռնեան այցելուին արտասանած վերջին խօսքերը լսեր էր:

Մօնթէ-Քրիսթօ ոտք ելաւ և խորունկ խոնարհութեամբ կոմսուհին բարևեց, որ նոյնպէս լռութեամբ և մեծարանօք խոնարհութիւն մը ըրաւ:

— Ի՞նչ եղար, տիկին, հարցուց Մորսէրֆ կոմսը. արդեօք սրահիս տաքութիւնը զքեզ անհանդիստ կ'ընէ:

— Ի՞նչ ունիս, մայր իմ —, պոռաց դերակոմսը Մէրսէտէսի քովը վազելով:

Կոմսուհին ժպիտով մը երկուքէն ալ շնորհակալ եղաւ:

— Ո՛չ, ըսաւ, այլ այլայլութիւն մը զգացի առաջին անգամ տեսնելուս այն անձը, առանց որոյ միջամտութեանը հիմա արտասուաց և սուղի մէջ ընկղմած պիտի ըլլայինք: Պարոն, շարունակեց կոմսուհին՝ թապուհի մը պէս յառաջանալով, զաւակիս կեանքը ձեզ պարտաւոր եմ, և ձեր այս բարութեանը համար կ'օրհնեմ զձեզ: Ասկէ զատ՝ երախտապարտ եմ որ ձեզ սրտանց շնորհակալ ըլլալու համար այս առիթը ներկայացընելու հաճութիւնը տուիք ինձ —:

Կոմսը առաջին անգամէն աւելի խորունկ խոնարհութիւն մը ըրաւ. իսկ Մէրսէտէս աւելի դունատեալ կ'երևէր:

— Տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, Պ. կոմսը և դուք խիստ պարզ գործի մը համար մեծ աղնուութեամբ կը վար-

ձատրէք զիս : Մարդ մը աղատելը , հօր մը վիշտը խնայելը , կնոջ մը խանդաղատանաց զթալը բարեդործութիւն մը չէ բնաւ , այլ մարդկութեան սլարտք մը — :

Այս խիստ քաղցրութեամբ և քաղաքավարութեամբ արտասանուած խօսքերուն Մորսէրֆ խորունկ ձայնով մը պատասխանեց .

— Խիստ երջանիկ է զաւաից , սլարոն , որ ձեր բարեկամութիւնը ստացեր է , և փառք կու տամ Աստուծոյ որ այսպէս տնօրիներ է — :

Եւ Մէրսէտէս իւր գեղանի աչքերը դէպ 'ի երկինք վերցուց այնպիսի անվերջ երախտադիտութեամբ մը , որ կոմսը անոր աչքերէն երկու արտասուեաց հոսիլը տեսեր էր :

Պ . Մորսէրֆ կոմսուհւոյն մօտեցաւ .

— Տիկին , ըսաւ , մեկնելու սլարտաւորեալ ըլլալուս համար արդէն Պ . կոմսէն ներուին խնդրեցի , կ'աղաչեմ՝ դուն ալ նոյնը կրկնելու հաճէ : Ատեանը ժամը երկուքին կը բացուի , հիմա երեքն է , և ես ատենաբանելու պիտի երթամ :

— Գնա՛ , սլարոն , քու բացակայութիւնդ մոռցընելու պիտի ջանամ , ըսաւ կոմսուհին նոյն յուզեալ ձայնով : Պարոն կոմսը կը բարեհաճէր , շարունակեց կոմսուհին Մօնթէ-Քրիսթոյի կողմը դառնալով , այսօր մինչև իրիկուն մեզի հետ մնալ :

— Շնորհակալ եմ , տիկին , և հաւատացէք ինձ որ այս առաջարկութեան համար երախտադէտ եմ ձեզ . սակայն ճանապարհորդութեան կառքով այս առտու ձեր տունը իջած եմ . Բարիդ ինչպէս եկած եմ , չեմ գիտեր . ո՛ւր կը դտնուիմ , հաղիւ թէ գիտեմ : Այս անհանդստութեանս համար կը յուսամ թէ չէք մեղադրեր զիս :

— Գոնէ ուրիշ անդամ այս հաճութիւնը պիտի ունենանա՞նք , կը խոստանա՞ք մեզ , հարցուց կոմսուհին — :

Մօնթէ-Քրիսթօ առանց սլատասխանելու խոնարհութիւն մը ըրաւ , բայց իւր շարժումը հաւանութիւն ունենալը կը հաստատէր :

— Ուրեմն չեմ ուզեր արդելք ըլլալ ձեզ, սյարոն, ըսաւ կոմսուհին, քանզի չեմ ուզեր որ երախտադիտութիւնս անքաղաքավարութիւն մը կամ դուրսցաւութիւն մը սլառճառ է:

— Սիրելիդ իմ կոմս, ըսաւ Ալպէր, եթէ կը հաճիք, Հոռմի մէջ ձեր ինձ ըրած ազնիւ քաղաքավարութեան փոխարէնը Քարիզ հատուցանելու փորձ մը ընեմ, և մինչև ձեր կառքերուն սլառաստ ըլլալը իմ կառքս ձեր հրամանին յանձնեմ:

— Հազար անգամ շնորհակալ եմ ձեր մարդասիրութենէն, սյարոն դերակոմս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, բայց կարծեմ թէ Պ. Պէրթուչիօն ըստ սլառաճի ամեն բան կարդի դրած է իմ քովէս բաժնուելէն 'ի վեր, որ չորս ու կէս ժամ է, և ձեր դրան առջև լծեալ կառք մը պիտի դտնեմ հիմա —:

Կոմսին այս կերպ դործերուն Ալպէր սովորած էր. դիտէր որ Նէրոնի պէս անկարելին դտնելու կը ջանար, և ամենեին բանի մը վրայ չէր զարմանար. միայն ուզէր անձամբ տեսնել թէ ինչ կերպով իւր հրամանները կը գործադրուին, ուստի մինչև տան դուռը անոր ընկերացաւ:

Մօնթէ-Քրիսթօ սխալած չէր. Մորսէրֆ կոմսին նախասենեկին մէջ հասնելուն պէս, Հոռմի մէջ կոմսին այցատոմար երկու երիտասարդներուն տանող սպասաւորը՝ իւր տիրոջ դալը տեսնելով՝ կամարազարդ դաւիթէն դուրս ցատկեր էր, այնպէս որ մեծանուն ճանապարհորդը սանդուխին վերի կողմը չհասած՝ իրօք կառքը սլառաստ իրեն կ'ըսպասէր:

— Պարոն, ըսաւ կոմսը Ալպէրին, մինչև տունս ինձ ընկերանալու առաջարկութիւն չեմ ըներ. քանզի առանց սլառաստութեան տուն մը պիտի կարենամ ցուցընել ձեզ, թէ և ինչպէս որ դիտէք՝ յանսլառաստից դործ տեսնելու մէջ մեծ համբաւ ունիմ: Օր մը որոշեցէք և ներեցէք ինձ որ հրաւիրեմ զձեզ. այն ժամանակ աւելի ապահով պիտի ըլլամ հիւրընկալութեան օրինաց դէմ չմեղանչելու:

— Քանի որ օր մը կը խնդրէք, սյարոն կոմս, ես ապահով եմ որ ինձ ցուցընելիքնիդ տուն մը պիտի չըլլայ

այլ սլաշատ մը : Ստուգիւ ձեր հրամանին տակ ողի մը ունեւարու էք :

— Թող այդ կարծիքը ունեւան ինձ համար , ըսաւ Մօնթէ - Քրիսթօ՝ իւր փառաւոր կառքին թաւշապատ աստիճանները կոխելով , դուցէ կանանց քով աղգեցու թիւն մը ունեւամ — :

Այս ըսելով կառքին մէջ նետուեցաւ , որուն դուռը իւր եակէն դոցուեցաւ և արշաւանօք մեկնեցաւ , բայց ոչ այնչափ արագութեամբ որով կոմսը չկարենար նշմարել այնյուշիկ շարժումը , որ տիկին Մորսէրֆի դանուած արահին վարադոյրը կ'երեւցընէր :

Երբ Մորսէրֆ իւր մօրը քով վերադարձաւ , զան իւր դահլճին մէջ թաւշեայ մեծ թեւթոռի մը վրայ նստած դաւաւրօր սենեակը ստուերի մէջ ընկղմած էր , այնպէս որ հաղիւթէ հոս հոն ամանի մը կամ շրջանակի մը վրայ ոսկեզօծի դոյնը կը փայլէր :

Այլէր կոմսուհւոյն երեսը չկրցաւ տեսնել , զոր շողի շրջանակի մը պէս իւր գլխին վրայ ծածկուած շղաշատեռ քողին տակը սլահեր էր . սակայն անոր ձայնը այլայլած երեցաւ իրեն . ծաղկամանին վարդերուն , արեւածաղիկներուն բուրմանց մէջ քայախի կծու և բարկ հոտին հետքն իսկ նշմարեր էր . իրօք վառարանին վրայի բանուած ամաններուն մէկուն մէջ կաշի պատեանէն ելած կոմսուհւոյն սրուակը երիտասարդին անհանդիստ սւշադրութիւնը գրաւեց :

— Տկարութիւն մը ունիս , մայր իմ , հարցուց ներս մտնելով , և իմ քայակայութեանս ժամանակը անհանդիստ եղար :

— Ե՛ս , ոչ , Այլէր . այլ այս վարդերը , բրաքիոնները և նարնջի ծաղիկները օդերուն տաքցած ժամանակը , որոնց սովորած չենք , այնպիսի սաստիկ հոտեր կը բուրեն . . . :

— Աւրեմն , մայր իմ , ըսաւ Մորսէրֆ ձեռքը զանդակին երկնցընելով , նախասենեակդ տանել տամ զանոնք : Ստուգիւ անհանդիստ ես . ասկէ առաջ իսկ ներս մտած ժամանակդ խիստ դեղնած էիր :

— Ստուգիւ դեղնած էի , Այլէր :

— Այնպիսի դեղնութիւն մը որ դէմքդ աւելի վայելուչ կ'երեցընէր, մայր իմ, սակայն զիս և հայրս վախցուցիր:

— Հայրդ դեղնութեանս վրայ քեզ խօսեցաւ, հարցուց ազնուծիւ Մէրսէտէս:

— Ո՛չ, մայր իմ, բայց չե՞ս յիշեր որ այս դիտողութիւնը քեզ ըբաւ:

— Չեմ յիշեր —, ըսաւ կոմսուհին:

Ալպէրի հնչեցուցած զանգակին ձայնէն ծառայ մը ներս մտաւ:

— Այս ծաղիկները նախասենեակը կամ զարդարանաց սենեակը տար, ըսաւ դերակոմսը. քանզի տիկին կոմսուհին անհանդիստ կ'ընեն —:

Ծառան հնազանդեցաւ:

Քաւական երկար ժամանակ լռութիւն մը եղաւ, որ մինչև ծաղկանց տարուիլը տևեց:

— Այս Մօնթէ-Քրիսթօ անունը ի՞նչ կը նշանակէ, հարցուց կոմսուհին երբ ծառան ծաղկանց վերջին ամանով դուրս ելաւ, գերդաստանի անուն է, երկրի թէ պարզ տիտղոս մ'է:

— Կարծեմ թէ տիտղոս մ'է, մայր իմ, և ոչ ուրիշ բան: Կոմսը Թոսկանիոյ արշիպեղաղոսին մէջ կղզի մը գնեց է, և այս առտուան իւր ըսածին նայելով՝ ռոճիկ մը հաստատեց է: Գիտես որ այս բանս Ֆիորէնցայի, Բարմայի և Մալթայի մէջ կ'ըլլայ. սակայն ինքը ազնուականութեան ամենեւին սրահանջում մը չունի, և ինքզինքը դիպուածական կոմս կ'անուանէ, թէև Հռոմի ընդհանուր կարծիքը զան խիստ մեծ իշխան մը կը համարի:

— Իւր հոս մնացած կարճ միջոցին մէջ տեսնել կըցածիս չափ՝ իւր ձեւերը խիստ ազնիւ երեցան ինձ, ըսաւ կոմսուհին:

— Ո՛հ, կատարեալ են, մայր իմ, այնչափ կատարեալ, որ շատ պարագաներու մէջ Եւրոպիոյ երեք ամենէն երևելի, այսինքն անդղիական, սպանիական և դերմանական ազնուականութեանց մէջ ճանչցուած ազնուապետական ձեւերուն կը դերազանցէ —:



Կոմսուհին վայրկեան մը մտածեց, և այս կարճատև վա-  
րանուձէն ետև կրկնեց.

— Սիրելիդ իմ Ալպէր, Մօնթէ-Քրիսթօ կոմսը աղէկ ճանչ-  
ցար, այնպէս չէ՞. ես իբրև մայր խնդիր մը պիտի ուղղեմ քեզ.  
դուն բաւական խոհեմ ես, և քու տարիքիդ սովորական ե-  
ղածէն աւելի դատողութիւն ունիս. կը կարծես որ կոմսը ի-  
րօք երեցածին պէս ըլլայ:

— Եւ ի՞նչ է երեցածը:

— Հիմա ըսիր թէ մեծ իշխան մ'է ան:

— Ես ըսի թէ այնպէս կը կարծեն, մայր իմ:

— Բայց քու կարծիքդ ի՞նչ է, Ալպէր:

— Ստոյդ կ'ըսեմ որ որոշ կարծիք մը չունիմ անոր վրայ.  
Մայթացի կ'երևի ինձ:

— Իւր ծննդեանը վրայ չէ խնդիրս, այլ իւր անձին:

— Այդ տարբեր խնդիր է. այնչափ տարօրինակ բաներ  
տեսայ, որ եթէ իմ կարծիքս կ'ուզես որ ըսեմ, ես զան  
Պայրընի մարդոց մէկը կը կարծեմ, որուն վրայ թշուառու-  
թիւնը իւր աղէտաւի կնիքը թողուցած է. ինչպէս Մանֆրէտ  
մը, Աարա մը, Աէրնէր մը կամ վերջապէս հին ընտանիքի  
մը մնացորդներէն այնպիսի մէկը, որ իւր հայրական հարս-  
տութիւններէն զրկուած՝ ժառանգութեանց մէկ ճիւղը գտած  
է իւր բաղդախնդիր ողւոյն զօրութեամբը, որ զինքը ընկե-  
րութեանց օրէնքէն վեր կը դասէ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ըսել կ'ուզեմ թէ Մօնթէ-Քրիսթօ Միջերկրական ծո-  
վուն մէջ կղզի մ'է առանց բնակչաց, առանց պահապան զօ-  
րաց, և ամեն աղղի մաքսանենդերու ու ամեն երկրի ծովա-  
հէններու ապաստան մ'է: Ո՛վ դիտէ թէ այս արժանաւոր  
գործաւորները իրենց իշխանին ի՞նչ հարկ կը վճարեն այս  
ապաստանութեան համար:

— Կարելի է, ըսաւ կոմսուհին:

— Բայց ինչ հող, շարունակեց երիտասարդը, մաքսանենդ  
ըլլայ կամ ոչ, պիտի խոստովանիս անշուշտ, մայր իմ, քան

դի աչօքդ տեսար, որ Մօնթէ-Քրիսթօ կոմսը երևելի մարդ մ'է և Բարիզի ընկերութեանց մէջ խիստ մեծ յաջողութիւնս ներ պիտի ունենայ: Այս առտու Շաթօ-Ռընօն անդամ հիացուց:

— Եւ քանի՜ տարեկան կրնայ ըլլալ կոմսը, հարցուց Մէրսէտէս՝ յայտնի կարեւորութիւն մը ընծայելով այս հարցման:

— Երեսուն և հինգ կամ երեսուն և վեց տարեկան, մայր իմ:

— Անկարելի է որ այդչափ երիտասարդ ըլլայ, ըսաւ Մէրսէտէս՝ Ալպէրի ըսածին միանգամայն և իւր կարծեաց պատասխանելով:

— Այո՛, ստոյգ է. առանց մասնաւոր դիտման կամ մտածութեան երեք կամ չորս անդամ ըսած է ինձ թէ այս ինչ ժամանակին հինգ տարեկան էի, այս ինչ միջոցին տասը տարեկան, և այս ինչին տասներկու. ես որ իւր մանրամասն պատմութեանց վրայ մեծ հետաքրքրութիւն ունէի, յիշած թուականները իրարու կը մօտեցընէի, և ամենեին անոր սխալիլը չտեսայ: Ուստի ապահով եմ որ այս զարմանալի մարդուն տարիքը երեսուն և հինգէն աւելի պիտի չըլլայ: Բաց յայսմանէ չտեսա՞ք, մայր իմ, ինչպէս կենդանի են անոր աչքերը, ինչպէս սև են մազերը, և ինչպէս ճակատը՝ թէև տժգոյն՝ բայց անկնճիռ է. իւր կազմութիւնը ոչ միայն զօրաւոր՝ այլ և առոյգ է —:

Կոմսուհին դառն խորհրդոց յորձանաց տակը ընկճեալ գլուխը խոնարհեցուց:

— Եւ այս մարդը քեզի հետ բարեկամացա՞ւ, Ալպէր, հարցուց Մէրսէտէս ջղային սարսուռով մը:

— Կարծեմ, մայր իմ:

— Իսկ դուն . . . , կը սիրես զան:

— Այս անձը ինձ շատ հաճելի երևցաւ՝ Ֆրանզ տ'Էրիւնէի կարծեաց հակառակ, որ կ'ուզէր համոզել զիս թէ միւս աշխարհէն եկած մարդ մ'է —:

Կոմսուհին երկիւղի շարժում մը ըրաւ:

— Ալլա էր, ըսաւ այլայլեալ ձայնով մը, ամեն ժամանակ  
 զգուշացուցած եմ զքեզ նոր բարեկամներէ: Հիմա դուն  
 մարդ ես, և կրնաս ինձ խրատ տալ. այսու ամենայնիւ ես  
 կը կրկնեմ քեզ թէ՛ խոհեմու թիւնը ձեռքէ մի ձգեր, Ալլա էր:

— Սիրելի մայր իմ, այդ խրատին օգտակարութիւնը կը  
 ճանչնամ, սակայն պէտք է գիտնամ թէ ինչ բանի վրայ  
 վստահ չըլլամ: Աոմսը ամենեւին նարտ չխաղար, կոմսը կաթիլ  
 մը Սպանիոյ գինիով ոսկեղօծեալ ջուր կը խմէ. կոմսը այնչափ  
 հարուստ է, որ առանց զիս ծաղրելու՝ չկրնար ստակ փոխ  
 տալ. ուրեմն ինչ բանի համար կոմսէն վախնամ:

— Իրաւունք ունիս, պատասխանեց կոմսուհին, սակայն  
 ես այլանդակ երկիւղներ ունիմ, մասնաւորաբար այնպիսի  
 մարդու մը նկատմամբ, որ քու կեանքդ ազատած է: Աղէկ  
 միտքս եկաւ, հայրդ ինչպէս ընդունեց զան, Ալլա էր: Հարկ  
 է որ կոմսին հետ կրցածնէս աւելի աղէկ վարուինք: Հայրդ  
 երբեմն զբաղեալ է, և իւր դործոցը մտածած ժամանակը՝  
 բան մը հողը չընէր. կարելի է որ առանց ուղե լու. . . . .

— Հայրս կատարեալ կերպով աղէկ վարուեցաւ անոր  
 հետ, մայր իմ, ընդմիջեց Ալլա էր. և կրնամ ըսել իսկ թէ  
 հօրս սիրտը փաղաքշեցին կոմսին երկու կամ երեք պատուա-  
 դիր խօսքերը, որոնք այնպիսի ճարտարութեամբ և յարմար-  
 ութեամբ արտասանուեցան, որ կարծես թէ կոմսը երեսուն  
 տարիէ՛ ի վեր հայրս կը ճանչնար: Անոր ըրած գովութեանց  
 իւրաքանչիւր փոքրիկ նէտերը հօրս զուարճութիւն մը կու  
 տային, յաւելցուց Ալլա էր ծիծաղելով, այնպէս որ խիստ  
 մեծ սիրով իրարմէ բաժնուեցան և հայրս ուղեց իսկ խոր-  
 հըրդարանը տանիլ զան որ իւր ատենախօսութիւնը լսէ — :

Աոմսուհին չպատասխանեց. այնպիսի խորունկ մտածութեան  
 մէջ ընկղմած էր, որ իւր աչքերը քիչ քիչ դոցուեր էին:


Երիտասարդը անոր առջևը կանգնած՝ այնպիսի որդիական  
 սիրով անոր երեսը կը նայէր, որ ծաղկահաս և դեղեցիկ  
 մայր ունեցող զաւակաց քով աւելի խանդակաթ և աւելի  
 քաղցր է: Եւ տեսնելով որ անոր աչքերը դոցուեցան, վայր-

կեան մը ևս անոր քաղցր շնչառութիւնը լսելու համար կենցաւ, և զան քնացած կարծելով՝ ոտից ծայրերուն վրայ քալելով անկէ հեռացաւ, և զգուշութեամբ սենեկին դուռը քաշեց:

— Աղէկ դուշակեցի ես, մրմնջեց Ալպէր դուռը շարժելով, որ այս մարդը ամենուն վրայ մեծ ազդեցութիւն պիտի պատճառէ: Անվրիպելի կշիռի մը մէջ անոր զօրութիւնը կը շափեմ: Մայրս ալ այս դիտողութիւնը ըրաւ. պէտք է որ այս մարդը երևելի մէկն ըլլայ —:

Այս ըսելով իւր ձիերուն քովը իջաւ, բայց ոչ առանց գաղտնի սրտմտութեան մը Մօնթէ-Քրիսթոյ կոմսին այնպիսի կառածիւր ստանալուն համար, որոնք իւր աշխէտ ձիերուն յարդը կը նուազեցընէին ճանչցողներուն քով:

— Ստուգիւ, ըսաւ ինքնիրեն, մարդիկ հաւատար չեն. պէտք եմ աղաչել հայրս որ ասոր ճշմարտութիւնը բարձր խորհրդարանին մէջ պարզէ:



ՊՈՍՏՈՆ ԳԵՐԹՈՒՉԻՑ

ՊՈՍՏՈՆ ԳԵՐԹՈՒՉԻՑ



**Կ**ՈՍՏՈՆ վեցը վայրկենի մէջ իւր տունը հասեր էր :

Այս վեց վայրկեանները բաւական եղեր էին որ քսանէն աւելի երիտասարդներ զինքը տեսնեն , որոնք իրենց դնել չկրցած կառաձիերուն արժողութիւնը ճանչնալով , ձիերնին յառաջ մղեր էին , որպէս զի տեսնեն այն փարթամ իշխանը , որ տասնական հազար ֆրանքնոց ձիեր լծեր էր իւր կառքին :

Ալիին որոշած տունը , ուր սլիտի բնակէր Մօնթէ-Քրիսթօ , Շանզ-Էլիզէի աջ կողմը , դաւիթի և պարտէզի մէջ տեղը շինուած էր . դաւիթին մէջ բարձրացած տերեւախիտ ծառերը շէնքին ճակատին մէկ մասը կը ծածկէին . այս ծառերուն բոլորտիքը երկու թևերու նման երկու ծառուղիներ կային , որոնք դէս 'ի աջ և ձախ կողմը տարածուելով , կառքերը վանդակապատէն կրկնակի սանդուխին առջևը կը տանէին . սանդուխին իւրաքանչիւր աստիճանին վրայ ծաղիկներով լեցուն յախճապակեայ թաղարներ կային :

Այս տունը , որ ընդարձակ տարածութեան մը մէջ տեղը շինուած էր , գլխաւոր դռնէն զատ՝ ուրիշ դուռ մը ևս ունէր , որ Բոնթիէօ փողոցին վրայ կը բացուէր :

Կառապանը դռնասլանին ձայն տալէն առաջ՝ միաձայլ վանդակները իրենց ծխնիններուն վրայ դարձան :

Կոմսին դալը հեռուէն տեսեր էին, և ծառաները ինչպէս  
Հռոմ և ամեն տեղ, նոյնպէս և Բարիզ փայլակի մը արա-  
պուծեամբ անոր կը ծառայէին:

Կառավարը կառքը ներս մտցուց, առանց անոր դնացքը  
յամբացընելու՝ կէս բոլորակը դարձաւ, և ծառուղւոյն ա-  
ւազին վրայ անիւներուն ձայնը չմարած՝ վանդակները վերս-  
տին փակուեցան:

Սանդուխին ձախ կողմը կառքը կեցաւ. դռնակին առջևը  
երկու հողի ներկայացան, որոց մէկն էր Ալի, որ անսլա-  
մելի ուրախութեամբ իւր տիրոջը կը ժպտէր, և Մօնթէ-  
Քրիսթոյի միայն մէկնայուածքովը վարձատրուած կը դտնուէր:

Միւսը խոնարհութեամբ բարեւոյ զան և կառքէն իջնելուն  
օղնելու համար իւր թևը կոմսին ներկայացուց:

— Շնորհակալ եմ, պարոն Պէրթուչիօ, ըսաւ կոմսը յու-  
շիկ կերպով կառքին երեք աստիճաններէն ցատկելով. ո՞ւր  
է նստարը:

— Փոքր սրահն է, տէր իմ, պատասխանեց Պէրթուչիօ:

— Հապա այցատոմսերը, զորոնք տպել տալի պատուիրեցի  
տանս թիւը իմանալուդ պէս:

— Պատրաստ են, պարոն կոմս. Բալէ-Րօյալի ամենէն ե-  
րևելի փորագրիչին գացի ու առջիս փորագրել տուի. առա-  
ջին տոմսը տպուելուն պէս՝ ձեր հրամանին համեմատ նոյն  
վայրկենին Պ. սեպուհ Տանկլարին տարուեցաւ, փողոց Շո-  
սէ-տ' Անթէն, թիւ 7. մեացեալները Ձեր Վսեմութեան  
պառկելու սենեկին կրակարանին վրան են:

— Աղէկ. ժամը քանի՞ է:

— Չորս —:

Մօնթէ-Քրիսթօ իւր ձեռնոցները, գլխարկը և գաւազանը  
այն նոյն գաղղիացի սպասաւորին տուաւ, որ Մորսէրֆ կոմ-  
սին նախասենեկէն դուրս նետուեր էր կառքը պատրաստելու  
համար. ետքը փոքր սրահը մտաւ՝ Պէրթուչիոյին ետեւէն եր-  
թալով, որ իրեն ճամբան կը ցուցընէր:

— Այս ինչ խեղճ կիճեր են այս նախասենեկին մէջ, ը-

ՅՈՒՆ Մօնթէ-Քրիսթօ . կը յուսամ թէ ասոնք պիտի փոխել  
տասս — :

Պէրթուչիօ խոնարհութիւն մը ըրաւ :

Գործակատարին ըսածին համեմատ՝ նօտարը փոքր սրա-  
հին մէջ կ'ըստասէր , որ պարկեշտ մէկը կ'երեւէր և Բարիզի  
երկրորդահան դրագրութեանէ քաղաքին շրջավայրերուն նօտա-  
րութեան բարձր աստիճանին հասեր էր :

— Գնել ուղած դիւղի տանս վաճառումը կատարող նօ-  
տարը դո՞նն ես , հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Այո՛ , պարոն կոմս , պատասխանեց նօտարը :

— Վաճառման մուրհակը պատրաստ է :

— Այո՛ , պարոն կոմս :

— Հետդ բերած ես :

— Ահա՛ տեսէք :

— Շատ աղէկ . բայց ո՞ւր կը գտնուի այս գնած տունս ,  
հարցուց անտարբերութեամբ Մօնթէ-Քրիսթօ՝ կէս մը Պէր-  
թուչիոյին և կէս մը նօտարին ուղղելով իւր խօսքը — :

Գործակատարը շարժում մը ըրաւ , որով իւր շգիտնալը  
կ'իմացնէր :

Նօտարը զարմացմամբ Մօնթէ-Քրիսթոյի երեսը նայեցաւ .

— Ի՞նչպէս , պարոն կոմս , ըսաւ , ձեր գնած տունը ո՞ւր  
կը գտնուի՝ չէք գիտեր :

— Ստուգիւ ո՞չ , ըսաւ կոմսը , և ի՞նչպէս կրնայի գիտնալ .  
այս առտու տակաւին Բարիզ հասայ , և առաջին անգամն է  
որ ոտքս Գաղղիա կը կոխեմ :

— Ուրեմն իրաւունք ունիք , պատասխանեց նօտարը , ձեր  
գնած տունը Օթէօյլ կը գտնուի — :

Այս խօսքերուն վրայ՝ Պէրթուչիօ յայտնի դեղնեցաւ .

— Եւ ո՞ւր կը գտնուի Օթէօյլ , հարցուց կոմսը :

— Ասկէ երկու քայլ հեռու՝ հրաշագեղ տեղ մ'է , պա-  
տասխանեց նօտարը , Բասսիէն քիչ մը անդին՝ Պուլոնեի  
տնտարին մէջ տեղը :

— Այդչափ մօտ է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , ուրեմն դիւղի

մէջ չէ . Բարիզի դրան այդչափ մօտ տուն մը ինչպէս ինձ  
գնել տուիր , պարոն Պէրթուչիօ :

— Ե՛ս , ըսաւ Պէրթուչիօ զարմանալի եռանդեամբ մը .  
ոչ , ամենևին . այն տունը գնելու չհրամայեցիք ինձ . հաճե-  
ցէք յիշողութիւննիդ ամփոփել և մտածել քիչ մը :

— Այո՛ , իրաւունք ունիս , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , հիմա  
միտքս եկաւ . Օրագրի մը մէջ Գեղէ քո՛ւ ճշ վերնադրով ծա-  
նուցումը կարդացի , և այս կեղծ վերնադրէն խարուեր եմ :

— Տակաւին ժամանակ ունիք , ըսաւ Պէրթուչիօ աշխու-  
ժիւ . և եթէ Ձեր Ասեմութիւնը հաճի ինձ յանձնել ուրիշ  
ամեն կողմ տուն մը փնտռելու , կամ Էնկիէն , կամ Քօն-  
թընէ-օ-Բօզ , և կամ Պէլլիւ ամենադեղեցիկ տուն մը կըր-  
նամ դտնել :

— Ա՛հ , ոչ , ըսաւ անհողութեամբ Մօնթէ-Քրիսթօ . հիմա  
այս գնեցի , չեմ ուզեր ձեռքէ հանել :

— Պարոնը իրաւունք ունի , ըսաւ աշխուժիւ նօտարը , որ  
իւր վարձքը կորսնցընելէն կը վախնար . տունը խիստ պատ-  
ուական է , վազուէն ջուր , խիտ անտառակ , և վայելուչ շէնք  
մը ունի , թէև երկար ժամանակէ ՚ի վեր անբնակ մնացած  
է . առանց հաշուի գնելու անոր մէջի կահ կարասիքը , որոնք  
որչափ և հին ըլլան , թանկադին են , մանաւանդ այսօր որ  
ամեն մարդ հնութիւններ կը փնտռէ : Ներեցէք համարձա-  
կութեանս , կը տեսնեմ որ Պ . կոմսին կամքը ժամանակիս  
ընթացքին կը համապատասխանէ :

— Աւրեմն յարմար տուն մ'է այդ , ըսաւ կոմսը :

— Ատկէ աւելի է , խիստ պատուական տուն մ'է :

— Աւրեմն այսպիսի առիթ մը չփախցընենք , ըսաւ կոմսը .  
ո՛ր է գաշնադիրը , պարոն նօտար — :

Եւ գաշնադիրը ձեռքը առնելով , տանը գտնուած կողմը  
և կալուածատիրոջ անունը կարդալէն ետև՝ արագութեամբ  
ստորագրեց :

— Պէրթուչիօ , ըսաւ , յիսուն և հինգ հազար Ֆրանք  
տուր պարոնին — :



Գործակատարը անասլահով քայլերով դուրս ելաւ և վայրէկեան մը ետքը դրամաթղթոց ծրարով մը վերադարձաւ, և նոտարին յանձնեց զանոնք :

— Հիմա օրինաց ամեն սլայմանները կատարուած են, հարցուց կոմսը :

— Ամենքն ալ, սլարոն կոմս :

— Բանալիները քովդ են :

— Տունը սլահսլանող դռնասլանին քովն են. բայց ահա այս հրամանագիրը, որ տանուտէրն ըլլալնիդ սխտի ճանչցրնէ անոր :

— Շատ աղէկ — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ դ լիսովը նոտարին նշան մը ըրաւ, որով ըսել կ'ուզէր.

— Երթաս բարեաւ, ալ քեզի սէտք չունիմ :

— Բայց, ըսաւ առաքինի դրագիրը, կարծեմ թէ կը սխալիք. ընդ ամենը յիսուն հազար ֆրանք սխտի ըլլայ :

— Այո՛, բայց քու վարձքդ :

— Նոյն դումարին մէջ սլարունակեալ է, սլարոն կոմս :

— Օթէօյլէն մինչև հոս չեկար :

— Այո՛ :

— Արած ներդուլիւնդ անշուշտ սէտք է վարձատրուի —, ըսաւ կոմսը և նշանով մը անոր ճամբայ սուլաւ :

Նոտարը ետ ետ երթալով և մինչև գետինը ողջունելով դուրս ելաւ :

Արձանագրութեանց պաշտօնը ընդունած օրէն 'ի վեր առաջին անգամն էր որ այսպիսի մարդու մը կը հանդիպէր :

— Պարոնին հետ դնա —, ըսաւ կոմսը Պէրթուլիոյին :

Եւ գործակատարը նոտարին ետեէն դուրս ելաւ :

Կոմսը մինակ մնալուն պէս՝ իւր ծոցէն բանլիքուած թղթագարան մը հանեց, և իւր պարանոցէն կախուած փոքր բանլիքով մը, զոր միշտ կը կրէր, բացաւ զայն :

Վայրկեան մը անոր մէջ փնտուելէն ետե՛քանի մը ծանօթութիւններ պարունակող երես մը բացաւ, այն ծանօթու-

Թիւնները սեղանին վրայ դրուած վաճառման դաշնագրին հետ բաղդատեց, և իւր յիշողութիւնը ամփոփելով՝ ինքնիւրեն ըսաւ.

— Ճիշդ այս է. Օթէօյլ, Ֆօնթէն փողոցը, թիւ 28. հիմա արդեօք հաւատոյ երկիւղով անոր խոստովանութիւնը ստանալ պէտք եմ թէ բնական երկիւղով. սակայն ժամէ մը ամեն բան պիտի իմանամ: — Պէրթուչիօ —, պոռաց կոմսը տեսակ մը ուռով սկահի մը վրայ զարնելով, որ ծնծղայի ձայնին նման սուր և երկար հնչում մը հանեց. — Պէրթուչիօ —:

Գործակատարը դրան առջևը երեցաւ:

— Պարոն Պէրթուչիօ, ըսաւ կոմսը, ժամանակաւ ինձ ըսիր թէ Գաղղիա ճանապարհորդութիւն ըրած ես:

— Այո՛, տէր իմ, Գաղղիոյ քանի մը կողմերը:

— Անշուշտ Բարիզի շրջակաները կը ճանչնաս:

— Ա՛յ, տէր իմ, ոչ, պատասխանեց գործակատարը տեսակ մը ջղային սարսուռով, որուն պատճառը սաստիկ անհանգստութիւն մը երեցաւ Մօնթէ-Քրիսթոյի, որ անոր սրտի յուզմունքը աղէկ կը ճանչնար:

— Մեղք, ըսաւ, որ Բարիզի շրջակաները չես ճանչնար, քանզի այս իրիկուն նոր տունս տեսնել կ'ուզեմ, և հետս գալով՝ կրնայիր օգտակար տեղեկութիւններ տալ ինձ:

— Օթէօյլ պիտի երթաք, ըսաւ Պէրթուչիօ, որուն երեսի պղնձի գոյնը դրեթէ կապարագունի փոխուեցաւ, և զիս Օթէօյլ պիտի տանիք:

— Կը հարցընեմ քեզ. Օթէօյլ երթալու համար ինչ պատճառ ունիս զարմանալու: Երբ ես Օթէօյլ բնակիմ, դուն ալ հետս պիտի գաս, ըստ որում դուն ալ իմ տունէս ես —:

Պէրթուչիօ իւր տիրոջ սէզ նայուածքէն զլուխը խոնարհեցուց, և անշարժ ու ապաբան մնաց:

— Բայց ըսէ՛, ինչ եղար: Կառքը պատրաստել տալու համար երկրորդ անդամ, զանդակը հնչեցընել պիտի տաս:

ինձ — , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ այնպիսի ձայնով մը , որով  
 Առի ԹԴ իւր երեւելի խօսքը արտասանեց թէ՛ «Քիչ մնաց  
 որ շպիտի սպասէի» :

Պէրթուչիօ մէկ ոստուամով փոքր սրահէն նախասենեակն  
 անցաւ և կերկերեալ ձայնով մը սլոաց .

— Նորին Ասեմութեան ձիերը լծեցէք — :

Մօնթէ-Քրիսթօ երկու կամ երեք նամակ դրեց : Աերջին  
 նամակը կնքելու ժամանակը՝ դործակատարը ներս մտաւ .

— Նորին Ասեմութեան կառքը պատրաստ է , ըսաւ :

— Շատ աղէկ . ձեռնոցներդ ուղ լխարիդ առ , ըսաւ կոմսը :

— Ստուդիւ ձեզի հետ դալ պէտք եմ ես :

— Անշուշտ . պէտք է տեսնես և պէտք եղած հրամաններն  
 ընես . քանզի այն տունը բնակելու միտք ունիմ — :

Երբէք օրինակը տեսնուած չէր որ կոմսին մէկ հրամանին  
 պատասխան մը կարենային տալ :

Ուստի դործակատարը առանց ընդդիմութեան իւր տիրոջ  
 ետեէն դնաց . կոմսը կառքը մտաւ և նշան ըրաւ անոր որ  
 հետը գայ :

Գործակատարը կառքին առջևի նստարանին վրայ ակնա-  
 ծութեամբ նստաւ :



## ՔՐՈՒԹ ՔՕ

## ՍԹԷՍՅԼԻ ՏՈՒՆԸ



**Մ**ՕՆԹԷ-ՔՐԻՍՏՈՑ գիտեր էր որ Պէրթուչիօ սանդուխէն իջնելու ժամանակը՝ Քորսիացի ծովահէններուն պէս իւր բթամատովը օդին մէջ խաչին նշանը ըրեր էր, և կառքին մէջ իւր տեղը նստած ժամանակն ալ ցած ձայնով կարճ աղօթք մը կը մըմնար:

Անհետաքրքիր ո՛ր և է մէկը կրնար դուրս ունենալ դործակատարին այն շրջագայութեան համար յայտնած դժկամակութեանը: Սակայն կոմսը, ինչպէս կ'երևէր, հետաքրքիր ըլլալով, չէր ուզեր Պէրթուչիօն այն փոքր ճամբորդութենէն ազատ թողուլ:

Քսան վայրկենի մէջ Օթէօյլ հասան:

Գործակատարին սրտի անհանգստութիւնը երթալով կ'աճէր Երբ դիւզը մտան, Պէրթուչիօ կառքին անկիւնը ամփոփուելով՝ ջերմնոտ յուզմամբ սկսաւ մի առ մի զննել այն տուները, որոնց առջևէն կ'անցնէին:

— Կառքը կեցընել տուր Փօնթէն փողոցը, թիւ 28 —, ըսաւ կոմսը՝ իւր անդուր նայուածքովը գործակատարին նայելով, որուն այս հրամանը կ'ընէր:

Պէրթուչիոյի երեսը քրտինքով պատեցաւ. սակայն հնազանդեցաւ, և կառքէն դուրս հակելով՝ կառավարին սրուաց:

— Փօնթէն փողոցը, թիւ 28 —:

Այս թիւ 28 տունը դիւզին ծայրը կը դտնուէր:

Երթալու տեղերնին հասած՝ դիշերը վրայ հասեր էր, կամ զոնէ ելեկտրութեամբ լցուած սև ամպ մը այս կանխա-

Հաս մթութեան՝ միպասանական յարակից դէպքի մը երեւոյթն ու մսեմութիւնը կ'ընծայէր :

Կառքը կեցաւ, սպասաւորը դռնակէին առջևը վազեց և քայաւ զայն :

— Պիտի չիջնան դուն, պարոն Պէրթուչիօ, և կառքին մէջ պիտի մնաս. բայց ի՞նչ մտմտութունիս դուն այս իրիկուն— :

Պէրթուչիօ կառքէն դուրս ցատկեց և իւր ուսը ներկայացուց կոմսին, որ այս անդամ անոր վրայ կռթընե լով կառքին երեք աստիճաններէն վար իջաւ :

— Ջարկ դուռը, ըսաւ կոմսը, և ս'իլ ըլլալս իմացուր— :

Պէրթուչիօ զարկաւ, դուռը բացուեցաւ և դռնապանը դուրս ելնելով,

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց :

— Նոր տէրդ եկած է, բարի մարդ —, պատասխանեց սպասաւորը :

Այս ըսելով նօտարին տուած հրամանադիրը դռնապանին ներկայացուց :

— Ուրեմն տունը ծախուեցա՞ւ, հարցուց դռնապանը, և պարոնը պիտի դայ քնակելու :

— Այո՛, բարեկամ, ըսաւ կոմսը, և պիտի ջանամ որ նախկին տիրոջը վրայ ցաւելու տեղի չունենաս :

— Ամենեւին ցաւելու տեղի պիտի չունենամ, պարոն, ըսաւ դռնապանը, ըստ որում շատ քիչ անգամ կը տեսնէինք զան. հինգ տարիէն աւելի է որ եկած չէ, և շատ աղէկ ըրած է վաճառելու այնպիսի տուն մը որ իրեն չէր ծառայեր :

— Եւ ի՞նչ էր նախկին տիրոջը անունը, հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Սէն-Մէրանի մարքէզ. ապահով եմ որ իրեն արժած զնովը ծախած չէ այս տունը :

— Սէն-Մէրանի մարքէզ, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ. ինձ այնպէս կ'երևի թէ այս անունը անծանօթ չէ ինձ, ըսաւ կոմսը. Սէն-Մէրանի մարքէզ. . . — :

Եւ անոր ո՛վ ըլլալը իւր յիշողութեան մէջ փնտռել կը ձեացընէր :

— Ծերունի աղնուական մ'էր, շարունակեց դոնապանը, և Պուերպոննեբուն հաւատարիմ ծառան, միակ աղջիկ մը ունէր Պ. Վիլլեֆօրի հետ ամուսնացած, որ առաջ Նիմ' ետքը Վէրսայլ թագաւորի գործակալ եղաւ — :

Մօնթէ-Քրիսթօ իւր նայուածքը Պէրթուչիոյի վրայ տարաւ, որ չիյնալու համար սլատին կռթընած էր և իւր գոյնը պատէն աւելի կապարադունի փոխուեր էր :

— Բայց այն աղջիկը շնոաւ, հարցուց Մօնթէ-Քրիսթօ, կարծեմ թէ այնպէս ըսին :

— Այո՛, սլարոն, քուան և մէկ տարի կայ, և այն ժամանակէն 'ի վեր ողորմելի մարքէզը երեք անգամ չտեսանք :

— Շնորհակալ եմ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, որ գործակատարին տկարութիւնը տեսնելով՝ հասկըցեր էր որ սլարանը աւելի քաշելով պիտի կոտրէր : Բարի մարդ, ճրագ մը տուր մեզ :

— Ա՛ռ զէք որ հետերնիդ գամ :

— Ա՛չ, հարկ չէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, երկու ոսկի նուիրելով դոնապանին, որ օրհնութեան և հառաչանաց ձայներով շնորհակալ եղաւ անոր :

— Ա՛հ, սլարոն, ըսաւ դոնապանը՝ անօգուտ տեղը կրակարանին քիւին և անոր քովի տախտակներուն վրայ փնտռելէն ետեւ, կը ցաւիմ որ մում չունիմ :

— Պէրթուչիօ, կառքին լապտերներէն մէկն առ և եկու սենեակներն ինձ ցուցընես — , ըսաւ կոմսը :

Գործակատարը առանց խօսք մը խօսելու հնազանդեցաւ, բայց լապտերը բռնած ձեռքին դողդղալէն յայտնի կ'երևէր թէ ո՛րչափ անտանելի էր այս հնազանդութիւնը :

Բաւական ընդարձակ դետնայարկը պտըտեցան, անկէ անցան առաջին դատիկոնը, որ սրահէ մը, լողարանէ մը և երկու պառկելու խուցերէ կը բաղկանար :

Այս պառկելու խուցերուն մէջէն պտուտաւոր սանդուխով մը սլարտէզ մը կ'իջնուէր :

— Ահա դադտնի սանդուխ մը , ըսաւ կոմսը , որ բաւախան վայելուչ է : Հոս բռնէ լապտերը , պարոն Պէրթուչիօ , առաջ անցիր , և նայինք այս սանդուխը ո՞ւր կը տանի :

— Պարոն , ըսաւ Պէրթուչիօ , պարտէզը կը տանի :

— Եւ ի՞նչպէս դիտես այս բանը , ըսէ , կ'աղաչեմ :

— Այսինքն պէտք է որ տանի :

— Ուրեմն տեսնենք — :

Պէրթուչիօ հառաչանք մը հաննց և առջեէն քալից :

Իրօք սանդուխին վարը պարտէզ մը կար :

Արտաքին դրան առջևը դործակատարը կեցաւ :

— Ինչո՞ւ չես քալեր , պարոն Պէրթուչիօ — , ըսաւ կոմսը : Բայց Պէրթուչիօ խլացեր , ընդարմացեր և գրեթէ ողբապառ եղեր էր :

Ողորմելոյն շիտած աչքերը իւր բոլորտիքը սոսկալի անցեալի մը հետքերը կը փնտոէին , և իւր կնճռած ձեռքերը ահռելի յիշատակներ հեռացընել կը ջանային :

— Պիտի չքալես , ըսաւ կոմսը :

— Ո՛չ , ո՛չ , պոռաց Պէրթուչիօ՝ լապտերը ներքին պատին անկիւնը դնելով , ոչ , պարոն , անկարելի է , չեմ կրնար երթալ :

— Ի՞նչ կը նշանակէ այդ , ըսաւ կոմսը անողոք ձայնիւ :

— Բայց յայտնի կը տեսնէք որ բնականէն դուրս է այս , պոռաց դործակատարը . Բարիդի մէջ տուն մը գնել ուղէք , ճիշդ Օթէօյլ դաք գնելու , և ձեր գնած տունն ալ Փօնթէն փողոցը , թիւ 28ն ըլլայ : Ա՛հ , ինչո՞ւ ես ամեն բան հոն չպատմէի ձեզ , տէր իմ . անշուշտ պիտի չստիպէիք զիս որ ձեր հետը դամ : Ար յուսայի որ ուրիշ տուն մը ըլլար ձեր գնածը : Աարծես թէ այս սպանութիւն դործուած տունէն գատ ուրիշ տուն չկայ Օթէօյլի մէջ :

— Ո՛հ , այդ ի՞նչ սոսկալի խօսք է , ըսաւ Փօնթէ-Քրիսթօ յանկարծ կենալով , թշուառական մարդ , ի՞նչ կ'ըսես , միշտ դադտնիք և ընդվայր երկիւղներ ունիս : Ա՛ն շուտով սա լապտերը և երթանք պարտէզը պտըտելու . ինձի հետ պէտք չես վախնալ — :

Պէրթուչիօ լրացուցիւ առաւ և հնազանդեցաւ :

Լուսինը պարապ տեղը կը մըցէր ամպոց ծովուն հետ , որոնք իրենց մթուածեան կոհակներովը զայն կը ծածկէին . հազիւ թէ վայրկեան մը լուսնին տկար լոյսը կ'երևէր , որ անբաւուածեան խորութեանց մէջ աւելի մութ ամպերու տակ կը թաղուէր :

Վար իջնալով՝ գործակատարը պարտէզին ձախ կողմը ուղղեցաւ :

— Այդ կողմը մի երթար , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , ծառուղիները տեսնելու ինչ հարկ կայ . ուղղակի դիմացնիս երթանք , ուր դեղեցիկ մարդագետին մը կը տեսնեմ — :

Պէրթուչիօ իւր ճակատէն հոսած քրտինքը սրբեց , բայց հնազանդեցաւ :

Սակայն շարունակ դէպ 'ի ձախ կողմը կը զարնէր :

Ընդ հակառակն Մօնթէ-Քրիսթօ աջ կողմը կ'երթար , և խիտ ծառերուն քովը հասնելով կեցաւ :

Գործակատարը չկրցաւ համբերել :

— Հեռացէ՛ք ատկէ , պարոն , պոռաց , հեռացէ՛ք ատկէ , կ'աղաչեմ . ճիշդ այն տեղը կեցած էք :

— Ո՞ր տեղը :

— Այն տեղը ուր որ դետինը ինկաւ :

— Սիրելիդ իմ պարոն Պէրթուչիօ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ծիծաղելով , խելքդ դ լուխդ ժողվէ , կը հրամայեմ քեզ , ոչ Սարթէնա կը գտնուինք և ոչ Գորթէ : Անտառի մէջ չենք , այլ անդղիական պարտէզի մը մէջ , որ աղէկ խնամուած չէ , բայց այս բանիս համար պէտք չէ զրպարտել անոր տէրը :

— Պարոն , կ'աղաչեմ , հող մի կենաք , հող մի կենաք :

— Կարծեմ թէ խենթեցեր ես , Պէրթուչիօ , ըսաւ կոմսը պաղուածեամբ , եթէ ստոյգ է , իմացուր ինձ որ դժբաղդութիւն մը պատահելէն առաջ զքեզ յիմարանոց մը դնել տամ :

— Ափսոս , տէր իմ , ըսաւ Պէրթուչիօ դ լուխը շարժելով և ձեռքերը միացրնելով այնպիսի կեցուածքով մը , որ կրնար կոմսին ծիծաղը բերել , եթէ աւելի մեծ օղտի մը մտմտութիւն



այս միջոցիս զինքը զբաղած չըլլար, և տաղնապետալ խղճի մը արտայայտութեան ուշագիւր չըլլար, ափսոս, տէր իմ, դըժբաղդութիւնը հոս պատահեցաւ:

— Պ. Պէրթուչիօ. ըսաւ կոմսը, թեւերովդ այնպիսի շարժումներ կ'ընես, և աչքերդ այնպէս կ'ոլորես որ կարծես թէ դիւահարեր ես և դէր չես կրնար հանել. ես դրեթէ միշտ դիտած եմ որ տեղէն շարժիլ չուզող ամենէն յամառ դէր գաղտնիքն է: Ես դիտէի որ դուն Քորսիացի մ'ես, դիտէի որ ամեն ժամանակ տխրակաց ես ու վրէժխնդրութեան հին պատմութիւն մը կ'որոճաս, և հողս չէի ըներ Իտալիոյ մէջ. ըստ որում այս տեսակ գործերը հասարակ են հոն. սակայն Գաղղիոյ մէջ մարդասպանութիւնը գլխաւորաբար առանց պատժոյ չմնար. ոստիկանները մարդասպանը կը փնտռեն, դատաւորները կը դատապարտեն և կառափնարանները վրէժը կը լուծեն —:

Պէրթուչիօ իւր ձեռքերը միացուց, և այս զանազան շարժումներն ըրած ատենը՝ ձեռքը բռնած լապտերին լոյսը իւր այլայլեալ երեսը կը լուսաւորէր:

Մօնթէ-Քրիսթօ Հոռմի մէջ Անտրէայի տանջանքը դիտած աչքովը Պէրթուչիօն դիտեց. ետքը այնպիսի ձայնով մը որ ողորմելի գործակատարին բոլոր մարմինը դողացուց, ըսաւ.

— Ուրեմն արքայ Պիզոնին սուտ ըսաւ երբ 1829ին իւր Գաղղիա ըրած ճանապարհորդութենէն ետե՛ղքեղ ինձ զրկեց յանձնարարական նամակով մը, որուն մէջ քու թանկագին յատկութիւններդ կը դովէր: Ուրեմն արքային գրեմ, և ըզքեղ անոր պատասխանատուութեանը յանձնեմ. անշուշտ այն ատեն պիտի իմանամ թէ ի՞նչ կը նշանակէ այս սպանութեան գործը: Միայն թէ կ'իմացընեմ քեզ, պարոն Պէրթուչիօ, թէ ո՞ր երկրի մէջ որ ասլրիմ, սովորութիւն ունիմ անոր օրինաց համաձայն վարուելու և քեզի համար Գաղղիոյ ոստիկանութեան հետ դժտելու փափաք չունիմ:

— Ո՛հ, կ'աղաչեմ, մի՛ ընէք այդ բանը, տէր իմ, ըսաւ Պէրթուչիօ յուսահատական ձայնիւ. ես միշտ հաւատարմու-

Թեամբ ծառայեցի ձեզ, այնպէս չէ, ամեն ատեն սլարկեշտու  
Թեամբ վարուեցայ, և կըրցածէս աւելի բարի դործեր իսկ ըրի:

— Չեմ կրնար ուրանալ այդ բանը, կրկնեց կոմսը. բայց  
ինչ սլատճառաւ այդպէս այլայլեցար: Պէշ նշան մ'է այդ.  
մաքուր խիղճը այտերուն այդչափ դեղնութիւն և բոլոր ան-  
ձին այդչափ սարսուռ չկրնար սլատճառել. . . .

— Բայց, սլարոն կոմս, կրկնեց Պէրթուչիօ երկմտելով,  
դուք չըսիք ինձ թէ Աբբայ Պիւզոնին, որ նիւթի բանտերուն  
մէջ դիս խոստովանեցուց, ձեր քովը դրկած ժամանակը իմա-  
ցուց ձեզ թէ ես մեծ մեղքի մը տէր եմ:

— Այո՛, բայց ես կարծեցի թէ դողութիւն մը ըրած ես,  
ըստ որում զքեզ իմ քովս կը դրկէր ըսելով թէ ընտիր դոր-  
ծակատար մը կրնաս ըլլալ:

— Ա՛հ, ոչ, սլարոն կոմս, ըսաւ Պէրթուչիօ արհամարհանօք:

— Եւ կամ, որովհետեւ Քորսիացի էիր, չկըցեր էիր դիմա-  
նալ մորթ մը շինելու փափաքիդ, ինչպէս կ'ըսէք ձեր երկրին  
մէջ հակառակ մտօք, քանի որ մորթ մը կ'աւերէք:

— Ա՛հ, այո՛, տէր իմ, այո՛, իմ բարի տէրս. ստոյգ է, ըսաւ  
Պէրթուչիօ կոմսին առջևը ծնկան վրայ դալով. այո՛, վրէժ խըն-  
դրութիւն մ'էր զոր կատարեցի, կ'երդնում, սլարդ վրէժ-  
խնդրութիւն մը:

— Այո՛, կը հասկընամ, բայց չհասկըցածս ալ սա է թէ  
ինչպէս ճիշդ այս տունը քեզ այդ աստիճան ելեքարութիւն  
կ'ազդէ:

— Ինչո՞ւ կը զարմանաք, տէր իմ, վրէժ խնդրութիւնը այս  
տանը մէջ կատարուեցաւ:

— Ի՞նչպէս, իմ տանս մէջ:

— Բայց տակաւին ձերը չէր, կրկնեց Պէրթուչիօ սլարդու-  
թեամբ մը:

— Բայց որո՞ն էր այս տունը, կարծեմ դռնապանը ըսաւ  
թէ Սէն-Մէրանի մարքէզինն էր: Սէն-Մէրանի մարքէզին  
ինչ վրէժ ունէիր լուծելու:

— Անորմէ լուծելու վրէժ մը չունէի, սլարոն, այլ ուրի-  
շէ մը:

— Ի՛նչ զարմանալի յարմարութիւն, ըսաւ Մօնթէ-Քրիստօ մտածել ձեացընելով, որ ըստ դիպաց այնպիսի տան մը մէջ կը դանուինք, ուր տեղի ունեցած տեսարանը քեզ այնպիսի խղճի տաղնապ կ'ազդէ :

— Աարոն, ըսաւ դորձակատարը, ստուգիւ այս ամեն եղածները պէտք է որ ճակատադիրը տնօրինէ. քահոզի Ճիշդ Օթէօյլի մէջ այնպիսի տուն մը կը գնէք, ուր ես մարդ մը սպաննած եմ. Ճիշդ այն սանդուխէն սլարտէզը կ'իջնէք, ուր կից ան ալ իջաւ. Ճիշդ հարուածը ընդունած տեղը կը կենար, երկու քայլ անդին՝ այս սօսիին տակը այն փոսը կը դրտնուէր, որու մէջ մանուկը թաղեց. այս ամենը դիպուածական չկրնար ըլլալ, ոչ, վասն զի այն ժամանակ դիպուածը Նախախնամութեան նմանելու էր :

— Համարեա թէ Նախախնամութիւնն է որ ամեն բան այսպէս կը տնօրինէ, պարոն Քորսիացի, ամեն բան կ'ենթադրեմ ես, մանաւանդ որ խօթացեալ մտաց պէտք է ներել: Աղէ ուրեմն, ամփոփէ յիշողութիւնդ և սլատմէ ինձ այդ եղելութիւնը:

— Միայն անդամ մը սլատմած եմ, պարոն, և զայն աբարայ Պիւզնիին: Այսպիսի դաղտնի խօսքերը միայն խոստովանութեան կնիքին տակը կը սլատմուին, յաւելցուց Պէրթուչիօ դուխը շարժելով:

— Աւրեմն զքեզ խոստովանահօրդ քով դրկեմ, սիրելիդ իմ Պէրթուչիօ, որպէս զի դաղտնիքդ անոր սլատմես, ու անոր հետ Աարթուսեան կամ Պէրնարտեան կրօնաւոր եղիր: Սակայն ես կը վախնամ այն անձէն, որ այսպիսի մտացածին ուրուականներէ կ'երկնչի, ու երբէք չեմ սիրեր որ իմ մարդիկս չհամարձակին դիշեր ժամանակ սլարտէզս պտըտիլ: Ասկէ զատ՝ ստոյգ կ'ըսեմ որ ոստիկանութեան դորձակալի մը այցելութենէն այնչափ չեմ ախորժեր. վասն զի դիտցիր, Պ. Պէրթուչիօ, որ Իտալիոյ մէջ ոստիկանութեան կը վճարեն լուռ կենսալուծն համար, իսկ Քաղղիոյ մէջ ընդհակառակն խօսելուն համար կը վճարեն: Է՛հ, ես զքեզ Քորսիացի, քաջ մաքսանենդ և արժանաւոր դորձակատար մը կը կարծէի, սակայն

կը տեսնեմ որ աղեղիդ համար ուրիշ լարեր ունիս : Այսո՞ւ  
հետեւ քեզ պէտք չունիմ, պարոն Պէրթուչիօ :

— Ա՛հ, տէր իմ, ըսաւ գործակատարը այս սպառնալիքէն  
վախնալով. եթէ ձեր ծառայութեանը տակ մնալս ասկէ կա-  
խեալ է, ամեն բան կը պատմեմ. և եթէ ձեզմէ բաժնուիմ,  
աւելի աղէկ է որ կառափնարանը երթամ :

— Բայց մտածէ, եթէ սուտ խօսիս, աւելի աղէկ է որ ա-  
մենեին չպատմես :

— Ա՛չ, պարոն, հոգւոյս փրկութեանը վրայ է՛րդնում որ  
ամեն բան պիտի պատմեմ. արքայ Պիւզոնիին իսկ դադտնեացա-  
միայն. մէկ մասը պատմած եմ : Բայց նախ կ'աղաչեմ որ  
այդ սօսիին քովէն հեռանաք. տեսէք՝ լուսինը ամպերէն պի-  
տի պարզուի հիմա, ու այդ տեղ կանդնած և վերարկուին  
մէջ ծածկուած տեսնելով զձեզ, կարծեմ թէ Պ. Վիլլեֆօրը  
կը տեսնեմ . . . . :

— Ի՛նչպէս, Պ. Վիլլեֆօրը . . . . :

— Ձեր վսեմութիւնը կը ճանչնայ զան :

— Նիմ քաղաքին թագաւորի գործակալը :

— Այո՛ :

— Ար Սէն-Մէրանի մարքէզին աղջկան հետ ամուսնա-  
ցեալ էր :

— Այո՛ :

— Եւ ատեանին մէջ ամենէն խիստ և անուշառ դատաւորն  
ըլլալուն համբաւն ունէր :

— Այո՛, պարոն, ճիշդ այդ մեծ համբաւ ունեցող անձը . . . . :

— Ետքը՞ :

— Անօրէն մարդ մ'էր ան :

— Ձեմ կարծեր, անկարելի է :

— Սակայն ճիշդ ըսածս է :

— Պատմէ ուրեմն որ լսեմ, պարոն Պէրթուչիօ, վասն զի  
յիրաւի հետաքրքրութիւնս կը շարժես — :

Եւ կոմսը Լ. Վիլլեֆօրի եղանակը երդելով, դնաց նստարանին  
վրայ նստելու և Պէրթուչիօ անոր ետեւէն դնաց իւր յիշողութիւնը  
ամփոփելով : Պէրթուչիօ ոտքի վրայ անոր առջին կանդնեցաւ :



ՔԼՈՒԲ Ե.

ՎՐԻՃՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



**ՈՐ** ԻՐ ԿՐԹՅՈՒՆ ԿՐ փափագիք որ պատմութիւնս սկսիմ, հարցուց Պէրթուչիօ օ

— Ուրկից որ կ'ուզես, սլատաս խանեց Ծօնթէ-Քրիսթօ. վասն զի ամենեին պարագաները չեմ գիտեր օ

— Կարծէի թէ աբբայ Պիւզոնին Ձեր Վսեմութեանը պատմած է . . . . :

— Այո՛, միայն քանի մը մասերը պատմեց, սակայն անկէ՛ ՚ի վեր եօթը կամ ութ տարի անցաւ, և ամեն բան մոռցած եմ օ :

— Ուրեմն աներկիւղ Ձեր Վսեմութիւնը կրնամ ձանձրապրնել օ :

— Սկսէ, պարոն Պէրթուչիօ, սկսէ, իրիկուան Օրագրին գործը պիտի տեսնես ինձ օ :

— Պատմութիւնս 1815էն կ'ըսկսի օ :

— Ո՛հո՛, ըսաւ Ծօնթէ-Քրիսթօ, 1815էն պատմութիւնը երէկուանը չէ օ :

— Ոչ, պարոն, սակայն անոր մանրամասն պարագաները այնպէս մտացս մէջ մնացած են, որ կարծես թէ պատահածին հետեւեալ օրն ենք օ : Կայսեր ծառայութեան ներքեւ անդրանիկ եղբայր մը սկսէի, որ բոլորովին Քորսիացւոցմէ կազմուած զընդի մը մէջ տեղակալ էր օ : Երկուքս ալ որք մնալով՝ ես հինգ

տարեկան, եղբայրս տասն և ութ տարեկան, զիս իւր որդւոյն պէս մեծցուց ու ես խիստ շատ կը սիրէի զան: ԿՅԱԿԷՆ՝ Պուրպոններուն ժամանակը ամուսնացաւ: Չայսրը Ելլա կղղիէն վերադառնալով՝ եղբայրս վերստին իւր առջի պաշտօնին անցաւ և Ուաթէրլոյի պատերազմին մէջ թեթև վէրք մը առած՝ բանակին հետ Լուառ գետին ետին քաշուեցաւ:

— Հարիւր-Օրեայ իշխանութեան պատմութիւնն է այդ, պարոն Պէրթուչիօ, ըսաւ կոմսը, եթէ չեմ սխալիր՝ այդ պատմութիւնը պատմած ես արդէն:

— Ներեցէք, տէր իմ, այս նախնական մտնրամասն տեղեկութիւնները կարեւոր են, և դուք խոստացաք ինձ որ պիտի չձանձրանաք:

— Շարունակէ. խօսքիս վրայ եմ:

— Օր մը նամակ մը ընկալանք. պէտք է դիտնաք որ Քորսսիոյ հրուանդանին ծայրը դտնուած Առլիանօ ըսուած գիւղակը կը բնակէինք. այս նամակը եղբորմէս եկած էր և կ'իմացընէր մեզ թէ բանակը ցրուելու հրաման ստացած ըլլալով, Շաթորուին, Քլէրմոն-Փէրանին, Բիւիին և Նիմին վրայէն պիտի վերադառնայ, և կ'աղաչէր զիս որ եթէ քիչ մը ստակ ունիմ՝ իրեն զրկեմ մեզի ծանօթ պանդոկապետի մը տունը, որուն հետ յարաբերութիւններ ունէի:

— Մաքսանենդութեան յարաբերութիւններ, հարցուց Մօնթէ - Քրիսթօ:

— Է՛հ, պարոն կոմս, ինչ ընեմ, ասորիւ ալ պէտք է:

— Անշուշտ. շարունակէ նայինք:

— Արդէն ըսի ձեզ թէ եղբայրս խիստ կը սիրէի. ուստի որոշեցի որ ուղած ստակը չզրկեմ, այլ ես անձամբ տանիմ անոր: Հազար ֆրանքի չափ ստակ ունէի. հինգ հարիւրը եղբորս կնոջը Ասունթային թողուցի, մնացեալ հինգ հարիւրը հետս առի ու ճամբայ ելայ Նիմ երթալու. ինձի համար դժուար չէր այս ճանասարհորդութիւնը, քանզի մակոյկ մը ունէի, զոր ասորանքով պիտի բեռնաւորէի. դիտաւորութիւնս քստ ամենայնի կը յաջողէր, սակայն երբ մակոյկը բեռնաւոր

րեցինք, հողմը սկսաւ հակառակ կողմէն փչել, որով չորս կամ հինգ օր չկրցանք Թոնի մէջ մանել, վերջապէս յաջողեցանք ու մինչև Արլ յառաջացանք. Աէլիբատի և Պոքէրի մէջ տեղը մակոցիս թողուցի և դէպ'ի Նիմ ճամբայ ինկայ:

— Պատմութիւնդ վերջացընելու մօտ ես, այնպէս չէ:

— Այո՛, պարոն. բայց քիչ մը ժամանակ ևս ներեցէք ինձ, և պիտի տեսնէք որ տմենէն կարևոր անցքերը պատմեր եմ: Այն միջոցին Հարաւային մեծ կոտորածին ժամանակն էր: Թրէթայօն, Թրուֆէմ և Արաֆան անունով երկու կամ երեք աւազակներ կային, որոնք փողոցներուն մէջ Պոնաբարդական կասկածեալները կ'ըսպաննէին: Անտարակոյս Չեր Ասեմու թիւնը այս սպանութիւնները լսած է:

— Անորոշ կերպով միայն, վասն զի այն միջոցին Գաղղիայէն շատ հեռու էի, շարունակէ:

— Նիմ քաղաքը արիւնով ներկուած էր. ամեն կողմ գիւակներ կը գտնուէին, մարդասպանները խուճք խուճք եղած կ'ըսպաննէին, կը կողոպտէին և կ'այրէին: Այս կոտորածը տեսնելով՝ սարսուռ մը սլատեց զիս ոչ ինձի համար, քան զի ես Քորսիացի ձկնորս մը ըլլալով՝ վախնալու տեղ չունէի. ընդ հակառակն այն միջոցին մաքսանենդերու համար յարմար ժամանակ մ'էր, սակայն իմ երկիւղս եղբօրս համար էր, որ Ասյսեր զինուորներէն մէկն էր, ու իւր միազղեստոմբ և ուսադիրներովը Աուառի վրայէն վերադառնալուն՝ վտանգի մէջ կը գտնուէր: Աւտի մեր սլանդոկասլետին տունը վազեցի. իմ նախազգացութեանցս մէջ խարուած չէի. եղբայրս նախընթաց իրիկունը Նիմ հասեր և իջեանած սլանդոկին դրան առջևը ըսպաննուեր է: Սպաննողները ճանչնալու համար շատ աշխատեցայ, սակայն անոնք այնչափ սարսափ պատճառեր էին որ մարդ չհամարձակեցաւ անոնց անունը տալու: Այն ատեն մտածեցի որ գաղղիական ոստիկանութեան դիմեմ. քան զի լըսեր էի թէ բանէ մը չվախնար, և թաղաւորի դործակալին ներկայացայ:

— Այն թաղաւորի դործակալին անունը Աիլըֆօր էր, հարցուց Մօնթէ - Քրիսթօ անհողութեամբ:

— Այո՛, տէր իմ, Մարտիրոսայէն հոս եկեր էր, ուր գործաւ կալի փոխանորդ էր: Իւր եռանդը յառաջանալու արժանացուցեր էր զինքը: Այստեղ էլպա կղզիէն ելնելուն լուրը կառավարութեան տուողներուն առաջիններէն մէկն էր կ'ըսեն:

— Ուրեմն, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, անո՞ր ներկայացար:

« — Պարոն, ըսի անոր, եղբայրս երէկ Նիմի փողոցներուն մէջ սպաններ են. չեմ գիտեր ո՞վ է սպաննողը, բայց ձեր պարտքն է գիտնալը: Գուք ոստիկանութեան գլուխն էք, և ոստիկանութեան կ'իյնայ իւր պաշտպանել չկրցած մարդոց վրէժը լուծելու:

« — Եւ ո՞վ էր եղբայրդ, հարցուց թաղաւորի գործակալը:

« — Քորսիացի խումբին տեղակալը:

« — Յափշտակչին զինուորներէն մէկը, այնպէս չէ՞:

« — Գաղղիացի բանակաց մէկ զինուորն էր:

« — Ի՞նչ կ'ուզես հիմա. եղբայրդ սուր վերցուց և սուրով մեռաւ:

« — Կը սխալիք, պարոն, դաշոյնով մեռաւ:

« — Ես ի՞նչ ընեմ, պատասխանեց դատաւորը:

« — Արդէն ըսի, կ'ուզեմ որ վրէժը լուծէք:

« — Եւ որմէ՞:

« — Ջան սպաննողներէն:

« — Միթէ ես կը ճանչնամ զանոնք:

« — Փնտռել տուէք:

« — Ի՞նչ պատճառաւ. եղբայրդ անշուշտ անոնց հետ գրծատութիւն մը ունենալով հետերնին կռուած է: Այստեղութեան ժամանակ բոլոր այն հին զինուորները իրենց անկարգութեանց չափը անցուցին, բայց հիմա գործերնին գէշի դարձած է. քանզի մեր Հարաւային ժողովուրդը ոչ զինուորները կը սիրէ և ոչ անկարգութիւնները:

« — Պարոն, կրկնեցի, ինձի համար չեմ աղաչեր. քանզի ես անոր համար կամ սլիտի լամ և կամ վրէժը սլիտի լուծեմ. բայց իմ թշուառ եղբայրս կին մը ունի: Եթէ ինձ ալ գժբաղգութիւն մը հասնի, այն ողորմելի արարածը անօթու-



Թե՛նէ պիտի մեռնի . քանզի եղբօրս աշխատութեամբը միայն  
կ'ապրէր : Անոր համար կառավարութե՛նէ փոքրիկ ուճիկ Քը  
պահանջեցէք :

« — Ամեն յեղափոխութիւն իւր աղէտները ունի , պատաս-  
խանեց Պ . Ալիլլօֆօր . եղբայրդ ալ այս յեղափոխութեան զոհ  
եղաւ . դժբաղդութիւն մ'է այս , սակայն կառավարութիւնը  
անոր ընտանեացը պարտաւոր չէ ասոր համար : Եթէ Յա-  
փրշտակչին կողմնակիցներուն՝ թաղաւորին կողմնակիցներէն լու-  
ծած վրէժները դատելու ըլլայինք , եղբայրդ զուցէ այսօր 'ի  
մահ պիտի դատապարտուէր : Պատահածը խիստ բնական է ,  
քանզի վրէժխնդրութեան օրէնքը այս է :

« — Գուք դատաւոր մ'էք , սարոն , պոռացի այն ատեն ,  
ձեզի կը վայլէ՞ որ այսպէս խօսիք . . . »

« — Ստուդիւ բոլոր Քորսիացիք խենթ են , պատասխանեց  
Պ . Ալիլլօֆօր , և կը կարծեն իսկ թէ իրենց հայրենակիցը  
կայսր է : Սիրելիս , ժամանակէն կը խաբուիք դուք . պէտք  
էր որ այդ խօսքը երկու ամիս առաջ դայիր ինձ ըսելու .  
այսօր շատ ուշ է . դնա՛ ուրեմն ասկէ , և եթէ չես երթար ,  
ես զքեզ հանել կու տամ » :

— Աայրկեան մը անոր երեսը նայեցայ , որպէ՛ս զի տես-  
նեմ թէ արդեօք նոր թախանձանքներով կրնայի՞ յոյս մը  
ունենալ . այս մարդուն սիրտը քարեղէն էր . ուստի անոր  
մօտեցայ և կէս ձայնով ըսի . « Ուրեմն , քանի որ Քորսիա-  
ցիները կը ճանչնաք , պէտք էք գիտնալ իսկ թէ ինչպէս ի-  
րենց խօսքին վրայ կը կենան : Ա՛րսէք թէ աղէկ ըրեր են որ  
եղբայրս սպաններ են , ինչո՞ւ , վասն զի պոնաբարդական էր ,  
և դուք թաղաւորական էք . ուրեմն ես ալ որ պոնաբարդա-  
կան եմ՝ խօսք մը ունիմ ձեզ ըսելու . ես ալ զձեզ պիտի  
սպաննեմ , ուստի ինքզինքնիդ աղէկ նայեցէք , կրցածնուդ  
չափ զգուշացէք . քանզի առաջին անգամ որ դէմ առ դէմ  
պիտի դանք , ձեր վերջին ժամը հասած պիտի ըլլայ » . Այս  
խօսքին վրայ՝ տակաւին իւր զարմանքէն չսթափած՝ դուռը  
բացի և աներևոյթ եղայ :

— Ո՛հո՛, քու այդ պարկեշտ դէմքովդ այդպիսի դործե՛ր ալ կ'ընես, պարոն Պէրթուչիօ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, և այն՝ թաղաւորի դործակալի մը: Բայց միթէ վախցա՞ւ քեզմէ:

— Այո՛, այնչափ վախցաւ որ այն օրէն 'ի վեր առանձին գուրս չելաւ և զիս ամեն կողմ փնտռել տալով՝ իւր տանը մէջ փակուեցաւ:

« Բարեբաղդաբար այնպէս դադտնի սլահուած էի, որ չկրցաւ զիս դտնել: Այն ատեն սկսաւ վախնալ, ու չուզեց Նիմ մնալ, և որովհետեւ մեծ ազդեցութիւն ունէր, կառավարութենէն խնդրեց որ ուրիշ քաղաք մը երթայ, ու նոյն պաշտօնով Աւերսայլ հաստատուեցաւ. բայց դիտէք աղէկ որ իւր թշնամիէն վրէժը լուծելու համար երդում ընող Քորսիացիի մը ամենեւին հեռաւորութիւն չկայ, և թէպէտ Ալիլլֆօրի կառքը աղէկ լծուած էր, սակայն ինձմէ կէս օրուանէն աւելի առաջ չկրցաւ անցնիլ, թէև ես ոտքով կը հետեւէի անոր:»

« Ամենէն աւելի նկատելու բանը սպաննելը չէր, հարիւր անդամ զան սպաննելու առիթն ունեցայ, այլ պէտք էր առանց տեսնուելու և մանաւանդ առանց բռնուելու սպաննել:»

« Այնուհետև ես իմ անձիս տէրը չէի. քանզի կը պարտաւորէի եղբօրս կիներ պաշտպանել և անոր ապրուստը հողալ:»

« Երեք ամսէ 'ի վեր Պ. Ալիլլֆօրը կը լրտեսէի. երեք ամսուան մէջ շրջադայութիւն մը, քայլ մը չըրաւ որ ես անոր ուր երթալը չտեսնէի:»

« Աւերջապէս դիտեցի որ դադտնապէս Օթէօյլ կու դայ, ու միշտ ետեէն երթալով տեսայ որ այս տունը կը մտնէր. միայն թէ փոխանակ ամեն մարդու պէս փողոցին մեծ դուռէն մտնելու, կամ ձիով, կամ կառքով կու դար, ու իւր ձին կամ կառքը պանդոկ մը կը ձգէր, և այս փոքր դուռէն՝ զոր հոս կը տեսնէք՝ ներս կը մտնէր —:»

Մօնթէ-Քրիսթօ զլսովը շարժում մը ըրաւ, որով կը յայտնէր թէ Պէրթուչիոյի նշանակած կողմը մթութեան մէջ դուռ մը կը տեսնէր:

— Այնուհետև Աւերսայլ լրտեսելու պէտք չունէի . Օթէօյլ բնակեցայ և Ա. իլըֆօրի երթնեկութիւնը կը դիտէի : Քանզի սրողայթս լարելու համար ասկէ աւելի յարմար տեղ չկար :

« Այս տունը Ա. իլըֆօրի աներին Պ. Սէն-Մէրանին էր , ինչպէս որ դո՛նապանը Չեր Ասեմութեանը ըսաւ :

« Պ. Սէն-Մէրանը Մարսիլիա կը բնակէր . հետեւաբար այս գեղջկանն տունը իրեն չէր ծառայէր , այս պատճառաւ պարոնուհի անուամբ ճանչցուած ծաղկահաս սյրի կին մը դայն վարձած էր :

« Իրօք՝ իրիկուն մը պատին վրայէն նայած ժամանակս՝ նորաախ և դեղեցիկ կին մը տեսայ , որ առանձին կը պտրտէր այս պարտեզին մէջ , որուն վրայ նայող դրացիի պատուհան մը չկար . յաճախ փոքր դրան կողմը նայելէն հասկըցայ որ այն իրիկուն Պ. Ա. իլըֆօրի կ'ըսպասէր :

« Երբ այնչափ մտեցաւ իմ դանուած տեղիս , որ մթութեան մէջ իսկ անոր դիմաց դժագրութիւնը կրնայի սրոշել , տեսայ որ այս գեղանի ծաղկահաս անձը տասն և ութ կամ տասն և ինը տարեկան բարձրահասակ և խարտեաշ կին մ'էր :

« Եւ որովհետև տան հազուստով էր և սեղմուած զգեստներ հաղած չէր , դիտեցի որ յղի էր և իւր յղութիւնը բաւական յառաջացած կ'երևէր :

« Քանի մը վայրկեան ետքը՝ փոքրիկ դուռը բացուելով մարդ մը ներս մտաւ . կինը կրցածին չափ վազելով անոր դիմացը ելաւ . երկուքն ալ իրարու դիմացը նեւուեցան , սիրով դիմար համբուրեցին և միատեղ տան մէջ մտան :

« Այս մարդը Պ. Ա. իլըֆօրն էր :

« Անշուշտ դուքս ելած ժամանակը , Քանաւանդ եթէ դիչերով մեկնէր , առանձին այս պարտիզին մէջէն սխախ անցնէր :

— Այդ կնոջ անունը չկրցա՞ր իմանալ , հարցուց կոմսը :

— Ա՛չ , տէր իմ , պատասխանեց Աէրթուչիօ . հիմա սխախ տեսնէք որ իմանալու ատեն չունեցայ :

— Շարունակէ :

— Նայն իրիկունը կրնայի թաղաւորի դորձակալը ստանալէլ սակայն պարտիզին ամեն կողմերը աղէկ չէի ճանչնար :

« Կը վախնայի որ եթէ մէկ հարուածով չկարենայի սպաննել, անոր ձայներէն մարդիկ վրայ պիտի հասնէին ու ես պիտի չկարենայի փախչիլ: »

« Երեք օր ետքը՝ իրիկուան ժամը եօթին՝ տեսայ որ ծառայ մը այս տունէն ձիով դուրս ելնելով՝ արշաւանօք Սէվրի ճամբան զարկաւ. հասկըցայ որ Աէրսայլ կ'երթար ու չսխալեցայ: »

« Երեք ժամ ետքը՝ նոյն ծառան փոշիով ծածկուած վերջադարձաւ: Իրմէ տասը վայրկեան ետքը՝ վերարկուով ծածկուած մարդ մը պարտիզին փոքր դուռը բացաւ, և ներս մտնելով՝ զայն ներսէն դոցեց: »

« Իսկոյն պատէն վար իջայ: Թէև Ալիլեֆօրի երեսը տեսած չէի, սակայն սրտիս բաբախմանէն հասկըցայ որ ան է: Փողոցը պտըտեցայ, ու պատին անկիւնը դուրս ցցուած քաջին վրայ ելայ, ուրկից առաջին անգամ պարտիզին մէջ դիտեր էի: »

« Այս անգամ միայն դիտելով դո՛հ չեղայ. ծոցէս դանակահանեցի, անոր սրուած ըլլալը քննեցի, ու պատին վրայէն պարտէզին մէջ ցատկեցի: »

« Առաջին հոգս եղաւ դրան քովը վազել. բանալին ներքին կողմը դրան վրայ թողուցեր, ու միայն փականքին մէջ դարձուցեր էր զայն: »

« Արդ այս կողմէն փախչելու ամենեւին արդեւք մը չունէի. այն ատեն ամեն կողմ սկսայ դիտել: »

« Պարտէզը երկար քառակուսի դիրք մը ունէր. մէջտեղը անդղիական բարակ խոտերու մարդագետին մը կար, որուն անկիւնները թանձրախիտ տերեւներով և աշնանային ծաղիկներով խառն խիտ ծառեր կային: »

« Տունէն փոքր դուռը կամ փոքր դռնէն տունը երթալու համար՝ Պ. Ալիլեֆօր պարտաւորեալ էր թէ՛ մտնելու և թէ՛ դուրս ելնելու ժամանակ այս խիտ ծառերուն քովէն անցնիլ: »

« Սեպտեմբերի վերջն էր. հովը սաստիկ կը փչէր. երկնից մուրթ ամպերը վայրկեան առ վայրկեան ծածկուած տժգոյն

լուսնին տկար լոյսը ծառուղիներուն աւազը սալսակ կ'երև-  
ցընէր, սակայն չէր կրնար այս խիտ ծառերէն թափանցել,  
որոյ մէջ մարդ մը առանց տեսնուելու կրնար պահուիլ:

« Այնպիսի ծառի մը ետին պահուեցայ, որուն խիտ քո-  
վէն վիլըֆօր պիտի անցնէր. հաղիւ թէ տեղաւորութիւն էի,  
որ դիտիս վրայ բարձրացած ծառերը կորացընող մրրկալից  
հողմին ձայնին հետ հեծութեան ձայներ եկան ականջիս:

« Բայց դիտէք, պարոն կոմս, կամ դուցէ չէք դիտեր թէ  
սպանութեան վայրկենին սպասող մարդը կարծէ թէ օդին  
մէջ միշտ բարակ ձայներ կը լսէ:

« Երկու ժամ անցաւ, և ինձ այնպէս երեցաւ թէ մերթ-  
ընդ մերթ նոյն հեծութեան ձայները կը լսէի:

« Ժամացոյցը կէս դիշեր հնչեց:

« Ժամացուցին վերջին հարուածին աղէտազոյժ հնչիւնը  
տակաւին մարած չէր, երբ տկար լոյս մը տեսայ այս դաղտնի  
սանդուխին սպասուհաններուն առջևը, ուրկից մենք հիմա  
իջանք:

« Գուռը բացուեցաւ և վերարկուով մարդը երեցաւ:

« Սոսկառիթ վայրկեանը հասեր էր. սակայն այնչափ եր-  
կար ատենէ՛ի վեր այս վայրկենին սպարաստուած էի որ  
ամենեւին վհատութիւն մը չզգացի. գանակս հանեցի, ու սպա-  
րաստուեցայ:

« Վերարկուով մարդը ուղղակի դէպ 'ի իմ կողմս եկաւ.  
բայց յառաջացած ժամանակը կարծեցի թէ աջ ձեռքը զէնք  
մը բռնած է. ուստի սկսայ վախնալ չէ թէ անոր հետ կռուե-  
լու, այլ դուցէ չյաջողելուս համար:

« Բայց երբ ինձմէ միայն քայլ մը անդին հասաւ, տեսայ  
որ զէնք կարծածս ուրիշ բան չէր, բայց եթէ բահ մը:

« Անոր ինչ նպատակաւ այս բահը բռնելը գեռ չզուշակեր  
էի, երբ ծառերուն քովը կեցաւ, իւր բոլորտիքը նայեցաւ  
և սկսաւ գետինը փոս մը փորել:

« Այն ատեն տեսայ որ իւր վերարկուին մէջ բան մը ու-  
նէր, զոր խոտերուն վրայ դրաւ, որպէս զի աղատ կարենայ  
զործել:

« Ստոյղն ըսելով՝ այն միջոցին ատելութեանս հետ հետո՞ք  
քրքրութիւնս ալ շարժեցաւ . ուղեցի տեսնել թէ ինչ պիտի  
ընէ՞ Պ . Ախլըֆօր . անշարժ և առանց շունչ առնելու տեղս  
կեցայ և սպասեցի :

« Պ . Ախլըֆօրի նստատակը դուշակեր էի , երբ թաղաւորի  
դորձակալը իմ կարծիքս հաստատեց . իւր վերարկուն մէջէն  
երկու ոտք երկայնութեամբ և վեցը կամ ութ բթաչափ լայ-  
նութեամբ արկղիկ մը հանելը տեսայ :

« Թողուցի որ արկղիկը փոսին մէջ դնէ , որուն վրայ հողը  
ծածկեց . ետքը անոր վրայ կոխեց , որպէս զի իւր դիշերա-  
յին դորձին հետքը աներևոյթ ընէ :

« Այն ատեն անոր վրայ յարձակեցայ և դանակս կուրծքը  
խօթեցի ըսելով . ' Ես ճիովաննի Պէրթուչիօն եմ . մահդ եղ-  
բօրս և դանձդ անոր այրւոյն համար կը պահանջեմ . կը տես-  
նես որ վրէժխնդրութիւնս յուսացածէս աւելի աղէկ կա-  
տարուեցաւ ' :

« Ձեմ դիտեր թէ այս խօսքերս լսեց . չեմ կարծեր , վասն  
զի առանց հառաչանք մը հանելու դետինը փրուեցաւ . անոր  
կիզիչ արեան ձեռացս և երեսիս ցայտելը զգացի . սակայն  
այն աստիճան արեան ծարաւի էի , այնչափ ինքզինքս կորու-  
սած էի , որ անոր արկընը փոխանակ այրելու՝ կը զովայը-  
նէր զիս :

« Մանրերկրորդի մը մէջ բահով սնաուկը դուրս հանեցի .  
ետքը՝ որպէս զի առնելս չիմացուի՝ փոսը վերստին հողով լե-  
ցուցի , բահը պատին վրայէն դուրս նետեցի , ու դռնէն  
դուրս ելայ , զոր երկու անգամ դարձընելով բանլիքեցի և  
բանալին հետս առի :

— Բարի , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , կը տեսնեմ որ մար-  
դասպանութիւնդ դողութիւնով մը աւելի ծանրացուցիր :

— Ա՛չ , տէր իմ , սլատասխանեց Պէրթուչիօ . վրէժ մը լու-  
ծեցի ու անոր փոխարէնը հատուցի :

— Գոնէ դատժ դումարդ մե՞ծ էր :

— Մնտուկին մէջ ոտակ չկար :

— Ա՛հ, այո՛, կը յիշեմ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. մանկան մը խօսքը ըրիր:

— Եյո՛, աէր իմ. իսկոյն մինչև դետը վաղեցի, անոր եղբրքը նստայ, և արկղին մէջ սլարունահուածը դիտնալու ա՛ռայարելով, դանակովս փականքը կտարեցի:

« Ենոր ծնած մանուկ մը բարակ կտաւի մէջ պատեր էին. անոր ծիրանեղոյն երեսը և մանիշակաղոյն ձեռքերը կ'իմացրնէին որ բնականապէս սխարանոցին բոլորտիքը եղած նեարդական յօդակասելէն անդդայացեր էր. սակայն որովհետև դեռ պաղած չէր, կ'երկմտէի դետին մէջ նետելու:

« Իբօք՝ վայրկեան մը ետքը՝ անոր սրտին բաբախումը ըզգացի. սլարանոցը պատած կապերը կտրեցի, և որովհետև Պասթիայի հիւանդանոցին մէջ հիւանդաց խնամածու էի, այսպիսի սլարաղայի մէջ բժշկի մը ընելէքն ըրի, այսինքն՝ բոլոր զօրութեամբս անոր թոքերուն մէջ փչեցի, և քառորդ մը շարունակ զարմանալի ջանքեր ընելէ ետև՝ տեսայ որ շունչ կ'առնու և ձայն մը լսեցի:

« Ես իսկ ուրախութեան ձայն մը հանեցի. ' Ուրեմն Աստուած չանիծեց զիս, ըսի ինքնիրենս, քանզի կը ներէ որ 'ի կենդանութիւն կանչեմ մարդկային արարած մը 'ի փոխարէն այն կեանքին՝ որ ուրիշէ մը հանեցի ':

— Եւ ինչ ըրիր այն մանուկը, հարցուց Մօնթէ-Քրիսթօ. փախչելու սէտք ունեցող մարդու մը համար բաւական նեղութիւն տուող բեռ մ'էր:

— Մանաւանդ որ պահելու իսկ ամենեին միտք չունէի. սակայն դիտէի որ Բարիղի մէջ վանատուն մը կայ, ուր այս ողորմելի արարածները կ'ընդունին:

« Քաղաքին դռնէն ներս մտնելով, իմացուցի թէ այս փոքր մանուկը ճամբուն վրայ դտայ, և ըսածս կը հաստատէր արկղիկը. բարակ կտաւները կը յայտնէին որ մանուկը հարուստ ընտանիքէ էր և վրաս դտնուած արիւնն իսկ կրնար մանկան արիւնը ըլլալ, քան թէ ուրիշ մէկու մը:

« Ամենեին մէկը գէմ չդրաւ ինձ, այլ առաջարկեցին որ

վանատունը տանիմ, որ Անֆէր փողոցին ծայրը կը գտնու  
զգուշութեամբ խանձարուրը երկու կտոր ըրի, այնպէս որ  
նոր վրայ նշանակուած երկու գիրերէն մէկը մանուկը փաթ-  
թուած կտորին վրայ մնաց, իսկ միւսը քովս պահեցի. մանու-  
կը վանատան շրջափակ դաւթին մէջ դրի, զանգակը հնչեցու-  
ցի և բոլոր ուժովս փախայ:

« Այս դէպքէն տասն և հինգ օր ետքը Ռոլիանօ դարձայ  
և եղբօրս կնոջը Ասունթային ըսի.

« — Մխիթարուէ, քոյր իմ. Իսրայէլ մեռաւ, բայց ես  
վրէժը լուծեցի — »

« Այն ատեն այս խօսքերուն նշանակութիւնը հարցուց, և  
ես բոլոր եղածները պատմեցի անոր:

« — Ճիովաննի, ըսաւ Ասունթա, պէտք էիր այն մանուկը  
մեր տունը բերել, և մենք անոր կորսնցուցած ծնողաց տեղը  
կը խնամէինք զան. անունը Պէնէտէթթօ կը դնէինք, և  
Աստուած այս բարեգործութեան համար իրօք պիտի օրհնէր  
զմեզ — »

« Այս խօսքերուն պատասխան՝ քովս պահած խանձարու-  
րին կտորը ցուցուցի, որով աւելի հարստացած ժամանակնիս  
կրնայինք երթալ և պահանջել զան:

— Եւ ինչ գիրեր կային այդ խանձարուրին վրայ, հար-  
ցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Հ. և Ն, որոնց վրայ սեպուհի նշան մ'ալ կար:

— Ար տեսնեմ որ ազդատոհմական նշաններն ալ կը ճանչ-  
նաս. ո՛ր սորվեցար զանոնք, Պ. Պէրթուչիօ:

— Չեմ քովը ամեն բան կը սորվի մարդ, պարոն կոմս:

— Շարունակէ, հետաքրքրութեամբ երկու բան կ'ուզեմ  
իմանալ:

— Որո՞նք են, տէր իմ:

— Ինչ եղաւ այն փոքր տղան. չըսիր թէ փոքր տղայ մ'էր:

— Ո՛չ, տէր իմ. անոր վրայ խօսիլս չեմ յիշեր:

— Ուրեմն սխալած պիտի ըլլամ:

— Ո՛չ, սխալած չէք, վասն զի իրօք փոքր տղայ մ'էր:



բայց Ձեր Ասեմութեան ղիտնալ ուղած երկու բաներուն երկրորդը սրն է :

— Երկրորդն այն է թէ ինչ յանցանքի համար զքեզ ամբաստաներ էին երբ դուն խոստովանահայր մը ուղեցիր , և արքայ Պիղոսին Նիսի բանտին մէջ եկաւ զքեզ դատա :

— Այս պատմութիւնս դուցէ շատ երկարի , տէր իմ :

— Հոգ չէ , ժամը հազիւ տասն է , ղիտես որ չեմ քնանար , և կարծեմ թէ դուն ալ քնանալու մեծ փափազ չունիս — :

Պերթուչիօ խոնարհութիւն մը քրաւ և իւր պատմութիւնը շարունակեց .

— Ահս մը զիս շրջապատող տխուր յիշատակները ցրուելու և կէս մը անբաղդ այրի կնոջ պէտքը հողալու համար , վերասին մաքսանենդութեան պաշտօնին ձեռք զարկի , որ յեղափոխութեանց հեռեւութիւնն եղող օրինաց թոյլտուութեամբը աւելի գիւրացեր էր :

« Մերթ Ալինտօն , մերթ Նիմ , և երբեմն Եւզէս տեղի ունեցած յարատե աստամբութեանց պատճառաւ զխաւորաբար Հարաւային կողմի ծովեզրերը աղէկ պահպանուած չէին :

« Կատալարութենէն մեղ շնորհուած այս անտակ մը ղինադադարման առիթը շփախցընելով՝ բոլոր ծովեզրաց հետ հաղորդակցութիւններ հաստատեցինք :

« Նիսի փողոցներուն մէջ եղջօրս սպաննուելէն ետքը այն քաղաքը մանել չուղեցի :

« Այն պանդոկապետը , որուն հետ զործեր կ'ընէինք , տեսնելով որ այնուհետեւ մենք իրեն չենք երթար , ինքը մեզ եկաւ , և Պելիարակն Պոքեր երթալու ճամբուն վրայ Բոնփի Կար անունով փոքր պանդոկ մը հաստատեց :

« Այսպէս թէ Եկ-Մօրթի , թէ Մարթիկի և թէ Պուքի մէջ երկոտասնեակի շափ մթերանոցներ ունէինք , որոնց մէջ վաճառք կը պահէինք , և 'ի հարկի' մաքսաւորներու և պահապան զօրաց գեմ ասպատան մը կը գտնէինք :

« Մաքսանենդութիւնը խիստ շահաւոր արուեստ մի է երբ

խելացիութեամբ և ուժով դործ տեսնուի. սակայն ես լեռներու մէջ կը բնակէի. քանզի մաքսաւորներէն և պահապան զինուորներէն վախնալու կրկին պատճառ ունէի, մտածելով որ դատաւորաց առջև ելնելով՝ հարցուփորձի տակ պիտի լայնայի. հարցուփորձի մէջ միշտ անցեալը կը քննեն, և իմ անցեալիս մէջ՝ մաքսանենդութեամբ փախուցած դլանիկներէն և առանց հրամանի բերուած օղիէն աւելի ծանր պարագաներու պիտի հանդիպէի:

« Ուստի՝ մեռնիլը հազար անգամ նախամեծար համարելով՝ զարմանալի զգուշութիւններ կը բանեցընէի, որոնք շատ անգամ կ'ապացուցանէին ինձ թէ մեր՝ մարմնոյ տարած խրնամքը գրեթէ մեծ արդեւք մ'է մեր խորհրդոց յաջողութեանը, որոնք անընդհատ որոշում մը, և աներկիւղ ու անմիջական գործադրութիւն մը կը պահանջեն:

« Իրօք՝ երբ մարդս իւր կեանքը զոհելու յանձնառու եղած է, ուրիշ մարդոց չհաւասարիր, և կամ միւսները այնուհետև իւր հաւասարը չեն, և ո՛վ որ այս որոշումը ըրած է՝ նոյն վայրկենին կ'ըզգայ որ իւր ոյժը կ'աւելնայ և հորիզոնը կ'ընդարձակի:

— Փիլիսոփայօրէն կը խօսիս, պարոն Պէրթուչիօ, ընդմիջեց կոմսը. ուրեմն կենացդ մէջ ամեն բանի հետեւած ես:

— Ար ներէք, տէր իմ:

— Ասել կ'ուզեմ թէ իրիկուան ժամը տասն ու կէսին փիլիսոփայութիւնը խիստ ուշ է. ասկէ զատ ընելու ուրիշ դիտողութիւն չունիմ, ըստ որում ըսածդ ճիշդ կը դանեմ:

— Ճանապարհորդութեանցս ասպարէզը երթալով աւելի ընդարձակուեցաւ և աւելի շահաւէտ եղաւ: Ասունթա խնայող կին մ'էր, և մեր փոքր հարստութիւնը կը կրկնապատկուէր: Օր մը որ ճանապարհորդութիւն մը ընելու համար պիտի մեկնէի. « Գնա՛, ըսաւ ինձ, և 'ի դարձիդ՝ զարմանքդ պատճառող բան մը պիտի տեսնես »:

« Պարապ տեղը հարցուփորձ ըրի. չուզեց իւր դաղտնիքը յայտնել, ու ես մեկնեցայ:

« Բացակայութիւնս գրեթէ վեց շաբաթ տեւց . Լուքքա դացի իւղ առնելու , Լիվորնոյէն անդղիական բամբակներ բեռնաւորեցինք , և առանց դիտուածի այս ապրանքները ցամաք հանեցինք :

« Եղած շահը բաժնուեցանք և ուրախութեամբ տեղերնիս դարձանք :

« Տունս մտնելով՝ Ասունթայի սենեկին մէջ եօթը կամ ութ ամսուան մանուկ մը տեսայ օրօրոցի մը մէջ , որ բնակարանին կարասեաց հետ բաղդատելով՝ խիստ փառաւոր կ'երևէր :

« Ուրախութիւնս բարձրաձայն յայտնեցի . քանզի թաղաւորի դործակալը սպաննելէս 'ի վեր զդացած վիշտս այս մանուկը կորսնցընելա էր :

« Աւելորդ է ըսել թէ ըրած սպանութեանս վրայ ամենեւին խղճի տաղնապ մը չուներցայ :

« Անբաղդ Ասունթան ամեն բան դուշակեր էր . չմոռնալու համար՝ մանկան վանատունը յանձնուելուն օրը և ժամը արձանադրած ըլլալով , բացակայութեանս միջոցին խանձարուրին կտորը առեր , Բարիզ դացեր և անձամբ ներկայացեր է զան պահանջելու :

« Ամենեւին դիտողութիւն մը չընելով՝ մանուկը յանձներ են Ասունթային :

« Ա՛հ , ստոյգ կ'ըսեմ , պարոն կոմս , այն ողորմելի արարածը որրանին մէջ քնացած տեսնելով , սիրտս փղձկեցաւ և աչքերէս արտաուքներ հոսեցան :

« — Շշմարիտ , Ասունթա , ըսի , դուն ազնիւ կին մ'ես , և նախախնամողն Աստուած պիտի օրհնէ գ.քեզ » :

— Այս ըսածդ կը ցուցընէ որ դուն հաւատք ունիս , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Ափսո՛ս , տէր իմ , կրկնեց Պէրթուչիօ . Աստուած այս մանուկը իբրև պատիժ դրկեց ինձ :

« Երբէք չար բնութիւն մը այնչափ շուտով յայտնուած չէ , սակայն կրնամ ըսել թէ ամեն խնամքով մեծցուցինք

զան. քանզի քոյրս իշխանազունի մը զաւակին պէս կը խնամէր զան. գեղեցիկ դէմքով տղայ մ'էր բաց կապուտ աչքերով՝ ճիշդ այն շինական յախճապակիներուն դոյնին նման, որ կաթնագոյն ներկին հետ այնպէս վայելուչ կ'երևի. միայն թէ իւր խիստ խարտեաշ մազերը դէմքին զարմանալի երևոյթ մը կու տար, որ իւր նայուածքին աշխուժութիւնը և ժպիտին չարամտութիւնը կ'աւելցընէր :

« Դժբաղդաբար առակ մը կայ որ կ'ըսէ թէ խարտեաշը խիստ բարի կամ խիստ չար կ'ըլլայ. առակը Պէնէտէթթոյի համար շատ ճիշդ է ըսեր, և իւր ծաղիկ հասակէն իւր չարութիւնը յայտնեց :

« Ստոյգ է որ մօրը սէրը և քաղցրութիւնը անոր առաջին հաճոյքը կատարելով՝ ղեղծումներ ըրաւ : Խեղճ քոյրս չորս կամ հինգ մղոն քալելով քաղաքը կ'երթար, և անկէ վաղահաս պտուղներ և խիստ ընտիր շաքարեղէններ կը գնէր անոր համար. սակայն տղան Բալմայի նարինջներէն և շէնովայի շաքարեղէններէն աւելի՝ դրացիներուն պարտէզներէն գոռած շաղանակները և անոնց շտեմարաններուն մէջէն չորցած դեղձերը նախամեծար կը համարէր, թէ և մեր պարտէզին շաղանակները և դեղձերը իւր կամքին յանձնուած էին :

« Պէնէտէթթօ հինգ կամ վեց տարեկան կար, երբ օր մը մեր Վազիլիօ բարեկամը, որ մեր քաղաքին սովորութեան համեմատ, ոչ իւր քսակը կը բանլիքէր և ոչ դոհարները, քանզի ինչպէս որ ամեն մարդ և դուք իսկ դիտէք, Գորսիայի մէջ գող չկայ. մեր Վազիլիօ բարեկամը դանդատեցաւ մեզ ըսելով թէ՛ Ղուի ոսկի մը աներևոյթ եղեր էր իւր քսակին մէջէն. ամեն մարդ այնպէս կարծեր էր թէ աղէկ համրած չէ, սակայն ինքը կը սփոփէր որ իւր ըսածին վրայ ապահով է :

« Այն օրը Պէնէտէթթօ առաւօտէն տունէն մեկներ էր. քոյրս և ես մեծ անհանգստութեան մէջ կը գտնուէինք, բայց իրիկունը տեսանք զան որ տունը կը վերագառնար հետը կապիկ մը ընդ քարշ բերելով, զոր ծառի մը տակ շղթայով կապուած գտեր էր՝ կ'ըսէր :

« Արդէն ամսէ մը 'ի վեր այս չար տղան կապիկ մը ստա-  
նալու մեծ փափաղ մը ունէր :

« Չեո՛նածու մը, որ Ռոլիանո դալով՝ հետը այն կենդանի-  
ներէն բերած էր, անտարակոյս թելադրած էր զան այն դա-  
տապարտելի դործը ընելու :

« — Մեր անտառներուն մէջ կապիկ և մանաւանդ շղթայ-  
եալ կապիկ չկայ, ըսի անոր. խոստովանէ ինձ, ո՛ւրկից ստա-  
ցար այս կապիկը — :

« Պէ՛նէտէթթօ իւր ստախօսութեանը վրայ հաստատ կե-  
ցաւ, և այնպիսի մանրամասն տեղեկութիւններ ալ աւել-  
ցուց, որոնք աւելի իւր հնարագիտութիւնը կը յայտնէին  
քան թէ նշմարտախօսութիւնը. ասոր վրայ ես բարկացայ,  
և ան սկսաւ ծիծաղել. սպառնացայ, և երկու քայլ ետ քաշ-  
ուելով՝

« — Գրուն չես կրնար զիս ծեծել, ըսաւ, քանզի հայրս  
չես և իշխանութիւն չունիս — :

« Ամենին չկրցանք հասկընալ թէ այս աղէտալի դաղտ-  
նիքը ո՞վ յայտնեց անոր, զոր այնպէս զղուշութեամբ պա-  
հեր էինք անորմէ :

« Ինչ և է՝ այս ազատասխանը, որուն մէջ տղուն ինչ ըլ-  
լալը յայտնի կ'երևէր, դրեթէ զիս վախցուց. իրօք վեր-  
ցուցած ձեռքս առանց յանցաւորին դպչելու վար իջեցուցի.  
Պէ՛նէտէթթօ յաղթեց զիս, և այս յաղթութիւնը այն աս-  
տիճան համարձակութիւն տուաւ անոր, որ անկէ ետքը Ա-  
սունթայի ստակները, ( ո՛րչափ տղան զեղծումներու մէջ կ'իյ-  
նար, այնչափ կնոջ սէրը կարծես կ'աւելնար ) կը դործած-  
ուէին իւր մտային հաճոյիցը, որոց չէր կրնար կինը դէմ  
դնել, և իւր յիմարութեանց, զորոնք արդիւլեւու զօրու-  
թիւն չունէր ամենեին :

« Երբ Ռոլիանո ըլլայի, ամեն բան աղէկ կ'երթար. բայց  
մեկնելուս պէս՝ Պէ՛նէտէթթօ տան տէրը կ'ըլլար և ամեն բան  
գէշի կը դառնար :

« Հաղիւ տասն ու մէկ տարեկան էր, տասն և ութ կամ

քսան տարեկան ընկերներ որոշեր էր, որոնք Պասթիայի և Գորթէի ամենէն երևելի սրիկաներն էին, և արդէն անոնց խորամանկութեանցը համար ոստիկանութիւնը մեզ յայտարարութիւններ ըրած էր:

« Ես իսկ վախցայ, որ և է քննութիւն մը աղէտաւի հետեւութիւններ կրնար ունենալ. ճիշդ նոյն միջոցին երևելի դործի մը համար Քորսիայէն մեկնելու վրայ էի:

« Երկար ժամանակ մտածեցի, և պատահելու դժբաղդութիւնները արդիւլելու նախազգացութեամբ որոշեցի որ Պէնէտէթթօն հետս տանիմ:

« Ար յուսայի որմաքսանենդի խիստ և դործունեայ կեանքը, նաևուն մէջի նեղութիւնները պիտի կրնային փոխել այն բնութիւնը, որ խանդարելու պատրաստ էր, եթէ սակայն արդէն սոսկալի կերպով խանդարած չըլլար:

« Աւստի Պէնէտէթթօն մէկ կողմ կանչեցի և առաջարկեցի անոր որ հետս գայ՝ տասներկու տարեկան տղայ մը համուզելու համար ամեն խոստումներն ընելով:

« Թողուց որ խօսքս վերջացընեմ. անկէ ետև բարձրաձայն ծիծաղելով՝

« — Խենթեցեր ես, հօբեղաայրս, ըսաւ (այսպէս կ'անուանէր զիս երբ ուրախ ըլլար). ես ուզեմ իմ անցուցած կեանքս քու անցուցած կեանքիդ հետ, իմ անհող և պատուական ծուլութիւնս քու չարատանջ աշխատութեանդ հետ փոխել, դիշերը ցուրտէն և ցորեկը տաքէն նեղուիլ, ամեն ժամանակ պահուիլ, և երբ երևան ելնել՝ հրացանի հարուածներ ընդունիլ, և այս ամենը յանձն առնուլ միայն քիչ մը ստակ շահելու համար: Ես ուզածիս չափ ստակ ունիմ. երբ խնդրեմ, մայր Ասունթան կու տայ. կը տեսնես ուրեմն որ ասուշ մէկը պիտի ըլլայի՝ եթէ առաջարկութիւնդ ընդունէի:

« Այս համարձակութեան և խելացիութեան վրայ ասպարան մնացի:

« Պէնէտէթթօ քովէս հեռանալով իւր ընկերներուն քովը

զարձաւ խաղալու, և հեռուէն զիս իբրև ապուշ մը անոնց  
կը ցուցընէր:

— Սիրուն զաւակ, մրմնջեց Մօնթէ-Քրիսթօ:

— Ա՛հ, եթէ խմս ըլլար, պատասխանեց Պէրթուշիօ, եթէ  
խմ զաւակս կամ զոնէ եղբօրորդիս ըլլար, անշուշտ ուղիղ  
ճամբան կը բերէի զան, քանզի խիղճը ոյժ կու տայ: Ան-  
կարելի էր ինձ պատժել կամ ծեծել այնպիսի զաւակ մը,  
որուն հայրը սպաններ էի: Ուստի խրատներ կու տայի քրոջս,  
որ անոր համար իրարու հետ վիճելու ժամանակնիս՝ միշտ այն  
փոքրիկ աղետաբեր տղան կը պաշտպանէր, և երբ խոստո-  
վանեցաւ ինձ թէ շատ անդամ մեծամեծ դումարներ պակսեր  
էին իւր քովէն, տեղ մը ցուցուցի անոր, ուր մեր փոքրիկ  
դանձը կրնար պահել: Այսու ամենայնիւ ես որոշումս ըրած  
էի, Պէնէտէթթօ կատարեալ կարգաւ, դրել և համրել զի-  
տէր, վասն զի երբ աշխատել ուզէր, ուրիշներուն մէկ շաբ-  
թուան մէջ սորվածը օրուան մը մէջ կը սորվէր, որոշումս  
ըրած էի, կ'ըսեմ, երկար ճանապարհորդութիւն ընող նա-  
ւու մը մէջ դրագրութեան պիտի դնէի, և առանց անոր ի-  
մացընելու՝ առտու մը զան բռնել տալով նաւը պիտի ղրկէի.  
և այս կերպով ու նաւապետին յանձնարարութիւն ընելով.  
բոլոր իւր ապագան իրմէ կախեալ էր:

« Այս որոշմանս վրայ Քաղղիա անցայ:

« Այս անդամ մեր գործերը Լիօնի ծոցին մէջ պիտի կա-  
տարուէին, սակայն այս գործերը երթալով կը դժուարա-  
նային, ըստ որում 1829ին մէջն էինք:

« Խաղաղութիւնը կատարելասպէս վերահաստատուեր էր, և  
հետեւաբար ծովեզերաց հսկողութիւնը աւելի կանոնաւոր և  
աւելի խիստ եղեր էր:

« Այս հսկողութիւնը նոյն միջոցին բացուած Պօքէրի տօ-  
նավաճառին պատճառաւ աւելցեր էր յանկարծ:

« Մեր գործոց սկիզբը անարդել կատարուեցաւ:

« Պօքէրէն մինչև Արլ՝ Ռոնի երկու դետեզրերը խարսխած  
բաղմաթիւ նաւերուն մէջ մեր նաւակն ալ կապեցինք, որ մաքսէ

փախուցած ասորանքները պահելու համար կրկին յատակ ունէր :

« Անկէ սկսանք դիշեր ժամանակ մեր նաւուն արդիլեալ վաճառքները դուրս հանել և քաղաքը մացընել զանոնք մեզի յարարելութիւն ունեցող մարդոց և քանի մը պանդոկապետներու օգնութեամբը, որոնց տունը վաճառքները կը պահէինք :

« Կամ մեր դտած յաջողութենէն անխոհմութիւն ընել նուս և կամ մատնուելնուս համար, իբիկուն մը կէս օրէն ետև ժամը դէպ 'ի հինդին սեղան նստելու վրայ էինք, երբ մեր նաւակին մանչը զարհուրած վազելով եկաւ խմացուց մեզ թէ մաքսաւորաց խումբ մը տեսեր էր, որոնք դէպ 'ի մեր կողմը կը յառաջանային :

« Անմիջապէս ոտք ելանք, սակայն խիստ ուշ էր :

« Արդէն շրջապատեր էին մեր նաւակը, որ անոնց խուզարկութեան առարկայն եղեր էր :

« Մաքսաւորաց հետ քանի մը զինուորներ ալ տեսայ, ուրիշ անգամ զինուորական որ և է մէկը տեսած ժամանակս սովորաբար ունեցած աներկիւղութեանս հակառակ՝ այս անգամ այս զինուորներէն վախցայ, ուստի նաւակին սաորին յարկը իջայ, ծակէ մը դետին մէջ նետուեցայ, և ջուրին տակէն լողալով, ու միայն շունչ առնելու համար մերթ ընդ մերթ ջուրին երեսը դալով, դէպ 'ի նոր բացուած ջրանցք մը յառաջացայ, որ Պօքէրէն Եկ-Մօրթ տանող ջրանցքը Ռոնի ջրանցքին հետ կը միացընէր :

« Հոն հասնելուս պէս՝ ազատած էի, ըստ որում առանց տեսնուելու այս կողմէն կրնայի փախել :

« Ուստի առանց վտանդի այն ջրանցքին քովը հասայ :

« Ըստ դիպաց և առանց առաջէն մտածելու չէր որ ես այս ճամբան զարկի :

« Չեր վսեմութեան արդէն խօսեցայ Նիմի պանդոկապետի մը վրայ, որ Պէլկարտէն Պօքէր երթալու ճամբուն վրայ փոքր պանդոկ մը հաստատեր էր :

— Այո՛, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, աղէկ կը յիշեմ : Այն մարդը, եթէ չեմ սխալիր, քու ընկերդ էր :



— Ճիշդ այդպէս է, սրատասխանեց Պէրթուչիօ. սակայն եօթը կամ ութ տարի առաջ այն մարդը իւր պանդոկը Մարտիկացի հին դերձակի մը թողուցեր էր, որ իւր արուեստին մէջ շատ մնաս կրած ըլլալով, ուղեր էր իւր բաղդը ուրիշ արուեստի մը մէջ փորձել: Առանց կրկնելու կը հասկըցուի անշուշտ որ առջի պանդոկապետին հետ ունեցած պայմաննիս երկրորդին հետ ալ հաստատեցինք. և ահա այն պանդոկին մէջ ապաստան մը դռները կը յուսայի:

— Եւ այդ մարդուն անունը ի՞նչ էր, հարցուց կոմսը, որ Պէրթուչիոյի սրամութե՛նէն օղուտ մը տեսնել կը ցուցընէր:

— Գասպար Քատրուս, որ լա Գարդօնիթ դիւղէն կնոջ մը հետ ամուսնացած էր, և դիւղին անունովը կը կանչէր զան. այս ողորմելի կինը ճահիճներէն յառաջ եկող տենդէ մը խիստ կը տանջուէր, ու միշտ հիւանդոտ էր. իսկ Քատրուս քառասուն կամ քառասուն և հինգ տարեկան ուժեղ կայտառ մարդ մ'էր, որ շատ անգամ զանազան սարադաներու մէջ իւր քաջութեան և մտաց արթնութեան ասպոյցները ցուցուցեր էր մեզ:

— Այս եղածները որ տարւոյն մէջ սրատահեցան ըսիր, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— 1829<sup>ին</sup>, պարոն կոմս:

— Ա՞ր ամսոյ մէջ:

— Յունիս ամսոյ մէջ:

— Ամսոյն սկիզբը թէ վերջը:

— Ամսոյն 3<sup>ին</sup> իրիկունը:

— Ի՞նչ կ'ըսես, թ Յունիսի 1829<sup>ին</sup>. . . : Շարունակէ:

— Եւ այն Քատրուսին պանդոկին մէջ ապաստանիլ կը յուսայի. բայց որովհետեւ ըստ սովորութեան ամեն անգամ փողոցին վրայ նայող դռնէն ներս չէինք մտներ, մտածեցի որ մեր սովորութենէն չլեղիմ, ուստի պարտէզին ցանկին վրայէն անցայ, ազազուն ձիթենիներուն և վայրի թղենիներուն մէջէն սարդելով, գաղտնի՝ պանդոկին վերնայարկը ելայ, ուր շատ անգամ խիստ հանդիստ դիշերներ անցուցած էի. քանզի

կը վախնայի որ պանդոկին մէջ ճանապարհորդ մը չդտնուի :

« Այս վերնայարկը պանդոկին դեռնայարկ սրահէն տախտակամածով մը բաժնուած էր , որուն վրայ դիտմամբ ծակեր բացած էինք , որպէս զի հոն դտնուելնիս իմացընելու յարմար ժամանակը կարենանք անկէ դիտել :

« Եթէ Քատրուս մինակ ըլլար , միտք ունէի իմ հոն ըլլալս իմացընել , մաքսաւորներուն ներկայութենէն ընդմիջեալ ընթրիքը իրեն հետ վերջացընել , և պատրաստուած մօտալուտ մըրկին ժամանակ Ռոնի եղերքը հասնիլ , որպէս զի մակուկին և մէջի եղողներուն ինչ ըլլալը տեսնեմ :

« Երբ վերնայարկը մտայ , տեսայ որ Քատրուս իսկ այն միջոցին ճանապարհորդի մը հետ ներս կը մտնէր :

« Լուռ կեցայ և սպասեցի հոն , չէ թէ պանդոկատին դադտնիքը իմանալու դիտաւորութեամբ , այլ քանզի ուրիշ կերպ չէի կրնար ընել . մանաւանդ որ այս պարադային պէս տասն անգամ պատահած էր :

« Քատրուսի ընկերացող մարդը Գաղղիոյ հարաւային կողմերուն օտարական ըլլալը յայտնի կը ցուցընէր . Պօքէրի վաճառահանդէսին գոհարներ ծախելու համար շրջող վաճառականներէն մէկն էր , որոնք վաճառահանդէսի մէկ ամսուան տեղութեանը մէջ երբեմն հարիւր կամ հարիւր յիսուն հազար Ֆրանքի գործ կ'ընեն , և Եւրոպայի ամեն կողմերէն թէ վաճառող և թէ դնող կու գան :

« Քատրուս աշխուժիւ առաջ ներս մտնելով ու տեսնելով որ դեռնայարկի սրահը ըստ սովորութեան դատարկ և միայն իւր շունէն պահպանուած էր , իւր կինը կանչեց :

« — Ո՛ւր ես , լա Գարդօնթ , ըսաւ , այն բարի քահանան զմեզ չէ խաբեր . ադամանդը ճշմարիտ է եղեր — :

« Ուրախութեան ձայն մը լսուեցաւ , և դրեթէ անմիջապէս ետքը՝ սանդուխը տկարութենէ և հիւանդութենէ ծանրացած քայլին տակը ճռնչեց :

« — Ի՞նչ ըսիր , հարցուց մեռեալէ մը աւելի դեղնած կինը :

« — Թէ աղամանդը ճշմարիտ է , և ահա այս պարոնը , որ Բարիդի առաջին դոհարավաճառներէն մէկն է , պատրաստ է մեզ յիսուն հազար ֆրանք համրել : Միայն թէ աղամանդին մերն ըլլալուն ասպահով ըլլալու համար , կը խնդրէ որ պատմես թէ ինչ զարմանալի միջոցաւ այն աղամանդը մեր ձեռքը անցաւ , ինչպէս որ ես արդէն պատմեցի անոր : Նըստեք , պարոն , եթէ կը հաճիք , և օդը ծանր ըլլալուն , երթամ քիչ մը զովացուցիչ ըմպելիք բերեմ — :

« Ահնավաճառը պանդոկին ներքին կողմը և անոր տէրերուն յայտնի աղքատութիւնը ուշադրութեամբ կը զննէր , որոնք կ'ուզէին այնպիսի աղամանդ մը ծախել , որ իշխանի մը զղրոցէն ելած կ'երևէր :

« — Պատմէ , տիկին , ըսաւ անոր՝ անշուշտ ամուսնոյն բացակայ եղած ատենը յարմար ժամանակ կարծելով , որպէս զի պանդոկատեար իւր կնոջը նշան մը չընէ , և ինքը տեսնէ թէ երկուքին պատմութիւնը իրարու համեմատ են :

« — Այո՛ , ըսաւ կինը արագութեամբ , այս երկնային օրհնութիւն մ'էր որ յանախնկալ ժամու մեզ հասաւ : 1814ին կամ 1815ին ամուսինս Կամօն Տանթէս անունով նաւաստիի մը բարեկամութիւնը ստացեր էր , բայց երկար տարիներ զան չտեսնելով , բոլորովին մոռցեր էր այն բարի տղան , որ ընդհակառակն չէ մոռցեր էրկանս հետ ունեցած բարեկամութիւնը , և իր մեռնելու ատենը այն քու տեսած աղամանդդ անոր թողուցեր է :

« — Բայց նաւաստին ինչպէս այս աղամանդին տէրը եղեր է , հարցուց ահնավաճառը : Բանտ մտնելէն առաջ ունէր զայն :

« — Ա՛չ , պարոն , պատասխանեց կինը . բայց կ'երևի թէ բանտին մէջ խիստ փարթամ Անդղիացիի մը հետ ծանօթացեր է , որուն հիւանդութեան ժամանակ Տանթէս իւր եղբորը պէս անոր մեծ խնամք տանելուն համար՝ Անդղիացին բանտէն ելնելու ժամանակ այս աղամանդը Տանթէսի թողուցեր է . սակայն ողորմելի նաւաստին ալ նոյն բաղդը չունե-

նալով, բանտին մէջ մեռնելու ատեն՝ նոյն դոհարը մեզ թուզուցեր է բարի արբայի մը միջոցաւ: որ այս առտու եկաւ մեզ յանձնեց զայն:

« — Պատմութիւնը նոյնն է, մրմնջեց ակնավաճառը. այսու ամենայնիւ՝ որչափ և անհաւանական երևի՝ ի սկզբան, կրնայ ճշմարիտ ալ ըլլալ. հիմա միայն դինը կը մնայ, որուն վրայ համաձայն չենք:

« — Ի՞նչպէս, համաձայն չենք, ըսաւ Քատրուս. ես կարծէի թէ պահանջած դնոյս հաւանեցար:

« — Ես քառասուն հազար ֆրանք տուի:

« — Քառասուն հազար, այս դնով անշուշտ պիտի չծախենք: Աբբան մեզ ըսաւ թէ յիսուն հազար ֆրանք կ'արժէ և այն՝ առանց մատնիին:

« — Եւ ի՞նչ էր այդ արբային անունը, հարցուց անխոնջ կրկտողը:

« — Աբբայ Պիւզոնի, պատասխանեց կինը:

« — Օտարական մ'է ուրեմն:

« — Կարծեմ Մանթուայի շրջականերէն Իտալացի մ'էր:

« — Տուցուր ադամանդը, կրկնեց ակնագործը, որ երկրորդ անգամ տեսնեմ, երբեմն մէկ անգամ տեսնելով դոհարը աղէկ չճանչցուիր —:

« Քատրուս իւր ծոցէն սև կաշիէ ակնագարան մը հանեց, բացաւ և անոր տուաւ զայն:

« Ադամանդը տեսնելով, որ փոքր կաղինի չափ կար և աչքիս առջևը եղածին պէս կը յիշեմ, լա Գարդօնթի աչքերը անյադ ցանկութեամբ փայլեցան:

— Եւ դուն ի՞նչ կը մտածէիր այն ատեն, ո՞վ դռներուն ետին ականջ դնող պարոն, հարցուց Մօնթէ-Քրիսթօ. այս առասպելին հաւատացիր:

— Այո՛, տէր իմ. վասն զի Քատրուսը բարի մարդ մը կը ճանչնայի, և դողութիւն մը կամ ոճիր մը դործելու անկարող կը կարծէի զան:

— Այս կարծիքդ փորձառութենէդ աւելի սրտիդ որպիսու

Թիւնը կը յայտնէ, սպարոն Պէրթուչիօ: Էտմօն Տանթէսը կը ճանչնայի՞ր դուն:

— Ո՛չ, տէր խմ, մինչև այն օրը անոր անունը լսած չէի, և նիսի բանաւերուն մէջ արքայ Պիւղոնիին միայն անդամ մը անոր անունը յիշելէն ՚ի վեր անոր վրայ խօսելնին լսած չեմ բնաւ:

— Աղէկ, շարունակէ:

— Ակնավաճառը Քատրուսին ձեռքէն մատանին առաւ, և իւր ծոցէն սլողսրատեայ փոքր ունելիք մը և պղնձեայ կշիռ մը հանեց, ետքը մատնիին մէջ ադամանդը բռնող ոսկի ալ կիշնեցը բանալով, հանեց դայն, և կշիռով ճշդիւ կշռեց:

« — Մինչև քառասուն և հինգ հազար Ֆրանքի պիտի ելնեմ, ըսաւ: Բայց այս դումարէն մէկ սու աւելի չեմ կրնար տալ, մանաւանդ որ չունիմ, քանզի ճիշդ ադամանդին արժողութեանը հաւասար դումար մը առի վրաս:

« — Եթէ ատոր մնայ, ըսաւ Քատրուս, հետդ Պօքէր կու դամ և հինգ հազար Ֆրանքը կու տաս:

« — Ո՛չ, ըսաւ ակնավաճառը՝ մատնին և ադամանդը Քատրուսի տալով, ո՛չ, ասկէ աւելի արժողութիւն չունի, այս դինն ալ տալուս կը ցաւիմ, վասն զի ադամանդին մէջ սակասութիւն մը դասայ, որ առաջ չտեսեր էի, բայց հող չէ, խմ խօսքս մէկ է, քառասուն և հինգ հազար Ֆրանք ըսի, խօսքս ետ չեմ առներ:

« — Գոնէ ադամանդը մատնիին մէջ հազցուր վերստին, ըսաւ լա Գարդօնթ խստութեամբ:

« — Իրաւունք ունիս, ըսաւ ակնավաճառը ու ադամանդը խորշին մէջ տեղաւորցուց:

« — Աղէկ, աղէկ, ըսաւ Քատրուս ակնադարանը իւր ծոցը դնելով, ուրիշի կը ծախենք:

« — Այո՛, կրկնեց ակնավաճառը, բայց ուրիշը ինծի պէս դիւրահաւատ չկրնար ըլլալ, ուրիշը ձեր ինծի տուած տեղեկութիւններէն չբաւականանար, ձեզի սէս մարդիկ յիսուն հազար Ֆրանքնոց ադամանդի մը տէրը չեն կրնար

ըլլալ. ուրիշը կ'երթայ դատաւորաց կ'իմացընէ, սէտք է այն  
ատեն արքայ Պիւզոնին գտնել, և երկու հազար Նուինոց  
ադամանդ տուող արքաները հազուադիւտ են. դատաւորները  
գոհարը կը դրաւեն, զձեզ բանտ կը դրկեն, և եթէ անմեղ  
ըլլալնիդ յայտնուի, երեք կամ չորս ամիս բանտի մէջ մը-  
նալէ ետե՛ զձեզ կ'ազատեն, բայց մատնին դիւանատան  
մէջ կը կորսուի կամ երեք Ֆրանքի արժողութեամբ կեղծ  
գոհար մը կու տան ձեր ադամանդին տեղը, որ յիսուն հա-  
զար Ֆրանք կ'արժէ, գուցէ յիսուն և հինգ հազար, բայց  
դուք ալ համոզուած էք անշուշտ որ ծախու առնողը վտան-  
դի մէջ է:

« — Քատրուս և կինը նայուածքով իրարու կը հարցընէին:

« — Ոչ, ըսաւ Քատրուս, մենք այնչափ հարուստ չենք որ  
հինգ հազար Ֆրանք կորսնցընենք:

« — Ինչպէս որ կ'ուզես, բարեկամ, ըսաւ ակնավաճառը.  
Թէև ես, ինչպէս որ կը տեսնէք, մաքուր ստակ բերեր էի —:

« Եւ իւր ծոցերուն մէկէն բուռ մը ոսկի հանելով, սլան-  
դոկապետին շացեալ աչաց փայլեցուց, և միւսէն ալ ծրար  
մը դրամաթղթեր հանեց:

« Քատրուսի մտաց մէջ յայտնապէս խիստ մրցում մը կար-  
իրեն այնպէս կ'երևէր որ իւր ձեռաց մէջ շրջաշրջած կաշիէ փոք-  
րիկ ակնադարանը իբր արժողութիւն չէր համապատասխանէր  
այն անբաւ դումարին որ իւր աչքը կը դիւթէր: »

« Իւր կնոջը դարձաւ:

« — Ի՞նչ կ'ըսես, հարցուց՝ յաժ ձայնով:

« — Տուր, տուր, ըսաւ կինը. եթէ ադամանդը չառած  
Պօքէր դառնայ՝ կրնայ զմեզ ամբաստանել. և ըսածին պէս՝  
ով գիտէ մէկ մ'ալ արքայ Պիւզոնին գտնելնիս:

« — Շատ աղէկ, ըսաւ Քատրուս, առ ադամանդը քա-  
ռասուն և հինգ հազար Ֆրանքի. բայց կինս ոսկի շղթայ մը  
կ'ուզէ, և ես զոյդ մը արծաթ օղեր —:

« Ակնավաճառը իւր ծոցէն երկար և տափակ տուփ մը հա-  
նեց, որուն մէջ ուղածներնուն շատ օրինակները կային:

« — Տեսէք, ես ինչպէս դռքի մարդ եմ. ընտրեցէք — »

« Ախնը ոսկի շղթայ մը ընտրեց, որ կրնար հինգ Լուի արժեք, և երկը զոյգ մը օղեր զատեց զբեթէ տասն և հինգ ֆրանք արժողութեամբ :

« — Ար յուսամ որ զանդատելու տեղ շունիք, ըսաւ ակնավաճառը :

« — Աբբան ըսաւ թէ յիսուն հազար ֆրանք կ'արժէ, միմայ Բատրուս :

« — Տուր հաս, ինչ սոսկալի մարդ ես եղեր, կրկնեց ակնավաճառը ազամանդը անոր ձեռքէն քաշելով. քառասուն և հինգ հազար ֆրանք կը համրեմ անոր, որ տարին երկու հազար հինգ հարիւր ֆրանք եկամուտ կը բերէ, այսինքն այնպիսի հարստութիւն մը որ ես կը փափաքէի ունենալ, և տակաւին դո՛հ չէ :

« — Ա՛ւր է քառասուն և հինգ հազար ֆրանքը, հարցուց Բատրուս բիրտ ձայնով մը :

« — Ահա —, ըսաւ ակնավաճառը :

« Եւ սեղանին վրայ տասն և հինգ հազար ֆրանքի ոսկի և երեսուն հազար ֆրանքի դրամաթղթեր համրեց :

— Աեցիք որ ճրագը վառեմ, ըսաւ լա Գարդօնթ, մուծը կոխեց և կրնանք սխալիլ :

« Իբօք գիշերը վրայ հասեր էր այն վիճաբանութեան ժամանակ, և գիշերուան հետ մըրիկն ալ կէս ժամէ 'ի վեր կ'ըստառնար :

« Հեռուէն որոտումին մոնչելուն ձայնը կը լսուէր. բայց ոչ ակնավաճառը, ոչ Բատրուս և ոչ լա Գարդօնթ հողերնին ըրած չէին երևեր, այնչափ դիւական շահասիրութեամբ զբաղեալ էր իրենց միտքը :

« Ես իսկ բոլոր այն ոսկիները և այն դրամաթղթերը տեսնելով տարօրինակ շլացութեան մը մէջ կը դտնուէի :

« Աարժէի թէ երազ կը տեսնէի, և երազի մէջ պատահածին պէս ինքզինքս կեցած տեղս շղթայեալ զդացի :

« Բատրուս ոսկիներն ու դրամաթղթերը կրկին կրկին համ-

րելէն ետե՛ իւր կնոջը տուաւ զանոնք , որ նոյնպէս կրկին  
և կրկին համրեց :

« Այս միջոցին ակնավաճառը ադամանդը ճրագին լուսին  
բռնեց , որ լուսոյ ճաճանչներ կ'արձակէր , և մոռցընել կու  
տար իրեն մրրկին կարապետն եղող այն փայլակները , որոնք  
կարծես պատուհանները կը բոցավառէին :

« — Հաշիւը ճիշդ է , հարցուց ակնավաճառը :

« — Այո՛ , ըսաւ Քատրուս , թղթադարանը ինձի տուր ,  
լա Գարդօնթ , և քսակ մը դտիր — :

« Լա Գարդօնթ պահանջի մը մօտեցաւ , ուրկից կաշիէ  
հին թղթադարան մը բերաւ , որուն մէջէն քանի մը եղու  
տած նամակներ հանեցին , և անոնց տեղը թղթադարանները  
դրին , և քսակ մը , որուն մէջ վեց Ֆրանքնոյ երկու կամ ե  
րեք թալեռներ կային , որոնք հաւանականաբար ողորմելի ըն  
տանիքին բոլոր հարստութիւնն էին :

« — Թէսլետ դուցէ տասը հազար Ֆրանք մը զարկիր մեզ  
մէ , ըսաւ Քատրուս , սակայն կ'ուզե՞ս մեզի հետ ընթերել ,  
յօժարութեամբ կ'առաջարկե՞նք :

— Շնորհակալ եմ , ըսաւ ակնավաճառը , ժամանակը շատ  
անցած պիտի ըլլայ . պէտք է որ Պօքէր վերադառնամ . կինս  
անհանդիստ կ'ըլլայ ինձ համար — :

« Ժամացոյցը նայեցաւ :

« — Զարմանալի բան , ըսաւ , ժամը դրեթէ ինն է , կէտ  
դիշերէն առաջ պիտի չկրնամ Պօքէր վերադառնալ : Մնաք  
բարեաւ , սիրելիներս . եթէ վերստին դիպուածով արբայ  
Պիւզոնիներ դան , զիս միտքերնիդ բերէք :

« — Աւաճառահանդէսը առաջիկայ շաբաթ կը լրանայ , ը  
սաւ Քատրուս , և ութ օրէն Պօքէրէն պիտի մեկնիս :

« — Հող չէ . Բարիդ նամակ դրէ ինձ այս հասցէով . Առ  
Պ . Յովհաննէս , 'ի Բարիդ , Բալէ - Վոյալ , ակնավաճառաց  
դաւիթը , թիւ 15 . յատկապէս մինչև հոս կու դամ եթէ  
դորժը արժէ — :

« Այն միջոցին որտուտի ձայնով այնպիսի սաստիկ փայ  
լատակում մը եղաւ , որ ճրագին լոյսը դրեթէ ջնջեց :



« — Ո՛հո՛, ըսաւ Քատրուս, այս օդով ի՞նչպէս պիտի մեկնիս :

« — Արտառումէն չեմ վախնար ես, ըսաւ ակնավաճառը :

« — Բայց դողերէն, հարցուց լա Գարդօնթ. տօնավաճառի ժամանակ ճամբան երբեք ասպահով չէ :

« — Գողերուն համար պէտք եղածն ունիմ, սլատասխանեց Յովհաննէս — :

« Եւ իւր ծոցէն զոյդ մը աղէկ լցուած փոքր ասորճանակներ հանեց :

« — Ասոնք այնպիսի շուներ են, շարունակեց, որոնք կը հաչեն եւ միանդամայն կը խածնեն. աղամանդիդ աչք դնող երկու առջի դողերուն համար սլատրաստած եմ ասոնք, հայր Քատրուս — :

« Քատրուս եւ կիներ իրարու հետ տխուր նայուածք մը փոխեցին :

« Կ'երեւի թէ իրենք ալ ասոելի խորհուրդ մը ունէին :

« — Աւրեմն, բարի ճամբորդութիւն, ըսաւ Քատրուս :

« Շնորհակալ եմ, — ըսաւ ակնավաճառը, ու իւր դաւադանը առնելով, զոր հին արկղի մը քով դրեր էր, դուրս ելաւ :

« Գուռը բացած ատենը՝ հողմը այնպիսի ուժգնութեամբ փչեց, որ քիչ մնաց ճրաղը պիտի մարէր :

« — Ո՛հ, ըսաւ, այս ինչ դէշ օդ է, եւ այս օդով երկու մղոն տեղ ի՞նչպէս պիտի քալեմ :

« — Հոս մնացիր, ըսաւ Քատրուս, գիշերը հոս կ'անցընես :

« — Այո՛, հոս մնացիր, ըսաւ լա Գարդօնթ դողդոջուն ձայնով մը. աղէկ հոգ կը տանինք քեզ :

« — Ոչ, պէտք է որ Պօքէր երթամ պառկիմ. մնաք բարեաւ — :

« Քատրուս մինչև դրան սեամը յառաջացաւ :

« — Ոչ երկինք կը տեսնուի ոչ դետին, ըսաւ ակնավաճառը սլանդոկէն դուրս ցատկելով. Ա՛ջ կողմէն երթալ պէտք է թէ ձախ :

« — Աջ կողմէն , ըսաւ Քատրուս . բայց սխալելու երկիր չկայ . ճամբուն երկու կողմը ծառեր տնկուած են :

« — Աղէկ , հասկըցայ , ըսաւ ձայնը դրեթէ հեռաւորութեան մէջ կորսուելով :

« — Գոցէ դուռը , ըսաւ լա Գարդօնթ , որոտումի ժամանակ դուռը բաց չեմ սիրեր :

« — Մանաւանդ երբ տան մէջ ստակ կայ , այնպէս չէ , — պատասխանեց Քատրուս՝ երկու անգամ դրան փականքը դարձրնելով , ու ներս մտնելով , պահանջին մտեցաւ , քսակը և թղթագրանը դուրս հանեց , և երկուքնին միատեղ իրենց ոսկին և թղթագրամները երրորդ անգամ սկսան համբել :

« Այն երկու անձանց վրայ տարօրինակ այլայլութիւն մը կը տեսնէի և ճշտօրէն սկար լուսովը անոնց դիմաց վրայ անյազոութիւն մը կ'երևէր :

« Աինը մանաւանդ սոսկալի երևոյթ մը ունէր , որուն վրայ տիրացած ջերմային դողդոջիւնը կրկնապատկեր էր :

« Իւր դիմաց դեղին դոյնը կապարագունի փոխուեր էր , և խռովեալ աչքերը կը փալփլային :

« — Ինչո՞ւ առաջարկեցիր որ հոս սլառ կի , հարցուց լա Գարդօնթ մեռած ձայնով մը :

« — Անոր համար որ . . . Պօքէր վերադառնալու նեղութիւն չկրէ , պատասխանեց Քատրուս սարսուելով :

« — Ո՛հ , ըսաւ կինը . աննկարող լի զղացումով մը , ես կարծէի թէ ուրիշ պատճառի համար է :

« — Անիկ , կնիկ , պոռաց Քատրուս , ինչո՞ւ այդպիսի խորհուրդներ կ'անցնին մտքէդ , և ինչո՞ւ միտքդ եկած ատենը զանոնք քեզի համար չես պահեր :

« — Հոգ չէ , ըսաւ լա Գարդօնթ վայրկեան մը լուռ կենալէն ետև , դուն մարդ չես :

« — Ի՞նչպէս :

« — Եթէ դուն մարդ ըլլայիր , ասկէ դուրս չէր ելներ :

« — Անիկ :

« — Աամ թէ Պօքէր չէր հասներ :

« — Անիկ :

« — Պօքէրի ճամբուն մէջ մտած անկիւն մը կայ , ուրկից դառնալու ստիպուած է ակնավաճառը , քանի որ ջրանցքին երկայնքը ուրիշ աւելի կարճ ճամբայ մը կայ :

« — Անիկ , Աստուծոյ դէմ կը մեղանչես , մտիկ ըրէ — :

« Իբրք կայծակի մը ահուելի ձայնը լսուեցաւ , մի և նոյն ժամանակ կատուապոյն լսյս մը կարծես սրահը պիտի բռնալառէր , և որստումի ձայնը սակաւ առ սակաւ նուազելով՝ այս անիծեալ տունէն անամայ կը հեռանար :

« — Տէր Յիսուս — , ըսաւ լա Գարդօնթ խաչ հանելով :

« Նոյն միջոցին և սովորաբար որոտումին հետևութիւնն եղող արած ահարեկ լռութեան ժամանակ՝ դուռը զարնուեցաւ :

« Քատրուս և կիներ սարսուեցան և սրտադող իրարու երես նայեցան :

« — Ո՛վ է , սրտայ Քատրուս ոտք ելնելով և սեղանին վրայ ցրուած ոսկիներն ու թղթադրամները կայտ մը ընելով և ձեռքերովը ծածկելով :

« — Ես եմ , ըսաւ ձայն մը :

« — Ո՛վ ես դուն :

« — Է՛հ , չճանչցաք , Յովհաննէս ակնավաճառն եմ :

« — Գուն ինչ կ'ըսէիր , էրիկ , մըմջեց լա Գարդօնթ սոսկալի ժպտով մը , որ ես Աստուծոյ դէմ կը մեղանչէի :

« — Ահա Աստուած վերստին կը վերադարձընէ մեզ զան :

« Քատրուս աժդոյն և ողեսպառ իւր աթոռին վրայ ինկաւ վերստին :

« Ընդհակառակն լա Գարդօնթ ոտք ելաւ և հաստատ քայլերով դէպ 'ի դուռը երթալով բացաւ զայն :

« — Հրամայէ ներս , սիրելի պարոն Յովհաննէս , ըսաւ անոր :

« — Ա'երևի թէ , ըսաւ ակնավաճառը՝ վրայէն անձրեւի ջուրերը վտակի պէս վազելով , սատանան չուղեր որ այս իրիկուն Պօքէր վերադառնամ : Այսչափ խենթութիւնը բաւալիան է , սիրելիդ իմ պատոն Քատրուս , դո՛ւ ինձ ընդունե՛ :

լուծիւն տուիր, կ'ընդունիմ քու առաջարկուածիւնդ ու եկայ որ հոս պառկիմ — :

« Քատրուս իւր ճակատէն վազած քրտինքը սրբելով քանի մը խօսքեր թոթովեց :

« Լա Քարդօնթ դուռը դոցեց և փականքը երկու անդամ դարձուց :



ՔԼՈՒԲ Զ

ԱՐԵՆ ԱՆՉՐԵԻ



ԱԿՆԱՎԱՃԱՌԸ ներս մանելով, զննութեան նայուածք մը շջեց իւր բոլորտիքը, սակայն բան մը չէր երևեր որ իւր սրտին մէջ կասկած մը երկնէր եթէ շունէր, բան մը չէր երևեր որ զանոնք հաստատէր եթէ ունէր :

« Քատրուս իւր երկու ձեռքերը տակաւին թղթադրամներուն և ոսկիներուն վրայ դրած էր : Լա Քարդօնթ կրցածին չափ քաղցրութեամբ իւր հիւրին կը ժպտէր :

« — Ա՛հ, ըսաւ ականավաճառը, կ'երևի թէ հաշուին ճշդութեանը տարակոյս ունէիք, և իմ մեկնելէս ետև ձեր պանձը վերփտին կը համրէք :

« — Ո՛չ, ըսաւ Քատրուս, զմեզ այս դանձին տէրն ընող  
 զխորուածը այնչափ կեղակարծ է, որ չենք կրնար հաւատալ,  
 և եթէ նիւթահան ապացոյցը աչաց առջև չունենանք, կար-  
 ծենք թէ տակաւին երազ կը տեսնենք — »

« Ակնավաճառը ժպտեցաւ :

« — Պանդոկին մէջ հիւր ունիք, հարցուց :

« — Ո՛չ, պատասխանեց Քատրուս, ամենէին մարդ չենք  
 պատկեցրներ մեր պանդոկը՝ քաղաքին շատ մօտ ըլլալնուս  
 համար մարդ չօթեանիր հոս :

« — Ուրեմն ձեզ մեծ նեղութիւն պիտի պատճառեմ :

« — Գո՛ւք մեզ նեղութիւն պիտի պատճառէք, սիրելի պա-  
 թոն, ըսաւ մարդասիրութեամբ լա Գարդօնթ, ամենէին, ճշ-  
 մարիտ կ'ըսեմ :

« — Ուրեմն ո՛ւր պիտի պատկեցրնէք զիս :

« — Աերի սենեակը :

« — Բայց ձեր սենեակը չէ՞ այն :

« — Հոգ չէ, անոր քովը ուրիշ սենեակ մ'ալ կայ, որուն  
 մէջ անկողին մը ևս ունինք — »

« Քատրուս զարմացմամբ իւր կնոջ երեսը նայեցաւ :

« Ակնավաճառը փոքրիկ եղանակ մը երգեց՝ իւր կռնակը  
 վառարանին դարձուցած, որուն մէջ լա Գարդօնթ քանի մը  
 փայտ նետեր էր հիւրին զղեստները չորցրնելու համար :

« Այն վիջոցին կիներ սեղանին մէկ անկիւնը, ուր սփռոց մը  
 տարածեր էր, ճաշի մը դուզնաքեայ մնացորդները բերաւ,  
 որուն միացուցեր էր երկու կամ երեք թարմ հաւկիթներ :

« Քատրուս թղթադրամները թղթադարանին մէջ և ոսկի-  
 ները քսակին մէջ ամփոփեր և պահանոցին մէջ դրեր էր :  
 Սենեկին երկայնքէն լայնքը տխուր և մտախոհ կը պտըտէր  
 ու մերթ ընդ մերթ իւր աչքը ակնավաճառին վրայ կը վեր-  
 ցրնէր, որ կրակարանին առջևը կեցած կը ծխէր, և իւր  
 մէկ կողմը չորցած ատենը միւս կողմը կը դարձրնէր :

« — Ահա՛, ըսաւ լա Գարդօնթ՝ սեղանին վրայ շիշ մը  
 գինի գնելով, երբ կ'ուզես՝ ընթրիքդ պատրաստ է :

- « — Հապա դո՛ւք, հարցուց Յովհաննէս :
- « — Ես պիտի չընթրեմ, պատասխանեց Քատրուս :
- « — Մենք շատ ուշ ճաշեցինք այսօր, ըսելու փութաց լա Գարդօնթ :
- « — Ուրեմն առանձին պիտի ընթրեմ, ըսաւ ակնավաճառը :
- « — Մենք քեզի պիտի ծառայենք —, պատասխանեց լա Գարդօնթ այնպիսի եռանդով մը, որ իրեն սովորական չէր, և ոչ իսկ իւր դիւղացի հիւրերուն կը ցուցընէր :
- « Քատրուս մերթ ընդ մերթ փայլակի արագութեամբ իւր կնոջ կը նայէր :
- « Մըրիկը կը շարունակէր :
- « — Մտիկ ըրէ, մտիկ ըրէ, ըսաւ լա Գարդօնթ, ճշմարիտ աղէկ ըրիր որ ետ դարձար :
- « — Բայց այս արդեւք չըլլար որ եթէ ընթրելու ատենս մըրիկը խաղաղի՝ ես վերստին ճամբայ ելնեմ :
- « — Արեւմտեան հիւսիսային հողմն է, ըսաւ Քատրուս գլուխը շարժելով, որ մինչև վաղը կը տևէ — :
- « Եւ հառաչանք մը հանեց :
- « — Վայ անոնց, ըսաւ ակնավաճառը սեղանը նստելով, որ դուրս կը դռնուին :
- « — Այո՛, կրկնեց լա Գարդօնթ, շատ դէշ դիշեր մը պիտի անցընեն — :
- « Ակնավաճառը սկսաւ ընթրել, և լա Գարդօնթ կը շարունակէր հողատար ասպնջականի մը ամեն փոքրիկ ծառայութիւնները կատարելու :
- « Եթէ ակնավաճառը առաջէն ճանչցած ըլլար զան, այսպիսի մեծ փոփոխութիւն մը անշուշտ պիտի զարմացընէր զինքը և իւր սրտին մէջ կասկածներ պիտի ծագէին :
- « Իսկ Քատրուս խօսք մը չէր խօսեր, այլ իւր շրջադայութիւնը կը շարունակէր և հիւրին երեսը նայելու անդամ կ'երկմտէր :
- « Երբ ընթրիքը լմնցաւ, Քատրուս անձամբ դուռը բացաւ :
- « — Կարծեմ թէ մըրիկը կը դադրի —, ըսաւ :

« Բայց նոյն միջոցին՝ կարծես թէ անոր սուտը հանելու համար կայծակի մը սոսկալի ձայնը տունը դղրդեց, անձրեւախառն հողմի յորձանք մը ներս մտնելով ճրագը մարեց։

« Քատրուս դուռը վերստին դոցեց, և կինը շիջամերձ կրակարանէն ճրագ մը վառեց։

« — Անշուշտ խոնջեցած պիտի ըլլաս, ըսաւ լա Գարդօնթակեալաճառին, սենեակդ պատրաստ է. անկողնիդ վրայ սպիտակ սուաններ փրեցի, վեր ելի՛ր, և հանդիստ պառկէ քնացիր — :

« Յրրկին խաղաղիլը ստուգելու համար Յովհաննէս քիչ մը ևս կեցաւ, և երբ հաստատ խմացաւ որ որոտումն ու անձրեւը երթալով կ'աւելնային, իւր աստիճականաց քարի իրիկուն մաղթեց և սանդուխէն վեր ելաւ։

« Ի՛մ դիտուս վրայէն կ'անցնէր, և սանդուխին իւրաքանչիւր ոտքերուն վրայ անոր կոխելուն ձայնը լսեցի։

« Լա Գարդօնթ անյագ նայուածքով անոր ետեւէն նայեցաւ, իսկ Քատրուս ընդհակառակն կռնակը դարձուցեր էր և այն կողմն անդամ չէր նայեր։

« Այս ամեն եղելութիւնները, որոնց մանրամասն պատմութիւնը այն ժամանակէն ՚ի վեր վերստին միտքս եկած են, աչացս առջև պատահած ատեն ամենեւին ազդեցութիւն մը չըրին ինձ. քանզի բոլոր եղածները բնական էին, և ազամանդին պատմութենէն զատ, որ քիչ մը անհաւատալի կ'երևէր ինձ, ամեն բան իւր պատճառն ունէր։

« Եւ որովհետև չափազանց յողնած էի, և կը յուսայի մրրկին դադրելու սկսած միջոցին դիշերանց մեկնիլ անկէ, որոշեցի որ քանի մը ժամ քնանամ։

« Ար լսէի որ ակնավաճառն ալ դիտիս վրայի սենեկին մէջ հանդարտ դիշեր մը անցընելու համար իւր ամեն պատրաստութիւնները կը տեսնէր։ Շատ չանցաւ անկողնոյն ձայնը առի. ակնավաճառը պառկեր էր։

« Ա՛րդդայի որ աչքերս ակամայ կը դոցուէին, և որովհետև ամենեւին կասկած մը չունէի, քնոյ հետ կռուելու ալ ամե-

նեւին փորձ չփորձեցի . վերջին նայուածք մը շրջեցի վարի սրահին մէջ :

« Քատրուս երկար սեղանի մը քով նստած էր տախտակէ այն նստարաններուն մէկուն վրայ, որոնք դիւզի սլանդոկներուն մէջ աթոռի տեղ կը բռնեն . կռնակը ինձ դարձուցեր էր, այնպէս որ իւր դէմքը չէի կրնար տեսնել, սակայն եթէ հակառակ դիրք մ'ալ ունենար, տեսնել անկարելի պիտի ըլլար, ըստ որում գլուխը երկու ձեռացը մէջ ծածկեր էր :

« Աս Գարդօնթ քիչ մը ատեն անոր նայեցաւ, իւր ուսերը բարձրացուց և դնաց անոր դիմացը նստաւ :

« Այն միջոցին կրակարանին սղեվար բոց մը անվառ մնացած չոր փայտի մը մնացորդը փռնկելով, աւելի սլայծառ լոյս մը հանեց և ներքին տխուր կողմը լուսաւորեց :

« Աս Գարդօնթ իւր աչքերը էրկանը վրայ յարած կեցաւ, և որովհետեւ Քատրուս նոյն դիրքին մէջ կեցեր մնացեր էր, տեսայ որ կինը իւր կոր ձեռքը դէպ'ի անոր երկնցուց և անոր ճակատին դպաւ : Քատրուս սարսուեցաւ :

« Ինձ այնպէս երեցաւ որ կինը իւր շուրթերը կը շարժէր . սակայն կամ խիստ կամաց խօսելուն և կամ զղայարաններս քունէն թմբրած ըլլալուն իւր ձայնը չլսեցի :

« Այնուհետեւ իսկ գողցես մէկի մէջէ կը տեսնէի զան և քունին առաջնորդն եղող այն անտուղութեամբ, որու մէջ կարծեսք թէ երազել կ'ըսկսինք :

« Վերջապէս աչքերս դոցուեցան, և ես իմ զղայութիւնս կորսնցուցի :

« Խիստ խորունկ քունի մէջ կը դտնուէի, երբ ատրճանակի հարուածէ մը, ու անկէ ետքը սոսկալի աղաղակէ մը արթնցայ :

« Սենեկին առաստաղին վրայ երեքեալ քայլերու ձայներ ելան, և անշարժ մարմին մը ճիշդ գլխիս վրայ սանդուխին մէջ ինկաւ :

« Տակաւին ես ինքզինքս դտած չէի, երբ ողբալու և կուոյ ժամանակ եղածին պէս խեղդուած ձայներ կը լսէի :



« Աւերջին ձայն մը , որ միւս ձայներէն աւելի երկարելով  
հեծութեան փոխուեցաւ , զիս քնոյ թմբբութենէն բոլորովին  
սթափեցուց :

« Մէկ թեւիս վրայ ելայ , աչքս բացի , բայց մթութեան  
մէջ բան մը չտեսայ , ու ձեռքս ճակատիս տարի , որուն  
վրայ ինձ այնպէս կ'երեւէր թէ սանդուխին տախտակներուն  
ճեղքուածներէն դաղջ և յորդ անձրև մը կը վաղէր :

« Այն ահուելի աղմուկին վրայ խորունկ լռութիւն մը տիրեց :

« Այն ատեն դիտուս վրայ՝ քալող մարդու ձայներ լսեցի ,  
որ սանդուխէն ստորին սրահը իջաւ , վառարանին մօտեցաւ ,  
և ճրագ մը վառեց :

« Այն մարդը ֆատրուսն էր , որուն դէմքը դեղներ և շա-  
պիկը արիւնով թաթաւեր էր :

« Ճրագը առնելով , վերստին արտորնօք սանդուխէն վեր  
ելաւ , և անոր անհանդիսա և աճասլարող քայլերը լսեցի :

« Այնպիսի մը ետքը՝ դարձեալ վար իջաւ :

« Ակնադարանը ձեռքը բռնած էր . բացաւ զայն , ադա-  
մանդը անոր մէջը ըլլալը ստուգեց , իւր ո՞ր ծոցին մէջ դնե-  
լու համար վայրկեան մը փորձեր ըրաւ . ետքը անստրակոյս  
մտածելով որ դրսեանը բաւական ապահով սրահարան մը  
չկրնար ըլլալ , իւր կարմիր թաշկինակին մէջ ոլորեց և իւր  
սրահանոցին բոլորախօքը փաթթեց զայն :

« Ետքը դէպ 'ի սրահանոցը վազեց , թղթագրաւները և  
ոսկիները հանեց , առաջինները սրնաղղեստին ժամածոցին  
մէջ և վերջինները բաճկոնին դրսեանին մէջ դրաւ , երկու  
կամ երեք շապիկ առաւ և դէպ 'ի դուռը ցատկելով՝ մթու-  
թեան մէջ աներևոյթ եղաւ :

« Այն ատեն ամեն բան որոշ և յայտնի եղաւ ինձ համար .  
ինքզինքս մեղադրեցի որպէս թէ բուն յանցաւորը ես եղած ըլ-  
լայի : Յանկարծ հեծութեան պէս ձայն մը լսեցի . ողորմելի ա-  
կնավաճառը կրնար դեռ կենդանի ըլլալ . դուցէ անոր օդ-  
նութեան հասնելով , կարող ըլլայի ոչ թէ իմ ըրած այլ  
ընեւ թողուցած շարութեանս մէկ մասին հատուցումը ընել :

« Կոնակս կռթընցուցի այն դէշ յօդուած տախտակներէն մէկուն դէմ, որոնք իմ պառկած սենեակս ստորին սրահէն կը բաժնէին ։

« Անմիջապէս տախտակները քակուեցան, ու ես տան մէջ մտայ ։

« Վազեցի ճրայը առի և դէպ 'ի սանդուխը ցատկեցի . մարմին մը պատեր էր անոր մէջ տեղը . այս մարմինը լա Գարդօնթի դիակն էր ։

« Ատրճանակի հարուածը անոր ուղղուեր ու դնտակը սլարանոցին մէկ կողմէն միւսը անցեր էր, կինը այս կրկին վէրքէն զատ, ուրկից արիւնը վտակի պէս կը հոսէր, իւր բերանէն ալ արիւն կը փսխէր ։

« Լա Գարդօնթ բոլորովին անշնչացեր էր ։

« Ոտքս վերցուցի և անոր մարմնոյն վրայէն անցայ ։

« Սենեակը սոսկալի խառնակութեան երևոյթ մը կ'ընծայէր ։

« Երկու կամ երեք կարասիք դետինը կործանած էին . անկողնոյ սաւանները, որոնց փաթթուեր էր թշուառ ակնավաճառը, սենեկին մէջ տեղը տարածուեր էին . իսկ ինքը դետինը փրուած էր, դուրսը պատին կռթընցուցած ու արեան ճապաղեաց մէջ լողալով, որ կուրծքին վրայ ընդունած երեք մեծ վէրքերէն դուրս կը հոսէր ։

« Չորրորդ վէրքին մէջ խոհանոցի երկայն դանակ մը մնացեր էր, որուն միայն դաստապանը կ'երևէր ։

« Ոտքս դետինը եղած երկրորդ ատրճանակին վրայ կոխեց, որուն վառօդը հաւանականաբար թրջուած ըլլալուն դնտակը չարձկուեր էր ։

« Ակնավաճառին մօտեցայ, իրօք դեռ մեռած չէր, ոտքերուս ձայնէն իւր վայրագ աչքերը բացաւ, վայրկեան մը վրաս տնկեց զանոնք, իւր շուրթերը շարժեց խօսք մը խօսելու պէս և մեռաւ ։

« Այն քստմնափուշ տեսարանը զիս դրեթէ յիմարեցուց . քանի որ մէկու օղնութեան չէի կրնար հասնիլ, միայն պէտք մը կ'ըզգայի, այն է փախչելու ։

« Չեռքերս մաղերուս մէջ խօթելով և երկիւղալի ձայներ հանելով սանդուխէն վար իջայ :

« Ստորին սրահին մէջ հինգ կամ վեց մաքսաւորներ և երկու կամ երեք զինուորներ կային, որոնք զիս բռնեցին . բայց ես այնչափ ինքզինքէս դուրս էի որ վիճադրելու անգամ փորձ չփորձեցի :

« Ուղեցի խօսիլ, բայց չկրցայ . միայն շփոթ ձայներ հանեցի :

« Մաքսաւորներն ու զինուորները մատով զիս իրարու կը ցուցնէին . վրաս զլուխս արիւնով շաղախած էր, ու զլուխս խոնարհեցուցի :

« Սանդուխին տախտակներուն ճեղքուածներէն վրաս հոսած այն դաղջ անձրեւը՝ որ զգացի՝ լա Գարդօնթի արիւնն էր :

« Մատովս իմ սրահուած տեղս ցուցուցի անոնց :

« — Ի՞նչ ըսել կ'ուզէ, հարցուց զինուոր մը :

« Մաքսաւոր մը դնաց ցուցուցած տեղս նայեցաւ :

« — Ըսել կ'ուզէ թէ այն կողմէն ներս մտեր է —, սլառասխանեց, ու անոնց այն ծակը ցուցուց, ուրկից իրօք դուրս ելեր էի :

« Այն ատեն հասկըցայ թէ զիս մարդասպանը կը կարծէին :

« Չայնս և ոյժս ամփոփեցի, զիս բռնող երկու մարդոց ձեռքէն ինքզինքս ազատեցի պոռալով .

« — Ես չեմ, ես չեմ — :

« Երկու զինուորները իրենց հրացանները ինձի ուղղեցին :

« — Եթէ շարժում մը ընես, ըսին, մեռած ես :

« — Բայց երբ կ'ըսեմ ձեզ, պոռացի, որ ես չեմ :

« — Պատմութիւնդ Նիմի դատաւորներուն ըրէ, պատասխանեցին : Հիմա մեր հետը եկու, և եթէ խրատ մը ունինք քեզ տալու, այն է որ մեզ դէմ չկենաս — :

« Ես այնպիսի դիտաւորութիւն մը չգտնեի . քանզի ասլշութենէս և երկիւղէս ուժէ կոտորեր էի :

« Չեռացս երկաթներ դրին, զիս ձիու մը պոչին կապեցին, ու Նիմ տարին :

« Նաւակէն փախած ատենս՝ մաքսաւոր մը ետեւէս եկեր ու պանդոկին շրջակաները աներեւոյթ ըլլալս տեսնելով՝ տարակուսեր էր որ այն դիշերը այն տանը մէջ պիտի անցընեմ : Ուստի գացեր իւր ընկերացը իմացուցեր էր , որոնք ճիշդ այն միջոցին հասեր էին , որ ատրճանակին հարուածը լսեն և զիս յանցաւորութեան այնպիսի ապացոյցներու մէջ բռնեն . իմացայ անմիջապէս անմեղութիւնս անոնց ճանչցընելու դժուարութիւնը :

« Ուստի ակնկալութիւնս միայն մէկ բանի վրայ դրի . քրնճիչ դատաւորին ներկայացած ատենս առաջին խնդիրս եղաւ ազտել զան որ նոյն օրը Բոն-տիւ-Վարի պանդոկը եկող Պիւզոնի անուն արբան ամեն կողմ փնտուել տայ :

« Եթէ Քատրուս պատմութիւն մը հնարեր էր , և եթէ այն անունով արբայ մը չկար , յայտնի էր որ ես կորսուած էի , միայն եթէ Քատրուս ալ ձեռքակալ չըլլար ու ամեն բան շխտտովաներ :

« Երկու ամիս անցան , ու այսչափ միջոցին , պէտք է դովութեամբ ըսել որ դատաւորս ամեն խուզարկութիւններն ըրաւ փնտուած անձս գտնելու համար :

« Արդէն յոյսս կորսնցուցեր էի :

« Քատրուս ձեռք չանցեր էր :

« Եւ ես դատաւորաց առաջին նիստին պիտի դատուէի , երբ սեպտեմբերի 8ին , այսինքն բռնուելէս երեք ամիս և հինգ օր ետքը , արբայ Պիւզոնին , որմէ յոյսս կորած էի , բանտիս մէջ ներկայացաւ , ըսելով թէ Մարսիլիա իմացեր էր որ բանտարկեալ մը կ'ուզէր իրեն հետ խօսիլ և իմ խնդրանօքս դալու փութացեր էր :

« Ար հասկընաք թէ ինչ եռանդեամբ ընդունեցի զան , ու ըստր տեսածներս պատմեցի . սրտի անհանդստութեամբ ազամանդին պատմութիւնն ալ ըրի , ակնկալութեանս հակառակ՝ կէտ առ կէտ ճշմարիտ էր այն , դարձեալ ակնկալութեանս հակառակ՝ ամեն ըսածներուս հաւատ ընծայեց :

« Այն ատեն՝ իւր քաղցր մարդասիրութենէն յափշտակեալ ,

իմ երկրիս սովորութեանց լաւ ծանօթութիւն ունենալը տեսնելով, և մտածելով որ դործած միակ մեղացս ներուժը անոր ողորմասէր շուրթերէն կրնար իջնալ, խոստովանութեան կնքոյ տակ պատմեցի նաև Օթէօյլի դիպուածը իւր ամեն պարագաներովը :

« Չղուշութեամբ պատմելով ինչ արդիւնք որ պիտի ունենայի, սրտի յափշտակութեամբ պատմելովս մի և նոյն հետեւութիւնն ունեցայ. առաջին սպանութեանս խոստովանութիւնը, դոր անոր յայտնելու ստիպուած չէի, ապահովցուց զանոր երկրորդը դործած չէի, և ինձմէ բաժնուելու ատենը հրամայեց ինձ որ յուսամ, ու անմեղութիւնս դատաւորացս ճանչցընելու համար ամեն կրցածը ընելու խոստացաւ :

« Իրօք անոր իմ դործիս զբաղիլը փորձով տեսայ, քանզի բանտիս խստութիւնը աստիճանաբար կը մեղմանար և իմ դատս միշտ կը ձգձգէին :

« Այն միջոցին նախախնամութիւնը այնպէս տնօրինեց որ Բատրուս օտար երկրի մէջ բռնուի ու Գաղղիա բերուի :

« Բատրուս ամեն բան խոստովանեցաւ՝ ոճրագործութեան խորհուրդը և թելադրութիւնը իւր կնոջը վրայ նեանելով :

« Աւտի մշտնջենաւոր թիապարտութեան դատապարտուեցաւ, ու ես ազատեցայ :

— Եւ այն ատեն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, աբբայ Պիւզոնիին մէկ նամակովը ինձ ներկայացար :

— Այո՛, տէր իմ, աբբայ Պիւզոնիին յայտնապէս իմ բարօրութեանս կը փափաքէր : — Մաքսանենդութեան արհեստդ զքեզ պիտի կորսնցընէ, ըսաւ ինձ. եթէ բանտէդ ելնես, թող այդ արհեստը :

« — Բայց, հայր իմ, հարցուցի անոր, ինչպէս կրնամ ապրիլ ու ողորմելի քրոջս ապրուստը հոգալ :

« — Խոստովանաորդւոցս մէկը, պատասխանեց, զիս խիստ կը յարդէ ու իրեն հաւատարիմ մարդ մը գտնելու հոգը ինձ թողուցած է : Մուզե՛ս որ զքեզ անոր զրկեմ :

« — Ա՛հ, հայր իմ, ըսի, ո՛րչափ բարի էք :

« — Բայց երդում պիտի ընես որ երբեք զիս պիտի չզըզ-  
ջացրնես — :

« Չեոքս երկնցուցի որ երդում ընեմ :

« — Անողուտ է, ըսաւ, ես Քորսիացիները կը ճանչնամ  
և կը սիրեմ, ահա քեզի յանձնարարական նամակ մը — :

« Եւ այն քանի մը սողը դրեց, զոր ձեզ յանձնեցի, և ու-  
րուն վրայ Ձեր Ասեմութիւնը զիս իւր ծառայութեանը առ-  
նելու բարութիւնն ունեցաւ : Հիմա, պարծելով կը հար-  
ցընեմ Ձեր Ասեմութեան, երբեք ինձմէ դանդաւորեալ տեղ  
ունեցա՞ք :

« — Ոչ, պատասխանեց կոմսը, և ուրախութեամբ կը խոս-  
տովանիմ որ դուն բարի ծառայ մ'ես, Պէրթուչիօ, թէև  
վստահութիւն չունիս :

« — Ե՞ս, պարոն կոմս :

« — Այո՛, դուն . ինչպէս կ'ըլլայ որ դուն քոյր մը և  
հոգեզաւակ մը ունենաս, և ինձ բան մը չըսես ոչ մէկուն և  
ոչ միւսին վրայ :

« — Ափսո՛ս, տէր իմ, պատճառը այն է որ կենացս ա-  
մենէ տխուր մասը դեռ չպատմեցի ձեզ : Քորսիա դացի, որ-  
պէս զի իմ ողորմելի քոյրս տեսնեմ և միջիթարեմ, սակայն  
երբ Ռոլիանօ հասայ, տունը սղոյ մէջ դտայ, ահա ելի տե-  
սարան մը տեղի ունեցեր էր հոն, որուն յիշատակը դեռ  
դրացիները կը պահեն : Խեղճ քոյրս խրատուցս համեմատ  
դէմ կը գնէր Պէնէտէթթոյի պահանջմանց, որ ամեն վայր-  
կեան կ'ուզէր որ տան մէջ եղած բոլոր ստակները իրեն  
տայ : Առտու մը սպառնացաւ անոր և բոլոր օրը աներևոյթ  
եղաւ : Քոյրս անոր բացակայութեանը համար լացաւ, վասն  
զի այն սիրելի Ասունթան մօր պէս կը սիրէր այն թշուառա-  
կանը : Իրիկուն եղաւ, Ասունթա արթուն անոր սպասեց,  
բայց երբ ժամը տասն ու մէկին երկու բարեկամներու հետ  
ներս մտաւ, որոնք իւր ամեն յիմարութեանց սովորական  
ընկերներն էին, կինը դրկեց զան, բայց ընկերներն ալ  
զինքը բռնեցին, և երեք սրիկաներէն մէկը ( կը սոսկամ ը-  
սելու որ այն դժոխային դաւակը չըլլայ ) սոռատ :

« — Խաղը սկսինք , և պէտք է որ իւր ստակն ո՛ւր ըլլալը խոստովանի — :

« Ազգիլիօ դրացին Պասթիա դացեր էր . միայն իւր կիներ տունը մնացեր էր :

« Անորմէ զատ մէկը չէր կրնար քրոջս տան մէջ պատահածները տեսնել կամ լսել :

« Երկու սրիկաները զան բռնած ատեննին՝ ողորմելին այնպիսի չարութեան մը կարելիութեան չկրնալով հաւատալ , իւր գահիճներն ըլլալու սրիկաներուն կը ժպտէր . երրորդը զնաց դռները և սրատուհանները դոցեց , և վերադառնալով , երեքնին միատեղ իրենց անկատակ սրատրաստութիւններէն Ասունթայի հանած երկիւղի ձայները արդիլելով , անոր ոտքերը կրակարանին մօտեցուցին , որուն վրայ կը յուսային թէ պիտի խոստովանեցընեն զան մեր փոքրիկ դանձին ո՛ւր պահուած ըլլալը . սակայն կռուելու ժամանակ կնոջ զգեստները փռնկեցան . այն ատեն թողուցին զան որ իրենք ալ շայրին :

« Բոցավառեալ զգեստներով դէպ 'ի դուռը վաղեց , բայց դուռը դոցուած էր :

« Դէպ 'ի սրատուհանը ցատկեց , սակայն սրատուհանը փակուած էր :

« Այն ատեն դրացի կիներ սոսկալի ձայներ լսեց . Ասունթային ձայնն էր որ օգնութեան կը կանչէր :

« Շատ չանցաւ ձայնը մարեցաւ , աղաղակները հեծութեան փոխուեցան , ու հետեւեալ առտու՝ երբ Ազգիլիոյ կիներ երկիւղալի և անձկադին դիչեր մը անցընելէն ետե՛ իւր տունէն դուրս ելնելու համարձակեցաւ և մեր տան դուռը դատարին բանալ տուաւ , Ասունթան կիսայրեաց մնացեր էր , բայց տակաւին շունչ կ'առնէր , պահանոցները խորտակուած էին , և ստակը աներևոյթ եղեր էր :

« Իսկ Պէնէտէթթօ Ռոլիանոյէն մեկներ և մէկ մ'ալ չվերադարձեր էր . այն օրէն 'ի վեր չտեսայ զան և ոչ իսկ անոր վրայ խօսելնին լսեցի :

« Այս տխուր գոյժը առնելէս ետև, կրկնեց Պէրթուչիօ, Ձեր Ասեմութեան ներկայացայ: Պէնէտէթթոյի վրայ ձեզ խօսելու պէտք չունէի, ըստ որում աներևոյթ եղեր էր, և ոչ քրոջս վրայ, քանզի մեռեր էր:

— Այդ դիպուածին վրայ ինչ կարծիք ունեցար, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Գործած մեղքիս պատիժը կարծեցի, պատասխանեց Պէրթուչիօ. ո՛հ, այն Աիլըֆօրի ընտանիքը անիծեալ ցեղէ սերեալ է:

— Ես ալ այնպէս կարծեմ, մրմոաց կոմսը վշտաղին ձայնով մը:

— Եւ հիմա Ձեր Ասեմութիւնը կը հասկընայ, այնպէս չէ, կրկնեց Պէրթուչիօ, որ այս տունը զոր այն ժամանակէն 'ի վեր տեսած չէի, այս պարտէզը ուր յանկարծ ինքզինքս վերստին դտայ, և այս տեղս ուր մարդ մը սպաննեցի, պատճառեցին ինձ այն սոսկալի յուզմունքը, որուն պատճառը ուզեցիք դիտնալ. վասն զի վերջապէս աղէկ չեմ գիտեր թէ Պ. Աիլըֆօր ալ հոս ոտիցս ներքև թաղուած չըլլայ այն փոսին մէջ, որ իւր մանկան համար փորեր էր:

— Իրօք ամեն բան կարելի է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ոտք ելնելով, թաղաւորի դործակալին մեռած չըլլալն անդամ, յաւելցուց ցած ձայնով: Աբբայ Պիւզոնին աղէկ ըրաւ որ զքեզ ինձ ղրկեց. դուն ալ աղէկ ըրիր որ պատմութիւնդ ինձ պատմեցիր, վասն զի հիմա քու վրադ դէշ դաղափար մը պիտի չունենամ: Իսկ այն Պէնէտէթթօն գտնելու համար ամենեւին փորձ մը չփորձեցիր. անոր ինչ ըլլալը գիտնալու համար ամենեւին չփնտռեցիր:

— Ամենեւին. եթէ անոր ուր ըլլալը գիտնայի, փոխանակ անոր երթալու՝ հրէշի մը սողեէն փախչելու պէս անորմէ պիտի հեռանայի: Բարեբաղդաբար որ և է մէկու բերանէն անոր անունը չլսեցի. կը յուսամ թէ մեռած է:

— Մի՛ յուսար, Պէրթուչիօ, ըսաւ կոմսը. չարերը այդպէս չեն մեռնիր, վասն զի կարծես թէ Աստուած զանոնք



իւր պաշտպանութեան տակը կ'առնու իւր վրէժխնդրութեանց  
զործիք ընելու համար :

— Թող այնպէս ըլլայ, Աստուծմէ միայն այն կը խնդրեմ  
որ ամենեւին անոր երեսը չտեսնեմ : Հիմա որ ամեն բան դի-  
տէք, պարոն կոմս, շարունակեց զործակատարը դուրսը խո-  
նարհեցրնելով, այս աշխարհիս մէջ իմ դատաւորս էք, ինչ-  
պէս որ վերը Աստուած պիտի ըլլայ, ամենեւին միտարահան  
խօսք մը չէք ըսեր ինձ :

— Այո՛, իրաւունք ունիս, և կրնամ ըսել քեզ ինչ որ  
արբայ Պիւղոնին պիտի ըսէր, այն Ալիլքօրը որ դուն սպան-  
նեցիր, պատժոյ արժանի էր քեզի ըրածին և դուցէ ուրիշ  
զործի համար : Աէնէտէթթօն՝ եթէ կենդանի է, ինչպէս ըսի՝  
երկնային վրէժխնդրութեան մը պիտի ծառայէ և ետքը ինքն  
ևս պիտի պատժուի : Իսկ դուն իրօք միայն յանցանք մը ու-  
նիս, հարցուր թէ ո՞րն է այդ յանցանքը, այն մանուկը մահ-  
ուանէ ազատելով, ինչո՞ւ իւր մօրը չյանձնեցիր, ահա քու  
յանցանքդ, Աէրթուչիօ :

— Այո՛, պարոն, այդ իմ յանցանքս և ճշմարիտ յանցանքս  
է, և այս բանիս մէջ վատ դատուեցայ : Ըսիք թէ մանկան  
կեանքը ազատելուս պէս՝ միայն պարտք մը կը մնար կատա-  
րել, այն է՝ անոր մօրը զրկել զան, սակայն այս բանիս  
համար պէտք էի խուզարկութիւններ ընել, ուշադրութիւն-  
նին իմ վրաս հրաւիրել և դուցէ ինքզինքս մատնել : Ես մեռ-  
նիլ չուզեցի, և կեանքս կը սիրէի, ինչու որ քոյր մը ու-  
նէի և անձնասէր էի, անձնասիրութիւնը ընդարոյս ձիրք  
մ'է մեզ Քորսիացւոց՝ վրէժխնդրութեան մէջ անփաս և յաղ-  
թող ելնելու համար, և 'ի վերջոյ նոյն իսկ կեանքը սիրե-  
լուս համար դուցէ չուզեցի մեռնիլ : Ա՛հ, ես ողորմելի եղբօրս  
պէս աներկիւղ չեմ — :

Աէրթուչիօ իւր դէմքը երկու ձեռացը մէջ ծածկեց, և  
Մօնթէ-Քրիսթօ երկար և անկերջ նայուածք մը յարեց ա-  
նոր վրայ :

Վայրկեան մը լռութենէ ետև , որ դիշերուան ժամուն յառաջացած ըլլալուն և իրենց կեցած տեղին նկատմամբ աւելի վսեմ կ'երևէր :

— Այս խօսակցութիւնը ըստ պատշաճի վերջացրնէ լուհամար , որ այս դիպուածոց վրայ վերջինը պիտի ըլլայ , պարոն Պէրթուչիօ , ըսաւ կոմսը անսովոր տխրութեամբ մը , աղէկ միտքդ պահէ ըսելու խօսքերս , որոնք արբայ Պիւզոնիին բերանէն շատ անդամ լսած եմ . ամեն չարեաց երկու դարման կայ , ժամանակ և լռութիւն : Հիմա թող զիս , պարոն Պէրթուչիօ , որ վայրկեան մը այս պարտէզին մէջ պարտիմ : Դուն որ այն ահռելի տեսարանին դերը կատարողն ես , քեզի սաստիկ յուզմունք պատճառող բանը կրնայ ինձ դրեթէ քաղցր զգացում մը պատճառել և այս ստացուածքին կրկին արժողութիւն տալ : Ծառերը , պարոն Պէրթուչիօ , իրենց ըստուերին համար հաճելի են , և ստուերը ցնորքներ և երևակայութիւններ պարունակելուն համար սիրելի է : Պարտէզ մը դնեցի կարծելով թէ պատերով շրջափակեալ տեղ մը կը դնեմ և ոչ ուրիշ բան , և ահա յանկարծ այս շրջափակը այնպիսի պարտէզի մը կը դառնայ , որ ուրուականներով լեցուն է , որոնք դաշնադրին մէջ նշանակուած չէին : Ես ուրուականները կը սիրեմ , և ամենևին լսած չեմ որ մեռեալները վեց հազար տարուան մէջ կարենան այնչափ չարիք ընել որչափ կենդանիները մէկ օրուան մէջ կարող են ընել : Ներս մտիր , պարոն Պէրթուչիօ , և դնա հանդարտութեամբ քնացիր : Եթէ խոստովանահայրդ գերագոյն վայրկեանին արբայ Պիւզոնիին չափ ներողամիտ չըլլայ , զիս կանչէ եթէ տակաւին այս աշխարհիս մէջ ըլլամ , ու ես այնպիսի խօսքեր պիտի գտնեմ , որոնք պիտի սփոփեն քու հողիդ այն վայրկեանին , որ յաւիտենականութիւն կոչուած այն դժնդակ ճանապարհորդութիւնը ընելու համար ճամբայ ելնելու կը պարտաւորի — :

Պէրթուչիօ ակնածութեան խոնարհութիւն մը ըրաւ կոմսին առջևը և հառաչանք մը հանելով հեռացաւ :

Մօնթէ-Քրիսթօ առանձին մնաց, և չորս քայլ յառաջ  
անցնելով,

— Հոս այս սօսիին քովը, մըմնջեց, այն փոսը կը դանուի,  
աւր մանուկը դըրուեցաւ. ահա այն դուռը, ուրկից պարտէզը  
կը մանուէր, և այս դաղանի սանդուխէն սլառկելու սենեակը  
կ'երթուէր: Չեմ կարծեր որ այս ամենը յիշողատետրիս մէջ  
նշանակելու պէտք ունենամ, վասն զի ահա աչացս առջև,  
բոլորաիքս և ոտիցս տակը անոնց քանդակեալ և կենդանի  
ծրադիրը կը տեսնեմ — :

Եւ կոմսը վերջին անգամ մը ևս սլարտէզին մէջ դառնա-  
լով, իւր կտոքը մտնելու դնաց. Պէրթուշիօ, որ զան մտա-  
խոհ կը տեսնէր, առանց բան մը ըսելու կառավարին քովի  
ն առարանին վրայ ելաւ:

Կտոքը Բարիդի ճամբան ուղղեցաւ:

Կոմսը Շանդ-Էլիզէի տունը հասնելով՝ նոյն իրիկունը իւր  
բնակութիւնը աչքէ անցուց շատ տարիներէ՝ ի վեր անոր  
հետ ընտանեցած մարդու մը պէս. թէև առջևէն կը քալէր,  
սակայն դուռ մը ուրիշ դուռի տեղ չըացաւ, և սանդուխ մը  
կամ դաւիթ մը չմտաւ, որ ուղղակի իւր յուսացած տեղը  
չտանէր:

Այս դիշերային այցելութեան մէջ Ալի բնկերացած էր անոր:

Կոմսը Պէրթուշիոյին քանի մը հրամաններ ըրաւ բնակա-  
րանին գեղեցկութեան և նոր կարդադըրութեան մասին, և իւր  
ժամացոյցը նայելով, ուշադիր նուազիացիին ըսաւ.

— Ժամը տասն ու մէկ ու կէս է, Հայտէ պիտի չուշանայ  
դալու. Գաղղկացի կիներուն խմաց տրուեցաւ — :

Ալի իւր ձեռքը երկնցուց գէտ՝ ի գեղանի Յոյն կնոջ  
համար սահմանուած բնակարանը, որ այնչափ մեկուսացեալ  
էր, որ սրահակով մը անոր դուռը ծածկելով, կրնար մարդ-  
բոլոր տունը պարտիլ առանց տարակուսելու որ այն սրա-  
հակին ետին սրահ մը և երկու սենեակներ կը դանուէին  
բնակութեան համար: Ալի իւր ձեռքը գէտ՝ ի այն բնակա-  
րանը երկնցուց, ըսինք, իւր ձախ ձեռքի մատներովը երեք

Թիւր յուցուց , և նոյն ձեռքին հարթ ձե մը տալով , դու խը վրան կռթնցուց և քնանալու պէս ըրաւ :

— Ըսել կ'ուզես , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ այն լեզուին սովորած ըլլալով , թէ երեք կիները քնանալու սենեկին մէջ կ'ըստասեն , այնպէս չէ :

— Այո՛ , ըսաւ Ալի դու խը վերէն վար շարժելով :

— Տիկինը այս իրիկուն խոնջեցած պիտի ըլլայ , շարունակեց Մօնթէ-Քրիսթօ , և անտարակոյս քնանալ պիտի ուզէ . ամենէին զան չխօսեցընեն . Գաղղիացի սենեկապանուհիները թող իրենց նոր տիրուհին բարեւեն և առջևէն հեռանան . ըզգոյշ կեցիր որ Յոյն սենեկապանուհին Գաղղիացի սենեկապանուհեաց հետ հաղորդակցութիւն չունենայ — :

Ալի խոնարհութիւն մը ըրաւ :

Շատ չանցաւ դռնապանին ձայնը լսուեցաւ . վանդակապար բացուեցաւ , կառք մը ծառուղիներուն մէջ մտաւ և դրան սանդուխին առջևը կեցաւ :

Կոմսը վար իջաւ . դռնակը արդէն բացուեր էր . իւր ձեռքը երկնցուց ծաղկահաս կնոջ մը , որ ոսկեկուռ կանաչ մետաքսեայ կրկնոցով դու խը ծածկեր էր :

Ծաղկահաս կինը իրեն երկնցած ձեռքը բռնեց , ակնածութեամբ խառնուած սիրով մը համբուրեց զան , և իրարու հետ քանի մը խօսքեր փոխեցին՝ կինը սիրալից բառերով , իսկ կոմսը քաղցր ծանրութեամբ մը և այն քաղցրահնչիւն լեզուով , զոր ձերուսին Հովերոս աստուածոց բերանը տուած է :

Այն ատեն Ալիին առաջնորդութեամբը , որ վարդապոյն մոմով աշտանակ մը բռնած էր , երիտասարդ կինը իւր բնակարանը դնաց , որ ուրիշ մէկը չէր , բայց եթէ այն դեղանի Յոյն կինը և Իտալիոյ մէջ Մօնթէ-Քրիսթոյի սովորական ընկերը . կոմսն ալ իրեն համար սլահուած խուցը քաշուեցաւ :

Այս դիշերը կէս ժամ անցած՝ տան մէջ բոլոր ճրագները մարած էին , և ամեն մարդ քնացած էր :

ԲԱՆՈՒԹ Է՝

ԱՆՍԵՀՄԵՆ ՎԵՐԿԸ



ՀԵՅԵՒԵԱԼ օրը կէս օրէն երկու ժամ ետքը՝ անդղիական ընտիր ձիերով լծուած կառք մը կեցաւ Մօնթէ-Քրիսթոյի դրան առջևը, կապոյտ մատրսեայ կոճակներով զարդարուած թիկնոցով, ոսկի մեծ շղթայ մը կրող սպիտակ բաճկոնով, կաղինի դոն սրնազգեստով, և այնպիսի սև ու յօնքերուն վրայ իջած մազերով, որոնք բնական կարծելու կրնար երկմտիչ մարդ, այնչափ անոնց տակը ծածկուիլը անկարելի եղած կնճիռներուն հետ անհամաձայն էին, վերջապէս յիսուն կամ յիսուն և հինգ տարեկան մարդ մը, որ քառասուն տարեկան երեւիլ կը ջանար, զլուսը կառքին պատուհանէն դուրս հանեց, որուն արտաքին երեսին վրայ սեպուհի պսակ մը նկարուած էր, և իւր սպասաւորը զրկեց որ հարցընէ թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը իւր տունը կը գտնուի՞:

Նոյն միջոցին այս մարդը այնպիսի մանրակրկիտ ուշադրութեամբ, որ գրեթէ անպատեհ կ'երևէր, տան արտաքին կողմը, պարտէզին երեցած մասը, և դացող եկող ծառաներուն միազդեստը կը գիտէր:

Այս մարդուն աչքը վառվռուն էր, բայց աւելի խորամանկ քան թէ կորովավիտ կ'երևէր, շուրթերը այնչափ նուրբ էին, որ փոխանակ դուրս ելած ըլլալու, բերանին մէջ մտած էին.

վերջապէս այտերուն լայնութիւնը և ցցուած ըլլալը, որ խորամանկութեան անվրիպելի նշանն էր, ճակատին խորութիւնը և ծոծրակին ստուարութիւնը, որ նուազ ազնուապետականաց ականջները կը դերազանցէր, ամենը միատեղ կը մասնակցէին դրեթէ զազրալի բնութեան մը նկարագիրը ընծայել այն դէմքին, որ ուամկաց աչքին մեծարոյ կ'երևէր իւր դեղեցիկ մազերովը, շապիկին վրայ կրած խոշոր ադամանդովը և մէկ կոճակէն միւսը երկնցած կարմիր ժապաւէնովը:

Սպասաւորը դռնապանին պատուհանը զարկաւ և հարցուց.

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տունը այս է:

— Նորին Ղսեմութիւնը հոս կը բնակի, պատասխանեց դռնապանը՝ բայց . . . —

Եւ ակնարկով մը Ալիին խորհուրդ հարցուց:

Ալի բացասական նշան մը ըրաւ:

— Բայց ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ըսել կ'ուզեմ թէ Նորին Ղսեմութիւնը այսօր այցելու չընդունիր, պատասխանեց դռնապանը:

— Աւրեմն ահա տիրոջ սեպուհ Տանկլարին այցատումսը, Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տունը, և ըսէ որ տէրս խորհրդարան երթալու ժամանակ իւր ճամբայէն դարձեր էր զինքը տեսնելու պատիւն ունենալու համար:

— Ես Նորին Ղսեմութեան հետ չեմ կրնար խօսիլ, ըսաւ դռնապանը. սենեկապանը յանձնարարութիւնդ կը կատարէ —

Սպասաւորը դէպ 'ի կառքը դարձաւ:

— Ի՞նչ ըսին —, հարցուց Տանկլար:

Սպասաւորը իւր ընդունած դասէն ամչնալով, դռնապանէն առած պատասխանը իւր տիրոջը տարաւ:

— Ա՛հ, ըսաւ Տանկլար, ուրեմն այս պարոնը իշխան մ'է որ Ղսեմութիւն կ'անուանեն, և միայն սենեկապանը իրեն հետ խօսելու իրաւունք ունի: Հող չէ, քանի որ իմ վրաս վարկ ընդունած է, ինձմէ ստակ ուզելու ատենը անշուշտ պիտի տեսնեմ զինքը —

Եւ Տանկլար իւր կառքին մէջ վերստին բազմելով, փողո-

ցին միւս ծայրը լսուելու չափ բարձր ձայնով կառավարի՞ս  
պոռայ :

— Պատղամաւորաց խորհրդարանը — :

Մօնթէ-Քրիսթօ, որուն անմիջապէս իմացուցած էին Տան,  
կլարի այցելութեան դալը, իւր սենեկին վանդակին մէջէն  
սեպուհը տեսեր և ընտիր հեռադիտակի միջոցաւ դան դիտեր  
էր ոչ նուազ Տանկլարի ուշադրութենէն, որ իւր տունը,  
պարտէզը և միադղեստները կը դիտէր :

— Ստուգիւ, ըսաւ ատելութեան շարժումով մը և իւր դի-  
տակին փողերը փղոսկրեայ սլատեանին մէջ մտցընելով, ստու-  
գիւ, այս մարդը տղեղ արարած մ'է, ինչպէս ամեն մարդ  
դան տեսնելուն պէս՝ տափակ ճակատով օձը, կոր դանկով  
անդղը և սուր կտուցով դիշատիչ ցինը չճանչնար : — Ալի —,  
պոռայ, ու սղնձեայ սկահին վրայ հարուած մը տուաւ : Ալի  
երեցաւ : — Պէրթուչիօն կանչէ —, ըսաւ :

Նոյն վայրկենին Պէրթուչիօ ներս մտաւ :

— Չեր վսեմութիւնը զիս խնդրեց, ըսաւ դորձակատարը :

— Այո՛, սլարոն, ըսաւ կոմսը, դրանս առջև կեցող ձիերը  
տեսար :

— Անշուշտ, տէր իմ, և խիստ դեղեցիկ ձիեր են :

— Ի՞նչպէս կ'ըլլայ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ յօնքը կնճռե-  
լով, որ ես քեզմէ Բարիդի ամենէ դեղեցիկ երկու ձիերը ու-  
ղեմ, ու Բարիդի մէջ իմիններուս պէս ուրիշ երկու ձիեր ալ  
ըլլան, և անոնք իմ ախոռիս մէջ չդտնուին — :

Յօնքին կնճռելէն և ձայնին խիստ հնչիւնէն Ալի գլուխը  
խոնարհեցուց և գոյնը նետեց :

— Յանցանքը քուկդ չէ, բարի Ալի, ըսաւ կոմսը արա-  
բերէն լեզուաւ այնպիսի քաղցրութեամբ մը, որ ոչ իւր ձայ-  
նին մէջ և ոչ դիմաց վրայ տեսնուած էր. դուն անդղիական  
ձիերը չես ճանչնար — :

Ալիի դէմքը իւր հանդարտութիւնը ստացաւ վերստին :

— Պարոն, ըսաւ Պէրթուչիօ, ձեր ըսած ձիերը ծախու-  
չէին — :

Մօնթէ-Քրիսթօ ուսերը բարձրացուց :

— Գիտցիր , պարոն դործակատար , ըսաւ , որ դի՛նը տուողը ամեն բան կրնայ դնել :

— Պարոն Տանկլար տասն ու վեց հազար Ֆրանքի դնած է , պարոն կոմս :

— Թող ըլլայ . պէտք էիր երեսուն և երկու հազար Ֆրանք տալ . Տանկլար սեղանաւոր մ'է , և սեղանաւոր մը իւր դրամագլուխը կրկնապատկելու առիթը չկորսնցընէր :

— Պարոն կոմսը առանց կատակի կը խօսի — , հարցուց Պէրթուշիօ :

Մօնթէ-Քրիսթօ դործակատարին երեսը նայեցաւ՝ այսպիսի հարցում մը ընելուն վրայ զարմացած մարդու մը պէս :

— Այս իրիկուն , ըսաւ , այցելութիւն մը ունիմ ընելու . կ'ուզեմ որ այն ձիերը նոր ասպազէններով իմ կառքիս լեծ ուած ըլլան — :

Պէրթուշիօ բարեւելով անոր առջևէն հեռացաւ . բայց դրան առջևը կենալով ,

— Ժամը քանիին , ըսաւ , Ձեր Ասեմութիւնը այցելութիւն ընել կը յուսայ :

— Ժամը հինգին , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Ձեր Ասեմութեան կ'իմացընեմ որ ժամը երկուքն է , համարձակեցաւ ըսել դործակատարը :

— Գիտեմ — , պատասխանելու բաւականացաւ Մօնթէ-Քրիսթօ :

Ետքը Ալիին դառնալով ,

— Բոլոր ձիերը տիկնոջ առջևը հանէ , ըսաւ , որպէս զի հաւնած ձիերը իւր կառքին համար որոշէ , և թող իմացընէ ինձ թէ հետս ճաշել կ'ուզէ . այն տանն սեղանը անոր սենեկին մէջ պատրաստել տուր : Գնա՛ , վար իջնալու ատենդ՝ սենեկասպանը ինձ դրկէ — :

Ալի հազիւ թէ անոր առջևէն աներեւոյթ եղաւ , որ սենեկասպանը ներս մտաւ :

— Պարոն Պաթիսթէն , ըսաւ կոմսը , տարիէ մը 'ի վեր



իմ ծառայութեանս մէջն ես, սովորաբար իմ մարդոցս այս-  
չափ միջոց կու տամ զանոնք փորձելու համար, ուստի կ'ի-  
մացընեմ որ դո՛՛հ եմ քեզմէ — :

Պատիւսմէն խոնարհութիւն մը ըրաւ :

— Ար մնայ դիտնալ թէ դուն ալ դո՛՛հ ես ինձմէ :

— Ա՛հ, պարոն կոմս, ըսելու փութաց Պատիւսմէն :

— Խօսքիս մինչև վերջս մտիկ ըրէ, կրկնեց կոմսը, տա-  
րին հազար հինգ հարիւր Ֆրանք կը շահիս, այսինքն՝ իւր  
կեանքը ամեն օր վտանդի մէջ դնող պաշտօնատարի մը  
տարեկանին չափ, այնպիսի սեղան մը կը նստի՞, որուն  
նմանը կը փափաքէին ունենալ պաշտօնատան շատ վերակա-  
ցուներ, որոնք քեզմէ շատ աւելի ղրաղեալ ողորմելի ծառա-  
ներ են : Գուն ծառայ ես, սակայն ծառաներ ալ ունիս,  
որոնք քու ճերմկեղէններուդ և ուրիշ պիտոյիցդ հող կը  
տանին : Հազար և հինգ հարիւր Ֆրանք ոտճիկէդ զատ՝ ինձ  
համար դնած զդեասաներէդ դրեթէ տարին հազար հինգ հա-  
րիւր Ֆրանք մ'ալ կը դողնաս :

— Ա՛հ, տէր իմ :

— Ձեմ զանգատիր, պարոն Պատիւսմէն, դուն իրաւունք  
ունիս, սակայն ես կ'ուզեմ որ դորձը հոն մնայ : Արդի բաղ-  
դաւոր պաշտօնիդ պէս պաշտօն մը ուրիշ տեղ ամենևին չէիր  
կրնար դանել : Ես իմ մարդիկս չեմ ծեծեր, անոնց երբէք  
չեմ հայհոյեր, բնաւ չեմ բարկանար, սխալմունքի համար  
միշտ կը ներեմ, բայց երբէք անհողութեան կամ մոռացու-  
թեան մը համար : Իմ հրամաններս սովորաբար կարճ են  
բայց յայանի և որոշ, աւելի կը սիրեմ երկու կամ երեք  
անգամ իսկ կրկնել, քան տեսնել զանոնք որ իմ հրաման-  
ներս չարաչար 'ի դորձ դնեն : Ազածս դիտնալու համար  
բաւական հարուստ եմ, և կ'իմացընեմ քեզ որ շատ հետա-  
քըքրիր ալ եմ : Աւստի եթէ երբէք իմանամ որ իմ վրայօքս  
բարի կամ դէշ խօսեցած ես, իմ դորձոցս վրայ մեկնութիւն  
տուած ես, և ընթացքս դիտած ես, նոյն րոպէին տունէս  
դուրս պիտի ելնես : Իմ ծառաներուս միայն անգամ մը ի-

մայ կու տամ. հիմա որ դուն ալ իմացար, գնա — :

Պաթիսթէն խոնարհութիւն ըրաւ և երեք կամ չորս քայլ հեռացաւ :

— Մոռցայ ըսելու, կրկնեց կոմսը, թէ ամեն տարի իմ մարդոցս համար մասնաւոր դումար մը շահու կը դնեմ : Անոնք որ կը ճամբեմ, 'ի հարկէ այն դումարը կը կորսնցընեն, որ միւս ծառաներուս կը մնայ : Ահա տարի մը եղաւ քովս դալդ. երջանկութիւնդ սկսած է, շարունակէ դայն — :

Այս խօսքերը Ալիին առջևը ըլլալով, որ անշարժ կեցեր էր, քանզի դաղդիարէն բառ մը անդամ չէր հասկընար, Պաթիսթէնի վրայ այնպէս ազդեցին, որ միայն այն դաղդիացի ծառային բնութիւնը քիչ մը ճանչցողները կը հասկընան :

— Չեր Ասեմութեան բաղձանաց ըստ ամենայնի համակերպելու պիտի ջանամ, ըսաւ. և Ալիէն օրինակ պիտի առնում :

— Ո՛հ, երբէք, ըսաւ կոմսը խիստ պաղուծեամբ մը. Ալի իւր բարի յատկութեանց հետ խառն շատ պակասութիւններունի. ուստի անոր օրինակին մի հետեւիր, վասն զի Ալի բացառութիւն մ'է. ամենեին ռոճիկ մը չունի, և ծառայ չէան, այլ իմ զերիս և շունս է. եթէ իւր պարտաւորութեան մէջ պակասութիւն մը ընէ, տունէս չեմ արտաքսեր, այլ կ'ըսպաննեմ զան — :

Պաթիսթէն իւր աչքերը խիստ բացաւ :

— Կը տարակուսիս —, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

Եւ Պաթիսթէնին դաղդիարէն ըսած խօսքերը Ալիին կրկնեց. Ալի մտիկ ըրաւ, ժպտեցաւ, ու իւր տիրոջը մօտենալով, մէկ ծունկը դետինը դրաւ և ակնածութեամբ անոր ձեռքը համբուրեց :

Խօսքերուն այս փոքր հետեւութիւնը Պաթիսթէնի ասլուութիւնը 'ի կատար հասցուց :

Կոմսը նշան ըրաւ Պաթիսթէնին որ դուրս ելնէ և Ալիին որ իւր ետեէն դայ :

Երկուքնին ալ իւր դահլիճը դացին և հոն երկար ժամանակ խօսեցան :

Ժամը հինգին կոմսը սկահին վրայ երեք անդամ դարկաւ :  
 Մէկ հարուածը Ալին կը կանչէր , երկու հարուածը՝ Պա-  
 թիսթէնը , և երեք հարուածը՝ Պէրթուչիօն :

Գործակատարը ներս մտաւ :

— Չիկոս պատրաստ են , հարցուց Եօնթէ - Քրիսթօ :

— Կատրին լծուած են , տէր իմ , պատասխանեց Պէր-  
 թուչիօ , ձեզ պիտի բնկերանամ :

— Աչ , կատալարը , Պաթիսթէն և Ալի պիտի դան , ուրիշ  
 մարդ պէտք չէ — :

Կոմսը վար իջաւ , և առտու Տանկլարին կատրին լծուած  
 ձիերը , որոնց վրայ դմայլեր էր , իւր կատրին լծուած տեսաւ :

Անոնց քովէն անցած ասե՛նը , նայուածք մը շրջեց անոնց  
 վրայ :

— Իբրք դեղեցիկ են , ըսաւ , և աղէկ ըրիք դներու . միայն  
 թէ քիչ մը ուշ արթնցար :

— Տէր իմ , ըսաւ Պէրթուչիօ , շատ նեղութիւն կրեցի  
 մինչև որ ձեռք ձգեցի , և շատ սուղ արժեցին :

— Չիկոս նուա՞ղ դեղեցիկ են , հարցուց կոմսը ուսերը  
 բարձրացրնելով :

— Եթէ Ձեր Անեմութիւնը դո՛հ է , ամեն բան աղէկ է .  
 Ա՛ւր պիտի երթաք , պարոն կոմս :

— Ըստէ՛-տ՝ Անթէն փողոցը , պարոն սեպուհ Տանկլարին  
 տունը — :

Այս խօսքերը գրան սանդուխին վերի կողմը կ'ըլլային :  
 Պէրթուչիօ քայլ մը առաւ սանդուխին առաջին աստիճանը  
 իջնալու :

— Աեցիր , պարոն , ըսաւ Եօնթէ - Քրիսթօ . ծովուն եղերքը  
 օրինակի աղաղաւ Նորմանտիոյ մէջ , Հավրի և Պուլօնեի մէջ  
 տեղը երկրի մը պէտք ունիմ : Ահա՛ քեզ ընդարձակ անջըր-  
 պետ մը կու տամ . այն երկիրը պէտք է որ փոքր նաւահան-  
 դիստ մը , փոքրիկ ծոց մը և խորշ մը ունենայ , ուր միա-  
 յարկ նաւս կարենայ մտնել և խարխիս նետել , և միայն  
 տասն և հինգ ոտնաչափ խորութիւն ունենայ : Նաւս միշտ

Ճամբայ ելնելու պատրաստ պիտի ըլլայ ցորեկուան և դի-  
շերուան որ ժամուէն որ նշան տալ ուղեւ: Ասլուածոց ամեն  
նօսարներէն կրնաս իմանալ թէ այս թէութիւններով եր-  
կիր մը ո՛ւր կը դանուի: Երբ տեղը իմանաս, դ՛նա՛ աչքէ ան-  
ցաւը, և եթէ դո՛՛հ ըլլաս, քու անունովդ ծախու առ: Նաւը  
ճամբայ ելած պիտի ըլլայ դէպ՛ի Ֆէդան երթալու, այնպէս չէ:

— Մարտիլիայէն մեկնելու իրիկուննիս տեսայ որ ճամբայ  
կ'ելնէր:

— Շեղակայմը ո՛ւր մնաց:

— Շեղակայմը հրաման ստացած է Մարթիկ կենալու:

— Աղէկ, ժամանակ առ ժամանակ անոնց նաւապետներ-  
րուն հետ պիտի թղթակցիս որպէս զի չքնանան:

— Հապա շողենաւին ի՛նչ հրաման պիտի ընէք:

— Շալո՞ն եղողին:

— Այո՛:

— Առադաստաւոր նաւերուն եղած հրամաններուն նոյնը  
անոր ալ ըրէ:

— Աղէկ:

— Երկիրը գնելուդ պէս՝ իւրաքանչիւր տասը մղոնին թէ  
հիւսիսային և թէ հարաւային ճամբուն վրայ ձի փոխելու  
օթեաններ պիտի շինել տաս:

— Չեր Ասեմութիւնը թող վստահ ըլլայ վրաս —:

Կոմսը գոհունակութեան նշան մը ցուցուց, աստիճաններ-  
րէն վար իջաւ և իւր կառքը մտաւ, որ շքեղ ձիերէ լծուած՝  
արշաւանօք քալելով սեղանաւորին դրան առջևը կեցաւ:

Տանկլար երկաթուղւոյ մը համար կազմուած յանձնաժո-  
ղովի մը կը նախադասէր երբ եկան Մօնթէ-Քրիսթոյ կոմ-  
սին այցելութիւնը իրեն իմացուցին:

Ժողովը գրեթէ լուծուած էր:

Տանկլար կոմսին անունը լսելով ոտք ելաւ:

— Պարոններ, ըսաւ իւր պաշտօնակիցներուն, որոց մե-  
ծագոյն մասը մէկ կամ միւս Խորհրդոյ պատուաւոր անդամ-  
ներ էին. ներեցէք ինձ եթէ ասկէ մեկնելու պարտաւորեալ

և մ. Հոռոմի Թոմսըն և Գրէնչ վաճառատուներ Մօնթէ - Քրիսթօ  
 անուանով կոմս մը կը դրկէ ինձ իմ վրաս անսահման վարկ  
 մը բանալով: Ստուգիւ զուարճալի կատակ մ'է այս օտար  
 երկիր դանուած իմ թղթակիցներու ըրածը, որոնք այսչափ  
 համարձակութիւն կ'ուզեն ունենալ իմ քով: Ար հասկը-  
 նաք անշուշտ թէ ինչ աստիճան հետաքրքրութիւնը զիս շար-  
 ք մեջ և ասկաւին կը շարժէ. այս առտու այն կարծեցեալ  
 կոմսին տունը գացի: Աթէ ճշմարիտ կոմս մը ըլլար, ան-  
 սարակոյս այսչափ հարուստ սխտի չըլլար: Պարոնք այս առ-  
 տու այցելու չընդունիր եղեր, ինչպէս կ'երեի ձեզ այս դործը.  
 այս մեր Մօնթէ - Քրիսթոյի բանեցուցած ձեերը միթէ վսե-  
 մութեան մը կամ դեղանի կ'նոջ մը ձեերը չեն: Յակայն  
 Շանդ - Ելիզէի տունը, որ իրն ըլլալը իմացայ, ինձ դեղե-  
 ցիկ տուն մը երեցաւ: Բայց անսահման վարկ մը, կրկնեց  
 Տանկլար շարամիտ ժպիտով մը ծիծաղելով, մտածել կու-  
 տայ այն սեղանաւորին, որուն վրայ վարկը բացուած է.  
 Աստի այս մարդը տեսնելու մեծ փափաղ ունիմ. կարծեմ  
 թէ զիս ծաղր ըրած են: Բայց դուրսէն չեն դիտեր թէ ո-  
 բո՛ւ հեա է դործերնին, վերջը ծիծաղողը աղէկ կը ծի-  
 ծաղի — :

Առածով մը վերջացուցած այս խօսքերէն ետև, որոնք Պ.  
 սեպուհին քթի ծակերը ուռեցուցեր էին, Պ. Տանկլար իւր  
 հիւրերը թողուց և սպիտակ ու ոսկեզօծեալ սրահ մը մտաւ,  
 որ Շոսէ - տ' Անթէնի մէջ մեծ համբաւ ունէր:

Այցելուն այս սրահը մացընել հրամայեր էր, որպէս զի  
 յանկարծ շացընէ զան:

Կամսը ոտքի վրայ կեցած Ալպանի և Ֆալմօրի ընդօրինա-  
 կեալ սրտակերները կը դիտէր, որոնք իբրև բնադիր ծախ-  
 ուած էին սեղանաւորին, և որոնք առաստաղը զարդարող  
 դոյնզոյն ոսկեզօծեալ արաբացի զարդերուն հետ բոլորո-  
 վին անհամաձայն էին:

Տանկլարի մանելու ատեն հանած ձայնէն կոմսը ետին  
 դարձաւ:

Տանկլար դ լսուլը թե թե կերպով բարեկեց զան և նշան ըրաւ որ նստի ոսկեկուռ սպիտակ սնդուսով կարուած ոսկեզօծեալ փայտեայ թեաթոռին վրայ :

Կոմսը նստաւ :

— Պարոն Մօնթէ-Քրիսթոյի հետ պատիւ ունիմ խօսելու :

— Ես ալ, պատասխանեց կոմսը, սեպուհ Տանկլարի, պատուոյ Ղեղէոնի ասպետին և պատգամաւորաց Խորհրդաբանի անդամին հետ պատիւ ունիմ տեսնուելու — :

Մօնթէ-Քրիսթօ սեպուհին այցատոմսին վրայ կարդացած բոլոր տխրոսները կը կրկնէր :

Տանկլար անոր հարուածը զղայ և իւր շուրթերը խածաւ :

— Ներու՞ն կը խնդրեմ, պարոն, ձեր տխրոսով զձեզ չանուանելու համար, բայց դիտէք որ ժողովրդային կառավարութեան մը տակ կ'ապրինք, և ես ժողովրդեան շահուց ներկայացուցիչն եմ :

— Արով զձեզ սեպուհ կոչելու սովորութիւնը պահելով, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, ուրիշներու կոմս անուանելու սովորութիւնը մտցած էք :

— Ա՛հ, ինձի համար իմ հողս չէ, պարոն, պատասխանեց Տանկլար անհողութեամբ. քանի մը ծառայութեանցս համար՝ սեպուհի և պատուոյ Ղեղէոնի ասպետի տխրոսը տուին ինձ, բայց . . . :

— Բայց դուք այդ տխրոսները չընդունեցիք, ինչպէս ժամանակաւ ըրին Մօնթօրէնսի և Լաֆայէթ պարոնները : Հետեւելու աղէկ օրինակ մ'էր այս, պարոն :

— Աչ բոլորովին, կրկնեց Տանկլար շիտթած. ծառաներուն համար է միայն ըրածնիս, կը հասկընաք . . . :

— Այո՛, ձեր ծառայից առջև՝ սեպուհ, օրադրասկետայ առջև՝ պարոն, և ձեր հրամայողներուն առջև՝ քաղաքացի կ'անուանէք զձեզ : Սահմանադրական կառավարութեան մը խիստ յարմար զանազան աստիճաններ են ատոնք, աղէկ կը հասկընամ — :

Տանկլար իւր շուրթերը խածաւ վերստին, իմացաւ որ այն

խնդրոյն մէջ Մօնթէ-Քրիսթոյի ոյժը չունէր, ուստի ջանաց  
այնպիսի խնդրոյ մը վրայ դառնալ, որ իրեն աւելի ընտանի էր:

— Պարոն հոմա, ըսաւ խոնարհելով, Թոմսըն և Քրէնչ  
վաճառատունէն յանձնարարական նամակ մը ստացայ:

— Շատ ուրախ եմ, պարոն սեպուհ, ներկեցիք ինձ որ ձեր  
ծատայից զձեզ հոչած կերպովը անուանեմ զձեզ, սեպուհ  
դանուած երկիրներէն անուած դէշ սովորութիւն մ'է այս,  
և այս պատճառաւ սեպուհի տիտղոսը չեն տար այսուհետև,  
ուրախ եմ, կ'ըսեմ, որ ես ինքզինքս ներկայացընելու պիտի  
չստիպուիմ, որ միշտ խիստ դժուար է: Յանձնարարական նա-  
մակ մը ստացած էք, կ'ըսէիք:

— Այո՛, պատասխանեց Յանկլար, բայց ճշմարիտ կ'ըսեմ  
միտքը աղէկ չհասկըցայ:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Եւ այս պատճառաւ ձեր աունն իսկ եկայ բացատրու-  
թիւնն ստանալու համար:

— Հարցուցիք, պարոն, ահա՛ պատրաստ եմ ձեզ մտիկ  
ընելու:

— Այն նամակը կարծեմ վրաս է: (Իւր ծոցին մէջ փըն-  
տուեց): Այո՛, ահա՛ է, այս նամակը պարոն Մօնթէ-Քրիսթոյ  
հոմսին անասհման վարկ մը կը բանայ իմ վրաս:

— Այդ նամակին մէջ ի՞նչ մուտ խօսք մը նկատեցիք, Պ,  
սեպուհ:

— Եչինչ, պարոն, միայն անուշաբուր բառը . . . :

— Ի՞նչ, միթէ Քաղղիարէն բառ չէ՞ այդ: Ի՞նչ ընենք,  
Անկլո-դերմանայի են այդ նամակը գրողները:

— Ա՛հ, պարոն, բառերուն համաձայնութեան մասին ը-  
սելիք չկայ, բայց հաշիւի մասին նոյնը չէ:

— Միթէ Թոմսըն և Քրէնչ վաճառատունը, հարցուց Մօն-  
թէ-Քրիսթօ կրցածին չափ անկեղծ կերպարանք մը ցուցը-  
նելով, ձեր կարծեօքը կատարեալ ասպահով վաճառատուն  
մը չէ, պարոն սեպուհ: Ա՛ղաչեմ, ըսէք, ըստ որում ես  
ալ անոնց քով դուժար մը ունիմ:

— Ա՛հ, կատարեալ ապահով են, պատասխանեց Տանկլար զրեթէ ծաղրական ժպիտով մը, սակայն դրամական գործոց մէջ առաւելու բառին միտքը այնչափ անորոշ է . . . :

— Ար անսահման է, այնպէս չէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Ճիշդ այդպէս ըսել կ'ուզէի, պարոն : Աւստի անորոշը տարակոյւն է, և տարակոյւնին մէջ ետ կեցիր, ըսաւ իմաստունը :

— Այս կը նշանակէ, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, որ եթէ Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը յանձն առած է յիմարութիւններ ընել, Տանկլարի վաճառատունը անոր հետեւելու ստիպուած չէ :

— Ի՞նչպէս, պարոն կոմս :

— Այո՛, անտարակոյս, Թոմսըն և Ֆրէնչ պարոնները իրենց գործերը առանց հաշուելու կը տեսնեն. բայց պարոն Տանկլար իր գործոց մէջ սահման մը ունի, և խոհեմ մարդ մ'է, ինչպէս որ հիմա այսպէս կ'ըսէր :

— Պարոն, պատասխանեց զոռոզութեամբ սեղանաւորը, տակաւին մէկը իմ դրամարկղիս հաշիւը ընելու կարող եղած չէ :

— Աւրեմն, պատասխանեց պաղութեամբ Մօնթէ-Քրիսթօ, կ'երևի թէ ես պիտի սկսիմ :

— Եւ ո՞վ ըսաւ ձեզ,

— Չեր ինձմէ խնդրած բայատրութիւնները երկմտելու կը նմանին —

Տանկլար իւր շուրթերը խածաւ :

Այս երկրորդ անգամն էր որ այն մարդէն կը յաղթահարէր, և այս անգամ իրեն ծանօթ խնդրոյ մը վրայ, իւր քաղաքավարութեան կեղծ և ծաղրական ըլլալը յայտնի կ'երեւէր և ամբարտաւանութեան կը մօտենար :

Ընդհակառակն Մօնթէ-Քրիսթօ խիստ շնորհալի կերպով կը ժպտէր և ուզած ժամանակը այնպիսի ան եղծ կերպարանք մը կը ցուցընէր, որ իրեն մեծ առաւելութիւններ կու տար :

— Վերջապէս, պարոն, ըսաւ Տանկլար վայրկեան մը լռութենէ ետև՝ ինքզինքս ճանչընելու համար՝ ձեզ պիտի աղաչեմ որ որոշէք թէ ինչ դումար կը յուսաք որ ինձմէ խնդրէք :



— Բայց, պարոն, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, որ այն խօսակցութեան մէջ կէտ մը անդամ կորսնցընել չէր ուզեր, եթէ ես անսահման վարկ մը խնդրեցի ձեր վրայ, պատճառը այն է որ ճիշդ չէի գիտեր թէ որչափ դումարի պէտք պիտի ունենամ — :

Սեղանաւորը կարծեց թէ վերջապէս ալ ժամանակը եկած է զան յաղթահարելու :

Իւր թեւաթոռին մէջ կրկնեցաւ, և տմարդի ու ամբարտաւան ժպիտով մը ըսաւ .

— Ա՛հ, պարոն, ուղածնուդ չափ խնդրեցէք, և այն ատեն փորձով պիտի տեսնէք որ Տանկլարի վաճառատան դրամարկը, որչափ և սահմանաւոր ըլլայ, կրնայ ամենէ մեծ պահանջուիները դո՛հ ընել, եթէ ուղածնիդ միլիոն մը անդամ ըլլայ . . . :

— Ի՞նչ ըսիք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Միլիոն մը կ'ըսեմ, կրկնեց Տանկլար անմիտ համարձակութեամբ :

— Է՛հ, ի՞նչ պիտի ընեմ մէկ միլիոնը, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. եթէ միայն միլիոնի մը պէտք ունենայի, այսչափ փոքրիկ դումարի մը համար վարկ մը բանալ չէի տար : Միլիոն մը կ'ըսէք, իմ թղթադարանիս կամ ճամբորդութեան տուփիս մէջ միշտ մէկ միլիոն կը գտնուի — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ իւր այցատոմսերը դրած փոքրիկ թրղթադարանին մէջէն երկու վճարագիրեր հանեց՝ իւրաքանչիւրը հինգ հարիւր հազար ֆրանքնոց՝ գրաբերին վճարելի :

Տանկլարի պէս մարդ մը վիրաւորել պէտք չէր, այլ մէկ զարնելով սպաննել :

Լախտին հարուածը իւր ազդեցութիւնն ըրաւ, սեղանաւորը նստած տեղը այլ յայլմէ եղաւ և գլուխը դարձաւ :

Իւր երկու ապուշ աչքերը Մօնթէ-Քրիսթոյի վրայ բացաւ և իւր բիբերը սոսկալի կերպով ընդարձակուեցան :

— Շիտակը ըսէք, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան վրայ վստահութիւն չունիք, պարզ

խնդիր մ'է այս, և ես այս սպարազաները դուշակելով, թէև դործերը ինձ անծանօթ էին, իմ նախազգուշութիւններս ձեռք առած եմ: Ուստի ահա ձեզի ուղղուած ինչ նման ուրիշ երկու նամակներ ալ, որոնց մէկը Աւեննայի Արէսթէյնի և Էսքօշի վաճառատունէն է Ռոչիլտի վրայ, և միւսը Լոնտոնի Պարիսկի վաճառատունէն և Վաֆիթի վրայ: Միայն խօսք մը ըսէք, պարոն, և ես զձեզ մտատանջութենէ կ'ազատեմ այս վաճառատուներէն մէկուն կամ միւսին ներկայանալով — :

Տանկլար յաղթուելով դործը լմնցեր էր. յայտնի գողգողիւնով Աւեննայի և Լոնտոնի նամակները բացաւ, զգրոնք կոմսը իւր մատերուն ծայրովը անոր կը ներկայացընէր, ստորագրութիւնները այնպիսի ուշադրութեամբ քննեց, որ կրնար նախատինք մը ըլլալ Մօնթէ-Քրիսթոյի, եթէ սեղանաւորին շփոթութեան պատճառը ինքը եղած չըլլար:

— Ո՛հ, պարոն, այդ երեք ստորագրութիւնները միլիոններ կ'արժեն, ըսաւ Տանկլար ոտք ելնելով իւր քոփն եզող մարդուն ոսկւոյ անձնաւորեալ զօրութեանը առջև խոնարհելու համար: Մեր երեք վաճառատանց վրայ երեք անսահման վարկ ունենաք. . . : Ներեցէք, պարոն կոմս, անվստահութիւն չըլլալէն զատ՝ հիացման մէջ կը մնայ մարդ:

— Չերինին պէս վաճառատուն մը չկրնար այսպէս հիացած մնալ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ամենայն քաղաքավարութեամբ. ուրեմն պիտի կարենաք ինձ քիչ մը ստակ զրկել այնպէս չէ:

— Հրամայեցէք, պարոն կոմս, ձեր հրամանը կատարելու պատրաստ եմ:

— Ուրեմն հիմա որ իրար կը հասկընանք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, դոնէ այնպէս կը կարծեմ, այնպէս չէ — :

Տանկլար գլխովը հաստատական նշան մը ըրաւ:

— Եւ այսուհետև անվստահութիւն չունիք, շարունակեց Մօնթէ-Քրիսթօ:

— Ո՛հ, պարոն կոմս, պատասխանեց սեղանաւորը, երբէք անվստահութիւն չունեցայ:

— Աչ, բայց միայն աստուծոյ մը կ'ուզէիք : Աւրեմն , կրկնեց կոմսը , հիմա որ իրար կը հասկընանք , հիմա որ ամենեին անգտաստութիւն չունիք , եթէ կը հաճիք՝ առաջին տարուան համար ընդհանուր դումար մը՝ օրինակի համար՝ վեց միլիոն ֆրանք հաստատենք :

— Այն միլիոն , թող ըլլայ , ըսաւ Տանկլար հեղձեալ ձայնով :

— Եթէ աւելի պէտք ունենամ , կրկնեց կոմսը անտարբերութեամբ , աւելի կը դնենք . բայց Գաղղիոյ մէջ յոյս ունիմ միայն տարի մը մնալ , և մէկ տարուան մէջ չեմ կարծեր որ այս դումարն անցընեմ . . . վերջապէս կը տեսնենք . . . : Սկիզբ մը ընելու համար՝ բարեհաճեցէք վաղը ինձ հինգ հարիւր հազար ֆրանք ղրկել . մինչև կէս օր ես տունն եմ , բայց տունը չըլլամ իսկ , ընկալադիր մը կը թողում դործակատարիս :

— Ապա առտու ժամը տասին ստակը ձեր տունը պիտի ըլլայ , պարոն կոմս , պատասխանեց Տանկլար : Ասկի՛ կ'ուզէք , արծաթ թէ դրամատոմս :

— Եթէ կը հաճիք , կէսը ոսկի ըլլայ և կէսը դրամատոմս — :

Եւ կոմսը ոտք ելաւ :

— Ես ալ բան մը պիտի խոստովանիմ ձեզ , պարոն կոմս ըսաւ Տանկլար . ես կարծէի թէ Եւրոպայի հարստութեանց վրայ ճիշդ տեղեկութիւններ ունիմ , բայց սակայն ձերը , որ ինձ անբաւ կ'երևի , բոլորովին անծանօթ էր ինձ . ըսէք կ'աղաչեմ , նոր հարստութիւն մ'է այդ :

— Աչ , պարոն , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ , ընդ հակառակն՝ շատ հին ժամանակէ է . ընտանեկան դանձի մը պէս բան մ'էր , որուն գպչիլը արգիլեալ էր , և որուն շահերը վրան զարնելով , դրամագլուխը եռապատիկ աւելցաւ . կտակարարին սահմանած ժամանակը միայն քանի մը տարի է որ լրացաւ , ես իսկ քանի մը տարի է որ զայն դործածել ըսկաայ , և այս բանիւ վրայ տեղեկութիւն չունենալնիդ խիստ

բնական է : այսու ամենայնիւ քանի մը տարիէն աւելի ազէկ պիտի ճանչնաք — :

Եւ կոմսը այս խօսքերուն հետ սկսաւ ծիծաղիլ այն տժգոյն դէմքով, որ Ֆրանզ տ' Էրիչնէի խիստ մեծ երկիւղ պատճառեր էր :

— Ձեր պերճութեամբը և ձեր խորհուրդներովը մեր մայրաքաղաքին մէջ այնպիսի համբաւ մը պիտի տարածէք, որ զմեզ ամենքս ալ պիտի նսեմացընէ, մենք որ ողորմիլի փոքր միլիոնատէր ենք. այսու ամենայնիւ ինձ կ'երևի թէ գեղարուեստները սիրող էք, վասն զի սրահը մտած ատենս՝ պատկերներս կը դիտէիք, կը ներէք ինձ որ պատկերաց սրահս ցուցունեմ ձեզ, որոնց ամենքն ալ հին և արուեստագէտի գործեր են, ու այնպէս ըլլալը երաշխաւորեալ են. արդի արուեստագիտաց գործերը չեմ սիրեր ես :

— Իրաւունք ունիք, պարոն, վասն զի ընդհանրապէս մեծ պակասութիւն մը ունին, որ է հին ըլլալու ժամանակ շունենալնին :

— Կրնամ ցուցունել ձեզ Թորվալտսընի, Պարթոլունի և Քանովայի պատկերները որոնք ամենքն ալ, ինչպէս որ վիտէք, օտարական արուեստագէտներ են. գաղղիացի արուեստագէտները ինծի յարգի չեն :

— Ջանոնք նախատելու ազատ էք, պարոն, քանզի ձեր հայրենակիցներն են :

— Բայց այս զննութիւնը ուրիշ անդամուան թողունք, երբ աւելի երկար տեսութիւններ ընենք իրարու հետ. այսօր դո՛հ կ'ըլլամ, եթէ սակայն կը ներէք, որ զձեզ տիկին Տանկլարին ներկայացընեմ. թողութիւն կը խնդրեմ իմ եռանդեանս, պարոն կոմս, ձեզի պէս յաճախորդ մը գրեթէ ընտանիքէ կը համարուի — :

Մօնթէ-Քրիսթօ խոնարհութիւն մը ըրաւ սեղանաւորին, իրեն ընել ուզած պատիւն ընդունիլը յայտնելու համար :

Տանկլար զանդակը հնչեցուց, փառաւոր միազգեստով սպասաւոր մը ներս մտաւ :

- Տիկին Տանկլար իւր սենեակին է, հարցուց սեղանաւորը:
- Այո՛, պարոն սեպուհ, պատասխանեց սպասաւորը:
- Մինակ է:
- Ոչ, հիւր ունի:
- Ուրիշի առջև դձեզ ներկայացընելը անպատշաճ բան մը չէ, այնպէս չէ, պարոն կոմս, անշուշտ անծանօթութիւն չէք պահեր:
- Ոչ, պարոն սեպուհ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով, ես այդ արուեստը չեմ գիտեր:
- Եւ ո՞վ է տիկնոջ քով եղողը, պարոն Տըպրէն, հարցուց Տանկլար այնպիսի միամտութեամբ մը, օրուն վրայ Մօնթէ-Քրիսթօ ներքնապէս ժպտեցաւ, և սեղանաւորին ընտանեաց թափանցիկ դաղտնեացը վրայ տեղեկութիւն ստացաւ:
- Այո՛, Պ. Տըպրէն —, պատասխանեց սպասաւորը: Տանկլար դ լսովը նշան մը ըրաւ:
- Ետքը Մօնթէ-Քրիսթոյի կողմը դառնալով,
- Պարոն Ալուսիէն Տըպրէն մեր հին բարեկամներէն մէկը և ներքին գործոց պաշտօնէին մտերիմ դիւանապետն է, ըսաւ. իսկ կինս ինծի հետ ամուսնանալով իւր ազդատոհմական տիտղոսը փոխեց. քանզի ան ալ հին ընտանիքի մը կը վերարերի. Սէրվիէրի օրիորդն է, որ Նաքլոնի մարքէզ գնդապետին հետ ամուսնանալով այրի մնաց:
- Տիկին Տանկլարը ճանչնալու պատիւը չունիմ, բայց պարոն Ալուսիէն Տըպրէն արդէն ճանչցած եմ:
- Ի՞նչ կ'ըսէք, և ո՞ւր ճանչցաք զան:
- Պարոն Մորսէրֆի տունը:
- Ա՛, ուրեմն դերակոմսն ալ կը ճանչնաք:
- Բարեկենդանի ժամանակ միատեղ Հռոմ գտնուեցանք:
- Ոչ, այո՛, աւերակաց մէջ պատահած զարմանալի դիպուածի մը պէս բան մը պատմելը լսեցի անորմէ, և հրաշքով մը աւազակաց ձեռքէն ազատեր է. կարծեմ՝ ասոր պէտրան մը իւր Իտալիայէն դարձին կնոջս և աղջկանս պատմեր է:
- Տիկինը ձեզ կ'ըսպասէ, ըսաւ սպասաւորը ներս մտնելով:

— Առաջ անցնիմ որ ձեզ ճամբան ցուցունեմ, ըսաւ Տանկլար խոնարհելով:

— Եւ ես ձեր ետեւէն կու գամ —, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:



## ԳԼՈՒԲ Է.

### ԿԱՌԱՋԻՔԻ ԺԱՐՏՈՒԿ ԶԻՆԲԲ

**Մ**ԵՊՈՒՀԸ կամսին առջևէն քալելով, երկար դժի մը վրայ շինուած բնակարաններու մէջէ անցաւ, որոնք իրենց մեծածախ փառաւորութեամբը և առանց վայելչութեան պերճութեամբը երևելի եղած էին, և տիկին Տանկլարի առանձնաբանը հասաւ, որ ութանկիւնի փոքրիկ սենեակ մ'էր վարդադոյն սնդուսով դարդարուած, և ասոր վրան ալ Հնդկաստանի շղաշատեռ ծածկուած էր. թեաթոռները ոսկեղօծեալ հին փայտէ և հին կերպասէ էին. դռները վրաները Պուշէի օրինակով հովուանկարներ կային, վերջապէս շքադրամի ձևով երկու գեղեցիկ ներկախառն կապարով շինուած նկարներ միւս կարասեաց հետ դաշնակելով, բոլոր ասպարանքին մէջ միայն այս փոքրիկ սենեակը վայելչութիւն կը ցուցրնէին: Ստորոգ է որ Պ. Տանկլարի և իւր ճարտարասպետին մէջ սահմանուած յատակադիրէն դուրս ելած

էր այն սենեակը, և միայն տիկին Տանկլար և Լիւսիէն Տըպրէ զայն զարդարելու հողը իրենց վրայ առեր էին:

Այսպէս Տանկլար, որ ըստ գաղղիական հին Աւարիչ ժողովոյն հնութիւնները յարգող էր, ամենեւին չէր սիրեր այս փոքրիկ առանձնարանը, ուր ընդհանրապէս չէր ընդունուեր եթէ առանց հրաման խնդրելու իւր հետը մէկը տանել ուզէր:

Աւստի իրօք չէ թէ Տանկլար էր ներկայացընողը, այլ ընդհակառակն ինքն էր ներկայացուողը, և աղէկ կամ դէշ ընդունելութիւն կ'ունենար՝ այցելուին դէմքը տիկնոջ հաճելի կամ անհաճոյ ըլլալուն համեմատ:

Տիկին Տանկլար, որուն դեղեցկութիւնը կրնար իւր երեսուն և վեց տարեկան հասակին մէջ ալ յիշատակուիլ, երփնեբանց տախտակներով և ճարտար շէնքով փոքրիկ դաշնամուրի մը առջև նստած էր, իսկ Լիւսիէն Տըպրէ՝ աշխատութեան սեղանի մը առջև նստած՝ պատկերաց տետրին երեսները կը դարձընէր:

Լիւսիէն արդէն ժամանակ ունեցեր էր կոմսին հասնելէն առաջ անոր վրայօք տիկնոջ սրտմեղու:

Մեր ընթերցողները դիտեն թէ Ալպէրի նախաճաշին ժամանակ Մօնթէ-Քրիսթօ իւր սեղանակցաց ինչ ազդեցութիւն պատճառեր էր:

Այս ազդեցութիւնը, որչափ և նուազ ըլլար, Տըպրէի սրտէն ելած չէր, և կոմսին վրայ տիկնոջ իւր տուած տեղութիւնները անով զգածեալ էին:

Տիկին Տանկլարի հետաքրքրութիւնը՝ Մորսէրֆի մանրամասն հին պատմութիւններէն և Լիւսիէնին նոր պատմածներէն աւելի զրդուեցումով, վերջին ծայրը հասեր էր:

Աւստի դաշնամուրի և պատկերաց տետրին կարդադրութիւնը ուրիշ բան չէր, բայց եթէ այն փոքրիկ խորամանկութիւնները, որոնց միջոցաւ մարդիկ իրենց մտքի ամենէ մեծ զբաղմունքը կը ծածկեն:

Հետեւաբար իւր սովորութեան հակառակ՝ տիկինը ժպտով մը Պ. Տանկլարին ընդունելութիւն տուաւ:

Իսկ կոմսը իւր ողջոյնին փոխարէն՝ պատուադիր բայց փանգամայն շնորհալի շարժում մը ընդունեց :

Եւ Լիւսիէն կոմսին հետ կէս ծանօթութեան բարեւ մը փոխեց , և Տանկլարի հետ մտերմութեան շարժում մը :

— Տիկին , ըսաւ Տանկլար , ներեցէք ինձ որ ներկայացընեմ ձեզ Պ . կոմս Մօնթէ-Քրիսթօն , որ Հռոմի թղթակիցներս խիստ թախանձալի յանձնարարութիւններով ինձ ուղղեր են . անոր վրայ միայն խօսք մը ըսեմ , որ զինքը բոլոր դեղանի տիկնանց սիրելի պիտի ընէ : Բարիզ եկած է տարի մը կենալու և մէկ տարուան մէջ վեց միլիոն ծախք ընելու դիտաւորութեամբ . տարակոյս չկայ որ հետզհետէ պարահանդէսներ , ճաշեր և ընթրիքներ տեղի պիտի ունենան , որոնց մէջ կը յուսամ թէ Պ . կոմսը զմեզ պիտի չմոռնայ , ինչպէս որ մենք ալ զինքը պիտի չմոռնանք մեր փոքրիկ տօնախմբութեանց մէջ — :

Թէև կոմսին ներկայացուիլը բաւական բիրտ զովութեամբ մը կատարուեցաւ , սակայն ընդհանրապէս այնչափ հազուադիւտ է մէկ տարուան մէջ իշխանի մը հարստութեան չափ ծախք ընող մարդ մը , որ տիկին Տանկլար կոմսին այնպ սինայուածքով նայեցաւ , որ օգուտ քաղելու յոյսէն ազատ չէր :

— Ե՞րբ Բարիզ հասաք , պարոն . . . , հարցուց տիկինը :

— Երէկ առտու , տիկին :

— Եւ ձեր սովորութեան համեմատ՝ ինչպէս որ կ'ըսեն , աշխարհիս ծայրէն կու դաք :

— Այս անգամ պաշտօնապէս Գատիքսէն կու դամ , տիկին :

— Ո՛հ , դէ՛ռ եղանակի մէջ Բարիզ եկաք . ամառը Բարիզ ձանձրալի է . ոչ պարահանդէսներ տեղի կ'ունենան , ոչ ապուստիկներ և ոչ տօնախմբութիւններ : Իտալացի Գուսանական խաղը Լոնտոն է , Գաղղիացի Գուսանական խաղը Բարիզէն զատ ամեն կողմ կ'ըլլայ . իսկ Գաղղիական-թատրերգութիւնը դիտէք որ և ոչ մէկ կողմ կը ներկայացուի : Ուստի միայն զուարճութիւն մը մնացած է , այն է Շան տը Մարսի և Սաթօրիի ձիարշաւութիւնները . դուք ալ մասնակից պիտի ըլլաք այս զուարճութեան , պարոն կոմս :



— Ինչ որ կ'ընեն Բարիդի մէջ, տիկին, նոյնը ես ալ պիտի ընեմ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, եթէ դաղղիացւոց սովորութիւնը ըստ սլատշաճի սորվելու համար մէկը դանելու բաղդաւորութիւնը ունենամ:

— Ձի հեծնալը կը սիրէք, սլարոն կոմս:

— Անոացս մէկ մասը Արեւելք անցուցած եմ, տիկին, և Արեւելքի՝ ինչպէս որ դիտէք՝ երկու բան կը յարդեն. ձերբուն աղնուութիւնը և կանանց դեղեցկութիւնը:

— Ա՛հ, սլարոն կոմս, ըսաւ տիկին Տանկլար, պէտք էլք առաջ կիները յիշել:

— Ար տեսնէք, տիկին, որ դաղղիական սովորութիւնները սորվելու համար առաջնորդ մը խնդրելու իրաւունք ունէի —

Այս միջոցիս տիկին Տանկլարի մտերիմ սենեկասրանուհին ներս մտաւ և իւր տիրուհւոյն մօտենալով՝ աղանջին քանի մը խօսք ըսաւ:

Տիկին Տանկլարի գոյնը նեւեց:

— Անկարելի է, ըսաւ:

— Սակայն ճշմարիտ է, տիկին —, սլատասխանեց սենեկասրանուհին:

Տիկին Տանկլար իւր ամուսնոյն դառնալով,

— Ճշմարիտ է ըսածը, սլարոն:

— Ի՛նչ բան, հարցուց Տանկլար յայտնապէս այլայլած:

— Այս աղջկան ըսածը:

— Եւ ի՛նչ կ'ըսէ:

— Թէ կառավարը ձերս կառքիս լծելու համար ախոռը մտած ժամանակը, զանոնք հոն չէ գտեր. կը հարցընեմ, սլարոն, ի՛նչ կը նշանակէ այս:

— Տիկին, ըսաւ Տանկլար, մտիկ ըրէ:

— Այո՛, մտիկ կ'ընեմ, սլարոն, ըստ որում հետաքրքիր եմ դիտնալ թէ ի՛նչ պիտի ըսես. այս սլարոնները թող դատաւոր ըլլան մեր մէջը, և ես ամեն բան պիտի սլատամ անոնց: Պարտաւոր, շարունակեց տիկինը, սլարոն սեպուհ Տանկլարը իւր ախոռին մէջ տասը ձի ունի, այս տասը ձի-

երուն մէջ երկուքը իմս է, որոնք Բարիդի ամենէ ընտիր և ամենէ դեղեցիկ ձիերն են. իմ ճարտուկ ձիերս կը ճանչնաս դուն, պարոն Տըպրէ: Տիկին Ախլըֆօր կառքս ուղեց որ վաղը անտառը երթայ, և ես խոստացայ անոր. ինչ կ'ըսէք, երկու ձիերս յանկարծ աներևոյթ եղեր են: Անշուշտ ա. Տանկլար անոնց վրայ քանի մը հազար Ֆրանք շահ գտած և ծախած է: Ոհ, ինչ սոսկալի ցեղէ են այս շահադէտ մարդիկը:

— Տիկին, պատասխանեց Տանկլար, ձիերը խիստ աշխոյժ էին, քանզի հազիւ չուտ տարեկան էին, և ես միշտ երկխոյզի մէջ էի քեզի համար:

— Գիտես, պարոն, որ ամէ մը 'ի վեր Բարիդի ամենէ վարժ կառավարը իմ ծառայութեանս մէջն է, սակայն կը վախնամ որ ան ալ ձիերուն հետ ծախած չըլլաս:

— Սիրելիս, անոնց նմանը և եթէ կարելի է՝ աւելի ընտիր ձիեր կը գտնեմ քեզ, բայց կ'ուզեմ որ դնած ձիերս հանդարտ և համբոյր ըլլան, որպէս զի ինձ երկխոյզ շատ ճառեն —:

Տիկինը խիստ արհամարհական կերպով ուսերը բարձրացուց. Տանկլար շտեմնել ձևացուց անոր այս շարժումը, որ ամուսնական սէրէ դուրս էր, և Մօնթէ-Քրիսթոյի կողմը դառնալով,

— Ստուգիւ կը ցաւիմ, ըսաւ, որ զձեզ աւելի առաջ չճանչցայ, պարոն կոմս. ձեր տունը կը կահէք:

— Այո, պատասխանեց կոմսը:

— Եթէ գիտնայի՝ ձեզ կ'առաջարկէի որ դնէք զանոնք: Հաւատացէք որ ոչինչ դնով ծախեցի, բայց ինչպէս ըսի՝ ձեռքէ հանել կ'ուզէի. երիտասարդ մարդու ձիեր են:

— Շնորհակալ եմ, պարոն. այս առտու բաւական ընտիր և ոչ այնչափ սուղ ձիեր դնեցի: Նայեցէք պատուհանէն, պարոն Տըպրէ. կարծեմ դուք ալ ձիերը կը սիրէք —:

Տըպրէ պատուհանին մօտեցած ժամանակը՝ Տանկլար իւր կնոջ քով դնաց:

— Հաւատացէք, տիկին, ըսաւ անոր, որ այն ձիերուն

տարադայմանս զին մը տունն , չեմ գիտեր ո՞ր խենթն է , որ իւր ունեցած հարստութիւնը ոչնչացրնելու ուզելով , այս ատու իւր դորձակատարը զրկեր էր ինձ որ զանոնք գնէ . դորձը հոն է որ ես անոնց վրայ տասն և վեց հազար Ֆրանք ահեցայ , մի գովածակիր , չորս հազարը քեզ ու տամ և չորս հազար ալ եօժէնիին — :

Տիկին Տանկլար խոժոռ նայուածք մը յարեց իւր էրկան վրայ :

— Ա՛հ , տէր Աստուած , ի՞նչ կը տեսնեմ , սրտաց Տըպրէ :

— Ի՞նչ կայ , հարցուց տիկինը :

— Աչ , չեմ սխալիր , ճիշդ ձեր ձիերն են , որ կոմսին կառքին լծեր են :

— Իմ ճարտուի ձիերս — , սրտաց տիկին Տանկլար :

Եւ գէտ ՚ի պատուհանը նետուեցաւ :

— Ճիշդ անոնք են — , ըսաւ :

Տանկլար ապարան մնայնք էր :

— Մի՞թէ կարելի՞ բան է այս , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ զարմա նք ձեացրնելով :

— Անհաւատալի բան է — , միմտաց սեղանաւորը :

Տիկինը Տըպրէին ականջին երկու խօսք ըսաւ , որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին մօտե՛ալով հարցուց .

— Տիկինը կը խնդրէ որ խնայրնէք թէ իւր էրկը ձիերը քանի՞ ծախեց ձեզ :

— Աղէկ չեմ գիտեր , ըսաւ կոմսը , դորձակատարս ինձ զարմանք մը պատճառելու ուզեց , և կարծեմ . . . երեսուն հազար Ֆրանք արժեց ինձ — :

Տըպրէ գնաց այս պատասխանը տիկնոջ տանելու :

Տանկլար այնչափ դունատեալ և շփոթած էր որ կոմսը անոր մեղքըստ ձեացուց :

— Տեսէք , ըսաւ անոր , չ՛րչափ ապերախտ են կիները ձեր ՚ի դորձ գրած զդուշութիւնները ամենեւին չազդեցին անոր . կիները ապերախտ կոչելը բաւական չէ , այլ պէտք է ի խենթ ըսել : Քայց ինչ կրնանք ընել , մարդ միշտ փա-

սակարը կը սիրէ . ուստի հաւատացէք ինձի , պարոն սեւ-  
պուհ , ամենէ մեծ խոհեմութիւնն է թողուլ զանոնք որ ի-  
րենց զլխովը դործ տեսնեն . եթէ իրենք իրենց զլուխը ջախ-  
ջախեն , դոնէ յանցանքը իրենցն է — :

Տանկլար պատասխան չտուաւ , մօտաւոր ապագային մէջ  
աղէտալի տեսարան մը կը դուշակէր :

Տիկին Տանկլարի յօնքը արդէն կնճռեր էին , և Ռդիմ-  
պեան Գիոսի յօնքին նման փոթորիկ մը կը դուշակէին :

Տըպրէ անոր սաստկանալը տեսնելով դործ մը բարուրեց  
և մեկնեցաւ :

Մօնթէ-Քրիսթօ , որ շէր ուզեր իւր աւելի երկար ատեն  
հոն մնալովը աւրել անոնց այն վիճակը , ուրկից օգուտ քա-  
ղել կը յուսար , սեպուհը աիկին Տանկլարին բարկութեանը  
յանձնելով , բարեց զանոնք և դուրս ելաւ :

— Ահա , ըսաւ ինքնիրեն Մօնթէ-Քրիսթօ մեկնելու ատեն ,  
իմ բաղձացած նպատակիս հասայ . երկու ամուսիններուն խա-  
ղաղութիւնը ձեռացս մէջն է և մէկ հարուածով կարող եմ  
պարսնին և միանդամայն տիկնոջ սիրտը շահիլ . ինչ ուրա-  
խութիւն : Այսու ամենայնիւ , յաւելցուց , օրիորդ Կօժէնի  
Տանկլարին շնորհայացուեցայ , շատ զոհ պիտի ըլլայի եթէ  
անոր հետ ծանօթութիւն ընէի : Բայց , կրկնեց կոմսը այն-  
պիսի ժպտով մը , որ իրեն յատուկ էր , Բարիզի մէջ ենք ,  
և առջևնիս ատեն ունինք . . . թող քիչ մը ուշ ըլլայ . . . — :

Այս մտածութեամբ կոմսը կառքը հեծաւ և իւր տունը  
վերադարձաւ :

Երկու ժամ ետքը աիկին Տանկլար Մօնթէ-Քրիսթոյ կոմ-  
սէն սիրալիր նամակ մը ընդունեց , որուն մէջ կոմսը կ'ի-  
մացընէր թէ չուզելով բարիզեան ընկերութեանց միջ իւր  
մուտքը գեղանի կնոջ մը յուսահատութիւն պատճառելով  
սկսիլ , կ'աղաչէր որ իւր ձիերն ընդունի :

Ձիերը նոյն ասպազէնները կը կրէին , զորոնք աիկինը  
առտու անոնց վրայ տեսեր էր :

Միայն թէ ահանջուն վրայ եղած իւրաքանչիւր վարդաձև

զարդին մէջ տեղը կոմսը ազամանդ մը կարել տուեր էր :

Մօնթէ - Քրիսթօ Տանկլարին իսկ նամակ մը դրեր էր , որուն մէջ անորմէ ներուձն կը խնդրէր տիկնոջ այն մտային հաճոյքը դո՛հ ընելու , աղաչելով զան որ ձիերուն հետ միատեղ ըստ արեւելեան սովորութեան ղրկուածին ներէ :

Իրիկունը՝ կոմսը Ալիին հետ Օթէօյլ գնաց :

Հետեւեալ առտու ժամը երեքին՝ Ալի սկահին մէկ հարուածովը կանչուելով՝ կոմսին դահլիճը մտաւ :

— Ալի , ըսաւ անոր , լարաձողութեան յաջողակութեանդ վրայ շատ անդամ խօսեցած ես ինձ — :

Ալի գլխովը նշան ըրաւ թէ այո՛ , և պարծենալ ձեացուց :

— Աղէկ . . . : Աւրեմն լարով ցուլ մը կրնաս կեցընել — :

Ալի գլխովը նշան ըրաւ թէ այո՛ :

— Ասի՞ր մը — :

Ալի նոյն նշանը ըրաւ :

— Առիւծ մը — :

Ալի լարաձիգ մարդու մը շարժումն ըրաւ և խեղդուած մօրն շիւնի պէս ձայն մը հանեց :

— Աղէկ , կը հասկընամ , ըսաւ Մօնթէ - Քրիսթօ , առիւծ որսացեր ես — :

Ալի գլխովը պարծենալու նշան մը ըրաւ :

— Բայց երկու խստերախ ձիեր իրենց արշաւանաց մէջ կրնաս կեցընել — — :

Ալի ժպտեցաւ :

— Աւրեմն մտիկ ըրէ , ըսաւ Մօնթէ - Քրիսթօ . հիմա կառք մը պիտի անցնի նոյն երէկուան ծախու առած ճարտուկ ձիերէս ըծուած . եթէ անոնց սմբակին տակը ճզմուելու ալ ըլլաս , պէտք է որ այն կառքը դրանս առջև կեցընես — :

Ալի փողոցը իջաւ և դրան առջին քարայտակին վրայ գիծ մը քաշեց . ետքը ներս մտաւ ու գիծը կոմսին ցուցուց , որ անոր ըրածը գիտեր էր :

Կոմսը գերիին կռնակը կամաց մը զարկաւ . Ալիէն շնորհակալ ըլլալու եղանակն էր այն :

Ետքը նույնպէս իւր ծխափողը առաւ, և դնաց տան և փողոցին անկիւնը կազմող կողմը նստաւ, ինչ ատեն և Մօնթէ-Քրիսթօ բռնորովին անհոգ ըլլալով, իւր սենեակը քաշուեցաւ:

Ժամը հինգին, սյսինքն կամսին սպասած ժամուն՝ թե թե անհամբերութեան մը գրեթէ անզղալի նշանները կը տեսնուէին անոր վրայ:

Կամսը փողոցին վրայ նայող սենեկի մը մէջ կը շրջադաշէր, մերթ ընդ մերթ ահանջ կը դնէր և սլառու հանին կը մտանար, ուրկից Ալին կը տեսնէր, որ կը ծխէր, և ծուլի յորձանքները այնպիսի կանոնաւոր կերպով կը փչէր, որ կը ցուցնէր թէ բռնորովին այն կարևոր դործին կը մտածէր:

Յանկարծ հեռուէն անիւններու գլորելու ձայն մը լսուեցաւ, որ կայծակի մը արագութեամբ կը մտանար:

Ետքը կառք մը երեցաւ, որուն կառավարը սլառապ տեղք կը ջանար ձիերը կեցընել, որոնք կատաղացեալ, մազերնին տնկած և խելացնոր ոստիւններով կը յառաջանային:

Կառքին մէջ նորասի կին մը և եօթը կամ ութ տարեկան տղայ մը կային, որոնք զիրար գրկեր էին և իրենց շափազանց երկիւղէն ձայն հանելու անդամ ոյժ չունէին:

Եթէ անիւին տակը քար մը կամ ծառի կոճղ մը հանդիպէր, բաւական էր կառքը խորտակելու, որ արդէն ճայթելու ձայներ կը հանէր:

Կառքը քարայտակին մէջ տեղէն կը յառաջանար, և զայն անսնողներուն երկիւղալի ձայները փողոցին մէջ կը լսուէին:

Անմիջապէս Ալի իւր ծխափողը ձեռքէն թողուց, ծոցէն լարը հանեց, նետեց և ձախ կողմի ձիուն առջևի սրունքները երեք անգամ անով շրջապատեց. ձին մղման ուժղնութենէն երեք կամ չորս քայլ ևս ընդ քարշ մղուեցաւ. բայց այն երեք կամ չորս քայլէն ետև՝ կառքին սամբին վրայ ինկաւ, խորտակեց զայն և արշաւանքը շարունակելու համար միւս ձիուն ջանքերուն արդելք եղաւ:

Կառավարը հաղիւ այն միջոցին շունչ առնել լով նստալա-  
նէն վար ցատկեց . բայց Այի արդէն իւր երկաթեայ մատնե-  
րովը երկրորդ ձիուն քթին ծակերէն բռներ էր . և անա-  
սունը ցաւէն վրնջելով՝ իւր ընկերին քովը երկնցաւ ջղաձը-  
դու թեամբ :

Այս ամենը դնտակի մը իւր նպատակին հասնելու չափ մի-  
ջոցին կատարուեցաւ :

Սակայն այնչափ միջոցը բաւական եղաւ որ այս դիպուածը  
պատահած տեղին դիմացի տունէն բազմաթիւ ծառաներով  
մարդ մը օգնութեան վազեց :

Կառավարին՝ դռնակը բանալու ատեն , մարդը կառքին  
մտեցաւ և մէջէն տիկինը առաւ , որ մէկ ձեռքով նստա-  
բանը բռներ էր և միւս ձեռքովը իւր նուաղեալ զաւակը  
դրկացը մէջ կը սեղմէր :

Մօնթէ-Քրիսթօ դանոնք երկուքն ալ իւր տունը տարաւ  
և բազմոցին վրայ նստեցրնելով ըսաւ .

— Ալ մի վախնաք , տիկին , աղատեցաք — :

Կինը կ'ըսթափի , և 'ի պատասխանի՝ իւր զաւակը անոր  
կը ներկայացրնէ այնպիսի նայուածքով մը , որ ամեն աղա-  
չանքէ աւելի ազդու էր :

Երօք տղան միշտ նուաղեալ էր :

— Այո՛ , տիկին , կը հասկընամ , ըսաւ կոմսը տղան քրն-  
նելով . բայց անհոգ եղիք , ամենն ին բան չունի , և միայն  
վախէն նուաղած է :

— Ա՛հ , պարոն , սրտս ց մայրը , զիս հանդարտելու համար  
մի՛ ըսէք . տեսէք ինչպէս դեղներ է : Զաւակս , տղաս , Է-  
տուարս , պատասխան տուր մօ դ : Ա՛հ , պարոն , բժիշկ մը  
բերել տուէք : Զաւակս աղատողին բոլոր հարստութիւնս  
կու տամ — :

Մօնթէ-Քրիսթօ յուսահատեալ մայրը հանդարտելու հա-  
մար ձեռքովը շարժում մը ըրաւ , և արկղիկ մը բանալով  
մէջէն պահեմիայի ոսկեղօծեայ սրուակ մը հանեց , որուն մէջ  
արիւնի սէս կարմիր ջուր մը կար , և որով միայն կաթիլ  
մը ազուն շրթանց վրայ կաթեցուց :

Տղան թէև միշտ տժգոյն էր, սակայն անմիջապէս աչքերը բացաւ:

— Ո՛ւր կը գտնուիմ, պոռաց կիներ, և այսպիսի աղէտալի փորձանքէ մը ետքը իմ երջանկութիւնս որո՞ւն պարտաւոր եմ արդեօք:

— Տիկին, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, ձեր վիշտը խնայելու կարող եղող ամենէն երջանիկ մարդուն տունը կը գտնուիք:

— Ո՛հ, անիծեալ հետաքրքրութիւն. բոլոր Քարիզ տիկին Տանկլարի գեղեցիկ ձիերուն վրայ կը խօսէր, ես ալ անոր փորձը ընելու խենթութիւնն ունեցայ:

— Ի՞նչպէս, ըսաւ կոմսը զարմանք մը յուցընելով, այս ձիերը տիկին Տանկլարինն են:

— Այո՛, պարոն, կը ճանչնա՞ք զինքը:

— Տիկին Տանկլարը... այո՛, զան ճանչնալու պատիւն ունեցայ, ուրեմն կրկին ուրախ եմ որ այս ձիերուն պատճառած վտանգէն ազատեցաք. քանզի այս վտանգին պատճառը ես եղած պիտի ըլլայի. երէկ այս ձիերը սեպուհէն գնեցի. բայց տիկինը անոնց համար այնչափ վշտացած ելեցաւ, որ երէկ զանոնք վերստին իրեն ղրկեցի, աղաչելով որ իմ ձեռքէս ընդունի զանոնք:

— Ուրեմն դուք Մօնթէ-Քրիսթոյ կոմսն էք, որուն վրայ Հէրմին այնչափ խօսեցաւ ինձ երէկ:

— Այո՛, տիկին, պատասխանեց կոմսը:

— Ես, պարոն, տիկին Հէլոյիզ Ալիքֆօրն եմ —:

Կոմսը ակնածութիւն մը ըրաւ այնպիսի մարդու մը պէս, որու առջև բոլորովին անծանօթ մէկուն անունը կը արուի:

— Ո՛հ, որչափ երախտապարտ պիտի ըլլայ ձեզ Պ. Ալիքֆօր, կրկնեց Հէլոյիզ. վասն զի վերջապէս երկուքնուս կենաց համար ալ պարտաւոր է ձեզ. իւր կիներն ու զաւակը ազատեցիք: Ստուգիւ՛ առանց ձեր աներկիւղ ծառային այս սիրուն զաւակը և ես պիտի սպաննուէիք:

— Ար սոսկամ, տիկին, երբ ձեր վտանգը կը մտածեմ:



— Ար յուսամ թէ տխարի ներէք ինձ որ այն մարդուն  
անձնուիրութիւնը արժանաւորապէս վարձատրեմ :

— Տիկին, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, կ'աղաչեմ զու  
վութեամբ կամ վարձատրութեամբ Ալին մի գեղծէք, չեմ  
ուզեր որ այսպիսի բաներու սովորի : Ալին իմ գերիս է, ձեր  
կեանքը աղաատելով ինձ ծառայութիւն մը ըրաւ, և իւր  
պարտքն է ինձ ծառայել :

— Բայց իւր կեանքը վտանգի մէջ դրաւ, ըսաւ տիկին  
Վիլքօր, որուն վրայ կոմսին ձայնը զարմանալի կերպով  
ազդեց :

— Անոր կեանքը ես աղաատեմ եմ, հետեւորար այն կեանքը  
խն է — :

Տիկին Վիլքօր լռեց :

Գուցէ Մօնթէ-Քրիսթօյի վրայ կը մտածէր, որ առաջին  
անգամ տեսնողին մասց այնչափ խորունկ ազդեցութիւն կը  
պատճառէր :

Այս լուծեան միջոցին կոմսը կարող եղաւ դիտել այն  
աղան, զոր մայրը խանդաղատանք շարունակ կը համբուրէր :

Այս փոքր աղան վախ, և աշխտ մանկանց սէս սպիտակա-  
մորթ էր. իւր սե խիտ մաղերը, որոնք յարդարուելու ան-  
հնազանդ էին, կամարածե ճակատը կը ծածկէին, ու դէմքը  
ըջանալի լով և ուսերուն վրայ երկննալով, իւր աչաց աշ-  
խուժութիւնը կ'աւելցրնէին, որոնք կեղծաւոր խորամանկու-  
թեամբ և աղայական շարամտութեամբ վառուած էին, բե-  
րանը, որ հաղիւ վերապին շառապներ էր, բարակ շուրթեր  
ունէր և լայն բացուածք մը. այս ութնամեայ տղուն դիմաց  
գծադրութիւնը գոնէ տասն երկու տարեկան կը ցուցրնէր :

Տղան սթափելուն սէս՝ իւր մօրը գիրկէն ուժղնութեամբ  
բաժնուելով, գնաց հեղուկներուն արկղիկը բացաւ :

Նոքր առանց հրաման խնդրելու և իւր ամեն մտային հա-  
ճոյքը գոհ ընելու սովորած մանկան մը սէս սկսաւ սրուակ-  
ներուն խիցերը բանալ :

— Մի գպչիր ասանց, սիրելիս, ըսաւ կոմսը աշխուժի,

քանզի այդ հեղուկներուն մէկ քանին փաստակար է ոչ միայն զամ խմելու, այլ և հոտոտելու անդամ — :

Տիկին Ախլըֆօրի դոյնը նետեց, անմիջապէս տղուն թնէն բռնեց իւր քովը քաշեց զան. բայց իւր երկիւղը հանդարտելով, իսկոյն այն արկղիկին վրայ կարճ բայց նշանական ակնարկ մը շրջեց, որ կոմսին աչքէն փախած չէր :

Այս միջոցին Ալի ներս մտաւ :

Տիկին Ախլըֆօր ուրախութեան շարժում մը ըրաւ, և տղան իրեն աւելի մօտ բերելով,

— Էտուար, ըսաւ անոր, այս բարի ծառան տեսար, խիստ աներկիւղ ծառայ մ'է. վասն զի իւր կեանքը վտանդի մէջ դրաւ մեր խորտակուելու մօտ կառքը քաշող երկու ձիերը կեցընելու համար : Ուրեմն շնորհակալ եղիր անոր, առանց որոյ հաւանականաբար այս ժամուս երկուքս ալ մեռած ոլիտի ըլլայինք — :

Տղան շուրթերը երկնցուց, և արհամարհանօք զլուխը գարձուց :

— Ի՞նչպէս տղեղ է —, ըսաւ :

Կոմսը այնպէս ժպտեցաւ որպէս թէ տղան իւր ակնկալութեանց մէկը կատարած ըլլար :

Իսկ տիկին Ախլըֆօր կշտամբեց իւր որդին այնպիսի չափաւորութեամբ մը, որ անտարակոյս ծան-ծաղ-Տուսոյի քրմաց համաձայն սլիտի չըլլար, եթէ փոքր Էտուարին անունը Էմիլ ըլլար :

— Ար տեսնես, ըսաւ կոմսը Ալիին արաբերէն լեզուաւ, այս տիկինը կ'աղաչէ իւր զաւակը որ իրենց կեանքը աղատելու համար շնորհակալ ըլլայ քեզ, և տղան կը սլատասխանէ թէ խիստ տղեղ ես — :

Ալի վայրկեան մը իւր մտացի զլուխը գարձուց և առանց յայտնի նշան մը ցուցունելու տղուն նայեցաւ, բայց իւր քթի ծակերուն թեթեւ կերպով սարսուալը խմացուց Մօնթէ-Քրիսթոյի որ Արաբացին 'ի սիրտ վերաւորեր էր :

— Աարոն, սովորաբար այս տունը կը բնակիք, հարցուց տիկին Ախլըֆօր մեկնելու համար ոսք ելնելով :

— Ոչ, տիկին, պատասխանեց կոմսը, հանդստարանի պէս  
տուն մ'է այս, սովորաբար Շանդ-Էլիզէի ծառուղին, թիւ  
30 կը բնակիմ: Բայց կը տեսնեմ որ բոլորովին հանդար-  
տեցաք և կ'ուզէք մեկնիլ: Պատուիրեր եմ որ այն նոյն ձի-  
երը իմ կառքիս լծեն, և Ալի, այն տղեղ երիտասարդը, ը-  
սաւ տղուն ժպտելով, որասիւ պիտի ունենայ զձեզ ձեր տունը  
տանելու, և ձեր կառավարը հոս պիտի կենայ որ կառքին  
աւրուած կողմերը յարդարէ: Եւ այս անհրաժեշտ դործը  
վերջացրնելուն պէս՝ իմ ձիերէս երկուքը անոր լծուելով  
ուղղակի տիկին Տանկլարի տունը պիտի տանին:

— Բայց, ըսաւ տիկին Ալիլեֆօր, այն նոյն ձիերով չեմ  
համարձակիր ամենեւին վերադառնալու:

— Ա՛հ, անհող եղիք, տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, Ա-  
լիին ձեռքը դառնուելի պէս հանդարտ պիտի ըլլան —:

Իբրք՝ Ալի ձիերուն մօտեցեր էր, զորոնք խիստ դժուա-  
րու թեամբ կանդնեցուցեր էին:

Անուշահոտ քայախով թաթխուած փոքր սպունդ մը բռնած  
էր ձեռքը, և անով քրանաթոր և փրփրալի ձիերուն քիթերը  
և քունքերը կը շփէր, որով կենդանիները սկսան անմիջա-  
պէս բարձրաձայն խփնջալ և քանի մը մանրերկրորդ իրենց  
բոլոր մարմինը դողդղաց:

Ետքը՝ Ալի դրան առջև ժողվուած բազմաթիւ մարդոց մէ-  
ջէն ձիերը քաշելով կոմսին կառքին լծեց, սանձերը ժող-  
վեց, նստարանին վրայ ելաւ, և ի մեծ զարմացումն հոն  
դանուող այն մարդոց, որոնք այս ձիերուն մըրկի պէս զալը  
տեսեր էին, պարտաւերեցաւ մտրակը խստիւ դործածել զա-  
նոնք ճամբայ հանելու համար, և այն համբաւաւոր ճարտուկ  
ձիերը, որոնք հիմա աշխուժութիւննին կորսնցուցեր, ուժա-  
թափ և մեռելատիպ եղեր էին, այնպիսի անասրահով և թու-  
լացեալ ոստիւններով կը քալէին, որ հազիւ թէ երկու ժամ-  
ուան մէջ կարող եղան քօսուր Սէնթ-Օնօրէ հասնիլ, ուր  
կը բնակէր տիկին Ալիլեֆօր:

Տիկին Հէլոյիզ իւր ընտանեաց անհանդստութիւնը հանդար

տեցընելէն անմիջապէս ետքը՝ հետեւեալ նամակը տիկին Տան,  
կլարի գրեց.

« Սիրելիդ իմ Հէրմին,

« Տղաս և ես հրաշքով մը ազատեցանք այն նոյն Մօնթէ-  
Քրիսթոյ կոմսէն, որուն վրայ այնչափ երկարօրէն խօսեցանք  
երէկ իրիկուն, և ամենեին շէի յուսար որ այսօր պիտի տես-  
նեմ զան:

« Երէկ անոր համար այնպիսի յուզմամբ կը խօսէիր որ  
ես շէի կրնար ինքզինքս զսպել և իմ խեղճ կարճ մտացս  
բոլոր զօրութեամբը կը ծաղրէի զայն, բայց այսօր կը տես-  
նեմ որ այն յուզմունքը խիստ նուազ է եղեր:

« Ռանըլայի առջև ձիերդ այնպէս զայրացան, որ կարծես  
թէ խենթեցան, և հաւանականաբար ես ու սիրելի Կատարս  
ճամբուն մէկ ծառին կամ դիւղին մէկ սահմանափայտին դէմ  
կտոր կտոր պիտի ըլլայինք, եթէ կոմսին ծառայութեան մէջ  
գտնուող Արաբացի մը, խափշիկ մը, Կուպիացի մը, վեր-  
ջապէս սև մարդ մը կարծեմ տիրոջը մէկ նշանովը իւր  
կեանքը վտանդի մէջ դնելով ձիերուն ընթացքը չկեցընէր,  
և յիրաւի հրաշք մ'է որ անոնց տակը չճզմուեցաւ:

« Այն ատեն կոմսը վազեց, զմեզ իւր տունը տարաւ, և  
հօն Կատարիս խելքը դուրսը բերաւ:

« Իւր կառքովը տունս վերադարձայ, և քուկդ վաղը քեզ  
պիտի զրկուի:

« Այս դիպուածէն ետև ձիերդ խիստ տկարացած և գող-  
ցես շուարած պիտի դանես. կարծես թէ մէկ անձէ յաղ-  
թուելնուն համար չեն կրնար ինքզինքնուն ներել:

« Կոմսը սլատուիրեց ինձ որ ըսեմ քեզ թէ երկու օր ի-  
րենց խշտիին վրայ հանգստանալով և միայն դարի ուտելով,  
իրենց երէկուան կայտառ, բայց ես կ'ըսեմ ահա ելի վիճակը  
պիտի ստանան վերստին:

« Մնաս քարեաւ. իմ շրջադայութեանս համար շնորհակալ  
չեմ ըլլար քեզ. սակայն երբ կը մտածեմ, ապերախտութիւն  
կը համարիմ ձիերդ խենթութեանցը համար քեզ դժգոհ  
ըլլալս, քանզի այս խենթութեանց միջոցաւն է որ Մօնթէ-

Քրիստոն տեսայ, և այս մեծանուն օտարականը, 'ի բաց թողլով իւր միլիոնները, այնպէս հետաքրքրութիւնս շարժած է, որ միտքս դրեր եմ քննել զան՝ ամեն վտանգ աչքս առնելով, եթէ ձեռքովդ վերստին անտառը շրջադայութեան երթալ իսկ պէտք ըլլայ:

« Իտուար զարմանալի քաջութեամբ դիպուածին գիմացաւ:

« Նուաղեցաւ, բայց նուաղելէն առաջ ձայն մը անդամ չհանեց, և ետքը կաթիլ մը արտասուք չթափեց:

« Գարձեալ պիտի ըսես թէ մայրական սէրը կը շողոքորթէ դիւ, բայց այս տկար և քնքուշ փոքր մարմնոյն մէջ երկաթեայ սիրտ մը կայ:

« Մեր սիրելի Աւլանթինը սիրելի Էօժէնիդ կ'ողջունէ, և ես բոլոր սրտով կը համբուրեմ զքեզ:

« ՀԵՆՈՅԻՉ ՅԸ ՎԻՆԸՓՕՐ »

« Յ. Գ. Առաջիմ անպատճառ Մօնթէ-Քրիստոյ կոմսը վերստին տեսնել, որ և է կերպով այնպէս անօրինէ որ ձեր տունը անոր հանդիպիմ: Պարոն Ալլըֆօրէն խօսք առի որ անոր այցելութիւն մը ընէ, և կը յուսամ թէ փոխարէնը ան ալ կը հատուցանէ »:

Իրիկունը՝ Օթէօյլի արկածը ամեն խօսակցութեանց նիւթ եղած էր:

Ալլէր իւր մօրը կը պատմէր, Շաթօ-Ռընօ՝ Ժօքի-Գլլպի մէջ, Տըպրէ՝ պաշտօնէին սրահը. Պօշան իսկ իւր օրագրին «յլ-յլ»-ին մէջ քսան տողի չափ բան դրեց կոմսին վրայօք, որով ազնուական օտարականը ազնուապետական տիկնանց քով դիւցազուն մը կը ներկայացընէր:

Շատ անձեր տիկին Ալլըֆօրի դացին և աղաչեցին զան որ Մօնթէ-Քրիստոյ կոմսին այցելութեան եկած օրը իմաց տայ իրենց, որպէս զի անոր բերանէն այն զարմանալի դիպուածին մանրամասն պատմութիւնը լսեն:

Իսկ Պ. Ալլըֆօր, ինչպէս ըսեր էր Հէլոյիդ, սե թիկնոց մը հաղաւ, սպիտակ ձեռնոցներ, իւր ամենէն փառաւոր միազգեստով ծառային հետ կառքը մտաւ, և նոյն իրիկունը Շանդ-Էլլիէի ՅՍ թիւ տան դրան առջևը կեցաւ:

## ՔՐԻՍՏՈՍ

## ԳՆԱՉՓՆԵՐԵԽՅՈՒԹԻՒՆ



**Ե**Ր ԵՐ ՄՕՆԹԷ - ՔՐԻՍՏՈՍ կամսը երկար ժամանակ  
Բարիղի ընկերութեանց մէջ կենցա-  
ղավարած ըլլար, Պ. Ա. Վիլլեֆօրի այ-  
ցելութեան յարգը պիտի ճանչնար:

Հոգ չէր եթէ տիրող թաղաւորը անգրանիկ կամ կրտսեր  
ցեղէն ըլլար, կառավարող պաշտօնեայն կրօնային, աղա-  
տական կամ պաշտպանող ըլլար, Պ. Ա. Վիլլեֆօր արքունեաց  
մէջ միշտ համարում ունէր, ամեն կողմ յաջողակ կարծուած  
էր, ինչպէս զլսաւորասպէս յաջողակ կը կարծուին այն մար-  
դիկ, որոնք քաղաքական խաղերու մէջ ամենեին փորձուած  
չեն. շատերուն ատելի եղած, բայց մէկ քանիներէ ջերմով  
պաշտպանուած էր՝ առանց սակայն մէկուն սիրելի ըլլալու.  
դատաւորութեան բարձր պաշտօններէն մէկն ունէր, և իւր  
պաշտօնին մէջ Հարլէի կամ Մոլէի պէս կը կենար:

Իւր ընտանիքը, որ ծաղկահաս կնոջմէ մը և առաջին ա-  
մուսնութենէն հազիւ տասն և ութ տարեկան աղջիկէ մը  
կը բաղկանար, Բարիղի այն անաչառ ընտանիքներէն պակաս  
չէր մնար, որոնք աւանդութեանց և կրօնից մեծ ուշադրու-  
թիւն կ'ընեն:

Պաղ քաղաքավարութիւն մը, կառավարութեան ս'ղբանց  
կատարեալ հաւատարմութիւն մը, տեսական դիտութեանց  
և տեսականադիտաց համար խորին արհամարհութիւն մը,  
գաղափարախօսներուն դէմ խորունկ ատելութիւն մը, ասոնք

էին Պ. Ա. Խլըֆօրի ցուցուցած ներքին և հրապարակական կենսաց տարեւթը:

Պ. Ա. Խլըֆօր ոչ միայն դատաւոր այլ դրեթէ քաղաքագէտ ալ էր:

Նախորդ արքունեաց հետ իւր յարաբերութիւնները, ուրոնց վրայ միշտ արժանաւորութեամբ և յարդանօք կը խօսէր, զինքը նոր արքունեաց ակնածելի կ'ընէր, և այնչափ բան դիտէր, որ ոչ միայն իրեն հետ յարդանօք կը վարուէին, այլ և երբեմն խորհուրդ կը հարցընէին:

Գուցէ դործերը այնպէս չէին ըլլար, եթէ Պ. Ա. Խլըֆօրի ձեռքէն աղատէին, սակայն իրենց աւատաստէն ապստամբող աւատական իշխաններուն պէս Պ. Ա. Խլըֆօր ալ անսովի Բերդի մը մէջ կը բնակէր:

Այս բերդը իւր թաղաւորի դործակալի պաշտօնն էր, ուրով ամեն առաւելութիւնները կը վայելէր, և միայն երեսփոխան ըլլալու և այս կերպով չէզոքութիւնը դիմադրութեան փոխելու համար պիտի հաւանէր թողուլ այն պաշտօնը:

Ընդհանրապէս Պ. Ա. Խլըֆօր քիչ այցելութեան կ'երթար, համ' այցելութեանց կը պատասխանէր:

Իւր կիներ իրեն համար այցելութեան կ'երթար, և ամեն մարդ դատաւորին ծանր և բաղմամբիւ զբաղմանց կու տար ասոր պատճառը, որ իբօք ուրիշ բան չէր, բայց եթէ հստատութեան հաշիւ մը, բարձր ազնուականութեան պահանջում մը, որուն վերջապէս այս առակը աղէկ կը յարմարի. Պատուէ ինքզինքդ որ զքեզ ալ պատուեն. այս առակը մեր ընկերութեանց մէջ հարիւր անգամ աւելի օգտակար է Յունաց այն առակէն, որ կ'ըսէ. Ծանիր զքեզ, զոր մեր դարուն մէջ ուրիշները ճանչնալու աւելի դիւրին և աւելի օգտակար արուեստին փոխեցին:

Պ. Ա. Խլըֆօր իւր բարեկամաց համար զօրաւոր պաշտպան մ'էր, իւր թշնամեաց համար՝ խուլ բայց կատաղի հակառակորդ մը, անտարբերներու համար օրինաց շնչաւոր արձան մը. իւր երեոյթը զոռող էր, դէմքը անկարեկիր, նայ-

ուածքը տկար և աղօտ կամ ամբարտաւանութեամբ սուր և հետաղօտիչ. ահա այս է այն մարդուն նկարագիրը, որուն համար չորս յեղափոխութիւնները յաջող ըլլալով, նախ իւր պատուանդանը շինելու ետքը հաստատել էին:

Պ. Ախլըֆօր Գաղղիոյ ամենէն նուազ հետաքրքիր և ամենէն տխուր մարդն ըլլալուն համբաւն ունէր. ամեն տարի պարահանդէս մը կու տար, ուր միայն քառորդ մը կը կենար. այսինքն թաղաւորին իրեններուն ըրածէն քառասուն և հինգ վայրկեան սակաս. երբէք թատրոններու, նուազածութեանց, կամ որ և է հրապարակային տեղ մը տեսած չէին զինքը, երբեմն, բայց խիստ քիչ անգամ «էսի խաղը կը խաղար. բայց այն ատեն սէտք էր իրեն արժանի խաղացողներ ըլլային, ինչպէս՝ դեսպան մը, արքեպիսկոպոս մը, իշխան մը, նախագահ մը, կամ վերջապէս հասութեաւոր դքսուհի մը»:

Ահա այս հանդամանքներն ունէր այն մարդը, որուն կառքը Մօնթէ-Քրիսթոյ կոմսին դրան առջևը կեցել էր:

Յենեկասյանը Պ. Ախլըֆօրի դալուստը խմացուց այն միջոցին որ կոմսը մեծ սեղանի մը վրայ դուրսը կախած՝ Բէթրըսպուրիէն Չինաստան ելթալու ճամբան կը դիտելը աշխարհագրական տախտակի մը վրայ:

Թաղաւորի գործակալը դատաւորաց ատենանը մտած կերպով ծանր և կարկնաչափ քայլերով յառաջացաւ. ճիշդ նոյն մարդն էր, և կամ լաւ ևս ըսեմք՝ նոյն մարդուն յաջորդն էր, զոր Մարսիլիոյ մէջ ժամանակաւ իբր փոխանորդ տեսանք:

Բնութիւնը իւր սկզբանց համաձայն ըլլալով, Ախլըֆօրի մարմնոյն վրայ բան մը փոխած չէր:

Միայն թէ իւր մարմնոյ նրբութիւնը նիհարութեան փոխուել էր, տժգունութիւնը գեղնութեան, իւր խորունկ աչքերը խոռոչել էին. իւր ոսկի շրջանակներով ակնոցը ակնակապիճին վրայ դրուելով կարծես թէ դէմքին մէկ մասը կը կաղմէր. իւր սպիտակ փողկապէն զատ՝ միւս բոլոր զգեստները սև էին, և այս տխուր դոյնը կ'ընդհատէր միայն կարմիր ժապաւէնի բարակ երիզը, որ հազիւ նշմարելի կերպով



կոճակնոցին վրայ անցուցած էր և վրձինով քաշուած արեան  
դժի մը պէս կ'երևէր :

Եթէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ինքզինքին տէրն ըլլալով,  
և անոր ողջոյնը ընդունելով, յայտնի հետաքրքրութեամբ մը  
կը դիտէր զան, դատաւորն ալ, որ ըստ սովորութեան կաս-  
կածոտ էր և այնչափ հաւատ չէր ընծայեր մանաւանդ ընկե-  
րային գարմանալի դործոց, աւելի սրտաբաստուած էր դիտել  
այն աղնուական օտարականը (արդէն այսպէս կը կոչէին Մօն-  
թէ-Քրիսթօն), և համարել զան նոր ասպարէզ մը քանա-  
լու համար եկող խաբեբայ մը, կամ աքսորէն փախած չա-  
րագործ մը, քան թէ սուրբ աթոռէն եկած իշխան մը կամ  
Հազար և Տէկ Գէշերնէրն մէկ սուլթանը :

— Պարոն, ըսաւ Ալիլըֆօր այն սուր ձայնով, զոր դատա-  
ւորները իրենց ճարտարախօսութեան մէջ կը քանկցրնեն,  
և զոր խօսակցութեան մէջ ալ սովորած են կամ կ'ուզեն դոր-  
ծածել. պարոն, երէկ կ'նոջս և զաւակիս ձեր ըրած նշանա-  
ւոր ծառայութիւնը պարտաւորութիւն մը կը դնէ վրաս ձեզ  
շնորհակալ ըլլալու. ուստի եկայ այս պարտքս կատարելու  
և իմ երախտագիտութիւնս ձեզ յայտնելու — :

Եւ այս խօսքերը արտասանելու ժամանակ դատաւորին  
խիստ նայուածքը իւր սովորական ամբարտաւանութենէն քան  
մը կորսնցուցած չէր :

Իւր խօսքերը ընդհանուր դործակալի ձայնով և պարանոցի  
և ուսերու այն անշարժ ուղղորդութեամբ արտասանուած էին,  
որ իւր շողորթրթաց ըսել կու տար թէ օրինաց կենդանի ար-  
ձանն էր, ինչպէս որ արդէն կրկնած ենք :

— Պարոն, պատասխանեց կոմսը նոյնպէս չափազանց պա-  
ղութեամբ, խիստ երջանիկ եմ որ կարող եղայ մօր մը զա-  
ւակը ազատելու, վասն զի կ'ըսեն թէ մօր մը զղա-  
ցումը ամեն բանէ աւելի նուիրական է, և այս ինծի պատա-  
հած երջանկութիւնը կ'ազատէր զձեզ այն պարտքէն, որուն  
կատարումը անտարակոյս պատիւ է ինձ, ըստ որում դիտեմ  
որ Պ. Ալիլըֆօր ինծի ըրած այս շնորհքը ամենուն չըներ,

Բայց սակայն որչափ և թանկադին ըլլայ այն, ինձի համար ներքին հաճութիւն մը չարժեր — :

Ախլըֆօր այս կշտամբանաց վրայ զարմացած, որուն չէր սպասեր, սարսոաց այնպիսի զինուորի մը պէս, որ իւր հաղած զրահներուն տակէն ընդունած վէրքը կ'ըղկայ, և իւր արհամարհալից շուրթին մէջ շարժումը յայտնեց թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը աղէկ կը թուած ազնուական մը չէր իւր կարծեօքը :

Աչքը իւր բոլորտիքը շրջեց, որպէս զի արդէն ընդհատեալ խօսակցութեան ուրիշ նիւթ մը գտնէ :

Իւր ներս մտած ժամանակը Մօնթէ-Քրիսթոյի դիտած աշխարհադրական տախտակը տեսնելով ըսաւ .

— Աշխարհադրութեամբ կ'ըզբաղէք, պարոն . հարուստ ուսու՛մ մ'է այս մանաւանդ ձեզի համար, որ ինչպէս կը հաստատեն, այս տախտակին վրայ նշանակուածին չափ քաղաքներ տեսած էք :

— Այո՛, պարոն, պատասխանեց կոմսը, ուղեցի բովանդակ մարդկային սեռին վրայ այն դիմադիտական զննութիւնն ընել, զոր դուք ամեն օր մասնաւորաց վրայ 'ի գործ կը դնէք : Մտածեցի որ աւելի դիւրին պիտի ըլլայ ինձ բոլորէն մասնաւորին իջնալ քան թէ մասնաւորէն բոլորին : Այս թուաբանական յայտնի ճշմարտութիւնը կը պահանջէ որ ծանօթէն անծանօթը քննուի և ոչ անծանօթէն ծանօթը . . . . : Բայց նստէք, պարոն, կ'աղաչեմ — :

Եւ Մօնթէ-Քրիսթոյ ձեռքովը թաղաւորի գործակալին թեւաթու մը ցուցուց, զոր Ախլըֆօր իւր ձեռքովը առնելու և կոմսին մօտեցընելու ստիպուեցաւ, իսկ Մօնթէ-Քրիսթօ իւր արդէն ունեցած աթոռին վրայ նստաւ, որով կիսով չափ իւր այցելուին կողմը դարձած գտնուեցաւ՝ կունակը պատուհանին դարձուցած և արմուկը աշխարհադրական տախտակին վրայ կը թընցուցած, որ առ այժմ իրենց խօսակցութեան նիւթն եղած էր, խօսակցութիւն մը, որ Մորսէրֆի և Տանկլարի տունը եղածին բոլորովին նոյն դարձուածը կ'առնուր՝ եթէ ոչ իրենց կացութեան, դոնէ անձանց նկատմամբ :

— Փիլիսոփայօրէն կը խօսիք, կը կենեց Վիլլիֆօր վայրկեան մը լուռ կենալէն ետեւ, որ ատեն աննուաճելի հակառակորդի մը հանդիսող ըմբիշի նման իւր ոյժը ամփոփեր էր, սասուղիւ, սլարոն, եթէ ձեզի սէս ես ալ դործ չունենայի, նուազ ակուր դըաղմուէք մը սլիտի փնտոէի :

— Ճշմարտ է, սլարոն, կը կենեց Մօնթէ-Քրիսթօ, արեւոյն հակնային մանրագէտով զննողի մը համար մարդս ժանտատեւսիլ թըթուր մ'է. բայց կարծեմ ինձի համար ըսիք թէ դործ մը չունիմ, ըսէք, կ'աղաչեմ, կը կարծէք որ դուք ալ դործ մը կ'ընէք, կամ թէ աւելի բայայայտ խօսիմ, կը կարծէք որ ձեր ըրածները դործ կ'ընեն լու ալ թանաւորութիւն ունին — :

Այս տարօրինակ հակառակորդին կողմէն այսպէս խստութեամբ իրեն ուղղուած այս երկրորդ հարուածին վրայ Վիլլիֆօրի զարմանքը կը կենսաւարակեցաւ. երկար ժամանակէ 'ի վեր դատաւորը այս աստիճան նորանշան խօսք մը լսած չէր, և կամ աւելի ճիշդը խօսելով՝ առաջին անգամն էր որ այսպիսի խօսք մը կը լսէր :

Թագաւորի դործակալը սատասխանելու սրտորաստուեցաւ :

— Սլարոն, ըսաւ, դուք օտարական էք, և կարծեմ դուք իսկ կ'ըսէք թէ ձեր կենաց մէկ մասը արեւելեան երկիրներու մէջ անցուցած էք. չէք դիտեր թէ մարդկային դատաստանը, որ այն բարբարոս երկիրներուն մէջ այնպէս շուտ կը կատարուի, մեր երկրին մէջ զգուշաւոր և կանոնաւոր ընթացք մը ունի :

— Այո՛, սլարոն, դիտեմ, վասն զի զխաւորաբար ամեն երկրի օրինաց վրայ զըաղած եմ, և ամեն աղղաց սատաւական օրէնքները բնական օրէնքին հետ բաղդատած եմ. և սէտք եմ ըսել, սլարոն, որ այն նախնական ժողովրդոց օրէնքը, այսինքն համաստատական օրէնքը Աստուծոյ կամաց համաձայն գտած եմ :

— Եթէ այդ օրէնքները ընդունուէին, սլարոն, ըսաւ թագաւորի դործակալը, մեր դատաստանական մատեանները շատ

պիտի պարզուէին, և այն ժամանակ մեր գառաւորները, ինչպէս որ կ'ըսէիք հիմա, ընելու շատ դժուար պիտի չունենային:

— Գուցէ տղադային մէջ այդ ալ պիտի ըլլայ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. դիտէք որ մարդկային հնարքները պարզէն քաղադրեալին կը յառաջագիմնն, և պարզը միշտ կատարելադժուարեալն է:

— Այսաւ ամենայնիւ, պարոն, մեր օրէնքները իրենց ընդդիմական յօշուածներն ունին, և կոչուայց, հոռմայեցւոց և Ֆրանկաց օրէնքներէն քաղուած են. անշուշտ պիտի համաձայնիք որ այս ամեն օրինաց տեղեկութիւնները տաանց երկար աշխատութեանց չեն ստացուիր. այս տեղեկութիւնները տաանալու համար երկար ուսում մը պէտք է և գլխի մեծ զօրութիւն մը, որպէս զի անդամ մը զանոնք ստանալով մէկ մ'ալ չմոռնանք:

— Ես ալ ձեզի համաձայն եմ, պարոն. բայց դադդիական օրինաց վրայ ձեր դիտածը ես ալ դիտեմ, ոչ միայն ձեր այլ և ամեն ազդաց գառաստանական օրէնքները. անդդիական, տաճկական, ճարոնական, հնդկական օրէնքները դադդիական օրինաց պէս ինձ ծանօթ են. ուստի իրաւունք ունէի ըսելու թէ իմ ըրածներուս համեմատութեամբ (դիտէք, պարոն, որ ամեն բան համեմատական է), դուք շատ քիչ դժուար ունիք, և իմ սորվածներուս համեմատութեամբ դուք ալ սորվելու շատ բաներ ունիք:

— Բայց ինչ նպատակաւ այս ամենը սորվեցաք —, կրկնեց Ալիլըֆօր զարմանքով:

Մօնթէ-Քրիսթօ ժպտեցաւ:

— Ար տեսնեմ, պարոն, որ բարձրագոյն մարդ մը ըլլալու համբաւնուդ հակառակ՝ ամեն բան ընկերային կոշտ և դուրսիկ տեսութեամբ կը դիտէք՝ մարդէն սկսելով և 'ի մարդ վերջացընելով, այսինքն մարդկային իմացականութեան ներքի եղած ամենէն սահմանափակ և ամենէն անձուկ տեսութեամբը:

— Բացատրեցէք ձեր միտքը, պարոն, ըսաւ Ալիլըֆօր ևս

քան զևս զարմացած . ըսածնիդ շատ աղէկ չհասկըցայ . . . :

— Ըսել կ'ուզեմ, սլարոն, թէ աչքերնիդ ազդաց ընկերային կաղումութեան վրայ յարած՝ միայն մեքենային ղօրութիւնը կը տեսնէք, և ոչ այն բարձրադոյն գործաւորը, որ անոր գործել կու տայ . ըսել կ'ուզեմ թէ ձեր առջնը և բոլորակը այն սլաշտօններուն տէրերը միայն կը ճանչնաք, որոնց հրովարտակները սլաշտօնեաներէն կամ թաղաւորէ մը ստորագրուած են . ըսել կ'ուզեմ թէ ձեր կարճ տեսութեամբը չէք տեսներ այն մարդերը, զորոնք Աստուած սլաշտօնատէրերէն, սլաշտօնեաներէն և թաղաւորներէն վեր դասած է՝ սլաշտօնի տեղ յանձնարարութիւն մը տալով անոնց : Մարդկային տկարութեան և անոր անդօր ու անկատար գործարանաց սեպհականութիւնն է այս : Թոպի իւր աչաց կուրութիւնը բժշկող հրեշտակը հասարակ երիտասարդ մը կարծեց : Աթիլայէն ջնջուելու աղդերը հասարակ աշխարհակալ մը կարծեցին զան, և պէտք էր որ երկուքն ալ երկնային յանձնարարութիւն մը կատարելնին յայտնէին, որ զիրենք ճանչցրենն, և պէտք էր որ մէկը ըսէր թէ՝ — Աստուծոյ հրեշտակն եմ . ես —, և միւսը թէ՝ — Աստուծոյ դասազանն եմ —, որպէս զի երկուքին ալ երկնային էութիւնը յայտնուի :

— Աւրեմն, ըսաւ Ա. իլըֆօր իւր զարմանքը երթալով աւելնալով և ցնորեալի մը կամ խենթի մը հետ խօսիլ կարծելով, ուրեմն դուք ձեր յիշած արտաքոյ կարգի էակներէն մէկը կը համարիք զձեզ :

— Ինչո՞ւ չէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ սլաղութեամբ :

— Ար ներէք ինձի, սլարոն, կրկնեց Ա. իլըֆօր սակուցեալ, ձեր տունը ներկայացած ժամանակս չէի գիտեր որ այնպիսի մարդու մը տունը կը ներկայանամ, որուն գիտութիւններն ու հանճարը մարդոց հասարակ գիտութիւններէն և սովորական հանճարէն դերազանց են : Մենք որ քաղաքակրթութեան ապականեալ ողորմելիներ ենք, մեր մէջը սովորութիւն եղած

չէ բնաւ որ ձեզի սէս անբաւ հարստութեանց տէր ազնուա-  
կաններ (գոնէ ինչպէս որ կ'ըստուղեն, դիտեցէք որ ես ձեր  
վիճակը չեմ քններ, այլ լսածս կը կրկնեմ), սովորութիւն  
եղած չէ կ'ըսեմ որ մեր ընչատէրները իրենց ժամանակը  
ընկերային զննութիւններով, փիլիսոփայական երազներով  
կորսնցընեն, զորոնք աւելի ընչազուրկ մարդիկ մխիթարու-  
թեան համար կ'ընեն:

— Է՛հ, պարոն, կրկնեց կոմսը, ուրեմն դուք առանց բա-  
ցառութիւն մը ընելու կամ ընդունելու ձեր բարձր պաշտո-  
նին հասար, և ձեր նայուածքովը բնաւ դորժ տեսած չէք,  
որ թէպէտ խիստ կորովի և անվրիպելի ըլլալու սէտք ունե-  
նայ: Գատաւոր մը չէ թէ օրինաց ամենէն լաւ դորձադիրը,  
կամ նենդութեան մթութեանց ամենէն խորամիտ թարգմանը  
ըլլալու է, այլ սիրտերը փորձելու պողպատեայ խորաչափ  
մը, և ամենուն սրտին մէջ եղած աւելի կամ նուազ բաղա-  
դրութեամբ ոսկին փորձելու փորձաքար մը:

— Պարոն, ըսաւ Ախլըֆօր, ճշմարիտ կը շփոթէք զիս, և  
ձեր ըսածները ամենեւին մէկէ լսած չեմ:

— Պատճառը այն է որ ընդհանուր պայմանաց շրջանին  
մէջ միշտ փակեալ էք և երբէք համարձակած չէք վերին աշ-  
խարհներու մէջ սաւառներու, զորոնք Աստուած անտեսանելի  
ամ բացառիկ էակներով լցուցած է:

— Եւ դուք կը հաւատա՞ք, պարոն, որ ուրիշ աշխարհներ  
կան, և թէ բացառիկ և անտեսանելի էակներ մեզի հետ կը  
խառնուին:

— Ինչո՞ւ չէ. միթէ կը տեսնէք օդը զոր կը շնչէք, և ա-  
ռանց որոյ պիտի չկարենայիք ապրիլ:

— Ուրեմն այդ էակները մենք չենք տեսներ:

— Այո՛, կը տեսնէք երբ Աստուած հրամայէ անոնց որ  
տարրանան. կը դաշիք անոնց, կ'արմկահարէք, հետեւնին կը  
խօսիք, և անոնք ձեզ կը պատասխանեն:

— Ո՛հ, ըսաւ Ախլըֆօր ժպտելով, կ'ուզէի որ խնայընեն  
ինձ երբ այն էակներէն մէկը դիմացս ելնէր:

— Չեր բաղձանքը արդէն կատարուած է, սարոն, զասն  
 զի քիչ մը առաջ ձեզ խնայուցեր էի, և հիմա դարձեալ  
 կ'խնայրնեմ:

— Աւրեմն դուք ալ . . . :

— Այո, ես ալ այն բացառիկ էակներէն մէկն եմ, սարոն,  
 և կարծեմ մինչև ցայսօր և ոչ մէկը խնայիս նման կացութեան  
 մէջ դտնուած է: Թաղաւորաց երկիրները սահմանուած են  
 կամ լեռներէ, կամ դեռերէ, և կամ սովորութեանց ու լեզուի  
 փոփոխութենէ մը: Բայց իմ թաղաւորութիւնս աշխարհիս  
 սէս մեծ է. վասն զի ոչ Խաւալացի եմ, ոչ Գաղղիացի,  
 ոչ Հնդիկ, ոչ Ամերիկացի, և ոչ Սպանիացի. այլ աշխարհաքաղաքացի  
 եմ, Աստուած միայն դիտէ ուր մեռնե լիրս: Ամեն սովորութիւն  
 երբ ինձ ծանօթ են և ամեն լեզու կը խօսիմ: Գուք զիս  
 Գաղղիացի կը կարծէք, այնպէս չէ, ըստ որում ձեզի  
 չափ գիւրութեամբ և մաքուր գաղղիաբէն կը խօսիմ:  
 Ալի իմ նուազիացիս ալ Արաբացի կը կարծէ զիս, Պէրթուզիո  
 դործակատարս՝ Հոռմայիցի, և Հայտէ աղախինս՝ Յոյն:  
 Աչ մէկ երկրէ եմ, ամենն ին կառավարութենէ մը սլաշտ-  
 պանութիւն չեմ խնդրեր, և ամենեւին մարդ մը իբր  
 հղբայր չեմ ճանչնար. զօրաւորները կեցընող խղճի տաղնապ  
 մը կամ տկարաց անդամները լուծող արդեւք մը չունիմ,  
 որ իմ անդամներս լուծէ և զիս կեցընէ: Միայն երկու հակառակորդ  
 ունիմ, զորոնք յաղթող չեմ կոչեր, քանզի յարատեութեամբ  
 կը նուաճեմ զանոնք, և ասոնք են ժամանակն ու անջրպետը  
 Երրորդ հակառակորդս, որ աւելի ոտսկալի է, իմ մահացու  
 վիճակս է: Այս միայն իմ քալած ճամբուս մէջ և իմ նպատակիս  
 չհասած կրնայ կեցընել զիս: Ասոնցմէ դուրս մնացածները  
 հաշուի առած եմ: Բաղդին բոլոր խաղերը, այսինքն  
 կործանումը, փոփոխութիւնը և պատահական դէպքերը  
 բոլորն ալ զլիսն անցան, և եթէ ասոնց մէկը վերստին վրայ  
 հասնի, չկրնար ընկճել զիս: Միայն թէ չմեռնիմ, ինչ որ  
 եմ հիմա, նոյնը պիտի մնամ. ահա ինչ է այնպիսի խօսքեր  
 ընելուս պատճառը, զորոնք դուք ամենեւին լսած չէք և ոչ իսկ

Թագաւորաց բերանէն, վասն զի Թագաւորները ձեզ պէտք ունին, և միւս մարդիկները ձեզմէ կը վախնան: Այսպիսի ծաղրական ընկերութեան մը մէջ ս'ի կրնայ ըսել թէ՛ Օր մը դուցէ Թագաւորի դործակալին հետ հաշիւ մը ունենամ տեսնելու:

— Բայց դուք, պարոն, դուք ալ կրնա՞ք այդպիսի խօսք մը ըսել. վասն զի երբ Գաղղիա կը բնակէք, դաղղիական օրինաց հնազանդելու պարտաւորեալ էք:

— Գիտեմ, պարոն, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ. երբ ուրիշ երկիր մը երթալ ուզեմ, ինձ յատուկ եղած միջոցներով կ'ըսկսիմ այն մարդիկները քննել, որոնցմէ յուսալու բան մը կամ վախնալու տեղ մը ունիմ, և կը յաջողիմ դուցէ իրենք զիրենք ճանչնալէն աւելի աղէկ զանոնք ճանչնալու: Ասկէ կը հետեի որ Թագաւորի դործակալը, ով ոք և ըլլայ, և որուն հետ դործ մը ունենամ, ինձմէ աւելի շփոթելու է:

— Ասով ըսել կ'ուզէք, կրկնեց Ալիլեֆօր երկամտութեամբ, թէ մարդկային բնութիւնը տկար ըլլալով, ամեն մարդ սխալ մուկ մը ըրած է:

— Սխալմուկք... կամ յանցանք մը, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ անտարբերութեամբ:

— Եւ թէ դուք միայն, այն ամեն մարդոց մէջէն, զորոնք իբր եղբայր չէք ճանչնար ըսիք, կրկնեց Ալիլեֆօր սակաւ ինչ այլայլած ձայնով մը, դուք միայն կատարեալ էք:

— Ամենեին կատարեալ եմ չեմ ըսեր, այլ անթափանցելի: Բայց դոցենք այս խօսքերը, պարոն, եթէ այս խօսակցութիւնը ձեզ ահաճելի կ'երևի. ոչ ես ձեր դատաստանէն սպառնացեալ եմ, և ոչ դուք իմ կրկին երևոյթէս:

— Աչ, ոչ, պարոն, ըսաւ Ալիլեֆօր աշխուժիւ՝ անշուշտ վիճաբանութեան մէջ յաղթուած երևելու վախէն: Ձեր դեղեցիկ և դրեթէ վսեմ խօսակցութեամբը զիս երկրէս վեր բարձրացուցիք. խօսակցութիւն չէ ըրածնիս, այլ ատենաբանութիւն կ'ընենք: Ա՛րչափ աստուածաբաններ Սորայոնի ամ պիտոնին վրայ, կամ փիլիսոփաներ իրենց վիճաբանութեան



մէջ շատ անդամ ճշմարտութիւններ կը խօսին . ենթացրենք թէ մենք ալ ընկերային աստուածաբանութեան կամ թէ աստուածաբանական փիլիսոփայութեան մը վրայ կը խօսինք , սուսի կս ալ այս առակը կ'աւելցրնեմ , թէ և քիչ մը խիստ երևի . « Եզրայր իմ , հպարտութեան զոհ կ'ըլլաք , դուք միւսներէն դերագոյն էք , բայց Աստուած ալ ձեզմէ դերագոյն է » :

— Այո՛ , Աստուած ամենէն դերագոյնն է , սարոն , պատասխանեց կոմսը այնպիսի խորունկ ձայնիւ , որմէ Ալիլըֆօր ակամայ սարսուաց : Եւ կս մարդոց համար հպարտ եմ , քանզի անոնք այնպիսի օձեր են , որոնք զիրենք յազմող բայց ստից աակը չճգմողին վրայ յարձակելու պատրաստ են : Բայց այս հպարտութիւնը Աստուծոյ առջևը կը դնեմ , որ զիս ոչինչէ սակեղծեց և այս վիճակիս հասցուց :

— Ստուգիւ , սարոն կոմս , կ'ըզմայլիմ ձեր վրայ , ըսաւ Ալիլըֆօր , որ այս զարմանալի խօսակցութեան մէջ առաջին անդամն էր որ այս ազնուասպետական ձևը կը դործածէր և մինչև ցարդ օտարականը լոկ սարոն անուաներ էր : Այո՛ , եթէ ճշմարտիւ այդպէս զօրաւոր , դերագոյն , անարատ կամ անթափանցելի էք , որ զրեթէ նոյն բանը ըսել է , իրաւունք ունիք հպարտ ըլլալու . ախրապետաց օրէնքը այս է : Բայց որ և է բաղձանք մը չունիք , սարոն :

— Այո՛ , մէկ բաղձանք մը ունեցայ :

— Ի՞նչ բան :

— Ինչպէս որ ամեն մարդու կենացը մէջ անդամ մը կը պատահի , սատանան զիս յափշտակելով և ըկրիս ամենէն բարձր շերան վրայ տարաւ , ուրկից բոլոր աշխարհս ինծի ցուցուց , և ժամանակաւ Քրիստոսի ըսած ին սէս ինձ ալ ըսաւ . « Ըսէ , մարդածին զաւակ , ի՞նչ կ'ուզես տամ քեզ , որ զիս սաշտես » : Այն ատեն բաւական մտածեցի , քանզի երկար ժամանակէ 'ի վեր սոսկալի բաղձանքի մը եռանդը զիս իբօք կը տոչորէր , ետքը պատասխան տուի անոր . « Նախախնամութեան անունը միշտ ըսած եմ , սակայն երբէք տեսած չեմ ոչ զան և ոչ իսկ անոր նմանող բան մը , որով կը կասկա

ծիմ թէ Նախախնամութիւն չկայ . կ'ուզեմ ես Նախախնամութիւնն ըլլալ, զիտեմ որ անոր պաշտօնն է վարձատրել և պատժել » : Բայց Սատանան այս խօսքիս վրայ զլուխը խոնարհեցուց և հառաչանք մը հանեց . « Կը սխալիս , ըսաւ , Նախախնամութիւն կայ , միայն դուն չես տեսներ դան , վասն զի ինքը Աստուծոյ որդի և իւր Հօրը պէս աներևոյթ է : Անոր նմանող բան մը չտեսար , վասն զի դադտնի կերպով իւր ազգեցութիւնները 'ի դործ կը դնէ և մութ ճամբաներու մէջ կը քալէ . քեզի համար այս միայն կրնամ ընել որ Նախախնամութեան դործակալներէն մէկն ընեմ » : Ասոր վրայ սակարկութիւն ըրինք , զուցէ հողիս պիտի կորսնցընեմ , բայց հող չէ , կրկնեց Ծօնթէ-Քրիսթօ — :

Վիլլեֆօր տարօրինակ պաղութեամբ Ծօնթէ-Քրիսթօյի երեսը կը նայէր :

— Պարոն կոմս , ըսաւ , ծնողք ունիք :

— Ոչ , պարոն , մինակ եմ աշխարհի մէջ

— Աւելի գէշ :

— Ինչո՞ւ :

— Վասն զի ձեր հպարտութիւնը խորտակելու տեսարան մը կրնայիք տեսնել . Մահուանէ չէք վախնար կ'ըսէք :

— Չըսի թէ կը վախնամ , այլ թէ մահը միայն կարող է կեցընել զիս :

— Ծերութենէ :

— Ծերանալէս առաջ դործս կատարած պիտի ըլլամ :

— Բայց խենթութենէ :

— Քիչ մնաց որ պիտի խենթենայի և զիտէք այն առակը որ կ'ըսէ . « Կրկնութենէն վախցի՛ր » . յանցաւորաց ատեանին առակն է այս , և հետեւաբար ձեր խօսքն է :

— Պարոն , կրկնեց Վիլլեֆօր , մահուանէ , ծերութենէ կամ յիմարութենէ աւելի ուրիշ վախնալու բան կայ . օրինակի համար կաթուածը , որ կայծակի հարուածի պէս առանց սպաննելու կը զարնէ , և սակայն անկէ ետեւ ամեն բան կը վերջանայ : Միշտ դուք էք , բայց սակայն այնուհետեւ ձեր

անձին տէրը չէք, դուք որ Արիելի պէս հրեշտակի կը մօտե՛նայիք, այնուհետեւ անդդայ մարմին մ'էք, որ Գալիլայանի պէս անասունի կը մօտե՛նայ, ինչպէս ըսի՝ մարդկային լեզուով այս հարուածը կաթուած կը կոչուի: Եկէք, եթէ կը հաճիք, այս խօսակցութիւնը մեր տունը շարունակենք, սլարոն կոմս, եթէ օր մը կը փափաղիք այնպիսի հակառակորդի մը հանդիպիլ, որ կարող ըլլայ ձեր խօսքը հասկընալ և ձեզի հետ բանակոուիլ, և ես Պ. Նուարթիէ տը Վիլլեֆօր իմ հայրս պիտի յուցունեմ ձեզ, որ դաղղիական յեղափոխութեան ամենէն աշխոյժ Ժաղոպէններէն մէկն էր, այսինքն՝ այնպիսի մարդ մը, որ ձեզի պէս դուցէ աշխարհիս ամեն երկիրները տեսած չէր, սակայն ամենէն զօրաւոր թաղաւորներէն մէկը կործանելու օղներ էր, վերջապէս այնպիսի մարդ մը, որ ձեզի պէս ոչ թէ Աստուծմէ, այլ գերադոյն Էակէն, ոչ թէ Նախախնամութեանէ այլ բաղդէն զրկուած կը համարէր ինրզինքը: Սակայն, սլարոն, ուղեղին բլթակին մէջ արիւնային երակի մը կտրուելը ամեն բան աւրեց ոչ թէ մէկ օրուան կամ մէկ ժամուան, այլ մանրերկրորդի մը մէջ: Առջի իրիկունը Պ. Նուարթիէ, Ժաղոպէն մը, Գարպոնարաց ընկերութեան և ծերակուտի անդամ մ'էր, և կառափնարանը, թնդանօթն ու դաշոյնը կը ծաղրէր, այն Պ. Նուարթիէն, որ յեղափոխութիւնները խաղալի ըրած Գաղղիան սատրինջ խաղի նմանեցուցած էր, այն Պ. Նուարթիէն, որ այնչափ սոսկում կը պատճառէր, հետեւեալ առտու ուրբէլի պարն Նուարթիէ անշարժ ծերունի մը եղաւ՝ տան ամենէ տկար էակին, այսինքն իւր Վալանթին թոռին կամաց անձնատուր ըլլալով: Վերջապէս համր և սառած դիակ մը եղած է, որ առանց ցաւի կ'ապրի մինչև որ իւր մահը հասնի և ամեն բանի վերջ տայ:

— Ախո՛ս, սլարոն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, այդ տեսարանը անձանօթ չէ ոչ մտացս և ոչ աչացս. ես ալ սակաւ ինչ բժիշկ եմ, ու պաշտօնակցացս պէս ես ալ շատ ջանքեր ըրած եմ, սակայն անուրանալի է որ Նախախնամութեան դործերը դաղտնի են: Սոկրատէն, Սենեկայէն, Օդոստինոսէն, և

Կալէն ետքը հարիւրաւոր հեղինակներ սլաւամածնուդ մօտ բա-  
ներ դրած են թէ՛ արձակ և թէ տաղաչափեալ. աղէկ կը  
հասկընամ որ հօր մը վիշտերը իւր որդւոյն մտացը ինչ մեծ  
փոփոխութիւններ կրնան ազդել : Եւ որովհետեւ զիս կը հրա-  
ւիրէք, կու դամ օր մը այն տխուր տեսարանը տեսնելու,  
որ ձեր տունը կը տխրեցընէ :

— Անտարակոյս այդպէս պիտի ըլլար, եթէ Աստուած հա-  
տուցում մը չընէր ինձ : Գէտ 'ի դերեզմանը հակեալ այն  
ծերունւոյն փոխարէն երկու զաւակ տուած է ինձ Աստուած,  
որոնց մէկն է՝ Սէն-Մէրանի Ռընէ օրիորդին հետ առաջին  
ամուսնութենէս նորատի աղջիկ մը Վալանթին անուն, և  
Էտուար, այն զաւակս, որուն կեանքը աղատեցիք :

— Եւ այս հատուցումէն ինչ կ'եզրակացընէք, պարոն :

— Կ'եզրակացընեմ որ հայրս իւր կիրքերէն մուրրեալ  
այնպիսի յանցանքներ գործած է, որոնք մարդկային դատաս-  
տանէն կ'ազատին, բայց Աստուծոյ վրէժխնդրութիւնը կը  
դրդուեն . . . , և Աստուած միայն մէկ հոգի սլաւածել ուզե-  
լով, միայն զան հարուածեց — :

Մօնթէ-Քրիսթօ ժպիտ դէմք մը ցուցունելով, սրտին խորէն  
այնպիսի հառաչանք մը հանեց, որ կրնար Վիլլեֆօրը փախ-  
ցընել, եթէ Վիլլեֆօր լսէր զայն :

— Մնաք բարեալ, պարոն, կրկնեց դատաւորը, որ քանի  
մը վայրկեանէ 'ի վեր արդէն տեղէն ելեր ոտքի վրայ կը խօ-  
սէր : մնաք բարեալ, ես կը մեկնիմ, ու հետս կը տանիմ  
այնպիսի յարգանաց յիշատակ մը, որ կը յուսամ թէ կրնայ  
հաճելի ըլլալ ձեզ, երբ զիս աւելի աղէկ ճանչնաք, քանի  
ես ալ գռեհիկ մէկը չեմ : Այսու ամենայնիւ տիկին Վիլլե-  
ֆօրը մշտնջենաւոր բարեկամ ստացած էք — :

Կոմսը բարեեց զան, և Վիլլեֆօր իւր դահլճին մինչև գուռը  
միայն տանելու բաւականացաւ. թաղաւորի պործակալը իւր  
կառքը մտաւ և երբ աներևոյթ եղաւ,

— Բաւական է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ իւր ճնշուած սրտէն  
դժուարութեամբ հառաչանք մը հանելով, այսչափ թոյնը բա-

առկան է, և հիմա որ սիրտս անով լցուած է, երթամ ան-  
զեղայն առնելու — ։

Եւ հնչող սկահին վրայ հարուած մը զարնելով,

— Տիկնոջ քովը պիտի երթամ, ըսաւ Ալիին, կէս ժամէն  
կատքը թող պատրաստեն ։



ՔԼՈՒԹ Ժ.

ՀՍՅՑԷ



ՆՊԵՐՅՈՂ.Թ կը յիշեն անշուշտ Մէսէ  
փողոցը բնակող Մօնթէ-Քրիսթոյ  
կոմսին նոր կամ լաւ ևս ըսենք հին  
քարեկամները, որք էին Մաքսիմի-  
լիէն, Ժիւլի և Էմմանուէլ ։

Իւր ընելու այն սիրալիր այցելութեան, հոն անցընելու  
քանի մը երջանիկ վայրկեաններուն, և գծովքին մէջ (ուր  
իւր կամօքը մնացեր էր) թափանցող արքայութեան լուսոյն  
յոյսը Ալիլֆօրի աներեւոյթ ըլլալու վայրկեանէն կոմսին գի-  
մաց վրայ զմայլելի զուարթութիւն մը տարածեց, և Ալի,  
որ զանդակին ձայնէն վազեր եկեր էր, իւր տիրոջը ուրախալի  
գէմքը աեսնելով, սաից ծայրերուն վրայ քալելով իսկոյն ա-  
նոր առջևէն հեռացեր էր, որպէս զի չըլլայ թէ իւր տիրոջը  
զուարթ խորհուրդները ցրուէ ։

Կէս օր էր :

Ինչպէս որ ըսինք՝ զեղանի Յոյն կինը կոմսին սենեակնէրէն բոլորովին զատուած սենեակներու մէջ կը բնակէր :

Այս սենեակները բոլորովին արեւելեան ձևով կահուած էին, այսինքն՝ տախտակամածները Տաճկաստանի ստուար դորդերով ծածկուած և պատերը դիպակեայ կերպասներով պատած էին, իւրաքանչիւր սենեկին մէջ լայն բազմոց մը շրջապատած էր բազմաթիւ բարձերով, որոնք ըստ հաճոյից ուզուած տեղը կը փոխադրուէին :

Հայտէ երեք Գաղղիացի և մէկ Յոյն սենեկապանուհի ունէր :

Երեք Գաղղիացի կիները առաջին սենեկին մէջ կը կենային, որպէս զի պատրաստ դանուին փոքր զանդակի մը ձայնին վազելու և Յոյն սենեկապանուհւոյն հրամանաց հնազանդելու, որ բաւական դաղղիարէն գիտէր իւր տիրուհւոյն կամքը երեք սենեկապանուհեաց հաղորդելու համար, որոնց կոմսը սպասուիրեր էր որ իրենց ակնածութիւնը թաղուհւոյ մը պատուով Հայտէին մատուցանեն :

Նորատի կինը բնակարանին հեռաւորագոյն սենեակը կը բնակէր, այսինքն այնպիսի բոլորակ դահլիճի մը մէջ, որ միայն վրայէն լուսաւորուած էր, և ուրկից լոյսը վարդագոյն ասպակիներու մէջէ միայն ներս կը թափանցէր :

Հայտէ արծաթի թելերով բանուած կապոյտ սնդուսեայ բարձերով բազմոցին վրայ կէս մը երկնցած էր՝ զլուխը վայելչապէս իւր աջ թևովը շրջանակելով, և ձախ ձեռքովը իւր շրթանց բուստէ փող մը կը մօտեցընէր, որուն ծխաքաշի մը դիւրաթեք խողովակը հազցուած էր, ուրկից իւր քաղցր շունչովը ծուխը կը քաշէր, որ կնդրուկին ջուրէն բուրուելով՝ բերանը կը հասնէր :

Իւր դիրքը, որ խիստ բնական էր Արեւելեան կնոջ մը համար, կրնար Գաղղիացի կնոջ մը դուցէ քիչ մը քծնասիրութիւն համարուիլ :

Իսկ իւր հաղուստը եպիւռեան կանանց հաղուստն էր, այսինքն վարդագոյն ծաղկեակար ճերմակ սնդուսով մարտիկ մը

Հաղած էր, որ մինչև ոտքերը կ'իջնար, և երկու մանկան  
 ոտքեր բաց կը թողուր, որոնք Բարոսի մարմարիոնէ պիտի  
 կարծուէին, եթէ ոսկւով և մարդարտով բանուած կորածայր  
 երկու արեխներու հետ անոնց շարժիլը չտեսնուէր. արծաթ  
 կոճակնոցով և մարդարիտ կոճակներով, թևերը ճեղքուած  
 լայն թեղանիքներով, կասոյտ և ճերմակ լայն դիծերով բաճ-  
 կոն մը հաղած էր, վերջասպէս կուրծքնոցը սրտին վրայ բաց  
 կարուածք մը ունէր, որով անոր սլարանոցը և կուրծքին  
 բոլոր վերին մասը կը ցուցունէր և երեք ադամանդ կոճակ-  
 ներով կուրծքին վարի կողմը կը կոճկուէր:

Իսկ կուրծքնոցին տակը և վարաիքին վրայ դօտի մը կա-  
 պած էր սլայծառ դոյներով և մետաքսեայ երկար ծոպերով,  
 որոնք մեր վայելչադեղ Բարիզեաններուն պճնասիրութիւնը  
 կը դրդուէն:

Գլուխը մարդարիտով բանուած ոսկեգոյն փոքր գդակ մը  
 ունէր, որ մէկ կողմը ծռած էր, և որուն տակովը, հակած  
 կողմը ծիրանեղոյն դեղեցիկ բնական վարդ մը տեղաւորած  
 էր իւր մազերուն հետ խառնած, որոնք այնչափ սև էին որ  
 կասոյտ կ'երևէին:

Իւր դիմաց դեղեցկութեանը գալով, յունական նախատիպ  
 դեղեցկութեան կատարելութիւնն ունէր՝ իւր սև աղօտագոյն  
 մեծ աչքերովը, ուղիղ քիթովը, բուստի գոյն շուրթերովը և  
 մարդարտեայ ակռաներովը:

Այս ամեն միացեալ դեղեցկութեանց վրայ մատաղութեան  
 ծաղիկ հասակը իւր ամեն պայծառութեամբը և ամեն բուր-  
 մունքներովը տարածուած էր:

Հայտէ կրնար տասն և ինը կամ քսան տարեկան ըլլալ:

Մօնթէ-Քրիսթօ Յոյն սենեկապանուհին կանչեց և Հայտէին  
 քովը երթալու համար անորմէ հրաման խնդրելու ղրկեց:

Հայտէ 'ի պատասխանի նշան ըրաւ սենեկապանուհւոյն որ  
 դրան առջևը կախուած վարադոյրը վերցընէ, որուն քառա-  
 կուսի շրջանակին մէջ՝ սլառկած ծաղկահաս կինը դեղեցիկ  
 պատկերի մը պէս երևցաւ:

Մօնթէ-Քրիսթօ դէպ 'ի դուռը եկաւ :

Հայտէ ծխաքաշը բռնած ձեռքին արմկին վրայ սակաւ ինչ ելաւ , և միւս ձեռքը կոմսին երկնցուց , և ժպիտով մը ընդունեց զան :

— Ինչո՞ւ սենեակս մտնելու հրաման կը խնդրես , ըսաւ Հայտէ Սպարդայի և Աթէնքի աղջկանց քաղցրահնչիւն լեզուով . միթէ տէրս չե՞ս , և ես քու աղախինդ չե՞մ — :

Մօնթէ-Քրիսթօ ալ անոր ժպիտին պատասխանեց :

— Հայտէ , ըսաւ , դուք դիտէք որ . . . :

— Ինչո՞ւ համար ըստ սովորութեան դու չես ըսեր , ընդ միջեց Յոյն կիներ . միթէ յանցանք մը ունիմ . եթէ այդպէս է՝ պէտք է որ պատժես զիս և ոչ դուրս կոչես :

— Հայտէ , կրկնեց կոմսը , դիտես որ Քաղզիա կը դտնուինք , և հետեւաբար ազատ ես դուն :

— Ի՞նչ ընելու համար ազատ եմ :

— Ինձմէ բաժնուելու :

— Քեզմէ բաժնուելո՞ւ . . . և ինչո՞ւ :

— Ի՞նչ դիտնամ , այսուհետեւ շատ մարդեր պիտի տեսնես :

— Ամենեին մէկը չեմ ուզեր տեսնել :

— Եւ եթէ քու անսնելու դեղեցիկ երիտասարդներու գմէջ քեզի հաճելի մէկը դտնելու ըլլաս , չեմ ուզեր քեզ առիբաւութիւն ընել . . . :

— Քեզմէ աւելի դեղեցիկ մարդ մը բնաւ տեսած չեմ , և հայրէս ու քեզմէ զատ մէկը սիրած չեմ :

— Խեղճ զաւակ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , պատճառը այն է որ միայն հօրդ և ինձի հետ խօսեցած ես :

— Աւրիշներուն հետ խօսելու ի՞նչ պէտք ունիմ : Հայրս էր առաջինը կ'անուանէր զիս , դուն քու սերտ կը կոչես , և երկուքնիդ ալ զիս յեր զաւակ կը կոչէք :

— Հայրդ կը յիշես , Հայտէ — :

Պաղկասաս աղջիկը ժպտեցաւ :

— Հոս և հոս է հայրս , ըսաւ ձեռքը աշայ և սրտին վրայ տանելով :



— Եւ ես ո՛ւր եմ, հարցուց Մօնթէ-Քրիսթօ ժպտելով :

— Դուն, ըսաւ Հայտէ, ամեն կողմս ես — :

Մօնթէ-Քրիսթօ Հայտէի ձեռքը բռնեց որ սլաղնէ, բայց անկեղծ աղջիկը ձեռքը քաշեց և ճակատը ներկայացուց ահոր :

— Հիմա որ դիտես, Հայտէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ թէ դուն աղատ, անձնիշխան և թաղուհի ես, ըստ հաճոյիցդ կրնաս հաղուստդ փոխել կամ նոյնը սլահել. երբ կ'ուզես՝ հոս կեցիր, երբ կ'ուզես՝ դուրս ելիր. միշտ քեզի համար լծուած կառք մը սրասրաստ պիտի ըլլայ. Ալի և Միրթօ միշտ քեզ պիտի ընկերանան և քու հրամանացդ տակը պիտի ըլլան. միայն թէ մէկ աղաչանք մը ունիմ քեզի :

— Ըսէ :

— Ծննդեանդ վրայ դադանիք սլահէ, ու անցելոյդ վրայ բան մը մի խօսիր, որ և է առթի մէջ քու մեծանուն հօրդ և սղորմելի մօրդ անունը մի յիշեր :

— Արդէն ըսի քեզ, տէր իմ, թէ մօրդ մը չեմ ուզեր տեսնել :

— Մտիկ ըրէ, Հայտէ, դուցէ արեւելեան այդ մնաակեցու թիւնը անկարելի ըլլայ Քարիդի մէջ. Հոռմի, Ֆլորանսի, Միլանի և Մատրիաի մէջ ըրած իդ պէս հիւսիսային մեր երկիրներուն կենցաղավարութիւնն ալ սորվելու հետեւէ. թէ հոս կենաս և թէ Արևելք դառնաս, միշտ քեզ օղտակար պիտի ըլլայ — :

Ծաղկահաս աղջիկը իւր արտասուլածոր մեծ աչքերը կամսսին վրայ դարձուց և սրտասխանեց.

— Եւ թէ միատեղ Արևելք դառնանք ըսել կ'ուզես, այնպէս չէ, տէր իմ :

— Այո՛, աղջիկս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, դիտես աղէկ որ ես քեզմէ բնաւ չեմ բաժնուիր, ծաղիկը ծառէն կը բաժնուի և ոչ ծառը ծաղիկէն :

— Ես քեզմէ ամենեւին չպիտի բաժնուիմ, տէր իմ, վասն զի ասլահով եմ որ առանց քեզի չպիտի կարենամ ասլրիլ :

— Խեղճ զաւակ, տասը տարիէն ես պիտի ծերանամ և դուն տակաւին երիտասարդ պիտի ըլլաս :

— Հայրս երկար սպիտակ մօրուք մը ունէր . բայց այս քանս արդեւք չէր ըլլար ինձ զան սիրելու . հայրս վաթսուէն տարեկան էր , բայց ամեն տեսած երիտասարդներէս աւելի դեղեցիկ կ'երևէր ինձ :

— Բայց ըտէ ինձ , կը կարծես որ հոս սովորիս :

— Ձքեզ պիտի տեսնեմ :

— Ամեն օր :

— Ինչո՞ւ կը հարցընես ուրեմն , տէր իմ :

— Կը վախնամ որ չձանձրանաս :

— Ոչ , տէր իմ , վասն զի առտու և իրիկուն քեզ պիտի մտածեմ , և մինակ եղած ժամանակս անցեալին յիշատակներն ունիմ , անոնց պատկերները աչացս առջևը կը բերեմ , և մտացս հորիզոնը խիստ հեռու կը տարածեմ : Ասոնցմէ զատ՝ սրտիս մէջ երեք զգացմունք ունիմ , որոնցմով մարդս ձանձրահար , որոնք են տրտմութիւնը , սէրը և երախտադ խտութիւնը :

— Եպիւոոսի արժանի և անհամեմատ աղջիկ մ'ես , Հայտէ , և կը տեսնեմ որ քու երկրիդ մէջ ծնած այն աստուածուհեաց ընտանիքէն իջած ես : Անհոգ եղիր , աղջիկս , պիտի ջանամ որ մատաղ հասակդ պարապ տեղը չանցնի , վասն զի եթէ դուն հօր պէս կը սիրես զիս , ես ալ զաւակի պէս պիտի սիրեմ զքեզ :

— Կը սխալիս , տէր իմ , զքեզ սիրածիս շափ հայրս չէի սիրեր , քեզի համար ունեցած սէրս ուրիշ սէր մ'է . հայրս մեռաւ , բայց ես չմեռայ . սակայն եթէ դուն մեռնիս , ես ալ պիտի մեռնիմ — :

Կոմսը իւր ձեռքը ծաղկահասա աղջկան երկնցուց սիրալիր խանդաղատութեամբ լցուած ժպիտով մը , և Հայտէ ըստ սովորութեան իւր շրթանց մտեցուց զայն :

Կոմսը Մորէլի ընտանեաց այցելութեան երթալու պատրաստուած ըլլալով , դուրս ելաւ Բէնտարի այս խօսքերը մըմուսալով .

« Երիտասարդութիւնը ծաղիկ մ'է , որուն պտուղն է սէրը . . . : Երանի այն մշակին , որ անոր կամացէկամաց հասնիլը տեսնելէն ետե կը ժողովէ զայն » :

Իւր հրամանաց համեմատ կառքը սխառաստուած էր : Կոմսը  
 Մէջը մտաւ , և կառքը ամեն անդամուան սկէս արշաւանօք  
 ակնկնեցաւ :



**ՔԼԱՐԻ ԺԱ.**

**ՄՈՐԷԼԻ ԸՆՏԵՆԻՔԸ**



**Կ**ՈՄՍԸ քանի մը վայրկեանէն Մէսլէ փո-  
 շոյը , թիւ 7 հասաւ :

Մորէլի տունը սլայծառ և սպիտակ  
 ներկուած էր , և որուն առջևը դաւիթ մը կար  
 երկու կարգ ծաղկալից խիտ ծառերով :

Կոմսը տան դռնասպանը ճանչցեր էր , որ ծերունի Գոզ-  
 լէսն էր :

Կառքերը այս դաւիթին դրան առջևը կենալու համար՝  
 պարտաւորեալ էին քիչ մը շեղելու , որպէս զի կոպիճնե-  
 րով և խեցիներով շինուած աւազանէ մը ցատկած ջրբուխէն  
 զղուշանան , որուն շքեղ շէնքը թաղեցւոց նախանձը զրգոեր  
 էր , և այս պատճառաւ այս տունը Փոքր Աւերայլ կը կոչէին :

Անօդուտ է ըսել թէ աւազանին մէջ բազմաթիւ կարմիր  
 և դեղին ձուկեր կը լողային :

Տուներ, որ խոհանոցներու և մառաններու դաստիկոնի մը վրայ շինուած էր, դետնայարկէն զատ երկու դաստիկոն եւս ունէր, որոնք Մորէլի ընտանեաց բնակութեան համար բաւական էին և կ'աւելնային:

Երիտասարդները այս տան կից եղած մեծատարած դործատունը և պարտէզին մէջ և խիստ ներքը եղած երկու զատ սենեակներն ալ միատեղ դնած էին:

Էմմանուէլ այս կալուածին մէջ փոքր շահագիտութիւն մը ըրեր էր. տունը և պարտէզին կէսը իրեն պահեր, մէջ տեղէն պատ մը քաշեր, և դործատունը, պարտէզին մնացեալ մասը զատ սենեակներով միատեղ վարձու տուեր էր, և Ֆոպուր Սէն-Ժէրմէնի մեծ կալուածատէրի մը պէս աղէկ կ'ապրէր:

Սեղանատունը կաղնի փայտէ շինուած էր, սրահը կահենի փայտէ և կապոյտ թաւշով կահուած էր, ննջարանները կիտրոնի փայտէ և կանաչ ու դամասկեան կերպասէ:

Ասոնցմէ զատ՝ աշխատութեան դահլիճ մը կար Էմմանուէլի համար, որ չէր աշխատեր, և նուազածութեան սենեակ մը ժիւլիին համար, որ երաժշտութեան եռանդ չուներ:

Երկրորդ դաստիկոնը թոլորովին Մաքսիմիլիէնի յանձնուած էր:

Ճիշդ առաջին դաստիկոնին սենեակներուն կրկնութիւնն էր այն, միայն թէ սեղանատունը դնդախաղի սրահի մը փոխուած էր, ուր իւր բարեկամներուն ընդունելութիւն կու տար:

Կոմսին կառքը դրան առջին կեցած միջոցին՝ Մաքսիմիլիէն անձամբ իւր ձիոյն դարմանուելուն կը հսկէր և պարտէզին դրան առջեւ իւր դլանիկը կը ծխէր:

Ինչպէս ըսինք՝ Գոգլէս դուռը բացաւ, և Պաթիսթէն նստարանէն վար ցատկելով հարցուց թէ տիկին Հէրսո և Մաքսիմիլիէն Մորէլ տո՛ւնն են և Մօնթէ-Քրիսթոյ կոմսին այցելութիւնը կ'ընդունին:

— Ինչո՞ւ չէ, ըսաւ Մորէլ իւր դլանիկը նետելով և այցելուին դիմացը վազելով: Ո՛հ, մեծապէս շնորհակալ եմ, պարոն կոմս, որ ձեր խոստումը չմոռցաք —:

Նւ երիտասարդ պաշտօնատարը այնպիսի սիրով կոմսին ձեռքը սեղմեց որ Մօնթէ-Քրիսթօ չկրցաւ անոր զղայման անկեղծութեան վրայ կասկածիլ, և յայտնի տեսաւ որ երիտասարդը անհամբերութեամբ իրեն սպասեր էր և սիրով ընդունելութիւն կու տար:

— Եկէք, եկէք, պարոն կոմս, ըսաւ Մաքսիմիլիէն, ես ձեր ներկայացուցիչն ըլլալ կ'ուզեմ. ձեզի պէս անձի մը դալուսար պէտք չէ ծառայի մը միջոցաւ իմացընել. քոյրս պարտէզին մէջն է, ու վարդենիին թարշամած վարդերը կը մկրատէ. եղբայրս անորմէ վեց քայլ հեռու լա Բրէս և լէ Տէպա երկու Օրադիրները կը կարդայ, վասն զի տիկին Հէրալօ ուր որ երթայ, անորմէ չորս մէթր հեռու պէտք է նայիլ Պ. Էմմանուէլը դանելու համար, այսպէս փոխադարձաբար իրարու ետեւէ կ'երթան, ինչպէս կ'ըսեն Բաղմարուեստեան դպրոցին մէջ —:

Քսան կամ քսան և հինգ տարեկան երիտասարդ կին մը, որ մետաքսեայ ցայղազղեստը հաղած մասնաւոր խնամքով մը գեղեցիկ վարդենի մը կը մաքրէր, ոտքերու ձայնէն գլուխը վերցուց:

Այս կինը մեր ճանչցած փոքր Ժիւլին էր, որ Էմմանուէլ Հէրալոյի կինն եղեր էր, ինչպէս որ Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան հրամանակատարը գուշակեր էր:

Օտարականը տեսնելով կինը ձայն մը հանեց:

Մաքսիմիլիէն սկսաւ ծիծաղիլ:

— Մի՛ շփոթիր, քոյր իմ, ըսաւ. պարոն կոմսը երկու կամ երեք օր է որ Բարիզ եկած է, սակայն Մարէի հասուածաւոր կնոջ մը ինչ ըլլալը աղէկ գիտէ, և եթէ չդիտեր, հիմա կը սորվեցընես անոր:

— Ա՛հ, պարոն, ըսաւ Ժիւլի, զձեզ այսպէս հոս բերելը եղբօրս մատնութիւնն է, որ այսպիսի առթի մէջ իւր քրոջը համար անտարբեր է. . . . — Բէնըլո՛ն. . . , Բէնըլո՛ն. . . —:

Ծերունի մը, որ Պէնկալի վարդենիներու բոլորտիքը կը փորէր, բահը դետինը թողուց, և գլխարկը ձեռքը տիկնոջը:

մօտեցաւ՝ կրցածին շափ իւր բերանի ծամախոտը այտերուն ներսերը պահելով:

Իւր խիտ մազերը տեղ տեղ ճերմկած, և իւր սղնձի գոյնը ու համարձակ և վառվռուն աչքերը կ'իմացընէին որ ծերունի նաւաստին հասարակածին արեւէն և փոթորիկներէն այրած և թխացած էր:

— Օրիորդ ծիւլի, կարծեմ որ զիս կանչեցիք, ինչ կը հրամայէք —:

Բէնըլոն իւր տիրոջ աղջիկը օրիորդ ծիւլի կանչելու սովորութիւնը պահեր էր, և բնաւ չկրցեր էր զան տիկին շէրս այոյ կոչելու սովորել:

— Գնա, ըսաւ ծիւլի, այս բարերազդ այցելութիւնը Պ. Էմմանուէլի իմացուր, և Մաքսիմիլիէն պարոնը սրահը կը տանի —:

Ետքը դէպ 'ի Մօնթէ-Քրիսթօ դառնալով,

— Պարոնը կը ներէ ինձ որ վայրկեան մը հեռանամ, այնպէս չէ —, ըսաւ:

Եւ կոմսին հաւանութիւնը ընդունելէն առաջ՝ ծառերուն ետին սահելով, կողմնակի ծառուղիէ մը տան մէջ մտաւ:

— Սիրելիդ իմ Պ. Մորէլ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ցաւով կը տեսնեմ որ ձեր ընտանեաց մէջ շփոթութիւն պատճառեցի,

— Նայեցէք, հոն ալ նայեցէք, ըսաւ Մաքսիմիլիէն ծիւծաղելով, ահա ամուսինն ալ որ իւր բաճկոնակը կը փոխէ և թիկնոց մը կը հալնի. ո՛հ, պատճառը այն է որ Մէսլէ փողոցը զձեզ կը ճանչնան. հաւատացէք ինձ որ ձեր դալըստեան լուրը արդէն տարածուեր էր:

— Ինձ այնպէս կ'երևի թէ երջանիկ ընտանիք մը ունիք, պարոն, ըսաւ կոմսը իւր բուն մտածութեան պատասխանելով:

— Ո՛հ, այո՛, ստուղիւ, պարոն կոմս. վասն զի երջանիկ ըլլալու համար ամենեւին պակասութիւն մը չունին. երիտասարդ և ուրախ են, զիրար կը սիրեն, և իրենց քսան և հինգ հազար ֆրանք եկամուտովը կարծեն թէ Ռոչիլտի հարս-

տու թե անց տէր են , թէև ժամանակաւ այնչափ անբաւ հարստութիւններ իրենց ձեռքէն անցած էր :

— Այսու ամենայնիւ քսան և հինգ հազար Ֆրանք եկամտաւր քիչ է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ այնպիսի քաղցրութեամբ մը , որ խանդակաթ հօր մը ձայնին պէս Մաքսիմիլիէնի սրտին մէջ թափանցեց . բայց մեր երիտասարդները այսպէս պիտի չմնան , անոնք ալ միլիոնատէր պիտի ըլլան . ձեր աները փաստարան է . . . , բժիշկ է . . . :

— Աճառահան էր , պարոն կոմս , և ողորմելի հօրս վաճառատան կառավարութիւնը ձեռք առած էր : Հայրս մեռնելու ատենը մեզ հինգ հարիւր հազար Ֆրանք ժառանգութիւն թողուց՝ կէսը ինծի և կէսը քրոջս , վասն զի միայն երկու դաւակ ունէր : Թիւլիին ամուսինը , որ ամուսնանալու ատեն իւր ատաքինութենէն , խելացիութենէն և անարատ համբաւէն զատ ուրիշ հայրենական ժառանգութիւն մը չունէր , ուղեց իւր կնոջը ունեցած ին հաւասար դումար մը ըստանալ : Անց տարի աշխատեցաւ մինչև որ երկու հարիւր յիսուս հազար Ֆրանք թողվեց : Ճշմարիտ կ'ըսեմ , պարոն կոմս , սրտաշարժ տեսարան մը կը ներկայացընէին այս երկու երիտասարդները , որոնք աշխատասէր , իրարու հետ սիրով կապուած և իրենց խելքովը անբաւ հարստութեան վիճակեալ էին , և որոնք իրենց հայրենական սովորութիւնները փոխել չուզելով , ուրիշներուն երկու կամ երեք տարուան մէջ ձեռք բերածը ասոնք վեց տարուան մէջ ձեռք բերին , ուստի դարձեալ Մաքսիլիա քաղաքը Մորէլի ընտանեաց աներկիւղ անձնութեան գովութիւններով հնչեց : Աերջապէս օր մը Էմմանուէլ եկաւ իւր կինը տեսնելու , որ սրայնաժամանեալ թղթերը վճարեր լմնցուցեր էր :

— Թիւլի , ըսաւ , Գոդլէս հիմա յանձնեց ինձ այս վերջին հարիւր Ֆրանքը , որ մեր շահուց իբր սահման դրած երկու հարիւր յիսուս հազար Ֆրանքը կ'ամբողջացընէ : Գո՛հ ես այս փոքրիկ դումարէն , որ այսուհետև մեր դրամադրուիսը պիտի ըլլայ : Բայց մտիկ ըրէ , մեր վաճառատունը տարին մէկ մի-

լինն Ֆրանքի դործ կ'ընէ, և կրնայ քառասուն հազար Ֆրանք շահ թողուլ: Եթէ ուզենք, մէկ ժամէն մեր յաճախորդները երեք հարիւր հազար Ֆրանքի պիտի ծախենք, վասն զի այս նամակը Պ. Տըլոնէէն ստացայ, որով այս բանս կ'առաջարկէ մեզ: Ըսէ ինձ, դուն ինչ կը մտածես որ ընենք:

— Սիրելիս, ըսաւ անոր քոյրս, Մորէլի վաճառատունը Մորէլ մը միայն պէտք է որ դարձընէ. բաղդին անողորմ խաղերէն հօրս անունը յաւիտեանս ազատելը միթէ երեք հարիւր հազար Ֆրանք չարժեր:

— Ես ալ այդպէս կը մտածէի, պատասխանեց, սակայն կ'ուզէի քու միտքդ ալ հասկընալ:

— Իմ դաղափարս այս է, սիրելիս. մեր ամեն սրահանջքները առնուեցան, ամեն պարտատոմսերը վճարուեցան. այս հնգետասներակին հաշուոց տակը զի՞ծ մը կրնանք քաշել և դոցել զանոնք. ուրեմն քաշենք զի՞ծը և դոցենք հաշիւները —

Ըսածնին նոյն միջոցին 'ի դործ դրին. ժամը երեքն էր. երեքը քառորդ անցած յաճախորդ մը ներկայացաւ երկու նաւերու ճամբորդութիւնը ասպհովելու համար. այս դործէն տասն և հինգ հազար Ֆրանք զուտ շահ ունէին:

— Պարոն, ըսաւ Էմմանուէլ, այս ասպհովութեան համար մեր ընկերակից Պ. Տըլոնէի ներկայացիր. մենք դործէ քաշուեցանք:

— Ա՛րչափ ժամանակէ 'ի վեր, հարցուց յաճախորդը զարմանքով:

— Քառորդէ մը 'ի վեր:

— Եւ ահա՛ այս է սրտաճառը, շարունակեց Մաքսիմիլիէն ժպտելով, որ քոյրս և աներս քսան և հինգ հազար Ֆրանք եկամուտէն աւելի չունին —

Մաքսիմիլիէն հազիւ թէ իւր պատմութիւնը լնցուցեր էր, որ Էմմանուէլ դըլսարկ մը և թիկնոց մը հագած անոնց մօտեցաւ, և այցելուին աստիճանը ճանչցողի մը պէս բարեկեց զան, ետքը ծաղկալից փոքր պարտիզին բոլորախօր պտըտցընելէն ետե՛ դէպ 'ի տունը տարաւ զան:



Բնական ճարմանդներով ճարոնի մեծ անօթի մը մէջ  
 դժուարութեամբ պարունակուած ծաղիկները արդէն սրահը  
 անուշահամութեամբ լցուցեր էին :

Ժիւլի վայելչապէս հաղուած և սիրուն կերպով գլուխը  
 շիտկած՝ կոսսին դիմացը ելաւ զան ընդունելու համար :

Մեծ վանդակի մը մէջէն թռչնոց կարկաչները կը լսուէր :

Ահա՛ և բենոսի և վարդագոյն աղասիայի ոստերը մինչև պա-  
 տուհանը երկննալով, իրենց օղկոյղներովը կատոյտ թաւշեայ  
 վարագոյրներուն շրջանակ մը կը կազմէին :

Այս փոքրիկ սիրուն բնակութեան մէջ ամեն բան, թռչու-  
 նին երգէն մինչև անբերուն ժպիտը, հանդարտութիւն մը  
 կը շնչէր :

Ամսը այս տունը մանելէն՝ ի վեր՝ անոնց երջանկութիւնը  
 դիտելէն չէր կշտանար. հեռեւարար լուս և մտախորհ մնալով,  
 մտցեր էր որ առաջին պատուադիր խօսքերէն ետև՝ իւր ունկն-  
 դիրները ընդհատեալ խօսակցութեան շարունակութեանը  
 կ'ըստասէին :

Գրեթէ անպատշաճ եղած այս լուծիւնը նշմարեց, և  
 ուժգնութեամբ իւր մտածութիւնը թօթափելով,

— Տիկին, ըսաւ վերջապէս, ներեցէք ինձ, կ'աղաչեմ, և  
 մտացս յափշտակութիւնը թող զարմանք չպատճառէ ձեզ,  
 որ սովորած էք այն խաղաղութեան և երջանկութեան, զորս  
 ձեր տան մէջ կը տեսնեմ : Մարդկային դիմաց վրայ դոհու-  
 նակութիւն տեսնելը ինձի համար այնչափ նոր բան մ'է, որ  
 ձեր ամուսինը և ձեզ նայելէն չեմ ձանձրանար :

— Ստոյգ է որ շատ երջանիկ ենք, պարոն, պատասխա-  
 նեց ժիւլի, սակայն երկար ժամանակ մեծ նեղութիւններ  
 կրեցինք, և քիչ մարդիկ երջանկութիւնը մեղի չափ սուղ  
 դնած են — :

Ամսին դիմաց վրայ հեռաքրքրութիւն մը նկարուեցաւ :

— Ընտանեկան ամբողջ պատմութիւն մ'է այս, ինչպէս  
 որ կ'ըսէր անցեալ օր Շաթօ-Ռընօ, կրկնեց Մաքսիմիլիէն.  
 այս տնային պատմութիւնը դուցէ անօղուա ըլլայ ձեզի հա-

մար, պարոն կոմս, որ այնչափ երևելի թշուառութիւններ և մեծ ուրախութիւններ տեսնելու սովորած էք: Այսու ամենայնիւ՝ ինչպէս որ հիմա ծիւլի կ'ըսէր, խիստ մեծ վիշտեր անցուցինք, թէև փակուած ըլլան այս փոքր շրջանակին մէջ:

— Եւ այդ վիշտերէն ետև՝ Աստուած իւր մխիթարութիւնը ղրկեց ձեզ, այնպէս չէ՞, ինչպէս ամեն նեղութիւն կրողներուն կ'ընէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Այո՛, պարոն կոմս, ըսաւ ծիւլի, չենք ուրանար. վասն զի Աստուած իւր ընտրելոց ըրածը մեզ ալ ըրաւ, իւր մխիթարիչ հրեշտակներէն մէկը ղրկեց մեզ —:

Կոմսին այտերը շառաղնեցան, և թաշկինակը բերանին տանելով հազաց, որպէս զի իւր յուզմունքը ծածկելու միջոց մը ունենայ:

— Անոնք որ անվիշտ որդանի մէջ ծնած են, և ամենևին բանի մը բաղձացած չեն, ըսաւ Էմմանուէլ, չեն դիտեր թէ ինչ է ապրելու երջանկութիւնը. ասոր պէս՝ պայծառ երկնից յարգը չեն ճանչնար անոնք որ կատաղի ալեաց խաղալիկ եղսղ չորս տախտակներու յանձնած չեն իրենց կեանքը —:

Մօնթէ-Քրիսթօ առանց պատասխանելու ոտք ելաւ, եթէ ոչ՝ իւր ձայնին դողդոջիւնէն սրտին յուզմունքը պիտի յայտնէր անոնց, և սկսաւ սրահին մէջ քայլ առ քայլ շրջիլ:

— Մեր փառասիրութեան վրայ կը ժպտիք, պարոն կոմս, ըսաւ Մաքսիմիլիէն, որ աչքը Մօնթէ-Քրիսթոյի վրայէն վերցուցած չէր:

— Ոչ, ոչ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ խիստ տծողունեալ, և մէկ ձեռքով իւր սրտին բաբախումը զսպելով և միւսովը երիտասարդին վանականեայ դունդ մը կը ցուցընէր, որուն տակը սև թաւշեայ բարձի մը վրայ մետաքսեայ քսակ մը իբր թանկագին առարկայ մը տեղաւորեր էին: Այլ կը մտածէի թէ ինչ բանի կը ծառայէ այս քսակը, որուն մէկ կողմը կարծեմ թուղթ մը կայ և միւս կողմը բաւական ընտիր ադամանդ մը —:

Մաքսիմիլիէն ծանրութեամբ մը պատասխանեց.

— Մեր ընտանեկան դանձերէն ամենէն թանկագինը այս է, սպրոն կոմս :

— Իբրք, ադամանդը բաւական դեղեցիկ է, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ :

— Ո՛հ, դոճարին գնոյն համար չէ եղբօրս ըսածը, թէ Է հարիւր հազար ֆրանք արժողութիւն ունենայ, սպրոն կոմս, ըսաւ Թիւլի, այլ ըսել կ'ուզէ թէ այս քսակին սպրունակած առարկները այն հլեշտակին առարկաներն են, որուն վրայ հիմա կը խաւիք :

— Այդ բանը չէի կրնար դիտնալ, տիկին, սլառասխանեց Մօնթէ-Քրիսթօ խոնարհութիւն մը ընելով. ներեցէք ինձ, եթէ անհետաքրքիր ըլլալ չուզեցի :

— Ընդ հակառակն, սպրոն կոմս, դուք զմեզ երջանիկ կ'ընէք այս նիւթիս վրայ խօսելու առիթը ներկայացընելով : Եթէ այն բարեգործութիւնը յիշեցընող այս քսակը դադանի պահել ուզէինք, այսպէս աչաց առջև չէինք դներ : Ո՛հ, եթէ կարելի ըլլար՝ բոլոր աիեղերք պիտի հրատարակէինք այս գործը, որպէս զի մեր անձանօթ բարերարին մէկ սարսուռը իւր ներկայութիւնը յայտնէ մեզ :

— Իրաւունք ունիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ հեղձեալ ձայնիւ :

— Պարոն, ըսաւ Մաքսիմիլիէն ապակեայ դունտը վերցընելով և մետաքսեայ քսակը ջերմոտանդութեամբ համբուրելով, այս քսակը այն մարդուն ձեռքին դաշցած է, որուն միջոցաւ հայրս մահուանէ աղատեցաւ, մենք աղքատութենէ և մեր անունը խայտառակուելէ. այնպիսի մարդու մը, որուն շնորհիւ մեր արդի երջանկութեան վրայ մարդոց զարմանքը դրաւած ենք : Այս նամակը, շարունակեց Մաքսիմիլիէն քսակին մէջէն ամսակ մը հանելով և կոմսին ներկայացընելով, այս նամակը հօրս խիստ յուսահատեալ որոշում մը ըրած օրը այն անձէն դրուած է, և այս ադամանդը այն անձանօթ առատասիրտ մարդէն իբրև օժիտ քրոջս տրուեցաւ — :

Մօնթէ-Քրիսթօ նամակը բացաւ և ուրախութեան անողալ

տու՛մ զղացմամբ կարդաց զայն . Ժիւլիին ղրկուած և Սէն-  
պատ Նաւաստիէն ստորադրուած տոմսակն էր այն , որ մեր  
ընթերցողնե՛րը կը ճանչնան :

— Անծանօթ կ'ըսէք . ուրեմն այն ծառայութիւնը ձեզ ը-  
նող անձը չէք ճանչնար :

— Ոչ , պարոն . անոր ձեռքը սեղմելու ելջանկութիւնը  
չուեցայ բնաւ . այսու ամենայնիւ այս շնորհքը Աստուծմէ  
խնդրելէն չդադրեցանք . սակայն բոլոր այս դէպքին մէջ  
դաղտնի ձեռք մը կայ , որուն ինչ ըլլալը դեռ չկրցանք հաս-  
կընալ . դիւթիչի մը ձեռքին չափ զօրաւոր աներևոյթ ձեռք  
մը ամեն բան կը տնօրինէր :

— Ո՛հ , ըսաւ Ժիւլի , ես դեռ բոլոր յոյսս կտրած չեմ  
որ օր մը անոր ձեռքը պիտի համբուրեմ , ինչպէս որ անոր  
դպցած քսակը կը համբուրեմ հիմա : Չորս տարի կայ Բէնըլոն  
Թրեստ կը դտնուէր . Բէնըլոնը , պարոն կոմս , նաւապետու-  
թենէ պարսիղպանութեան իջած այն բարի մարդն է , որուն  
ձեռքը պարտիզին մէջ բահ մը տեսաք : Բէնըլոն Թրեստ ե-  
ղած ժամանակը՝ նաւամատոյցին վրայ Անդղիացիի մը շեղա-  
կայմ մը մտնելը տեսեր , և 1829 Յունիսի Ծէն հօրս սենեակը  
ներկայացողն ըլլալը ճանչցեր է : Անոր ստուղածին նայե-  
լով նոյն մարդն է եղեր , բայց անոր հետ խօսելու չէ հա-  
արձակեր :

— Անդղիացի մը կ'ըսէք , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ մտածե-  
լով , և Ժիւլիին ամեն մէկ նայուածքէն անհանգստութիւն մը  
կրելով . Անդղիացի մը կ'ըսէք :

— Այո՛ , կրկնեց Մաքսիմիլիէն , Հռոմի Թոմսըն և Փրէնչ  
վաճառատան իբր հրամանակատար մեր տունը ներկայացողը  
Անդղիացի մ'էր : Ահա այս է պատճառը որ անցեալ օր Պ .  
Մորսէրֆի տունը Թոմսըն և Փրէնչ պարոնները ձեր սեղա-  
նաւորներն են ըսած ժամանակնիդ իմ սարսուալս տեսաք :  
Յանուն երկնից , ըսէք մեզ , այս Անդղիացին կը ճանչնա՞ք դուք :

— Բայց չըսիք ալ որ Թոմսըն և Փրէնչ վաճառատունք  
բոլորովին ուրացաւ ձեզ այն ծառայութիւնն ընելը :

— Այո :

— Ուրեմն այն Անդղիացին չի կրնար այնպիսի անձ մը ըլլալ, որ իւր ընդունած շնորհաց համար հօրդ երախտապարտ ըլլալով, այն ծառայութիւնն ընէ այնպիսի բարուրանքով մը :

— Այնպիսի պարագայի մը մէջ ամեն բան կը կարծուի, մինչև հրաշք մը անդամ :

— Անդղիացւոյն անունը ինչ էր, հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Տոմսակին տակը ստորադրուած Սէնյապ Նաստի անունէն զատ ուրիշ անուն մը չթողուց, սլարոն, սլատասխանեց ժիւլի, որ խորին ուշադրութեամբ կուսը կը դիտէր :

— Յայտնի է որ անուն մը չէ այդ, այլ կեղծ անուն մը ըլլալու է — :

Եւ որովհետև ժիւլի աւելի ուշադիր նայուածքով կը դիտէր զան, և կը ջանար իւր յիշողութիւնը ամփոփել անոր ձայնին հնչիւնը ճանչնալու :

— Գրեթէ իմ հասակաւս մարդ մը չէր այն անձը, շարունակեց կուսը, զուցէ քիչ մը աւելի բարձրահասակ, բայց աւելի նիհար, մեծ փողկասկ մը կասլած, կոճկուած սեղմուած և մատխոր միշտ ձեռքը բռնած :

— Ա՛հ, ուրեմն դուք կը ճանչնաք զան, ըսաւ ժիւլի աչքերը ուրախութենէ շողշողելով :

— Այ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, միայն կ'ենթադրեմ : Լորտ Ալիքսը մը ճանչցած եմ, որ տառաածեռնութեան դործերը այսպէս կը սերմանէր :

— Առանց ինքզինքը ճանչցընելու :

— Տարօրինակ մարդ մ'էր որ երախտադիտութեան չէր հաւատար :

— Ա՛հ, Տէր Ատառուած իմ, ըսաւ ժիւլի վսեմ ձայնիւ մը և ձեռքերը իրարու միացընելով, ուրեմն ինչ բանի կը հաւատայ այդ անձը :

— Գոնէ զինքը ճանչցած ժամանակս չէր ճանչնար, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, որուն խորին աղքեցութիւն մը ըրեր էր ժիւլիին սրտին խորունկէն ելած այն ձայնը : Բայց զուցէ

այն ատենէն 'ի վեր երախտադ իտուժեան քանի մը փորձերը ընդունած ըլլայ :

— Եւ դուք կը ճանչնա՞ք զան, պարոն, հարցուց Էմմանուէլ :

— Ո՛հ, դուք կը ճանչնա՞ք զան, ըսէք, ըսէք, կ'աղաչեմ, պարոն, ըսաւ Թիւլի. կրնա՞ք զմեզ անոր քովը տանիլ, ցուցունել մեզ զան կամ անոր ուր գտնուիլը ըսել : Եթէ երբէք զան գտնենք, այնպէս չէ՛, Մաքսիմիլիէն, անշուշտ կը հաւատայ ան որ սիրտը յիշողութիւն մը ունի — :

Մօնթէ-Քրիսթօ գղաց որ իւր աչքերէն երկու արտասուք կաթեցան :

Ուստի վերստին սրահին մէջ քանի մը քայլ ըրաւ :

— Երկնից անուան համար ըլլայ, ըսաւ Մաքսիմիլիէն, եթէ այն մարդուն վրայ բան մը դիտէք, ըսէք մեզ :

— Ափսոս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ իւր ձայնին այլայլութիւնը զսպելով, եթէ ձեր բարերարը լորտ Ալիմորն է, բնաւ պիտի չգտնէք զան : Երկու կամ երեք տարի կայ որ ալէրմօ թողուցի զինքը, և այնպիսի առասպելական երկիրներ պիտի երթար, ուրկից վերադառնալուն վրայ կը տարակուսիմ :

— Ո՛հ, անդուժ էք, պարոն, ըսաւ Թիւլի սոսկումով և իւր աչքերը արտասուօք լեցուեցան :

— Տիկին, ըսաւ ծանրութեամբ Մօնթէ-Քրիսթօ՝ իւր նայուածքը Թիւլիին այտերուն վրայ հասած երկու լոյծ մարդարիտներուն վրայ յարեւով, եթէ լորտ Ալիմոր իմ հօս տեսածս տեսնելու ըլլար, անշուշտ կեանքը նախամեծար պիտի ընտրէր, ըստ որում ձեր թափած արտասուքը զինքը մարդկային սեռին հետ պիտի հաշտեցընէր — :

Է իւր ձեռքը Թիւլիին երկնցուց, որ կոմսին նայուածքէն և ձայնէն յափշտակուելով, անոր շարժման պատասխանեց,

— Բայց այս լորտ Ալիմորը, ըսաւ Թիւլի, վերջին ակնկալութիւն մը կը թնկնէ իմ, անշուշտ հայրենիք մը, ընտանիք մը և ծնողք ունէր, վերջապէս անշուշտ ճանչցուած էր, արգեօք չէ՞ի՞ք կրնար . . . :

— Ո՛հ, սլարայ տեղը մի փնտռէք զան, տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, իմ ըսած խօսքիս վրայ մտադածին քաղցր խորհուրդներ մի ստեղծէք: Ոչ, հաւանականաբար լորտ Աիւ մորը չէ ձեր փնտռած մարդը. իմ բարեկամս էր ան, անոր բոլոր գաղտնիքը զիտէի ես, անշուշտ ինձ պիտի սլատմէր ձեր գործը:

— Եւ ամենեւին բան մը չըսաւ, հարցուց Թիւլի:

— Ամենեւին:

— Բնաւ խօսք մը չըսաւ որ մեր ըսածը հաստատէր:

— Բնաւ:

— Այսու ամենայնիւ՝ շուտով անոր անունը տուիք:

— Ո՛հ, զիտէք... այսպիսի պարագայի մէջ կ'ենթադրէ մարդս:

— Քոյր իմ, ըսաւ Մաքսիմիլիէն՝ կոմսին օղնուծեան հասնելով, սլարոնը իրաւունք ունի. միտքդ բեր ինչ կ'ըսէր շատ անգամ մեր բարի հայրը՝ թէ Մեզ այս բարիքը ընողը Անգղիացի մը չէ —:

Մօնթէ-Քրիսթօ սարսռաց:

— Ձեր հայրը ինչ կ'ըսէր, Պ. Մորէլ, կրկնեց աշխուժիւ:

— Հայրս այս գործը հրաշք մը կը համարէր: Հայրս կը կարծէր թէ այն բարեբարը մեզի համար գերեզմանէն դուրս ելած է: Ո՛հ, սլարոն, սրտաշարժ աւելորդասլաշտութիւն մ'է այս, և ես թէսկէտ չէի հաւատար, սակայն չէի ուզեր ալ անոր ազնիւ սրտին մէջէն այս ենթադրութիւնը ջնջել: Շատ անգամ կորսուած և խիստ սիրելի բարեկամի մը անունը ցած ձայնով արտասանելով կ'երազէր, և երբ մահուան մօտեցաւ, երբ յաւիտենականութեան մերձաւորութիւնը գերեզմանին վրայ իւր միտքը լուսաւորեց, այն խորհուրդը, որ մինչև այն ժամանակը տարակոյս մ'էր, համոզում մը եղաւ, և մեռնելու ատեն իւր վերջին արտասանած խօսքերը ասոնք եղան, « Մաքսիմիլիէն, Էտմօն Տանթէսն էր ան » —:

Կոմսին տժգունութիւնը, որ քանի մը մանրերկրորդէ՛ի վեր կ'աւելնար, այս խօսքերուն վրայ սոսկալի եղաւ:

Բոլոր իւր արիւնը սրտին մէջ յորդեց, այնպէս որ չկրցաւ խօսիլ: Ժամը դիտելու պատրուակաւ ժամացոյցը նայեցաւ, դիտարկը առաւ, բիրտ և խոովեալ կերպով տիկին Հէրայոն ողջունեց, և Էմմանուէլի ու Մաքսիմիլիէնի ձեռքերը սեղմելով,

— Ներեցէք ինձ, տիկին, ըսաւ, որ երբեմն իմ յարգանքս մատուցանելու դամ: Ձեր տունը սիրելի է ինձ, և ձեր ընդունելութենէն շնորհապարտ եմ. վասն զի այնչափ տարիներէ՛ ՚ի վեր առաջին անգամն է որ ինքզինքս մտցայ — :

Նւ մեծ քայլերով դուրս ելաւ:

— Զարմանալի մարդ մ'է այս Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, ըսաւ Էմմանուէլ:

— Այո՛, պատասխանեց Մաքսիմիլիէն, բայց կարծեմ թէ ազնիւ սիրտ մը ունի, և ապահով եմ որ կը սիրէ զմեզ:

— Իւր ձայնը սրտիս ազդեցութիւն մը ըրաւ, և երկու երեք անգամ ինձ այնպէս երեցաւ թէ առաջին անգամը չէր որ ես անոր ձայնը կը լսէի:





ՔՐԻՍՏՈՑ ԺԲ

ԲԻՐԸՄ ԵՒ ԹԻՉՊԷ



**Յ**ՈՊՈՒՐ ՍԷՆԹ - Օնորէ փողոցին երկու եր-  
րորդ մասը անցնելով, այս հարուստ թաղին  
անուանի շէնքերուն մէջ երեւելի եղած դեղե-  
ցիկ տան մը ետին ընդարձակ պարտէզ մը  
կը տարածուի, որուն տերեւախիտ շաղանա-

կենիները պատուարի պէս բարձրաբերձ պատերէն վեր կը  
բարձրանային և դարնան մէջ իրենց սպիտակ և վարդադոյն  
ծաղիկները կը թափէին շերտաւոր փորուած քարէ թաղար-  
ներու մէջ, որոնք երկու քառակուսի մոյթերու վրայ դուղա-  
հեռահան ուղղութեամբ տեղաւորուած էին, և Նուի ԺԳի  
ժամանակէն մնացած երկաթեայ վանդակ մը այն մոյթերուն  
մէջ տեղը հաստատուած էր:

Թէև շքեղ կոնկրետներ երկու թաղարներուն մէջ բար-  
ձրացած էին և իրենց կճանկար տերեւներն ու ծիրանեղոյն  
ծաղիկները հողմէն կը ճօճային, սակայն այն հոյակապ դուռը  
փակուած մնացած էր այն ժամանակէն ՚ի վեր որ տան տէ-  
րերը իրենց տունը նեղցուցին՝ մեծ փողոցին վրայ բացուող  
ծառալից դաւիթին և այն վանդակասպատ դուռով պարտիզին  
կողմէն, որ ժամանակաւ տան հետ կից արտավար մը բան-  
ջարանոց կը կազմէր:

Սակայն շահադիտութեան դեռ այն բանջարանոցին ծայրէն  
դիժ մը այսինքն փողոց մը բանալով, և փողոցը բացուելէն  
իսկ առաջ՝ փայլուն երկաթի տախտակի մը շնորհիւր անուն  
մը ստանալով, տան տէրերը մտածեցին որ այն պարտէզը

Վաճառեն՝ փողոցին վրայ շէնք մը շինելու և Ֆոպուր Սէնթ-Օնորէ կոչուած Բարիզի այն գլխաւոր երակին հետ մըցելու համար :

Բայց շահադիտութեան մէջ մարդս կը յառաջադրէ և ըստակը կը տնօրինէ :

Մկրտեալ փողոցը իւր որրանին մէջ կորսուեցաւ :

Պարտէզը դնողը կատարեալ վճարելէն ետե՛ ուզած դնովը չկըցաւ վերստին վաճառել զայն . և դնոյն բարձրանալուն սալասելով, որուն վաղ կամ անաղան կը յուսար, որպէս զի իւր արդէն ըրած ֆլասը գոցէ և ասլարդիւն մնացած գրամագլխին շահերը ձեռք բերէ . ուստի որոշեց որ այն երկիրը տարին հինգ հարիւր Ֆրանք վարձով պարտիզպաններու վարձէ :

Այս կերպով հարիւրին կէս շահով ստակը տոկոսի դնելէր, որ ժամանակին սրընթացութեանը նայելով սուղ չէ, որուն մէջ այնչափ մարդիկ իրենց ստակէն հարիւրին յիսուն շահ կ'ըստանան, և դարձեալ ստակին խեղճ արդիւնաւորութեան վրայ կը դանդատին :

Սակայն ինչպէս որ ըսինք՝ պարտէզին մէկ դուռը կազմող վանդակասլատը խաբանուած էր, սակայն ժանդը ծխնինները կը մաշէ :

Եւ որպէս զի աննշան պարտիզպանները իրենց բիրտ նայուածքովը ազնուասլատական տան ներքին կողմը չպղծեն, վեց ոտք բարձրութեամբ տախտակներով վանդակներուն առջևը գոցեր էին :

Իրաւ է որ տախտակները այնչափ աղէկ կցուած չէին, որ պարտիզպանները չկարենային գողունի նայուածք մը ճեղքուածքներէն ներս թափանցել :

Բայց այս տունը այնպիսի անաչառ սովորութիւններ ունի, որ այնպիսի անպատեհութենէ չվախնար :

Այս բանջարանոցին մէջ փոխանակ կաղամբ, ստեպղին, ոլոռն և սելս մշակելու՝ միայն առուոյտ սերմանած էին, և այս կ'իմացընէր թէ այն լքեալ երկիրը բոլորովին մոռցուած չէր :

Փողոցին վրայ բացուող փոքրիկ ցած դռնէ մը սլափերով շրջապատեալ այն սլափաւորին մէջ կը մտնուէր, զոր անբերութեանը սլափաւորաւ վարձակալները թողուցեր էին, և ութ օրէ 'ի վեր՝ առաջուան սէս հարկերին կէս շահ բերելու տեղ՝ բան մը չէր բերեր:

Տան կողմը ինչպէս ըսինք շողանակներինը սլափերէն վեր բարձրացած էին, բայց արդեւ չէին կունար ըլլալ ուրիշ ծաղկալից և շուտ աճող ծառերու, որ անոնց անջրպետներէն իրենց ոստերը մեղմով տարածեն օդ շնչելու համար:

Կսիտ տերեւախիտ մէկ անկիւնը, ուր հաղիւ ցորեկուան լոյսը կը թափանցէր, քարէ լայն նստարան մը և սլափալի աթոռները կը ցուցնէին որ այս տեղը դումարուելու տեղ մը կամ տան մէջ բնակողներէն մէկուն տունէն հարկեր քայլ հետու սիրելի առանձնարան մ'էր, որ իւր շրջապատը եղած կանաչեղինաց սլափաւորին սլափաւոր հաղիւ տեսանելի էր գուրսէն:

Վերջապէս՝ արևուն բացակայութիւնը, ամառուան ամենէն ջերմակէզ օրերուն մէջ անկամ մշտնջենաւոր զովութիւնը, թուրք ճուղողումը և տունէն ու փողոցէն, այսինքն զոր ծերէ և ձայներէ հեռի դանուիլը այս կաղտնի առանձնարանին ընտրութիւնը կ'արդարացնէին:

Բարիկի դարնան ամենէն տաք օրերուն իրիկուն մը՝ այն քարէ նստարանին վրայ դիրք մը, հովանոց մը, աշխատութեան կողով մը և բանուելու սկսուած բարակ կտաւէ թաշկինակ մը կար, և այն նստարանէն քիչ մը անդին՝ վանդակներուն մօտ՝ տախտակներուն առջին կանդնած ծաղկահաս աղջիկ մը աչքը ճեղքուածներուն մէկուն դրած՝ իւր նայուածքը անմշակ սլափաւորին մէջ կը թափանցէր:

Գրեթէ նոյն միջոցին՝ սլափալի փոքր դուռը անձայն բացուեցաւ ու բարձրահասակ և ուժեղ երիտասարդ մը մոխրադոյն կտաւէ բաճկոնակ մը ու թաւշեայ դիւանոց մը հագած, բայց անոր սև ընչացքը, մօրուքը և մազերը, որոնք մեծ փնամքով յարդարուած էին, իւր ուսմական հաղուստի:

կերծ ըլլալը կը յայտնէին, դուռը գոցելէն և իւր բոլոր-  
տիքը նայուածք մը յածելէն ետև՝ որպէս զի տեսնէ թէ զինքը  
լրտեսող մէկը կը դռնուի, դահաձէժ քայլերով դէպ 'ի  
վանդակապատը ուղղեցաւ:

Ծաղկահաս աղջիկը, որ անոր կ'ըսպասէր, բայց հաւա-  
նականաբար ոչ այն հաղուստով, զան տեսնելով վախցաւ և  
գէպ 'ի ետ ցատկեց:

Սակայն արդէն երիտասարդը տախտակներուն ճեղքուած-  
ներուն մէջէն սիրահարի յատուկ եղած նայուածքով անոր  
տախտակ շրջազգեստին և երկար կասկոյտ դօտիին ծածանիլը  
տեսեր էր:

Իսկոյն վանդակներուն քովը վազեց, և բերանը ճեղքուածքի  
մը յարելով,

— Մի վախնար, Աւլանթին, ըսաւ, ես եմ — օ

Նորատի աղջիկը մօտեցաւ:

— Ո՛հ, պարոն, ինչո՞ւ այսպէս ուշ եկար այսօր, ըսաւ:  
Գիտե՛ս արդեօք որ ճաշելու ժամանակը մօտեցած է, և որ-  
չափ հնարքներ և կերպեր բանեցընել պէտք եղաւ իմ ըն-  
թացքս դիտող մօրուիս, զիս լրտեսող սենեկասպանուհւոյս  
և զիս անհանդիստ ընող եղբօրս ձեռքէն ազատելու, և այս  
թաշկինակը բանելու համար հոս դալու, զոր կը վախնամ  
թէ առ այժմ պիտի չկրնամ լրացընել: Եւ դուն քու ուշա-  
նալուդ պատճառը յայտնելէդ ետև՝ ըսէ ինձ թէ այդ հա-  
ղուստը ինչ կը նշանակէ, որ զքեզ գրեթէ չճանչնալուս  
պատճառ եղաւ:

— Սիրելիդ իմ Աւլանթին, ըսաւ երիտասարդը, դուն  
իմ սէրէս խիստ բարձր ըլլալուդ չեմ համարձակիր անոր  
խօսքն ընելու, սակայն երբ որ զքեզ տեսնեմ, պէտք եմ  
ըսել թէ իմ սէրս քեզի համար չափազանց է, որպէս զի իմ  
բուն խօսքերուս արձագանքը զքեզ շտեմած ժամանակս սիրտս  
մեղմով սփոփէ: Շնորհակալ եմ որ ուշանալուս համար կը  
յանդիմանես զիս. սիրելի է ինձ այդ խօսքերը, որոնք կը  
հաստատեն, չեմ համարձակիր ըսել՝ թէ ինձ կ'ըսպասէիր:

այլ թէ զիս մտքէդ հանած չէիր: Իմ ուշանալուս և ծայտելուս պատճառը ուղեցիր դիտնալ, ըսեմ քեզ, և կը յուսամ թէ պիտի ներես ինձ, պաշտօնի մը ձեռք զարկի:

— Ապաշտօնի մը . . . ինչ ըսել կ'ուզես, Մաքսիմիլիէն միթէ այնչափ երջանիկ ենք որ մեզի նկատող խնդրոյ մը վրայ ծաղրարար խօսիս:

— Ո՛հ, Աստուած չընէ որ իմ կեանքս եղող անձին հետ ծաղրարար խօսիմ, ըսաւ երիտասարդը. սակայն ասդիս անդին ստըտելէն և սլատերուն վրայ ելնելէն ձանձրանալով, և առանց կատակի վախնալով քու անցեալ իրիկուան ինձ ըսածէդ՝ թէ հայրդ կրնայ զիս օր մը իբրև դուդ դատաստանի կանչել, որով ամբողջ դաղղիական բանակին պատուոյն նախատինք մը պիտի ըլլար, վախնալով միանդամայն զիս տեսնողներուն հետաքրքրութիւնը շարժելէն՝ այս պարտիզին բռնորոտիքը ըրած երթեկուցութիւններովս, ուր ոչ միջնաբերդ մը կայ պաշարելու և ոչ ապաւինութեան պատնէշ մը պաշտպանելու համար, Սպահիներու զօրապետութենէ պարտիզպանութիւնը յանձն առի, և իմ պաշտօնիս հաղուստը հաղայ:

— Ի՛նչ խենթութիւն:

— Ընդ հակառակն՝ կարծեմ թէ մեծ խոհեմութիւն է ըրածս, ըստ որում կ'ապահովեցրնէ զմեզ:

— Ըսէ՛, ինչպէս

— Գացի այս պարտիզին տէրը դտայ. առջի վարձակալներուն պայմանաժամը լրացեր էր, և ես վարձեցի զայն: Բոլոր այս առուոյտները իմս են, Աալանթին, և ամենեին արդէլք մը չունիմ այս խոտերուն մէջ հիւզ մը շինելու և այսուհետև քեզմէ քսան քայլ հեռու ասլրելու: Ո՛հ, չեմ կրնար իմ ուրախութիւնս և երջանկութիւնս զսպել: Ար հասկրնամ, Աալանթին, միթէ վճարելով կ'ըստացուին այս բաները. անկարելի է, այնպէս չէ: Այսու ամենայնիւ, ամեն այս երջանկութիւնը, բարօրութիւնը և ուրախութիւնը դիտես ս'ըչափ արժեցին ինձ, դուշակէ . . . : Տարին միայն հինգ հարիւր Ֆրանք պիտի վճարեմ՝ եռամսեայ հատուցմամբ:

Այսուհետև ամենեին վախնալու տեղ չունիմ. հոս իմ տանս մէջ կը դտնուիմ, կրնամ սանդուխը պատիս կոթնցընել, վրայէն նայիլ և առանց դիշերային պահանորդէ մը արդիւնութիւնը՝ քեզի հետ խօսիլ և իմ սէրս յայտնել՝ որչափ ժամանակ որ քու մեծանձնութիւնդ շվիրաւորուի բաճկոնակ և գլխանոց մը հաղնող ողորմելի դործաւորի մը բերնէն այս խօսքերը լսելու — :

Վալանթին ուրախալից զարմացման ձայն մը հանեց, ետքը յանկարծ՝

— Ափսոս, Մաքսիմիլիէն, ըսաւ այնպիսի տրամութեամբ մը, որ կարծես թէ նախանձոտ ամալ մը՝ անոր սիրտը լուսաւորող արեւուն ճառագայթը յանկարծ սքողելու եկեր էր. հիմա ազատ ենք, սակայն մեր երջանկութիւնը զԱստուած փորձել պիտի տայ մեզ. մեր ապահովութեան շափը պիտի անցընենք, և մեր ապահովութիւնը զմեզ պիտի կորսնցընէ :

— Կրնաս այդ խօսքը ըսել ինձ, սիրելիս, որ զքեզ ճանչնալէս՝ ի վեր ամեն օր փորձերով հաստատեցի թէ իմ կեանքս և խորհուրդներս քու կենացդ և խորհրդոցդ հպատակեցուցած եմ: Ինձ ունեցած վստահութիւնդ ո՞վ տուաւ քեզ, պատիւս, այնպէս չէ. երբ ըսիր ինձ թէ անորոշ ազգեցութիւն մը կ'իմացընէր քեզ թէ մեծ վտանգի մը մէջ կը դտնուիս, այն ատեն իմ անձնութիւնս՝ ի դործ դրի, և քեզ ծառայելու երջանկութենէն ուրիշ վարձատրութիւն մը չխնդրեցի : Այն ժամանակէն՝ ի վեր միթէ խօսքով մը կամ նշանով մը զղջալու առիթ մը տուի՞ քեզի համար մեռնելու երջանկեղողներուն մէջ զիս ընտրելուդ համար : Խեղճ աղջիկ, դուն ինձ ըսիր թէ Պ. ա' Էբինէին նշանուած ես, թէ հայրդ այդ միութիւնը որոշած է, և թէ որոշումը հաստատուած է. վասն զի Պ. Աիլըֆօրի ամեն կամքերը անվրիպելի կերպիւ պէտք է որ կատարուին : Ուստի ես ստուերին մէջ մնացի և ամեն բան թողուցի ոչ իմ և ոչ քու կամացդ, այլ դէպքերու, նախախնամութեան և Աստուծոյ կամացը, այսու ամենայնիւ դուն սիրեցիր զիս և դու՞ թ ունեցար ինձ, Վալանթին, ինչպէս որ

ըսիր ալ. այդ քաղցր խօսքին համար շնորհակալ եմ քեզ ,  
և կը խնդրեմ որ մերթ ընդ մերթ կրկնես ինձ զայն , որ ամեն  
բան մոոցընե շ կու տայ ինձ :

— Աւ ահա այդ բանը քեզ համարձակուեթիւն կու տայ ,  
Մաքսիմիլիէն , և ինձ խիստ քաղցր և միանդամայն խիստ թըշ-  
ուտու կեանք մը կը պատճառէ , այնպէս որ շատ անդամ  
ինքնիրենս կը հարցընեմ թէ այս երկուքէն որն ընտրեմ .  
մօրուիս խստութեամբը և իւր զաւկին կոյր նախամեծարու-  
թեամբը ինձ պատճառած տրտմութիւնը , թէ այն վտան-  
դալի երջանկութիւնը որ զքեզ տեսնելով կը վայելեմ :

— Ատանդ կ'ըսես , սիրելիս , միթէ այսպիսի անադորոյն  
և անիրաւ խօսք մը կրնաս ըսել : Ինձմէ աւելի հնազանդ  
դերի մը տեսած ես երբէք : Հրաման տուիր ինձ որ երբեմն  
խօսքս քեզ ուղղեմ , Աալանթին , բայց արդիւնցիր զիս ե-  
տեէդ դալու , ու ես հնազանդեցայ : Այս պարտիզին մէջ մըտ-  
նելու , այս դրան ետեէն քեզի հետ խօսելու , վերջապէս ա-  
ռանց զքեզ տեսնելու քեզի մօտ ըլլալու միջոցը գտնելէս 'ի  
վեր , միթէ այս վանդակներուն մէջէն շրջազգեստիդ ծայրին  
գտնել ուղեցի , ըսէ . միթէ փորձ մը ըրի՞ այս պատին վրայէն  
անցնելու , որ երկտասարդութեանս և ուժիս համար ծաղրելի  
արդեւք մ'է : Քու խստութեանդ համար ամենեւին յանդիմա-  
նութիւն մը չըրի , ամենեւին բարձրաձայն բաղձանք մը չյայտ-  
նեցի , և հին ժամանակի ասպետի մը պէս իմ խօսքս խստու-  
թեամբ բռնեցի : Խոստովանէ դոնէ այս ըսածս , որպէս զի  
զքեզ անիրաւ չկարծեմ :

— Ստոյգ է , ըսաւ Աալանթին՝ իւր նուրբ մատերուն մէ-  
կուն ծայրը տախտակներուն մէջէն անցընելով , որուն վրայ  
Մաքսիմիլիէն իւր շուրթերը յարեց . ստոյգ է որ դուն պար-  
կեշտ բարեկամ մ'ես . բայց վերջապէս քու օղտիդ զգաց-  
մամբը վարուեցար մինչև ցարդ , սիրելիդ իմ Մաքսիմիլիէն .  
դիտելի որ դերին ուրիշ պահանջումներ ըրած օրը  
պէտք էր որ ամեն բան կորսնցընէր : Եղբօր մը բարեկամու-  
թիւնը խոստացար ինձ , որ բարեկամ չունիմ , հայրս զիս

մտոցած է, մօրուս կը հալածէ զիս, և ուրիշ մխիթարութիւն չունիմ, բայց եթէ անշարժ, համր և սառած ծեր մը, որուն ձեռքը չկրնար ձեռքս սեղմել, որուն աչքը միայն կարող է հեաս խօսիլ, և որուն սիրտը իւր մնացեալ եռանդովը անտարակոյս ինձ համար կը բաբախէ: Բաղդին դառն հեղնութիւնն է այս, որ զիս ատելի և ինձմէ զօրաւորներուն զոհ կ'ընէ, և դիակ մը կու տայ իբր պաշտպան և բարեկամ: Ա՛հ, սառուղիւ, Մաքսիմիլիէն, վերստին կը կրկնեմ, խիստ թշուառ անձ մ'եմ, և իրաւունք ունիս զիս սիրելու ոչ թէ քեզի այլ ինձի համար:

— Աալանթին, ըսաւ երիտասարդը սրտի խորին յուզմամբ, չեմ ըսեր թէ աշխարհիս մէջ միայն զքեզ կը սիրեմ, քանզի քոյրս և աներս ալ կը սիրեմ, բայց այնպիսի քաղցր և հանդարտ սիրով մը, որ քեզի համար զղացած սիրոյս ամենեւին չնմանիր. երբ քեզի կը մտածեմ, արիւնս կ'եռայ, կուրծքս կ'ուռի և սիրտս կը յորդէ. բայց այս ոյժը, այս եռանդը և այս գերմարդկային զօրութիւնը միայն զքեզ սիրելու համար պիտի դորժածեմ մինչև այն օրը, որ քեզի ծառայելու համար զանոնք դորժածելու հրամայես ինձ: Ա. Ֆրանզ տ' Էրինէն տակաւին տարի մը բացակայ պիտի ըլլայ կ'ըսեն. տարուան մը մէջ ո՛րչափ նպաստաւոր դէպքեր կը բնան մեզ օղնութեան հասնիլ: Աւրեմն յուսանք միշտ, բարի և քաղցր է յուսալը: Այսու ամենայնիւ, Աալանթին, դուն որ անձնասիրութեանս համար կը մեղադրես զիս, ինչպէս վարուեցար դուն ինձի հետ, բայց եթէ ամօթխած Աստղիան իբր դեղանի և պաղ արձանը: Իմ անձնուիրութեանս, հնազանդութեանս և ժուժկալութեանս փոխարէն ինչ խոստացար ինձ. ոչինչ: Ի՞նչ շնորհեցիր. շատ քիչ բան: Ա. տ' Էրինէ քու նշանածիդ խօսքը կ'ընես, և օր մը անորը ըլլալու մըտմտութիդ վրայ կը հառաչես: Ըսէ, Աալանթին, սրտիդ մէջ բոլոր եղածը այս է: Երբ կեանքս քեզ կը յանձնեմ, սիրտս քեզ կը նուիրեմ, և սրտիս ամենէն աննշան բաբախումն անդամ քեզ կը զոհեմ, և երբ բոլորովին քուկդ եմ, երբ



ինքնիրենս կ'ըսեմ թէ զքեզ կորսնցուցած ժամանակս սլիտի մեռնիմ, և դուն չե՞ս սարսափիր երբ ուրիշինն ըլլալու դա-  
զափարը միաբոլ քերես: Ո՛հ, Աալանթին, Աալանթին, եթէ  
ես քու աեղդ ըլլայի, եթէ քու սիրելիդ դիտնայի, ինչպէս  
որ դուն ապահով ես որ ես զքեզ կը սիրեմ, արդէն հա-  
րիւր անգամ այս վանդակաց ցողերուն մէջէն ձեռքս կ'ան-  
ցընէի և ողորմելի Մաքսիմիլիէնի ձեռքը կը սեղմէի ըսելով.  
« Քուկդ եմ, միայն քուկդ եմ, Մաքսիմիլիէն, այս և միւս  
աշխարհին մէջ » — :

Աալանթին պատասխան չտուաւ, բայց երիտասարդը անոր  
հառաչելը և լալը տեսաւ:

— Ո՛հ, Աալանթին, Աալանթին, ըսաւ Մաքսիմիլիէն,  
մտցիր ըսած խօսքերս, եթէ անոնց մէջ զքեզ վերաւորող  
կէտ մը կայ:

— Ոչ, ըսաւ Աալանթին, իրաւունք ունիս, բայց չե՞ս տես-  
ներ որ ես դրեթէ օտար տան մը մէջ երեսի վրայ մնացած  
թշուառ արարած մ'եմ, ըստ որում հայրս դրեթէ օտարա-  
կան մ'է ինձ համար, և տասը տարիէ 'ի վեր օրէ օր, ժամէ  
'ի ժամ և վայրկեանէ վայրկեան իւր անտարբերութեամբը  
քաշած նեղութիւններս կ'աւելնան: Սակայն մէկը չտեսներ  
զանոնք, և ես քեզմէ զատ մէկու ըսած չեմ: Ըստ երևու-  
թից ամեն մարդ կը կարծէ թէ տան մէջ եղողները հետս ա-  
ղէկ կը վարուին և հետս սիրով են, սակայն իրօք ամենքն  
ալ թշնամի են: Ամեն մարդ կ'ըսէ թէ՛ « Պ. Ա. իլըֆօր խիտ  
և անաչառ բնութիւն մը ունենալուն՝ չկրնար իւր աղջկան  
հետ քաղցրութեամբ կենցաղավարուիլ. սակայն Աալանթին  
տիկին Ա. իլըֆօրը դսնէ երկրորդ մայր ստանալու երջանկու-  
թիւնը ունեցած է »: Ամեն մարդ խաբուած է, հայրս իւր  
անտարբերութեամբը զիս երեսի վրայ թողուցած է, և մօ-  
րուս իւր մշտնջենաւոր ժպիտին տակը պահած սոսկալի կա-  
տաղութեամբը կ'առէ զիս:

— Զքեզ ասէ, Աալանթին, և ինչպէս կրնայ ատել  
զքեզ:

— Ափսո՛ս, սիրելիս, ստիպուած եմ խոստովանելու ուր  
այս ատելութիւնը դրեթէ բնական զգացումէ մը կը յառա-  
ջանայ. տիկին Վիլլեֆոր իւր զաւակը իմ Էտուար եղբայրս  
չափազանց կը սիրէ :

— Ի՞նչ կը հետեւի ադկէ :

— Թող տարօրինակ շերտի եթէ ըսածիս մէջ ստալէի խըն-  
դիք մը խառնելու ըլլանք. գոնէ կարծեմ թէ իւր ատելու-  
թեան սլատճառը այս է : Եւ որովհետեւ ինքը ստակ չունի, և  
ես ընդ հակառակն մօրս կողմանէ հարուստ եմ, և այս հարս-  
տութիւնս պիտի կրկնասլատկուի Պ. և տիկին Սէն-Մէրանի  
հարստութիւններովը, որոնք օր մը պիտի ժառանգեմ, ես  
այնպէս կարծեմ թէ կը նախանձի ինձմէ : Եթէ դիտնայիք որ  
այս հարստութեանս կէսը տալով, պիտի կարենայի հօրս  
գլուկին պէս այս տանը մէջ հանդիստ ապրիլ, անտարակոյս  
այս վայրկեանիս պիտի տայի :

— Խեղճ Վալանթին :

— Այո՛, ինքզինքս շղթայուած և այնպիսի անդ՝ կ'ըզզամ,  
որ ինձ կ'երևի թէ այս կապերը զիս հաստատ բռնած են,  
և ես կը վախնամ զանոնք խորտակելու : Բայց յայսմանէ՛  
հայրս այնպիսի մարդ մը չէ, որուն հրամանները կարելի  
ըլլայ զանց ընել և անպատիժ մնալ. հայրս զօրաւոր է ինձի  
դէմ, կրնայ քեզի դէմ ալ, թաղաւորին դէմ իսկ ըլլալ,  
այնչափ անսողիւտ անցեալով մը և դրեթէ անդիմադրելի  
պաշտօնով մը պաշտպանուած է : Ո՛հ, Մաքսիմիլիէն, ստու-  
գիւ չեմ մրցիր անոր հետ, քանզի այս մրցման մէջ ինձի  
չափ քեզի համար ալ կը վախնամ որ չընկճիս :

— Բայց վերջապէս, Վալանթին, կրկնեց Մաքսիմիլիէն,  
ինչո՞ւ այդպէս կը յուսահատիս, և ապագայդ այդպէս միշտ  
տխուր կը նշմարես :

— Ո՛հ, բարեկամ, վասն զի անցեալին վրայ ապագաս կը  
կշռեմ :

— Այսու ամենայնիւ ես ալ ազնուականութեան կողմանէ  
երևելի մէկն եմ, ես ալ շատ կէտերու մէջ հաղորդակցու-

Թիւն ունիմ այն ընկերութեանց, որոնց մէջ դուք կ'ասլըիք: Գաղղիոյ մէջ երկու Գաղղիա եղած ժամանակը անցաւ. միապետութեան ամենէն երեւելի ընտանիքները Ասյսրութեան ընտանեաց մէջ հալեցան. նիղալի աղնուականութիւնը թընդանօթի աղնուականութեան հետ ամուսնացաւ: Ես ալ այս վերջին աղնուականութեան կը վերաբերիմ. բանակին մէջ գեղեցիկ ապաղայ մը ունիմ, սահմանեալ բայց անկախ հարստութիւն մը կը վայելեմ. վերջասպէս հօրս յիշատակը իբր խիստ պատուաւոր վաճառական մը յարողուած է մեր երկրին մէջ: Մեր երկրին մէջ կ'ըսեմ, Աւլանթին, վասն զի դուն ալ գրեթէ Մարսիլիայէն ես:

— Մարսիլիոյ խօսքը մի ըներ, Մաքսիմիլիէն, անոր անունը միայն բարի մայրս կը յիշեցընէ ինձ, այն հրեշտակը, որուն համար ամեն մարդ ցաւեցաւ. այն հրեշտակը, որ իւր կարճատև կենացը մէջ իւր աղջկան վրայ հսկելէն ետև՝ կը յուսամ որ երկնից իւր յաւիտենական կայանէն ալ զիս կը հսկէ տակաւին: Ա՛հ, եթէ մայրս կենդանի ըլլար, Մաքսիմիլիէն, վախնալու տեղ պիտի չունենայի. կ'ըսէի անոր որ զքեզ կը սիրեմ, և ան կը պաշտպանէր զքեզ:

— Ափսո՛ս, կրկնեց Մաքսիմիլիէն, եթէ մայրդ կենդանի ըլլար, ես զքեզ պիտի չճանչնայի անտարակոյս. վասն զի ինչպէս ըսիր, եթէ կենդանի ըլլար՝ երջանիկ պիտի ըլլայիր, և երջանիկ Աւլանթինը իւր մեծութեան բարձրութենէն արհամարհանօք ինձ պիտի նայէր:

— Ա՛հ, բարեկամ, դուն ես հիմա անիրաւը. . . . Բայց ըսէ ինձի. . . .

— Ի՞նչ կ'ուզես որ ըսեմ, կրկնեց Մաքսիմիլիէն տեսնելով որ Աւլանթին կ'երկմտէր:

— Ըսէ ինձ, շարունակեց աղջիկը, ժամանակաւ Մարսիլիա հօրդ և հօրս մէջ անհամաձայնութիւն մը տեղի ունեցա՞ւ:

— Այ, չեմ գիտեր. բայց հայրդ Պուրպոններուն ջերմ կողմնակից էր, և հայրս կայսեր անձնուէր մէկը, և այս կէտին մէջ իրարու անհամաձայն էին կարծեմ. բայց ինչո՞ւ այս հարցումը կ'ընես, Աւլանթին:

— Պատճառը ըսեմ քեզ, կրկնեց ծաղկահաս աղջիկը, վասն զի պէտք ես ամեն բան դիտնալ: Ճիշդ Պատուոյ Լէդէոնի պաշտօնատար կոչուելիլը լրագրի մէջ հրատարակուած օրն էր, երբ ամենքս ալ Պ. Նուարթիէ հաւիս սենեակն էինք, Պ. Տանկլարն ալ ներկայ էր. դիտես այն սեղանաւորը, որուն ձիերը անցեալ օր քիչ մնաց մայրս և եղբայրս պիտի սպաննէին: Այս պարոնները օրիորդ Տանկլարի ամուսնութեան վրայօք խօսեցած ժամանակնին՝ ես բարձր ձայնիւ լրագիրը հաւիս կը կարդայի. երբ քեզի նկատող պարբերութեան հասայ, զոր արդէն ես կարդացած էի, վասն զի առջի իրիկունէն այս բարի լուրը արդէն ինձ հաղորդեր էիր. երբ քեզի նկատող պարբերութեան հասայ կ'ըսեմ, խիստ ուրախ էի. . . բայց միանգամայն կը դողայի քու անունդ բարձրաձայն արտասանելու պարտաւորեալ ըլլալուս, և անտարակոյս քու անունդ պիտի չկարդայի, եթէ իմ լուսթեանս դէչ մեկնութիւն մը տալերնէն չվախնայի. ուստի բոլոր ոյժս ժողովեցի և կարդացի զայն:

— Սիրելիդ իմ Վալանթին:

— Քու անունդ արտասանելուս պէս՝ հայրս դուրսը դարձուց: Տե՛ս ինչպէս խենթ եմ. այնպէս համոզուած էի որ ամեն մարդ կայծակի հարուածէ զարնուածի պէս քու անունդ պիտի զարնուէին, և կարծեցի թէ հայրս և Պ. Տանկլարն իսկ սարսուացին. իսկ այս վերջինին համար պարզապէս խաբուեցայ:

« — Մորէլ, ըսաւ հայրս ճակատը կնճռելով, կեցիր արդեօք Մարսիլիոյ Մորէլի ընտանիքէն այն կատաղի սրնաբարդականներէն մէկն է այս, որ 1815ին մեզ այնչափ չարիք պատճառեցին:

« — Այո՛, պատասխանեց Տանկլար, կարծեմ իսկ որ հին նաւատէրին որդին է այս »:

— Ստոյգ կ'ըսես, ըսաւ Մաքսիմիլիէն, և ինչ պատասխանեց հայրդ, ըսէ, Վալանթին:

— Ա՛հ, սոսկալի խօսք մը որ չեմ համարձակիր կրկնելու:

— Ըսէ, հող չէ, կրկնեց Մաքսիմիլիէն ժպտելով:

« — Իրենց կայսրը, շարունակեց հայրս յօնքը կնճռելով, այս ամեն մոլեռանդները մէկ մէկ պաշտօնի կը հասցընէր, զանոնք թնդանօթի միս կ'անուանէր, և անոնք միայն այս անուան արժանի էին: Աւրախութեամբ կը տեսնեմ որ նոր կառավարութիւնը այս փրկարար սկզբունքը վերստին կը հաստատէ: Եթէ Ալճէրիան պահելը այս պատճառաւ չըլլար, ես ալ խնդակից պիտի ըլլայի կառավարութեան, թէև մեզի քիչ մը սուղի կը նստի »:

— Մի ամչնար բնաւ, սիրելիս, Պ. Ալիլըֆօրի ըսածներուն համար. բարի հայրս այս կէտին մէջ ամենեւին հօրդ չէր խոնարհեր և միշտ կը կրկնէր. « Ինչո՞ւ կայսրը, որ այնչափ մեծ դործեր կ'ընէ, դատաւորներէ և փաստաբաններէ բազկացեալ դունդ մը չկազմեր, և զանոնք միշտ առաջին կրակին չղրկեր »: Ար տեսնես, սիրելիս, երկու կողմնակիցները խօսուածքին ճարտարութեանը և դաղափարին քաղցրութեանը մէջ իրարու կը համաձայնին: Բայց Պ. Տանկլար ինչ պատասխանեց թաղաւորի դործակալին այս խօսքերուն:

— Ա՛հ, ան իւր մասնաւոր դաղտնի և ինձ համար բիրտ ծիծաղովը սկսաւ ծիծաղիլ. ետքը անմիջապէս ոտք ելան և մեկնեցան: Այն ատեն միայն տեսայ որ բարի հաւս խիստ այլայլած էր: Պէտք եմ ըսել, Մաքսիմիլիէն, որ միայն ես կը դուշակեմ այն կաթուածահարին սրտի զգացումները. տեսայ որ իւր առջին եղած խօսակցութիւնը (խեղճ հաւս, անոր առջևը այսպէս խօսքեր ընելու ակնածութիւն չեն ըներ) մեծ ազդեցութիւն ըրեր էր, ըստ սրում իւր առջևը պայտեր համար դէշ խօսեր էին, և ինչպէս որ կ'երևէր՝ ինքն ալ պայտեր մոլեռանդներէն մէկն էր:

— Իրօք՝ Պ. Նուարթիէի անունը պայտերութենէ ճանչցուած անուններէն մէկն էր. ծերակուտի անդամ էր, և ինչպէս որ դիտես կամ ոչ, Աերանորոգութեան ժամանակ տեղի ունեցած պոնաբարդական դրեթէ ամեն ապստամբութեանց մէջ դանուեցաւ:

— Այո՛, երբեմն ասոնց վրայ կամաց ձայնիւ խօսե լինն լսած եմ, ու զարմանքս դրաւած է որ հաւս պոնաբարդական ըլլայ և հայրս թաղաւորական. վերջապէս անոր դարձայ, ու ան իւր նայուածքովը օրադիրը ցուցուց:

« — Ի՞նչ ունիս, բարի հաւս, ըսի. դճճ ես լսածէդ »:

Գլխովը նշան ըրաւ թէ այո՛:

« — Հօ՞րս ըսածներէն », — հարցուցի անոր.

Նշան ըրաւ թէ ոչ:

« — Տանկլարի՞ ըսածներէն »:

Գարձեալ նշան ըրաւ թէ ոչ:

« — Ուրեմն Պ. Մորէլ Պատուոյ Լէդէոնի պաշտօնատար ըլլալէն », չհամարձակեցայ Մաքսիմիլիէն ըսելու —:

Նշան ըրաւ թէ այո՛:

— Ար հաւատաս, Մաքսիմիլիէն, Պատուոյ Լէդէոնի պաշտօնատար կոչուելուդ վրայ դո՛հ էր, թէև չէր ճանչնար զքեզ: Գուցէ անոր կողմէն խենթութիւն մը ըլլայ այս, վասն զի կ'ըսեն թէ դէպ 'ի մանկութիւն կը վերադառնայ. սակայն անոր այո՛ ըսելը ինձ քաղցր երեցաւ:

— Զարմանալի բան է այդ, ըսաւ Մաքսիմիլիէն մտածելով. ուրեմն հայրդ զիս կ'ատէ, իսկ ընդհակառակն հաւդ. . . : Այս կողմնակիցներուն սէրն ու ատելութիւնը տարօրինակ բաներ են շիտակը:

— Լ.ՈՒՔ, ըսաւ յանկարծ Վալանթին. պահուէ՛, փախիր. մարդ կու դայ —:

Մաքսիմիլիէն անմիջապէս բաճը ձեռքը առաւ, և սկսաւ անխնայ առուոյտները բաճել:

— Օրիորդ, օրիորդ, պոռաց ձայն մը ծառերուն ետեւէն. տիկին Վիլլեֆօր զքեզ ամեն կողմ կը փնտռէ և կը կանչէ. սրաճը այցելու մը եկած է:

— Այցելու մը, ըսաւ Վալանթին շփոթած, և ո՞վ է այն:

— Մեծ պարոն մը, իշխան մը, ինչպէս որ կ'ըսեն, Պ. կոմս Մօնթէ-Քրիսթօն:

— Կու դամ —, ըսաւ Վալանթին բարձր ձայնիւ:

Մօնթէ-Քրիսթոյի անունը վանդակասլատին միւս կողմը եւ զող անձին սարսուռ մը սլատճառեց, և Վալանթինի կո- քսա- քսա ուր ամեն տեսութեանէ ետքը իբրև ողջոյն մը կը դործածուէր — Չարմանալի բան, ըսաւ ինքնիրեն Մաքսիմիլիէն՝ իւր բահին վրայ մտախորհ կռթրնելով, Մօնթէ-Քրիսթոյ կոմսը քերկեց կը ճանչնայ Պ. Վիլլեֆօրը:



ՉԼՈՒԹ ԺԳ.

ԹՈՒՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

**Ի**ՐՕՔ Մօնթէ-Քրիսթոյ կոմսն էր, որ թա- դաւորի Պ. դործակալին իրեն ըրած այցելութեան փոխարէնը հատուցա- նելու նպատակաւ տիկին Վիլլեֆօրի եկեր էր, և բոլոր տան մէջ իրար- անցում մը սլատճառեր էր:

Տիկին Վիլլեֆօր, որ կոմսին դալը իմացուցած ժամանակ- ան առանձին սրահին մէջ կը գտնուէր, իսկոյն հարուարը

կանչեց որ իւր շնորհակալութիւնները կոմսին յայտնէ, և տղան, որ երկու օրէ 'ի վեր այն մեծանուն անձին անունը անդադար լսեր էր, վաղեց եկաւ ոչ թէ իւր մօրը հնազանդելու կամ կոմսէն շնորհակալ ըլլալու համար, այլ իւր հետաքրքրութիւնը լեցընելու և քանի մը դիտողութիւններ ընելու, որոնք իւր խեղկատակութեանց մէջ դործածել կարենայ, և մայրը սովորաբար այս խօսքը կ'ըսէր անոր.

« Ո՛հ, չար զաւակ, բայց իւր մտացիութեանը համար պէտք է որ ներեմ անոր »:

Առաջին սովորական քաղաքավարական խօսքերէն ետև՝ կոմսը Պ. Աիլըֆօրը հարցուց:

— Էրիկս դեռ հիմա մեկնեցաւ դիւանագայրին տունը ճաշելու համար, պատասխանեց ծաղկահաս կինը. ապահով եմ որ զձեզ տեսնելու երջանկութենէն զրկուած ըլլալուն համար շատ պիտի ցաւի —:

Կոմսէն առաջ եկող երկու այցելուներ, որոնք աչքերնին անոր վրայ յարած ապշեալ մնացեր էին, քաղաքավարութեան և հետաքրքրութեան պահանջածին չափ ժամանակ հոն մնալէն ետև՝ մեկնեցան:

— Աալանթին քոյրդ ի՞նչ կ'ընէ, ըսաւ տիկին Աիլըֆօր Էտուարին, թող իմաց տան որ դայ, որպէս զի պատիւ ունենամ Պ. կոմսին ներկայացընել զան:

— Աղջիկ մը ունիք, տիկին, հարցուց կոմսը. բայց տակաւին փոքր ըլլալ պէտք է:

— Պ. Աիլըֆօրի աղջիկն է, պատասխանեց կինը, առջի ամուսնութենէն բարձրահասակ և գեղեցիկ աղջիկ մ'է:

— Բայց մեղամաղձոտ, ընդմիջեց Էտուար՝ իւր գլխարկը զարդարելու համար գեղեցիկ պատկայի մը պոչին. փետուրները քաշելով, որ իւր ոսկեզօծ դադարին վրայ ցաւելով կը ճչէր:

— Լուէ՛, Էտուար —, ըսելու բաւականացաւ տիկին Աիլըֆօր: Ետքը կոմսին դառնալով՝

— Այս փոքր չար տղան դրեթէ իրաւունք ունի, և շատ



անդամ իմ ցաւելով ըսածս կը կրկնէ . վասն զի որչափ և կըրցածնուս չափ կը ջանանք օրիորդ ԱւիլըՓօրը զբօսցընելու , այնչափ տխուր և լուսկաց բնութիւն մը ունակացուցած է , որ շատ անդամ զեղեցիութեան կը մնասէ : Բայց նայէ , Էստուար , ինչո՞ւ չդար :

— Վասն զի չեղած տեղը կը փնտոեն զան :

— Եւ ո՞ւր կը փնտոեն :

— Նուարթիէ հաւին սենեակը :

— Եւ կը կարծես որ հոն չէ :

— Ոչ, ոչ, ոչ, ոչ, ոչ, հոն չէ , պատասխանեց Էստուար երդելու եղանակաւ մը :

— Եւ ո՞ւր է , ըսէ եթէ դիտես :

— Մեծ շաղանակենիին տակն է — , շարունակեց չար տղան՝ առանց իւր մօրը ձայնին ականջ դնելու կենդանի ճանճեր ներկայացընելով պապկային , որ այն որսի կերակուրէն խիստ ախորժող կ'երևէր :

Տիկինը ձեռքը երկնցոց զանդակը հնչեցընելու և վալանթիինի դանուած տեղը սենեկապանուհւոյն իմացընելու համար , երբ օրիորդը ներս մտաւ :

Երօք ախար երևոյթ մը ունէր , և զան ուշադրութեամբ դիտողը կրնար անոր աչաց մէջ արտասուաց հետքեր նշմարել :

Վալանթիին օրիորդը , որ առանց ճանչընելու պատմութեան արողութեամբը մեր ընթերցողներուն ներկայացուցինք , բաց շաղանակադոյն մաղերով , մութ կապոյտ աչքերով , տառն և ինը տարեկան բարձրահասակ և նուրբ աղջիկ մ'էր . իւր դիմաց վրայ ախրութիւն մը կ'երևէր , բայց այնպիսի ազնուութիւն մը նկարուած էր , որ իւր մօրը պատկերը կը ներկայացընէր . իւր սպիտակ և նուրբ ձեռքերը , մարդարտադոյն պարանոցը և անցաւոր դոյներով այտերը առաջին նայուածքով կը ներկայացընէին զինքը այն գեղանի Անդղիացի աղջիկներէն մէկը , զորոնք բանաստեղծները կարապի նմանեցուցած են :

Օրիորդը ներս մտնելով , և իւր մօրը քով այն օտարա-

կանը տեսնելով, որուն վրայ արդէն շատ անդամ խօսուելը չսիր էր, առանց նորատի աղջկան մը սլէս նազելու և աչքերը խոնարհելու բարեւոյ զան այնպիսի շնորհալի կերպով, որ կոմսին ուշադրութիւնը կրկնապատկեց:

Մօնթէ-Քրիսթօ ոտք ելաւ:

— Օրիորդ Ախլըֆօր, իմ աղջիկս է, ըսաւ տիկին Ախլըֆօր բազմոցին վրայ հակելով և ձեռքովը Աալանթինը ցուցընելով:

— Եւ պարոնը Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, Չինու թաղաւորը, Գոչէնչինի կայսրն է —, ըսաւ փոքր ծաղրածուն իւր քրոջը նայելով:

Այս անդամ տիկին Ախլըֆօր ամչցաւ և քիչ մնաց որ տան պատիժն եղող այս մանկան պիտի բարկանար. սակայն կոմսը ընդհակառակն ժպտեցաւ և քաղցրութեամբ մը տղուն երեսը նայեցաւ, որով մօրը ուրախութիւնը և յուզմունքը կատարեալ եղան:

— Բայց, տիկին, կրկնեց կոմսը խօսակցութիւնը նորոգելով և փոփոխակի տիկին Ախլըֆօրի և Աալանթինի նայելով, արդեօք զձեզ և օրիորդը արդէն տեղ մը տեսնելու պատիւն ունեցած չե՞մ: Հիմա անոր վրայ կը մտածէի, և երբ օրիորդը ներս մտաւ, իւր կերպարանքը շփոթ յիշողութեանս աւելի լոյս մը տուաւ. ներեցէք հարցմանս:

— Հաւանական չէ ըսածնիդ, պարոն, օրիորդ Ախլըֆօրը ընկերութեանց մէջ դանուելը շատ չսիրեր, և մենք շատ քիչ անդամ դուրս կ'ելնենք, ըսաւ կինը:

— Կարծեմ թէ օրիորդը, ինչպէս և զձեզ և այս ազնիւ զաւակնիդ ընկերութեան մը մէջ տեսայ: Այսու ամենայնիւ, Բարիզեան ընկերութիւնները բոլորովին անծանօթ են ինձ, վասն զի, կարծեմ թէ արդէն պատիւ ունեցայ ձեզ ըսելու, քանի մը օր է միայն որ Բարիզ կը դտնուիմ: Ոչ, եթէ կը ներէք ինձ որ միտքս բերեմ . . . կեցիք . . . —:

Կոմսը ձեռքը ճակատին վրայ դրաւ՝ որպէս թէ իւր ամեն յիշողութիւնները կենդրոնացընելու համար:

— Այլ, Բարիդի մէջ չէ . . . , այլ . . . չեմ դիտեր . . . :  
Ինձ այնպէս կ'երևի թէ պայծառ արևով օր մ'էր և կրօնա-  
յին տօնախմբութիւն մը կը կատարուէր . . . : Օրիորդը ձեռքը  
ծաղիկներ բռնած էր , զաւակնիդ պարտէզի մը մէջ դեղեցիկ  
սիրամարդի մը ետեէն կը վազէր , դուք ալ , տիկին , ձողա-  
բարձ հովանոցի մը աակը կը դտնուէիք : Օղնեցէք ինձ , տի-  
կին . այս ըսածներս բան մը չե՞ն յիշեցըներ ձեզ :

— Ստուգիւ ոչ , պատասխանեց տիկին Ալլըֆօր . սակայն ,  
պարոն , ինձ այնպէս կ'երևի որ եթէ ես ձեզ տեղ մը հան-  
դիպած ըլլայի , անշուշտ պիտի յիշէի :

— Պարոն կոմսը զմեզ դուցէ Իտալիա տեսած է , ըսաւ  
Վալանթին երկշտութեամբ :

— Իրօք , կարելի է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . Իտալիա  
ճամբորդութիւն ըսած էք , օրիորդ :

— Տիկինը և ես երկու տարի առաջ Իտալիա դայինք :  
Բժիշկները կուրծքիս համար կը վախնային և ինձ պատուի-  
րեցին որ Նարոլի օդափոխութեան երթամ . և մե՛նք Պոլոնեէն ,  
Բէրուզէն և Հոռմէն անցանք :

— Շիտակ է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ որպէս թէ այս պարզ  
տեղեկութիւնը բաւական եղած ըլլար իւր յիշողութիւնը որո-  
շելու : Ճիշդ Բէրուզի մէջ , Տեառն մարմնոյ տօնին օրը , Ճա-  
նասարհորդաց պանդոկին պարտիզին մէջ բաղդը զմեզ հոն  
միացուց , զձեզ , օրիորդը , զաւակնիդ և զիս , և զձեզ հոն  
տեսնելու պատիւն ունենալս կը յիշեմ :

— Բէրուզը , Ճանասարհորդաց պանդոկը և տօնախմբու-  
թիւնը հոն կատարելնիս շատ ազէկ կը յիշեմ , պարոն , ը-  
սաւ տիկին Ալլըֆօր . սակայն որչափ կը մտածեմ , իմ կարճ  
յիշողութեանս վրայ կ'ամչնամ , և չեմ յիշեր որ զձեզ տես-  
նելու պատիւն ունեցած ըլլամ :

— Չարմանալի բան , ըսաւ Վալանթին իւր դեղեցիկ աչ-  
քերը Մօնթէ-Քրիսթոյի վրայ վերցընելով , ես ալ չեմ յիշեր :

— Ես կը յիշեմ , ըսաւ Էտուար :

— Քիչ մը օղնեմ ձեզ , տիկին , կրկնեց կոմսը , նոյն օրը

խիստ տաք էր . ձիերու կ'ըստասէիք, որոնք տօնախմբու թեան պատճառաւ կ'ուշանային դալու : Օրիորդը պարտիզին ներսերը հեռացաւ, զաւակնիդ ալ թռչիւնի մը ետեէն վազելով աներևոյթ եղաւ :

— Բռնեցի զայն, չե՛ս դիտեր, մայր իմ, ըսաւ Կատար և անոր պոչէն երեք փետուր փրցուցի :

— Իսկ դուք, տիկին, ձողաբարձ հովանոցին տակը մնացիք . չէ՞ք յիշեր արդեօք որ երբ քարէ նստարանին վրայ նստած էիք, և երբ ինչպէս որ ըսի՝ օրիորդ Աիլըֆօր և ձեր զաւակը ձեզմէ բաժնուեցան, երկար ժամանակ մէկուն հետ խօսակցեցաք :

— Այո՛, այո՛, ըսաւ կինը կարմրելով, կը յիշեմ, երկար ժամանակ վերարկուով փաթթուած մարդու մը . . . կարծեմ բժշկի մը հետ :

— Ճիշդ այդպէս, տիկին, այն մարդը ես էի . տասն և հինգ օրէ 'ի վեր այն պանդոկը կը բնակէի . իմ սենեկապանս տենդէ և պանդոկապետը դալուկէ բժշկեցի, այնպէս որ իբր մեծ բժիշկ մը կը նկատէին զիս : Երկար ժամանակ Պէռուժէնի, Ռաֆայէլի, սովորութեանց, հազուստներու և ուրիշ զանազան նիւթերու վրայ խօսեցանք :

— Ստոյգ է, կը յիշեմ, ըսաւ աշխուժիւ տիկին Աիլըֆօր անհանգստութեամբ մը :

— Ձեր ըրած մանրամասն խօսակցութիւնները չեմ յիշեր, տիկին, կրկնեց կոմսը կատարեալ հանդարտութեամբ, բայց կը յիշեմ որ դուք ալ իմ վրայօքս ամենուն ունեցած սխալման մասնակից ըլլալով, օրիորդ Աիլըֆօրի առողջութեանը վիճակին վրայ խորհուրդ հարցուցիք :

— Այսու ամենայնիւ, պարոն, իրօք դուք բժիշկ էիք, ըսաւ տիկին Աիլըֆօր, ըստ որում հիւանդներ բժշկեցիք :

— Մոլիէր կամ Պոմարշէ պիտի երաշխաւորէին զձեզ, տիկին, որ բժիշկ չըլլալու համար՝ հիւանդները բժշկողը ետ չէի, այլ հիւանդները ինքնին բժշկուեցան . բաւական կը համարիմ ըսել որ քիմիաբանութիւնն ու բնական դիտու-

Թիւնները բաւական հատարելապէս բայց իբրև զանոնք սի-  
րող միայն սորված եմ . . . կը հասկընա՞ք — :

Այս միջոցիս ժամացոյցը վեցը զարկաւ :

— Ժամը վեցն է , ըսաւ տիկին Ախլըֆօր յայտնապէս այ-  
լայլեալ . Աալանթին , չէս երթար նայելու որ հաւդ ճաշ-  
լու պատրանս է — :

Աալանթին ոտք ելաւ , և կոմսը բարեւելով մեկնեցաւ ա-  
ռանց խօսք մը արտասանելու :

— Ըսէք կ'աղաչեմ , տիկին , արդեօք ինձ ՚հ համար օրիորդ չ  
կը ճամբէք , ըսաւ կոմսը Աալանթինի մեկնելէն ետև :

— Աչ , ամենեւին , կրկնեց աշխուժիւ ծաղկահաս կլինը , բայց  
Պ . Նուարթիէի ճաշին ժամը հասած է : Գիտէք , պարոն ,  
թէ ամուսնոյս հայրը ինչ աւաղելի վիճակի մէջ կը գտնուի :

— Այո՛ , տիկին , Պ . Ախլըֆօր անոր վրայ խօսեցաւ ինձ .  
կաթուածահար է կարծեմ :

— Այո՛ , պարոն , ողորմելի ծերունին բոլորովին շարժումէ  
զրկուած է , անոր մարդկային դործարանաց մէջ միայն հո-  
դին կենդանի մնացած է , և շիջածերձ ճրագի նման դժգու-  
նեալ և դողդոջիւն է : Բայց ներեցէք , պարոն , մեր տնային  
անբաղդութեանը վրայ ձեզ խօսելուս . յաջողակ քիմիադէտ  
մ'էք ըսած ժամանակնիդ զձեզ ընդմիջեցի :

— Այդպէս ըսել չուզեցի , տիկին , պատասխանեց կոմսը  
ժպտով մը . այլ ընդ հակառակն թէ՛ քիմիաբանութիւնը  
սորված եմ , վասն զի մասնաւորապէս Աբեելք ասրելու ո-  
րոշած ըլլալովս , ուզեցի Միհրդատ Թաղաւորին օրինակին  
հետեւիլ :

— Միհրդատ , Թաղաւոր Պոնտօսի , ըսաւ անհանդարտ  
աղան՝ գեղեցիկ նկարատեսորին մէջէն սլատկերնները պատռե-  
լով , ան որ ամեն առտու իւր նախաճաշը սերտվ խառն թոյ-  
նով կը կատարէր :

— Դ՛տուար , չար զաւակ , սրուաց տիկինը իւր զաւակին  
ձեռքէն սրատառտած տետրը յափշտակելով , անտանելի ես ,  
և զմեզ անհանգիստ կ'ընես : Հանդարտ թող զմեզ , և դնա

Վալանթին քրոջդ հետ հուարթիէ բարի հաւիդ քովը :

— հկարատե՛տրը . . . ըսաւ Էտուար :

— Ի՞նչ պիտի ընես հկարատե՛տրը :

— հկարատե՛տրը կ'ուզեմ :

— Ինչո՞ւ պատկերները պատուեցիր :

— Ինչու որ զուարճութիւն կ'ըզգամ :

— Գնա՛ կ'ըսեմ, դնա՛ :

— Մինչև որ հկարատե՛տրը չտաս՝ չեմ երթար, ըսաւ տղան մեծ թեւթոռի մը վրայ տեղաւորուելով, և չէր ուզեր անկէ ելնել :

— Ահա՛ առ, բայց զմեզ հանդիստ թող —, ըսաւ տիկին Վիլլեֆոր և հկարատե՛տրը Էտուարին տուաւ, որ իւր մօրը ընկերանալով մեկնեցաւ :

Կոմսը աչքը տիկին Վիլլեֆորի վրայէն չվերցուց :

— Տեսնե՞նք, մրմնջեց, անոր ետեէն դուռը պիտի դոցէ՞ — :

Տիկին Վիլլեֆոր տղուն ետեէն դուռը մեծ զգուշութեամբ դոցեց :

Կոմսը չտեսնել ձեացուց :

Կինը դառնալով իւր բոլորտիքը վերջին անգամ մ'ալ հայելէն ետե՛ վերստին եկաւ իւր թեւթոռին վրայ նստաւ :

— հերեցէք ինձ, դիտողութիւն մը ընեմ, տիկին, ըսաւ կոմսը այն պարզմտութեամբ որ մեզ ծանօթ է, այն զուարճացուցիչ տղուն հետ խստութեամբ կը վարուիք :

— Պէտք է որ այնպէս վարուինք, պարոն, պատասխանեց տիկին Վիլլեֆոր մօր մը ճշմարիտ ձայնովը :

— Կոռնելիոս հեպոտին մէջ կարգացած պիտի ըլլայ Միհրդատ թաղաւորին վրայ ըսածը, և իւր պատմութիւնն ըրած ատեն ընդմիջեցիք զան. աս կը ցուցընէ թէ իւր ուսուցիչը ժամանակը կորսնցուցած չէ, և ձեր որդին իւր տարիքին նայելով բաւական յառաջացեր է :

— Իրօք, պարոն կոմս, պատասխանեց մայրը մեղմով շողորթութեամբ, սորվելու մեծ դիւրութիւն ունի, և ի՞նչ որ ուզէ՛ կը սորվի : Միայն պակասութիւն մը ունի, կ'ուզէ միշտ

կըր կամքը կատարել, քայց անոր ըսածին դարով, կը հաւատամք, սրարոն կոմս, որ Միհրդատ այն զոուշութիւնները դործածէ, և այն զոուշութիւնները կրնան ազդու ըլլալ:

— Այնչափ կը հաւատամ, տիկին, որ ես իսկ դործածած եմ նարոյի, Բալէրմոյի և Չմիւռնիոյ մէջ չթռնաւորութիւն համար, այսինքն՝ երեք այն քաղաքներուն մէջ, ուր առանց այս զոուշութեան ապահով չէ մարդ:

— Եւ այդ միջոցը յաջողեցաւ:

— Կատարելասէս:

— Այո՛, ստոյգ է, կը յիշեմ որ Բէրուզի մէջ ասոր նման բան մը արդէն պատմեցիք ինձ:

— Իրան կ'ըսէք, ըսաւ կոմսը կեղծ զարմանքով մը, ամենեին չեմ յիշէր ես:

— Ես կը հարցընէի թէ թոյնը թէ հարաւային և թէ հիւսիսային երկիրներու մարդոց հաւասարասէս և նոյն զօրութեամբ կ'ազդէ, և դուք պատասխանեցիք ինձ թէ հիւսիսային ժողովրդոց պաղ և աւշալից կազմութիւնը հարաւայնոց տաք և ազդու բնութեան չափ յարմարութիւն չունի:

— Ստոյգ է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. Ռուսեր անսայ, որոնք առանց միասուելու այնպիսի բոյսեր կ'ուտէին, զորոնք նարոյի մը կամ Արաբացի մը ուտելով պիտի մեռնէր:

— Աւրեմն դուք կը կարծէք որ մեր մէջը աւելի ապահովասէս կը յաջողի քան թէ Արևելքի մէջ, և մեր մառախուղին և անձրևներուն մէջ մարդ մը թոյնի աւելի դիւրութեամբ կը սովորի քան թէ աւելի տաք կլիմայի մէջ: Սակայն ինչպէս պէտք է սովորիլ, և կամ դուք ինչպէս սովորեցաք:

— Շատ դիւրին բան մ'է. ենթադրենք թէ ձեզի դէմ դործածուելիք թոյնին ինչ ըլլալը դիտէք . . . օրինակի համար՝ ենթադրենք թէ բլեկնի թոյն է այն, առջի օրը պէտք է որ անկէ մէկ հազարակրամ<sup>(1)</sup>, և երկրորդ օրը երկու հա-

(1) Հազար կրամը մէկ քիլօ է, որ Տաճկաստանի 312 ողջ տրամին կը համարտաստանէ, մէկ հարիւրակրամը (centigramme) մէկ կրամին հարիւրորդ մասը, և հազարակրամը (milligramme) հազարերորդ մասն է:

զարակրամ առնուք, այսպէս տասը օրէն հարիւրակրամ մը առած պիտի ըլլաք և հազարակրամ մը ևս աւելցընելով, քրսան օրէն՝ երեք հարիւրակրամ առած պիտի ըլլաք, այսինքն այնպիսի չափ մը, որ ձեզ պիտի չմնասէ, բայց շտովորող անձի մը համար խիստ վտանգաւոր կընայ ըլլալ. վերջասպէս ամիս մը ետքը՝ մի և նոյն շիշէն միատեղ ջուր խմելով, զայն խրմող անձը կ'ըսպաննէք, և դուք՝ այն ջուրին հետ խառն թոյն մը ըլլալուն համար՝ պարզ անհանդստութենէ զատ ուրիշ բան չէք զդար:

— Ուրիշ անդեղայ մը չէք ճանչնար:

— Ոչ:

— Միհրդատայ պատմութիւնը շատ անգամ կարգացած էի, ըսաւ տիկին Աիլըֆօր մտախոհ, և զայն առասպել մը կարծած էի:

— Ոչ, տիկին, պատմութեան սովորութեան հակառակ ճըշմարտութիւն մ'է այն. բայց ձեր ինձ ըսածը, տիկին, և ձեր հարցուցածը կամածին խնդրի մը հետեւութիւնը չէ, ըստ որում արդէն երկու տարի է որ նոյն հարցումները ինձ ըրիք, և կ'ըսէք թէ երկար ժամանակէ 'ի վեր Միհրդատի պատմութիւնը ձեր միտքը զբաղած է:

— Ստոյգ է, պարոն, երիտասարդութեանս երկու սիրելի ուսմունքն էին բուսաբանութիւնը և հանքաբանութիւնը, երբ իմացայ որ բժշկական խոտերուն դործածութիւնը շատ անգամ ժողովրդոց ամբողջ պատմութիւնը և Արևելքի մարդոց ամբողջ կեանքը կը մեկնէ, ինչպէս և ծաղիկները՝ անոնց սիրահարական խորհուրդները, ցաւեցայ թէ ինչո՞ւ ես մարդ չէի, որ Ֆլամէլ մը, Ֆոնթանա մը կամ Գասպանի մը ըլլայի:

— Արևելքիք Միհրդատայ սէս շէն բաւականանար թոյները զրահի տեղ դործածել, այլ դաշոյնի տեղ ալ կը դործածեն զայն. անոնց դիտութիւնը իրենց ձեռքը ոչ միայն պաշտպանողական, այլ և խիստ շատ անգամ յարձակողական զէնք մ'է. առաջինը իրենց բնական նեղութեանց դէմ կը ծառայէ, իսկ երկրորդը իրենց թշնամեաց դէմ. աբիոնով, մորմենիով, բա-



լատարդով և ուրիշ բոյսերով կը քնացրնեն և երջանիկ երազներ կը պատճառեն: Մէկը շիայ Եղիստացի, տաճիկ կամ յոյն կանանց մէջ, դորոնք դուք պարզամիտ կիներ կը կոչէք, որ քիմիաբանութեան մէջ բժիշկ մը չղարմացրնէ և հոգեբանութեան մէջ խոստովանահայր մը սարսափեցրնել չը խոնայ:

— Ստոյգ կ'ըսէք, ըսաւ Թիկին Ալիլիֆօր, որուն աչքերը այս խօսակցութենէն տարօրինակ աշխուժութեամբ կը փայլէին:

— Այո՛, Թիկին, շարունակեց Մօնթէ-Քրիսթօ, Արեւելքի ամեն դաղանի դործողութիւնները, սէր նշանակող բոյսէն մինչև մահ պատճառող տունկը, միտքը յափշտակող օշարակէն մինչև մարդս ՚ի գերեզման իջեցրնող ըմպելիքը, այս կերպով կը յօդուին և կը լուծուին: Մարդկային, նիւթական և բարոյական բնութեան մէջ որչափ մտային հաճոյք և տարօրինակ դործեր կան, այնչափ թոյներու բաղմազդի տեսակներ կը դանուին, և կրնամ իսկ ըսել որ այս քիմիադէաները իրենց արուեստը սիրահարութեան կամ վրէժխնդրութեան դործոյ մէջ դործածել քաջ դիտեն:

— Բայց, պարոն, կրկնեց ծաղկահաս կիներ, ուրեմն այն Արեւելեան ընկերութիւնները, որոնց մէջ ձեր կենաց մէկ մասը անցուցած էք, իրենց գեղեցիկ երկրէն եկած առասպելներուն պէս երեակայական են, ուրեմն անոնց մէջ մաքու մը անպատիժ կրնայ անհետ ըլլալ. ուրեմն Պ. Աալանի (1) Պաղտատն ու Պասրան ստոյգ են: Ուրեմն ընկերութիւնները կառավարող ու սահմանադրող սուլթաններն ու վէզիրները իրօք Հարուն-ալ-Նէշիաներ և Ճեաֆէրներ են, որոնք թունաւորողի մը ոչ միայն կը ներեն, այլ և առաջին պաշտօնեայ կ'ընեն զան, եթէ անոր յանցանքը հնարադիտութեամբ դործուած ըլլայ, և անոր պատմութիւնը ոսկի գրերով գրուակը կու տան, որպէս զի իրենց ձանձրութեան ժամերը գրօսնուն:

— Աչ, Թիկին, երեակայական մարդիկ չկան, և ոչ իսկ Արեւելքի մէջ. հոն ալ ուրիշ անուամբ և ուրիշ հաղուստով

(1) Հազար և մէկ գիշերներուն հեղինակը:

ծայտեալ ոստիկանութեան դործակալներ, դասաւուրներ, թաղաւորի դործակալներ և քննիչներ կան: Յանցաւորները կը կախեն, կը վիխատեն և ցիցի վրայ կը դամեն հաճոյական կերպիւ. սակայն յանցաւորները իրենց խորամանկութեամբը ոստիկանութեան ընթացից հետքը դաւան և խելացի միջոցներով իրենց դործոց յաջողութիւնը ասպահովուցին: Մեր մէջը՝ ոխակալութեան կամ ընչասիրութեան զոհեղող անմիտ մը, որ թշնամի մը կամ մեծ ազդական մը սպաննել կ'ուզէ, դեղավաճառի խանութը կ'երթայ, այնպիսի կեղծ անուն մը կը կրէ որ իւր բուն անունէն աւելի աղէկ կը ճանչցուի, և հինգ կամ վեց կրօմ մկնդեղ կը դնէ՝ ստաճառելով որ մուկերը չին թողուր զինքը որ քնանայ. եթէ խիստ խորամանկ է, հինգ կամ վեց դեղավաճառներու կ'երթայ, որով հինգ կամ վեց անգամ աւելի աղէկ կը ճանչցուի. երբ ուզած դեղը կ'ըստանայ՝ իւր թշնամիին կամ ազդականին այն չափով մկնդեղ կը մատակարարէ, որ կրնայ վիթխարի փիղ մը կամ ոնդեղջիւր մը սատակել, և թունաւորուողը այնպիսի ճշիւններ կը հանէ որ բոլոր թաղը ոտք կը հանէ: Այն ատեն ոստիկանութեան դործակալներու և զինակիրերու խուռն բաղմութիւն մը կը հասնին, բժիշկ մը կը կանչեն. բժիշկը մեռեալին փորը կը բանայ, և անոր ստամոքսին ու աղիքներուն մէջ մկնդեղը կը գտնէ: Հետեւեալ առտու՝ հարիւր օրադիրեր զոհեալին և թունաւորողին անունովը դործը կը սպասեն: Նոյն իրիկունը դեղավաճառը կամ դեղավաճառները կու գան ըսելու թէ՝ « Ես ծախեցի մկնդեղը այն սարոնին »: Այն ատեն անմիտ դաւաճանը կը բռնուի, կը բանտարկուի, հարցուփորձ կ'ըլլայ, իրարու դիմացը կը բերուի, կը շփոթի, կը դատասպարտուի, և կը դըլխատուի. և կամ եթէ մեծանուն կին մ'է, մշտնջենաւոր բանտարկութեան կը դատասպարտուի: Ահա ձեր Հիւսիսայինները քիմիաբանութիւնը ինչպէս կը հասկընան, տիկին: Սակայն պէտք է խոստովանիլ որ Տէրիւ այս մասին աւելի յաջող էր:

— Ի՞նչ ընեն, պարոն, ըսաւ աիկինը ծիծաղելով, կըր-  
ցածնին կ'ընեն. ամեն մարդ Մէտիսիներուն կամ Պօրճիա-  
ներուն գաղանիքը չունի:

— Հիմա, ըսաւ կոմսը ուսերը բարձրացընելով, կ'ուզէք  
այս անպատեհութեան պատճառը ըսեմ ձեզ: Ասան զի ձեր  
թատրոններուն մէջ որչափ սր կըրցայ դատել՝ դո՛նէ խաղցուած  
կտորները կարդալով, ամեն մարդ միշտ կը տեսնէ որ դերա-  
սանք սրուալի մը մէջ պարունակուածը խմելով կամ մատ-  
նիի մը կապիճը խածնելով, խեղոյն կ'իյնան կը մեռնին. հինգ  
վայրկեան ետքը՝ վարագոյնը կ'իջնէ, ու թատրատեսները կը  
ցրուին: Սօսնութեան հեռուութիւնը անյայտ կը մնայ. ոչ  
ոստիկանութեան գործակալ մը կ'երևի իւր սաշտօնական կա-  
մարովը և ոչ տասնապետ մը իւր չորս զինակիւններովը. այս  
բանս իրաւունք կու տայ սղորմելի ուղեղներու մտածել որ  
այն գործերը այսպէս կը կատարուին: Բայց դուրս ելէք քիչ  
մը Պաղղիայէն, կամ Բերիա, կամ Պահիլէ, և կամ միայն  
Նարոյի ու Հոռոմ գայէք, և փողոցին մէջ առոյդ և վարդա-  
գոյն մարդիկներ պիտի տեսնէք, որոնց համար Աաղ սատա-  
նան կրնար ըսել ձեզ, եթէ իւր վերարկուին ծայրը ձեզ  
դաշելու ըլլար, թէ՛ «Այս պարոնը երեք շարաթէ՛ ՚ի վեր  
թունաւորեալ է և ամիսէ մը կատարեալ պիտի մեռնի»:

— Աւրեմն, ըսաւ աիկին Ա. իլլեֆօր, այն համբաւեալ թու-  
նաւոր ջուրին գաղանիքը դատած են, որուն համար Բէրուզի  
մէջ ինձ կ'ըսէին թէ կորսուած է:

— Միթէ մարդիկ բան մը կը կորսնցընեն, աիկին: Ա-  
րուեստները տեղերնէն կ'ելնեն և աշխարհիս բոլորաիքը կը  
շրջադային. միայն թէ անուենին կը փոխեն և ոչ ուրիշ  
բան, և սամիկը կը խաբուի. բայց միշտ հեռուութիւնը նոյնն  
է. ամեն թոյն մասնաւորապէս այս ինչ կամ այն ինչ գոր-  
ծարանին կ'աղդէ. մէկը ստամոքսին, միւսը ուղեղին, մէկ  
ուրիշը աղիքներուն: Թոյնէն հաղ մը կը դոյանայ, և այս  
հաղէն՝ կուրծքի այտում մը կամ դիտութեան գրքին մէջ  
նշանակուած ուրիշ հիւանդութիւն մը, որ կատարեալ մա-

Հացու ըլլալու արդեւք մը չունենար, և եթէ չըլլայ իսկ, ընդհանրապէս խիստ տկար քիմիաբան բարեմիտ բժիշկներուն սահմանած դեղերուն շնորհիւր կ'ըլլայ, որք հիւանդութեան լաւ կամ հակառակ աղդեցութիւն կ'ընեն՝ ինչպէս որ ուզէք. և ահա մարդ մը որ արուեստիւ և ամեն կանոններով կ'ըստաննուի, որուն ստիկանութիւնը ամենէին ըսելու խօսք չունի, ինչպէս կ'ըսէր Սիկիլիոյ մէջ բարեկամներէս սոսկալի քիմիաբան մը Ատէլմօնթէ տի Թաօրմինա, որ աղդային այս տարօրինակ հիւանդութիւնները քաջ քննած էր:

— Սոսկալի բայց միանդամայն զարմանալի են ձեր ըսածները, ըսաւ տիկինը՝ լաւ ուշադրութիւն ընելով. ճշմարիտ կ'ըսեմ, այս ամեն պատմութիւնները միջին դարու հնարքները կը կարծէի:

— Այո՛, անտարակոյս, սակայն անոնք մեր օրերուն մէջ աւելի կատարելադործուած են: Ուրեմն ինչ բանի պիտի ծառայեն ժամանակը, քաջալերութիւնները, պատուանշանները, խաչերը, Մօնթիօնի մրցանակները, եթէ ոչ՝ ընկերութիւնը իւր կատարելութեանը հասցընել: Մարդս այն ժամանակ կատարեալ պիտի ըլլայ երբ Աստուծոյ պէս ստեղծել և ջնջել կարենայ. արդէն ջնջել դիտէ, սակայն այս բանս դործին կէս ճամբան է:

— Ուրեմն, կրկնեց տիկին Ալլըֆօր անփոփոխ իւր նպատակին դառնալով, Պօրճիաներու, Մէտիսիներու, Ռէնէներու, Բուճիէրիներու և ասոնցմէ ետքը հաւանականաբար Թըրէնք սեպուհին թոյները, որուն նոր թատրերգութիւնը և վիպասանութիւնը չափը անցուցին. . . :

— Արուեստիւ հնարուած էին անոնք, տիկին, և ոչ ուրիշ կերպով, պատասխանեց կոմսը: Օրինակի համար՝ այն ազնիւ Ատէլմօնթէ աբբան, որուն վրայ հիմա ձեզ կը խօսէի, անոնց վրայ ընտիր փորձեր ըրած է:

— Ստուգի՛ւ:

— Այո՛, իւր ըրած փորձերէն մէկը միայն պատմեմ. բանջարեղէններով, ծաղիկներով և ստուղներով լեցուն խիստ

դեղնեցիկ պարտէզ մը ունէր . բանջարեղինաց մէջէն ամենէն խոնարհը , օրինակի համար՝ կաղամբ մը կ'ընտրէր , ու երեք օր հալած մինդեղով կը ջրէր զայն . երբորդ օրը կաղամբը կը դեղնէր , այն ատեն կը կտրէր զայն . ամենուն համար հասած էր այն , և իւր համետ երեոյթը կը սրահէր , բայց միայն Ատէլմօնթէ արբային համար թունաւորեալ էր : Այն ատեն կաղամբը իւր տունը կը տանէր , նասրաստակ մը կ'առնուէր , ( Ատէլմօնթէ արբան նասրաստակներու , կատուներու և Հնդկաստանի խողերու հաւաքում մը ունէր , որ իւր բանջարեղինաց , ծաղկանց և սրողոց հաւաքումէն վար չէր մնար . ) կաղամբին մէկ տերևը կը կերցընէր անոր , և նասրաստակը կը մեռնէր : Ա՛ր քննիչ դատաւորը սխտի համարձակէր անոր խօսք մը բսել , և ո՛ր թաղաւորի դործակալն է այն , որ Պ . Մաճէնտիին կամ Պ . Ֆլուրանին դէմ դատ բանալ խորհի անց սպաննած նասրաստակներուն , Հնդկաստանի խողերուն և կատուներուն համար . և ոչ մէկը : Այսպէս ուրեմն առանց ստիկանութեան դիտնալուն նասրաստակը կը մեռնի , Ատէլմօնթէ անոր աղիքները իւր խոհարարին հանել կու տայ ու աղբանոցը կը նետէ . հաւ մը աղբանոցը կը դանուի , աղիքները կը կացէ , ան ալ կը հիւանդանայ և հետեւեալ օրը կը մեռնի : Իւր ճղնածամին մէջ տասլտրկած ժամանակ՝ անդղ մը կ'անցնի անկէ , ( Ատէլմօնթէի երկրին մէջ շատ անդղ կայ ) , դիակը կը յափշտակէ , ժայռի մը վրայ կը տանի և կ'ուտէ : Երեք օր ետքը՝ ողորմելի անդղը , որ այն հաւը ուտելէն 'ի վեր հիւանդացած էր , խիստ բարձր ամպերուն մտ դանուած միջոցին՝ անդղայութիւն մը կը տիրէ վրան , օդին մէջէն վար կը գլորի և ձեր ձուկի աւազանին մէջ կ'իյնայ . դայլածուկը , օձաձուկը և միւռենէսը որկորստութեամբ կ'ուտեն զայն : Ենթադրենք թէ հետեւեալ օրը՝ չորս սերունդէ թունաւորեալ այն օձաձուկը , դայլածուկը կամ միւռենէսը ձեր սեղանը հանուի , ձեր սեղանակիցը հինգերորդ թունաւորուողը սխտի ըլլայ , և ութ կամ տասը օրէն ետքը՝ փորոտիքի , սրտի , պալարի կամ ստամոքսի ցաւէ սխտի մեռնի :

Քժ իշկները անոր փորը պիտի բանան և պիտի ըսեն . « Այս մարդը լեարդի այտուժն կամ ժանտատենդէ մը մեռաւ » :

— Բայց , ըսաւ տիկին Ախլըֆօր , այս ամեն պարագաները , զորոնք դուք իրարու կը շղթայէք , կրնան որ և է դիպուածով արդիւրեւիլ . անդղը կրնայ ժամանակին անկէ չանցնիլ կամ ձկնանոցէն հարիւր քայլ անդին ինկնիլ :

— Ա՛հ , ահա՛ ճիշդ հոն է արուեստը . Արեւելքի մէջ մեծ քիմիարան մը ըլլալու համար՝ պէտք է բաղղը գոգուել և նպատակին կը հասնուի — :

Տիկին Ախլըֆօր կը մտածէր և մտիկ կ'ընէր :

— Բայց մկնդեղը անջնջելի բնութիւն մը ունի . մարդուս մահ պատճառելու բաւական եղող քանակութիւն մը ո՛ր և է կերպով որ անոր ներսը մտնէ , պէտք է որ անոր մարմնոյն մէջ վերստին դտնուի :

— Ճիշդ ես ալ այդ դիտողութիւնը ըրի արբայ Ատէլմօնթէին : Մտածեց քիչ մը , ծայտեցաւ և սիկիլիացի առակով մը պատասխանեց ինձ , որ կարծեմ թէ Գաղղիարէն իսկ առակ մ'է . « Զաւակս , աշխարհս մէկ օրուան մէջ չստեղծուեցաւ , այլ հօթը . կիրակի եկու » : Աիրակի օրը վերստին դացի . կաղամբը մկնդեղով ջրելու տեղ՝ տեսակ մը լուծուած աղով ջրեց : Այս անդամ կաղամբը ամենեին հիւանդացած չէր երևեր , և նասպաստակը անկասկած կերաւ և հինդ վայրկեան ետքը մեռաւ . հաւը զնասպաստակը կերաւ և հետեւալ առտու անշնչացաւ : Այն ատեն և մենք անդղի պէս հաւը առինք և անոր փորը բացինք : Այս անդամ մասնաւոր ախտանշանները աներեոյթ եղեր էին , և միայն դ լիաւոր ախտանշաններ մնացած էին . ամենեին մէկ դործարանին մէջ մասնաւոր նշան մը չկար , բայց միայն անկարգութիւն մը իւր ջղային կաղմութեան մէջ , և ուղղային հիւթոց մէկ տեղ ժողվուելուն հետքը , և ոչ ուրիշ բան . հաւը թունաւորուած չէր , այլ կաթուածէ մեռեր էր : Հաւերուն մէջ քիչ անդամ տեսնուած է այս , դիտեմ , բայց իխտ հասարակ է մարդոց մէջ — :

Տիկին Ախլըֆօր ևս քան զևս մտախորհ կ'երևէր :

— Մեծ երջանակութիւն մ'է, ըսաւ, որ այսպիսի թոյները միայն քիմիադէաները կարենան շինել. եթէ ոչ իրօք աշխարհիս կէսը զմբու կէսը պիտի թունաւորէր :

— Քիմիադէաները կամ քիմիաբանութեան հետեող անձերը, պատասխանեց անհոգութեամբ Մօնթէ-Քրիսթօ :

— Ասկէ զատ, ըսաւ տիկին Ախլըֆօր՝ ինքնին և ուժով իւր մտածութիւնները թօթափելով, թոյները որչափ և արուեստով շինուած ըլլան, մեղքը միշտ մեղք է, և եթէ մարդկային հետադատութենէ ազատ ըլլայ, չկրնար Աստուծոյ աչքէն փախչիլ : Արևելցիք խղճի պարագայից մէջ մեղմէ աւելի զօրաւոր են, և խոհեմութեամբ դժոխքը ջնջած են, բայց ոչ աւելի :

— Ասածնիդ, տիկին, խղճահարութիւն մ'է որ բնականապէս պէտք է որ ձերինին պէս աղնիւ սրտին մէջ ծնանի, բայց խորհելով կրնայ շուտով ջնջուիլ : Մարդկային կեանքը կ'ըզոյզանայ այսպիսի դործերէ, բայց իւր հանճարը անոնց վրայ մտածելէն կը մաշի : Շատ քիչ մարդ պիտի գտնէք որ իւր նմանը երկրագնդիս մակերևութէն ջնջելու համար՝ իւր գաշոյնը անոր սիրտը մխել կամ այն մկնդեղը դործածելու պէ, որուն վրայ հիմա խօսեցանք : Ստուգիւ տարօրինակ դործ մը կամ գաղանութիւն մ'է այս, և զայն ընելու համար պէտք է որ արիւնը երեսուն և վեց աստիճան տաքնայ, երակը իննսուն անգամ աւելի շուտ զարնէ և սիրտը իւր սովորական սահմանէն դուրս ելնէ : Ահա ինչպէս կը դործեն և կը յաջողին Արևելցիք, որոնք ծանրաբարոյ և հանդարտ անձեր ըլլալով, այսպիսի կարևոր պարագաներու մէջ ժամանակին խնդիրներուն այնչափ ուշադրութիւն չեն ըներ :

— Խիղճը կը մնայ միայն, ըսաւ տիկին Ախլըֆօր այլայլեալ ձայնիւ և հեղձեալ հառաչանքով մը :

— Այո՛, այո՛, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, բարեբաղդաբար մարդս խիղճ ունի, եթէ ոչ խիստ թշուառ պիտի ըլլար : Քիչ մը դժնդակ ամեն դործէ ետքը՝ խիղճն է որ զմեզ կ'ազատէ, վասն զի մեզ հաղար տեսակ բարի ազդարարութիւն

ներ կ'ընէ, որոնք մեր քունը պահելու որչափ և ազդու ըլլան, խիստ տկար են մեր կեանքը պահպանող ատեանին առջեւը: Այսպէս Տիշարտ Գ Էտուարտ Գի երկու որդիքը սպաննելէն ետե՛ իւր խիղճը կ'արդարացընէր ըսելով թէ՛ Անդուսթ և վայրագ թաղաւորի մը երկու զաւակները, որոնք իրենց հօրը մոլութիւնները ժառանգած էին և ես միայն անոնց ծաղիկ հասակին միտումներէն ճանչցեր էի, Անդղիայի ժողովուրդը երջանիկ պիտի չընէին, այլ անպատճառ թշուառութեան մէջ պիտի ընկղմէին զայն: Այսպէս տիկին Մաքսայէթ խղճիւ վարուեցաւ, ուզելով թաղաւորական դահը ոչ իւր ամուսնոյն այլ իւր որդւոյն տալ: Ո՛հ, մայրական սէրը այնպիսի մեծ առաքինութիւն մը և այնպիսի զօրաւոր շարժիչ մ'է, որ շատ բաներ կ'արդարացընէ. առանց իւր խղճին ազդարարութիւնը կատարելու՝ տիկին Մաքսայէթ Տունդանի մահուանէն ետե խիստ թշուառ պիտի ըլլար —:

Տիկին Ալիլէֆօր խիստ մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր այն սոսկալի առարկաներն ու ահռելի վճիռները, զորոնք կոմսը իրեն յատուկ եղած պարզ հեղնութեամբ կը պատմէր: Աայրկէան մը լուռ կե՛նդալէն ետե՛

— Գիտէ՞ք, պարոն կոմս, որ դուք սոսկալի վիճաբանող մ'էք, և աշխարհս կապոյտ լոյսին տակէն կը տեսնէք: Արդեօք մզիչ դորժիներու և գնդածայր սրուակներու մէջէ՞ դիտելով մարդկութեան վրայ այդ աստիճան քննութիւնները բրած էք: Գուք մեծ քիմիադէտ մ'էք, և զաւակիս տուած ձեր հեղուկը, որ անմիջապէս անոր կենդանութիւն տուաւ . . . :

— Պէտք չէ վստահիլ անոր, տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. այն հեղուկին մէկ կաթիլը մահուան մօտեցող ձեր զաւակին կենդանութիւն տուաւ. բայց երեք կաթիլը անոր արիւնը թոքին մէջ պիտի մղէր, որով սիրտը պիտի սկսէր զարնել. վեցը կաթիլը կրնար անոր շունչը կտրել և եղածէն աւելի վտանգաւոր թալկացման մէջ պիտի իյնար: Վերջապէս տասը կաթիլը զան պիտի կայծակնահարէր: Տեսաք, տիկին, թէ ինչպէս շուտով հեռացուցի զան այն սրուակներուն քո՛



վէն, որոնց անխոհեմութեամբ դուրսիլ կ'ուզէր:

— Աւրեմն ստակալի թոյն մ'էր այն:

— Աչ, տիկին, նախ հաւաստի եղիք որ թոյն բառ մը չկայ, ըստ որում դեղերու մէջ ամենէն ազդու թոյները կը գործածեն, որոնք անոնց հետ բաղադրուելով, առողջարար դեղեր կը շինուին:

— Ի՞նչ էր ուրեմն:

— Արբայ Ատէլմոնթէ իմ աղնիւ բարեկամիս խոհեմութեամբ շինած դեղն է, որուն գործածութիւնը ինձ սորվեցուցած է:

— Ջղածդութեան դէմ ընտիր դեղ ըլլալ պէտք է:

— Գերազանց դեղ մ'է, տիկին, ինչպէս որ տեսաք, և ես շատ անգամ կը գործածեմ զայն, անտարակոյս ամեն կարելի խոհեմութեամբ, յաւելցուց ծիծաղելով:

— Անշուշտ, սրաասխանեց նոյն ձայնիւ տիկին Ալլեֆօր, ես որ ջղուտ եմ և այնչափ շուտով կը թալիանամ, Ատէլմոնթէ քիմիագէտին պէս մէկուն պէտք ունիմ, որ ազատութեամբ շունչ առնելու համար պէտք եղած միջոցները հնարէ և որ մը այս կերպով անշնչանալու համար զղացած երկիւղէս հանդարտեցրնէ զիս: Այսու ամենայնիւ՝ որովհետեւ ուզածս Գաղղիս գտնելը գժուար է, և ձեր արբան հաւանախանարար ինձ համար Բարիդ Ճամբորդութիւն ընել չկարենայ, ուստի և ես Պ. Բլանշին անթիւ ջղածդական դեղերուն վրայ յոյսս դրած եմ, և Հօֆմանի անանուխն ու շիթադեղերը ազէկ գործ կը տեսնեն ինձ: Տեսէք, այս շաքարահատերը մասնաւոր ինձի համար կրկին չափով շինուած են —:

Մօնթէ-Քրիսթօ՝ ծաղիահաս կնոջ իրեն ներկայացուցած խեցեղէն տուփը բացաւ, և այն անուշահատերուն յարզը իբր ազէկ ճանչցող հատտեց զանոնք:

— Խիստ ընտիր են, ըսաւ, սակայն կըլուելու պէտքին ենթակայ են, գործողութիւն մը, որ թալիացեալ անձին կողմանէ կատարելը անկարելի է: Իմ սեպհական դեղս ապելի կ'ընարեմ:

— Անոր ըրած ազդեցութիւնը տեսնելէս ետե՛ւ ես ալ նախամեծար կը համարիմ ձերը . անտարակոյս դադանիք մ'է , սակայն ես ձեզմէ խնդրելու պիտի չքաշուիմ :

— Գայց ես ալ , տիկին , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ ուրք ելնելով , յօժարութեամբ պիտի նուիրեմ ձեզ :

— Ո՛հ , պարոն :

— Սակայն աղէկ մտքերնիդ պահեցէք որ անոր փոքր քանակութիւնը դեղ , բայց շատը թոյն է : Մէկ կաթիլը կենդանութիւն կու տայ , ինչպէս որ տեսաք , հինգ կամ վեց կաթիլը անվրիպելի կերպիւ կ'ըստաննէ , և աւելի սոսկալի կերպիւ կ'ըլայ երբ բաժակ մը դինիի հետ խառնուի , որուն համը ամենեւին չփոխեր : Այսչափս բաւական է , տիկին , եթէ ոչ՝ ձեզ խրատ տուածի պէս պիտի երևիմ — :

Ժամացոյցը վեց ու կէս հնչեր էր , և այս միջոցիս տիկին Ալլըֆօրի մէկ բարեկամուհւոյն այցելութիւնը խմացուցեր էին , որ անոր հետ ճաշելու եկեր էր :

— Երկրորդ անդամն է որ զիրար կը տեսնենք , պարոն կոմս , ըսաւ տիկին Ալլըֆօր . եթէ զձեզ երրորդ կամ չորրորդ անգամ տեսնելու պատիւն ունեցած ըլլայի , եթէ ձեր բարեկամուհին ըլլալու պատիւն ունեցած ըլլայի , փոխանակ պարզապէս ձեր երախտապարտը ըլլալու երջանկութիւնն ունենալու , կը թախանձէի զձեզ որ միատեղ ճաշենք , և անշուշտ առաջին մերժումէ մը պիտի չյաղթուէի :

— Հազար անգամ շնորհակալ եմ , տիկին , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ . ես ալ խոստում մը ըրած եմ , զոր չեմ կրնար մերժել . բարեկամուհիներէս մէկը յոյն իշխանուհի մը թատրոն տանելու խոստացայ , որ դեռ մեծ Օրէրան տեսած չէ , և կ'ըստասէ որ ես տանիմ զինքը :

— Գայէք , պարոն , բայց իմ դեղադիրս մի մոռնաք :

— Ի՛նչպէս , տիկին , միթէ կարելի՞ է որ ձեզի հետ ըրած խօսակցութեանս ժամը մոռնամ — :

Մօնթէ-Քրիսթօ բարեկց և մեկնեցաւ :


Տիկին Ալլըֆօր մտածութեան մէջ ընկղմած մնաց :

— Ի՞նչ տարօրինակ մարդ է Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, ըստաւ. ինչ այնպէս կ'երևի թէ իւր մի բառովեան անունը Ատէլմենթէ է — :

Իսկ Մօնթէ-Քրիսթոյի համար այս խօսակցութեան հետևութիւնը իւր ակնկալութիւնը դերազանցեր էր :

— Տեսնե՛ք, ըստաւ մեկնելու ատեն, ահա մշակելու պատուական երկիր մը, համազուած եմ որ հոն սերմանած ցորենը աղէկ պիտի աբդիւնաւորի — :

Աւ հետևեալ օրը՝ իւր խոստման հաւատարիմ մնալով՝ ուղաւած դերազիրը դրկեց :



ՔՐԻՍՏՈՅ

ՐՕԳԷՐ ՍԵՏԸՆԸՆ



**P**ԱԳԱՌՈՐԱԿԱՆ նուազածուաց ներկայութեամբը նոյն իրիկուան Օբէրայի ներկայացումը հանդիսաւոր կերպիւ պիտի կատարուէր :

Արվասէօր երկար հիւանդութենէ ետև վերստին Պէրթրանի

դերը էլ ներկայացրնէր, և ամեն անդամուան պէս՝ նուազապետին դուստնական այս խաղը Բարիզի ամենէն մեծ ընտանիքները հոն ժողվեր էր:

Մորսէրֆ՝ հարուստ երիտասարդաց մեծ մասին պէս իւր մասնաւոր նստարանն ունէր, ասիէ զատ՝ իւր ծանօթ բարեկամաց տասնի չափ օթեակները կային, որոնց մէջ կրնար տեղ մը խնդրել, առանց հաշուի դնելու Առիւծուց օթեակին մէջ իւր ունեցած տեղը:

Հաթօ-Ռընօ անոր քովի նստարանը ունէր:

Պօշան իբր օրադրասպետ սրահին թաղաւորն էր և ամեն կողմ տեղ ունէր:

Պաշտօնէին օթեակը նոյն իրիկունը Ղիւսիէն Տըպրէին ձեռքն ըլլալով՝ Մորսէրֆ կոմսին նուիրեր էր զայն, բայց Մէրսէտէսին մերժման վրայ՝ կոմսը Տանկլարին զրկեր էր ըսելով թէ՛ եթէ տիկին և օրիորդ Տանկլար այն օթեակն ընդունին, զուցէ ինքն ալ անոնց այցելութեան դայ:

Տիկինն ու օրիորդը այս առաջարկութիւնը սիրով ընդունեցին:

Միլիոնաատէրի մը պէս անվճար օթեակ փնտռող մէկը չղրանուիր:

Իսկ Տանկլար յայտնի էր որ իւր քաղաքական սկզբունքները և երեսփոխանական պաշտօնը չէին ներեր իրեն որ պաշտօնէին օթեակն երթայ:

Հետեւաբար տիկին Տանկլար Ղիւսիէնի նամակ մը գրեր էր որ դայ զինքն առնու, ըստ որում չէր կրնար Էօմէնիին հետ առանձին թատրոն երթալ:

Իրօք՝ խիստ անվայել պիտի ըլլար եթէ տիկինն ու օրիորդը առանձին երթային, սակայն եթէ օրիորդ Տանկլար իւր մօրը և անոր սիրահարին հետ թատրոն երթար, ըսելու խօսք չկար, պէտք էր վայելուչը նայիլ:

Վարագոյրը բացուեցաւ ըստ սովորութեան դրեթէ դատարկ սրահի մը վրայ:

Մեր Բարիզեան սովորութեանց մէկն է ներկայացումը ըստ

կսե լին ետև թատրոն երթալ. հեռեարար առաջին արարուածը կը լրանայ, և հոն դանուող թատրատե աները փոխանակ ներկայացումը տեսնելու կամ լսելու, նոր եկողները դիտելու և դռներուն ու խօսակցութեանց ձայները լսելու կ'ըղբաղին:

— Ի՛նչ կը տեսնեմ հոն, ըսաւ յանկարծ Ալալէր առաջին կարդին մէջ օթեակի մը բացուիլը տեսնելով, Կ. . . կոմսուհին . . . :

— Ո՞վ է այդ Կ. . . կոմսուհին, հարցուց Շաթօ-Ռընօ:

— Ի՛նչ կ'ըսես, սեպուհ, այդ հարցումը աններելի է. Կ. . . կոմսուհւոյն ո՞վ ըլլալը չե՞ս գիտեր:

— Ո՛հ, այո՛, ըսաւ Շաթօ-Ռընօ, այն դեղանի վեներտ կուհին չէ:

— Ճիշդ ան է — :

Այն միջոցին Կ. . . կոմսուհին Ալալէրը տեսաւ, և իբարու հետ ժպտախառն ողջոյն մը փոխեցին:

— Ի՛նչ, կը ճանչնամ դան, ըսաւ Շաթօ-Ռընօ:

— Այո՛, Հոով Ֆրանզ դիս անոր ներկայացուց:

— Աւրեմն Ֆրանզին քեզ Հոով ըրած ծառայութեան նոյնը ինձ Բարիզի մէջ պիտի ընես:

— Մեծ յօժարութեամբ:

— Լուեցէք —, պոռաց ժողովուրդը:

Երկու երիտասարդները իրենց խօսակցութիւնը շարունակեցին՝ առանց վարի նստարաններուն բազմութեան երաժշտութիւնը մտիկ ընելու համար զղացած բաղձանքը հողերնին ընել երևելու:

— Շան-տը-Մարսի ձիարշաւը տեսայ դան, ըսաւ Շաթօ-Ռընօ:

— Այսօր:

— Այո՛:

— Իբօք այսօր ձիարշաւ կար: Գրաւ դրամ՝ էիր:

— Ո՛հ, փոքր դումարի մը, այսինքն յիսուն Լուիի համար:

— Եւ ո՞վ շահեցաւ:

- Նօթիւն . անոր համար դրաւ դրած էի :
- Բայց երեք ձիարշաւ պիտի ըլլար :
- Այո՛, ծօքի ֆլըպի մրցանակը կար, որ ոսկի բաժակ մ'էր . տարօրինակ բան մ'ալ . պատահեցաւ հոն :
- Ի՞նչ բան :
- Լուեցէք ուրեմն, պոռայ ժողովուրդը :
- Ի՞նչ բան, կրկնեց Ալպէր :
- Բոլորովին անծանօթ ձի մը և ծօքի մը ձիարշաւի մը ցանակը շահեցան :
- Ի՞նչպէս :
- Ամենեւին ուշադրութիւն ըրած չէինք Վանք . անուամբ արձանագրուած ձիու մը և ծօղ անուամբ ծօքիի մը, երբ յանկարծ ընտիր աշխէտ ձիու մը և կռուփի շափ ծօքիի մը յառաջանալը տեսանք, այնպէս որ ստիպուեցան անոր դըր պաններուն մէջ քսան և հինգ լիտր կասար դնել, բայց այս բանս արդեւք չեղաւ այն ձիուն որ իրեն հետ արշաւող Արիէլէն և Պարպուզէն առաջ իւր նպատակին հասնի ձիու երեք երկայնութեամբ :
- Եւ ձին ու ծօքին որուն ըլլալը չհասկըցուեցաւ :
- Ոչ :
- Չին ի՞նչ անուանով արձանագրուած էր ըսիր . . . :
- Վանք :
- Ուրեմն ես քեզմէ աւելի տեղեկութիւն ունիմ . ես որուն ըլլալը դիտեմ :
- Լուեցէք վերջապէս —, պոռայ երրորդ անգամ ժողովուրդը :
- Այս անգամ ձայները այնչափ բարձրացան, որ երկու երիտասարդները վերջապէս տեսան որ բաղմութիւնը իրենց համար կը պոռար :
- Վայրկեան մը գլուխնին դարձուցին, որպէս զի տեսներն թէ այն բաղմութեան մէջէն ո՞վ է իրենց ըրածը ամբարտաւանութիւն կարծելու պատասխանատուութիւնը իւր վրայ առնող մարդը, բայց ամենեւին մէկը խօսք մը չկրկնեց, ուստի

իրենք ալ նայուածքնին դէպ 'ի տեսարանը դարձուցին :

Այն միջոցին պաշտօնէին օթեակը բացուեցաւ , և աիկին  
ու օրիորդ Տանկլար և Ն.իւսիէն Տըպրէ տեղերնին նստան :

— Հոն աջ կողմդ նայէ , դերահումս , ըսաւ Շաթօ-Ռընօ .  
բարեկամութիւներդ եկան , և զքեզ կը փնտռեն — .

Ալպէր այն կողմը դարձաւ , և իւօք իւր նայուածքը աիկին  
Տանկլարի նայուածքին հանդիպեցաւ , որ իւր հողմահարովը  
փէքը բարեւ մը տուաւ :

Իսկ օրիորդ Էօծէնին հաղիւ թէ իւր մեծ սեւաքիւրը նուա-  
զածուաց կողմը խոնարհեցընելու հաճեցաւ :

— Ստուգիւ , բարեկամ , ըսաւ Շաթօ-Ռընօ , ես ձեր դործը  
չեմ հասկընար . 'ի բաց առնելով տոհմային անհամաձայնու-  
թիւննիդ , որ չեմ կարծեր թէ քու միաքդ զբաղեցընողն ըլ-  
լայ , չեմ հասկընար կ'ըսեմ թէ օրիորդ Տանկլարի դէմ  
ինչ ունիս . ճշմարտան ըսելով խիստ դեղեցիկ անձ մ'է :

— Անշուշտ խիստ դեղեցիկ է , ըսաւ Ալպէր . սակայն կը  
խոստովանիմ որ դեղեցիութեան նկատմամբ կ'ուզէի որ ա-  
ւելի քաղցր , աւելի սիրուն , վերջապէս աւելի կանացի ըլլար :

— Ահա այսպէս երիտասարդները ամենեին դո՛հ չեն ըլլար ,  
ըսաւ Շաթօ-Ռընօ , որ իւր երեսուն տարեկան հասակովը  
հայրական ձեով կը խօսէր անոր հետ : Ստոյդ կ'ըսես , սի-  
րելիս , որսորդ Արտեմիայ կերպարանքով նշանած մը կը դըտ-  
նեն քեզ , և դուն դո՛հ չես :

— Ես ալ աւելի կը փափաքէի Միլոյի կամ Գարուի Ասող-  
կան կերպարանքով մէկը ունենալ : Միշտ յաւերժահարսերէ  
շրջապատեալ այդ որսորդ Արտեմիսը զիս քիչ մը կը զար-  
հուրեցընէ . կը վախնամ որ Ադաէոնի պէս չվարուի հետս — :

Իբօք՝ ծաղկահաս աղջկան վրայ Մորսէլֆի շրջած մէկ նայ-  
ուածքը բաւական էր զրեթէ իւր խոստովանած զղացումը  
յայտնելու :

Օրիորդ Տանկլար դեղեցիկ էր , բայց ինչպէս որ Ալպէր ը-  
սաւ , քիչ մը սահմանաւոր դեղեցիութիւն ունէր . իւր մա-  
ղերը դեղեցիկ սե էին , բայց իրենց բնական դանդաղութիւնը

պահած էին և զանոնք յարդարել ուղող ձեռքին ապստամբ կ'երևէին . իւր մազերուն պէս սև աչքերը գեղեցիկ յօնքեր կը շրջանակէին , որոնք միայն պակասութիւն մը ունէին , այն է՝ անոնց երբեմնակի խոժոռ երևոյթը . երևելի էր իւր աչաց վրայ երեցած հաստատամտութեան նկարագիրը , որ կնոջ մը նայուածքին մէջ դտնուելը զարմանք կը պատճառէ . քիթը այն ճիշդ համեմատութիւններն ունէր , զորոնք անդրիագործ մը Հերայի արձանի մը կրնար տալ . միայն բերանը քիչ մը մեծ , բայց գեղեցիկ ատամներով զարդարուած էր , և շուրթերուն կարմրութիւնը երեսի գոյնին դեղնութիւնը կը ծածկէր . վերջապէս բերանին անկիւնը եղած մէկ սև նշանը , որ սովորաբար բնութեան հաճոյից այս տեսակ նշաններէն մեծ էր , անոր գիմաց այն որոշ նկարագրութիւնը կու տար , որ քիչ մը Մորսէրֆը կը վախցընէր :

Էօժէնիին անձին մնացեալ մասը համաձայն էր իւր դիւին հետ , որուն նկարագրութիւնը ընել ջանացինք հիմա :

Շաթօ-Ռընոյի ըսածին պէս՝ օրիորդը որսորդ Արանմիսի կը նմանէր , բայց իւր գեղեցկութեան մէջ սնդակազմութիւն մը և ջղապնդութիւն մը կ'երևէր :

Իսկ ընդունած դաստիարակութեան մասին և թէ սողտանելու կէտ մը կայ , այն է որ իւր կերպարանքին քանի մը մասերուն պէս՝ քիչ մը ուրիշ սեռի վերաբերելու երևոյթ մը ունէր :

Իրօք՝ երկու կամ երեք լեզու կը խօսէր , դիւրութեամբ կը դժադրէր , տաղաչափութիւններ կ'ընէր և երաժշտութեան եղանակներ կը շարադրէր :

Գլխաւորաբար մեծ սէր ունէր երաժշտութեան , զոր իւր հետը դպրոց դացով բարեկամուհիներուն մէկուն հետ կը սորվէր . այս բարեկամուհին թէև հարստութեան դուրի էր , բայց ինչպէս որ կ'ապահովընէին՝ օր մը ընտիր դուստն մը ըլլալու ամեն կարելի հանդամանքներն ունէր :

Ա՛րսէին թէ մեծ նուաղ այարդար մը հայրական խնամքով հոգ կը տանէր անոր , և կ'աշխատընէր զան այն յուսով՝ որ իւր ձայնովը օր մը մեծ հարստութեանց տէր ըլլայ :



Օրիորդ Աուիդ ա՛ Արմիլին (յոջողակ դուստանին անունն է) օր մը թատրոն մանելու կարելիութիւնը օրիորդ Տանկլարին մասձել կու տար որ իւր տունը ընդունի զան, բայց ընկերութեանց մէջ անոր հետ չդանուի:

Տիկին Տանկլարի հասնելէն քանի մը մանրերկրորդ ետքը՝ վարացոյրը իջեցուցեր էին, և միջնարարուածներուն երկայնութեան միջոցին՝ կէս ժամ մը հանդստեան սրահին մէջ շրջադայելու կամ այցելութիւններ ընելու աղատութեան շնորհիւ՝ երամշապ խումբն ալ դրեթէ ցրուեր էր:

Մորսէրֆ և Շաթօ-Ռընօ ամենէն առաջ դուրս ելեր էին:

Վայրկեան մը տիկին Տանկլար այնպէս կարծեր էր թէ Ալպէրի արտորալը իրենց օթեակը դալու և ղիրենք ողջունելու նպատակաւ էր՝ ուստի իւր աղջկան ականջին այս այցելութիւնը խմայուցեր էր, և օրիորդը ժպտելով դուրսը շարժելու բաւականացեր էր, սակայն նոյն միջոցին և դողցես հաստատելու համար թէ ո՛րչափ Էօժէնիին մերժումը իրաւացի էր, Մորսէրֆ առաջին կարդի օթեակի մը մէջ երեցաւ:

Այս օթեակը Ա. . . կոմսուհւոյն էր:

— Բարի եկաք, պարոն Ճանատարհորդ, ըսաւ կոմսուհին հին բարեկամութեան ամենայն մտերմութեամբ իւր ձեռքը երկնցընելով, դո՛հ եմ որ զիս Ճանչցաք և մանաւանդ նախաձեռնար ընարեցիք առաջին այցելութիւննիդ ինձ տալու:

— Հաւատացէք, տիկին, սրատասխանեց Ալպէր, եթէ ձեր Բարիդ հասնելը և ձեր ո՛ւր ընակիլը զխոնայի, այսչափ պիտի չուշանայի: Բայց հաճեցէք հրաման տալ ինձ որ ձեզ ներկայացընեմ Պ. սեպուհ Շաթօ-Ռընօ իմ բարեկամս և Քաղզիոյ մէջ մնացող հաղուադիւտ աղնուականներէն մէկը, որմէ ձեր Շան-ար-Մարսի ձիարշաւին դանուիլը խմայայ —:

Շաթօ-Ռընօ ողջունեց զան:

— Ձիարշաւին ներկայ էիք դուք ալ, պարոն, ըսաւ աշխուժիւ կոմսուհին:

— Այո՛, տիկին:

— Աւրեմն, կրկնեց աշխուժիւ տիկին Ա. . . , կրնա՞ք ըսել

ինձ թէ ժօքի-Քլըպի մրցանակը շահող ձին որովն էր :

— Ոչ, տիկին, ըսաւ Շաթօ-Ռընօ, և հիմա ես ալ նոյն հարցումը կ'ընէի Ալպէրին :

— Խիստ հետաքրքիր էք, տիկին կոմսուհի, հարցուց Ալպէր :

— Ի՞նչ բանի :

— Ձիուն տէրը ճանչնալու :

— Խիստ շատ : Հաւատացէք որ . . . : Բայց դիտէք դուք ո՛վ ըլլալը, դերակումս :

— Տիկին, պատմութիւն մը պիտի պատմէիք. հաւատացէք ըսիք և թողուցիք :

— Հաւատացէք որ այն շքեղ աշխէտ ձիոյն և վարդադոյն բաճկոնակով դեղեցիկ փոքր ժօքիին երկոյթը ինձ անմիջական համակրութիւն մը ազդեցին, այնպէս որ անոնց համար բարեմաղթութիւններ կ'ընէի. կարծես թէ հարստութեանս կէսը անոնց համար դրաւ դրեր էի : Ուստի երբ իւր հետը արշաւողներէն ձիու երեք երկայնութեամբ յառաջանալով նշանակէտին հասնիլը տեսայ, այնչափ ուրախ էի, որ սկսայ խենթի պէս ծափահարել : Մեծ եղաւ զարմանքս երբ տունս դառնալով, սանդուխին վրայ փոքր ժօքիին հանդիպեցայ. կարծեցի թէ ձիարշաւին մէջ յաղթող հանդիսացողը դիպուածով ինձի հետ մի և նոյն տան մէջ կը բնակի. բայց երբ արահիս դուռը բացի, սեղանին վրայ անծանօթ ժօքիին և ձիուն շահած ոսկի բաժակը տեսայ, որուն մէջ տոմսակ մը կար այս խօսքերով .

« Լորտ Րիւթվէն առ Վ . . . կոմսուհին » :

— Ճիշդ ան է, ըսաւ Մորսէրֆ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ թէ նոյն ինքն լորտ Րիւթվէնն է :

— Ո՞ր լորտ Րիւթվէնը :

— Մեր լորտ Րիւթվէնը, այն ուրուականը, Արձէնթինա թատրոնինը :

- Ի՞նչ կ'ըսէք, իրաւ հո՞ս է ան :
- Այո՛ :
- Եւ կը տեսնէք զան, ձեր տունը կ'ընդունի՞ք, անոր տունը կ'երթա՞ք :
- Մտերիմ բարեկամս է, և Պ. Շաթո-Ռընօն ալ զան ճանչնալու պատիւն ունեցաւ :
- Եւ ի՞նչ բանէ կը կարծէք որ ան է շահողը :
- Իւր Ա՛նթա անունով ձիէն :
- Ետքը՞ :
- Ձիս բռնող համբաւաւոր աւաղակապետին անունը չէք յիշեր :
- Այո՛ :
- Որուն ձեռքէն կոմսը հրաշքով մը ազատեց զիս :
- Այո՛ :
- Անոր անունը Ա՛նթա էր, յայտնի է որ ան է :
- Բայց այն բաժակը ինչո՞ւ ինձ զրկեց :
- Ասան զի, տիկին, նախ ես ձեր վրայ անոր հետ երկարօրէն խօսեր էի, երկրորդ՝ վասն զի հայրենակից մը զըտնելուն ու այն հայրենակիցին իրեն համար ունեցած համակրութիւնը տեսնելուն համար ուրախացած պիտի ըլլայ :
- Ար յուսամ որ անոր վրայօք մեր ըսած խենթ խօսքերը չպատմեցիք անոր :
- Շիտակը ըսեմ, երդում չեմ կրնար ընել ատոր համար, և այն բաժակը լորտ Բիւթվէնի անունով ձեզ նուիրելը . . . :
- Բայց սոսկալի բան է այս « հիմա ցմահ պիտի թշնամանայ ինձ » :
- Միթէ իր ըրածը թշնամիի՞ գործ էր :
- Ոչ, կը խոստովանիմ :
- Ուրեմն :
- Բարի՞զ կը զտնուի հիմա :
- Այո՛ :
- Եւ ի՞նչ ազդեցութիւն ըրաւ Բարիզի մէջ :

— Ութ օր անոր խօսքը ըլլալէն ետե՛ Անդղիոյ թագուհի Տեոյն դահակալութիւնն ու օրիորդ Մարսին ադամանդաց Կոլութիւնը վրայ հասնելով, անոր խօսքը չըլլար հիմա :

— Բարեկամ, ըսաւ Շաթօ-Ռընօ, յայտնի կ'երևի որ կոմսը քու բարեկամդ է, և դուն բարեկամօրէն կը վարուիս անոր հետ : Մի հաւատաք Ալպէրի ըսածներուն, տիկին կոմսուհի ընդ հակառակն Մօնթէ-Քրիսթոյ կոմսին խօսքերէն զատ ուրիշ խօսք չկայ Բարիդի մէջ : Նախ սկսաւ տիկին Տանկլարին երեսուն հազար Ֆրանքնոյ ձիեր նուիրել, ետքը՝ տիկին Ալիլֆօրի կեանքը ազատեց, և ետքը՝ ինչպէս որ կ'երևի՝ Ժօքի-Քլըպի ձիարշաւի դրաւը շահեցաւ : Ի՛նչ որ կ'ուզէ՛ թող ըսէ Մորսէրֆ, ես կը հաստատեմ որ այս միջոցիս ամեն մարդու միտքը անով զբաղած է և մինչև մէկ ամիս այսպէս միայն անով պիտի զբաղի, եթէ կոմսը շարունակ տարօրինակ դործեր ընելու ըլլայ, որ իւր հասարակ կենաց կերպն է եղեր :

— Կարելի է, ըսաւ Մորսէրֆ. բայց ըսէք ինձի, Ռուսիոյ դեսպանին օթեակը ո՞վ բռներ է :

— Ո՞ր օթեակը, հարցուց կոմսուհին :

— Առաջին կարգին սիւնամէջ օթեակը, ինձ բոլորովին նորցած կ'երևի :

— Իրօք, ըսաւ Շաթօ-Ռընօ, առաջին արարուածին ժամանակ մէկը կա՞ր հոն :

— Ո՞ւր :

— Այն օթեակին մէջ :

— Ոչ, կրկնեց կոմսուհին, մէկը չտեսայ : Ուրեմն՝, շարունակեց՝ առջի խօսակցութեան դառնալով, կը կարծէք որ Մօնթէ-Քրիսթօ կոմսն է մրցանակը շահողը :

— Այո՞ :

— Եւ այն բաժակը ի՞նձ ղրկողը :

— Անտարակոյս :

— Բայց ես զինքը չեմ ճանչնար, ըսաւ կոմսուհին, և խիստ կը փափաքիմ զայն վերադարձընել անոր :

— Բան մի ընէք, տիկին, ուրիշ մը կը ղրկէ ձեզ շափի-

դայի կամ սուտակի մը մէջ փորուած : Ասոնք են իւր գործերուն ձեւերը , ինչ պիտի ընէք , պէտք է որ ընդունիք — :

Այն միջոցին զանգակին ձայնը լսուեցաւ , որ երկրորդ արարուածին սկսուելը կ'իմացընէր :

Ալպէր ոտք ելաւ իւր տեղը երթալու համար :

— Աերսաինն պիտի տեսնեմ զձեզ , հարցուց կոմսուհին :

— Միջնարարուածոց մէջ , եթէ կը ներէք , և պիտի գամ հարցընելու թէ ինչ ծառայութիւն կ'ընամ ընել ձեզ Բարիկ մէջ :

— Պարոններ , ըսաւ կոմսուհին , ամեն շաբաթ իրիկունները , Տիւրքի փողոցը , թիւ 22 , բարեկամացս համար իմ տունս կը գտնուիմ — :

Երիտասարդները բարեեցին զան և մեկնեցան :

Սրահը մտնելով , բազմութիւնը ոտք ելած և աչքերնին սրահին մէկ կողմը յարած տեսան :

Երենք իսկ ամենունն պէս իրենց նայուածքը այն կողմը ուղղեցին և Ռուսաց դեսպանին հին օթեակին վրայ յարեցին :

Երեսուն հինգէն քառասուն տարեկան սև զգեստով մարդ մը այն օթեակը մտեր էր Արեւելեան հագուստով կնոջ մը ընկերութեամբ :

Աինը այնպիսի դեղեցիութիւն մը ունէր , և իւր հագուստը այնպէս փառաւոր էր , որ ինչպէս ըսինք ամենունն նայուածքը անոր վրայ դարձեր էր :

— Մօնթէ-Քրիսթօն և իւր Յոյն կիներն է — , ըսաւ Ալպէր :

Երօք կոմսը և Հայտէն էին :

Աայրիկեան մը ետքը՝ ծաղկահաս կիներ բոլոր սրահին բազմութեան ուշադրութեանը առարկայն եղեր էր :

Աիները իրենց օթեակէն դուրս կը հակէին որ ճրաղներուն լոյսէն ազամանդներուն շողալը տեսնեն :

Երկրորդ արարուածը այս իրարանցումով լրացաւ , որ դուժարուած բազմութեան մէջ մեծ դէպ մը կը համարուի :

Ամենեին մէկը լռութիւն սրտալու չմտածեց ,

Այն ծաղկահաս , թեղանի և սաքուրի կիներ խիստ հեռա-

քրքրաշարժ տեսարան մը կ'ընծայէր անոնց ,

Այս անդամ տիկին Տանկլարի մէկ նշանը յայտնապէս իմացուց Ալպէրին թէ առաջիկայ միջնարարուածին անոր այցելութեանը կը փափաքի :

Մորսէրֆ դիտէր աղէկ որ պէտք էր երթալ այն նշանին , որ յայտնապէս զինքը կը կանչէր :

Ուստի արարուածը լմնալուն պէս՝ տիկնոջ օթեակը վաղեց :

Տիկինն ու օրինորդը՝ բարեկեց և Նիւսիէնի ձեռքը թոթվեց :

Տիկինը քաղցր ժպիտով մը ընդունելութիւն տուաւ անոր , և Էօմէնի իւր սովորական պաղութեամբը :

— Հասիր , բարեկամ , ըսաւ Տըպրէ , կը տեսնես որ դործս լմնցած է , և քու օղնութեանդ կը կարօտիմ . քանզի տիկինը կոմսին վրայ ըրած հարցումներովը զիս կը յողնեցընէ և կ'ուղէ որ ըսեմ իրեն թէ կոմսը ո՛ւրկից եկած է և ո՛ւր կ'երթայ . ես Գալիոսթրօն չեմ , և ինքզինքս ազատելու համար ըսի իրեն թէ՝ Մորսէրֆին հարցուցէք , որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը լաւ կը ճանչնայ . այն ատեն զքեզ կանչեցինք :

— Անհաւատալի բան է , ըսաւ տիկին Տանկլար , որ կէս միլիոն ֆրանք ունենայ մարդ և տեղեկութիւն մը չունենայ :

— Տիկին , ըսաւ Նիւսիէն , կ'աղաչեմ՝ հաւատացէք ինձ որ եթէ ես կէս միլիոն ունենայի , աւելի ուրիշ բանի պիտի գործածէի , քան թէ տեղեկութիւն ստանալու Մօնթէ-Քրիսթոյի վրայ , որ նապապէ մը երկու անգամ աւելի հարուստ ըլլալէն ուրիշ արժանիք չունի իմ առջիս . բայց ես խօսքս Մորսէրֆ բարեկամիս անցուցի , անոր հետ յարմարեցէք , այս բանս ինձ չնկատեր :

— Նասպապ մը անտարակոյս երեսուն հազար ֆրանքնոց ձիեր պիտի շըրկէր ինձ՝ անոնց ականջները չորս աղամանդներով զարդարած , որոնց իւրաքանչիւրը հինգ հազար ֆրանք կ'արժէ :

— Աղամանդները , ըսաւ Մորսէրֆ ծիծաղելով , իւր մտային հաճոյքն են . կարծեմ թէ Բոթանքէնի պէս միշտ ծոցերուն մէջ կը կրէ , և փոքր Բուսէին կոպիճներ սերմա

անձին պէս կոմսն ալ իւր ճամբուն վրայ աղամանդներ կը սերմանէ :

— Հանք մը դտած պիտի ըլլայ, ըսաւ տիկին Տանկլար ֆ զիտէք որ անսահման վարկ մը ունի սեպուհին վրայ :

— Աչ, չէի գիտեր, պատասխանեց Ալպէր, բայց կարելի է :

— Եւ խնայուցեր է Պ. Տանկլարին թէ տարի մը Բարիզ կենալու և վեց միլիոն ֆրանք ծախք ընելու վտար ունի :

— Պարսկաստանի շահը պիտի ըլլայ որ ծպտեալ կը ճանապարհորդէ :

— Իւր հետը եղած կիներ տեսա՞ք, Պ. Լիւսիէն, ըսաւ Էօմէնի, ինչպէս գեղեցիկ է :

— Չշմարիտ, օրիորդ, միայն զձեզ տեսայ որ ձեր սեռին վրայ ճիշդ դատողութիւն կ'ընէք — :

Լիւսիէն հեռադիտակը իւր աչքին մօտեցուց :

— Շատ սիրուն է, ըսաւ :

— Եւ այս կնոջ սով ըլլալը Պ. Մորսէրֆ զիտէ :

— Օրիորդ, ըսաւ Ալպէր՝ գրեթէ այս ուղղակի հարցման պատասխանելով, այն դաղտնիքներ պարունակող անձին վրայ ունեցած տեղեկութեանս չափ ան ալ գրեթէ կը ճանչնամ, որ Յոյն կին մ'է :

— Իւր հաղուստէն յայտնի կ'երևի, և մեզի պէս բոլոր սրահին արդէն գիտցածը ինձ կը կրկնէք :

— Ար ցաւիմ, ըսաւ Մորսէրֆ, որ այսպէս տղետ թարգման մը եղայ ձեզ, բայց պէտք եմ խոստովանիլ որ ատկէ աւելի տեղեկութիւն մը չունիմ. գիտեմ նաև որ նուազահար է. քանզի կոմսին տունը ճաշած օրս նուազարանի մը ձայնը լսեցի, որ անշուշտ անորը պիտի ըլլար :

— Աւրեմն կոմսդ հիւր կ'ընդունի՞, հարցուց տիկին Տանկլար :

— Խիստ մեծ պատուով :

— Աւրեմն գրգռեմ Պ. Տանկլարը որ ճաշ մը կամ պարահանդէս մը տայ անոր, որպէս զի կոմսն ալ փոխարէնը հատուցանէ :

— Ինչպէս, անոր տունը պիտի երթաք, ըսաւ Տըպրէ ծիծաղելով :

- Այո՛, ամուսնոյս հետ :
- Բայց ամուսրի է այդ կոմսը :
- Յայտնի կը տեսնէք որ չէ, ըսաւ տիկին Տանկլար ծիծաղելով և դեղանի Յոյն կինը ցուցընելով :
- Այն կինը աղախին մ'է, ինչպէս որ ինքն ալ ըսաւ մեզ, կը յիշե՛ս, Մորսէրֆ, քու նախաճաշիդ օրը :
- Բայց համամիտ ես անշուշտ, սիրելիդ իմ Ալուսիէն, ըսաւ տիկինը, որ կինը աւելի իշխանուհիի մը կերպարանքը ունի :
- Այո՛, Հազար և Տէի Գիշերներուն իշխանուհիներէն մէկունն :
- Հազար և Տէի Գիշերներուն իշխանուհին է չեմ ըսեր. ինչ բանը իշխանուհի կ'ընէ, սիրելիս, ո՛չ ապաքէն ադամանդները. այս կինն ալ անոնցմով ծածկուած է :
- Չափէն ալ աւելի ունի, ըսաւ Էօժէնի, առանց անոնց՝ աւելի դեղեցիկ պիտի ըլլար, ըստ որում պարանոցը և դաստակները պիտի երևէին, որոնք խիստ սիրուն ձև մը ունին :
- Ո՛հ, տեսէք արհեստաւորը որ ինչ դիտողութիւններ կ'ընէ, ըսաւ տիկինը, և տեսէք ինչպէս կը սիրահարի անոր :
- Սիրելի է ինձ ինչ որ դեղեցիկ է, ըսաւ Էօժէնի :
- Բայց կոմսին համար ինչ պիտի ըսէք, ըսաւ Տըպրէ. կարծեմ թէ ան ալ տղեղ չէ :
- Աոմսը, ըսաւ Էօժէնի՝ որպէս թէ դեռ զան դիտելու մտածած չէր. կոմսը խիստ դեղին է :
- Ճիշդ այդ դեղնութեան տակը մենք ալ դադտնիքը կը փնտռենք, ըսաւ Մորսէրֆ. Ա. . . կոմսուհին կը պնդէ թէ թւրուական մ'է :
- Ա. . . կոմսուհին վերադարձեր է, հարցուց տիկինը :
- Գրեթէ մեր դրացի օթեակին խարտեաշ դեղեցիկ մաղերով կինը ան է, մայր իմ, ըսաւ Էօժէնի :
- Այո՛, նոյն ինքն է, ըսաւ տիկին Տանկլար. բայց դիտէք ինչ ընել պէտք էիք, Մորսէրֆ :
- Հրամայեցէք, տիկին :
- Պէտք էիք ձեր Մօնթէ-Քրիսթոյ կոմսին այցելութիւն մը ընել և մեզ հոս բերել զան :



- Ի՞նչ բնե լու համար , ըսաւ Էօժէնի :
  - Հետը խօսելու համար , հետաքրքիր չես զան տեսնելու :
  - Ամենեին :
  - Չարմանալի աղջիկ մ'ես , մբնջեց տիկինը :
  - Ա՛հ , դուցէ ինքնին դայ , ըսաւ Մորսէրֆ , ահա՛ , տե՛սէք , տիկին , զձեզ տեսաւ և կը բարեկէ — :
- Տիկին Տանկար կոմսին բարե ին ժպտախառն սրտասխանեց :
- Շատ աղէկ , ըսաւ Մորսէրֆ , երթամ նայիմ Պիջոց մը կը դանեմ անոր հետ խօսելու :
  - Պարզապէս անոր օթեակը դացէք :
  - Բայց ես ներկայացուած չեմ :
  - Արո՞ւ :
  - Գեղանի Յոյն կնոջ ,
  - Աղախին մ'է ըսիք :
  - Այո՛ , բայց դուք ալ իշխանուհի մ'է կ'ըսէք . . . : Այ , ես կը յուսամ թէ երբ օթեակէն դուրս ելնելա տեսէ , ան ալ սխաի ելնէ :
  - Կարելի է , դացէք ուրեմն :
  - Շատ աղէկ — :
- Մորսէրֆ ողջունելով դուրս ելաւ :
- Իբրք՝ երբ կոմսին օթեակին առջևէն կ'անցնէր , դուռը բացուեցաւ :
- Կոմսը արարեբէն քանի մը խօսք ըսաւ Ալիին , որ դաւիթին մէջ կեցած էր , և Մորսէրֆի թեք մտաւ :
- Ալի դուռը մերստին դոցեց և տիկնոջ առջևը ոտքի վրայ կեցաւ : Գաւիթին մէջ Նուսիպցիին բոլորտիքը բազմութիւն մը դումարուեր էր :
- Սաուդիւ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , ձեր Բարիզը զարմանալի քաղաք մ'է և Բարիզցիները զարմանալի ժողովուրդ մը : Կարծես թէ առաջին անդամն է որ Նուսիպցի մը կը տեսնեն :
- Տեսաք ինչպէս այն խեղճ Ալիին բոլորտիքը դումարուեր էին , որ չէր գիտեր թէ ինչ է պատճառը : Սակայն ևս կ'երաշխաւորեմ զձեզ որ եթէ Թուհուդ , Պօլիս , Պաղ-

տատ կամ ԳաՏիրէ երթաք, ժողովուրդը ձեր բոլորախօր օր-  
տի շղումարուն:

— Պատճառը այն է որ ձեր Արեւելցիները խելացի մար-  
դիկ են, և միայն՝ տեսնելու արժանի եղած բանին կը նա-  
յին. բայց հաւատացէք ինձի, Ալիին այսպէս ժողովրդեան  
սիրելի ըլլալը՝ անոր ձերը ըլլալուն համար է, և վասն զի  
դուք այս միջոցիս ամենուն ուշադրութիւնը դրաւած էք:

— Ի՞նչ կ'ըսէք, և ո՞վ արժանացուց զիս այս սխառոյն:

— Գուք ինքնին: Հազար Լուինոց կառաձիեր նուէր կու-  
տաք, թաղաւորի դորձակալի կանանց կեանքը կ'աղատէք. Պլաք  
հրամանատարի անուամբ ազնուասեռ ձիեր և մշկակա-  
պիկի մեծութեամբ ծօքիներ արշաւել կու տաք, վերջապէս ոսկի  
բաժակներ կը շահէք, և դեղեցիկ կիներու կը զրկէք զանոնք:

— Եւ ո՞վ սխառաց ձեզ այդ խենթութիւնները:

— Ջարմանք, առաջինը տիկին Տանկլար, որ խիստ կը փա-  
փաքի զձեզ իւր օթեակը տեսնելու և կամ թէ ամեն մարդ-  
տեսնէ որ դուք անոր օթեակը եկած էք. երկրորդը՝ Պոշանին  
օրադիրը, և երրորդը՝ իմ խելքս: Եթէ անձանօթութիւն  
պահել կ'ուզէք, ինչո՞ւ ձեր ձիուն անունը Աւֆա կը դնէք:

— Ո՛հ, ստոյգ է, ըսաւ կոմսը, անխոհեմութիւն էր ը-  
րածս: Բայց ըսէք ինձ, Մորսէրֆ կոմսը երբէք թատրոն չի՞  
դար, ամեն կողմ նայեցայ, բայց չտեսայ զան:

— Այս իրիկուն պիտի գայ:

— Ո՞ւր:

— Կարծեմ տիկին Ալիլֆօրի օթեակը:

— Կարծեմ անոր հետ եղող այն ազնուազեղ անձը իւր  
աղջիկն է:

— Այո՛:

— Ուրեմն կը շնորհաւորեմ զձեզ —:

Մորսէրֆ ժպտեցաւ:

— Ասոր վրայ ուրիշ անդամ և մանրամասնաբար կը խօ-  
սինք, ըսաւ. երաժշտութիւնը ինչպէս գտաք:

— Ո՞ր երաժշտութիւնը:

— Հիմա նուազուածը :

— Մարդկային նուազայարդարէ մը շարադրուած ու երկնասանի և անիւտուր թռչուններէ երդուած երաժշտութեան համար շատ ընախը է , ինչպէս կ'ըսէր քարեյիշատակ Գիողիսէս :

— Բայց ըսէք , կ'աղաչեմ , սիրելիդ իմ հոմս , արդեօք արքայութեան և օթը դունդ երդեկաց երդերը կը լսէք դուք :

— Գրեթէ ատոր սէս բան մը : Երբ էս քաղցրալուր երաժշտութիւն մը մտիկ ընել ուղեմ , դերակոմս , այնպիսի երաժշտութիւն մը , որ մարդկային ահանջ ճը երբէք լսած չէ , կը քնանամ :

— Աւրեմն հոս ալ քնացէք , սիրելիդ իմ հոմս , քնացէք , դուստանական խաղը ուրիշ բանի համար շինուած չէ :

— Այ , ստուղիւ ձեր նուազարանները թիստ շատ ձայն կը հանեն : Իմ ըսած քունս քնանալու համար՝ հանգարտութիւն և լուծիւն և ասոնցմէ զատ սլաքրաստութիւն մը պէտք է . . . :

— Այն համբաւուոր մանրադո՞րը ըսել կ'ուզէք :

— Ճիշդ այդ է , երբ երաժշտութիւն մտիկ ընել կ'ուզէք , իմ տունս եկէք ընթերելու :

— Բայց ձեր տունը ճաշի եկած օրս արդէն լսեցի զայն :

— Հոռմի մէջ :

— Այո :

— Ա՛հ , Հայտէին նուազարանին ձայնն էր այն : Ողորմելի արքայալու իւր երկրին եղանակները նուազելով կ'ըզբօսնու երբեմն — :

Մորսէրֆ խօսքը չերկնցուց , իւր կողմէն կոմսն ալ լսեց :

Այն միջոցին զանդակը հնչեց :

— Ար ներէ՞ք ինձի , ըսաւ կոմսը իւր օթեակին ճամբան յառաջանալով :

— Ի՞նչպէս :

— Հաճեցէք Ա . . . կոմսուհւոյն իւր ուրուականին յարգանքը մատուցանել :

— Բայց սեպուհին տիկնոջը :

— Ըսէք անոր ալ որ այս իրիկուն իմ յարդանքս մատուցանելու պատիւը պիտի ունենամ, եթէ կը ներէ — :

Երրորդ արարուածը սկսաւ :

ՄորսէրՖ կոմսը երրորդ արարուածին մէջ ըստ իւր խոստմանը տիկին Տանկլարի օթեակը եկեր էր :

Կոմսը սրահին մէջ յեղաշրջում պատճառող մարդ մը չէր, ուստի իւր դալուստը միայն օթեակին մէջ եղողները տեսան :

Սակայն Մօնթէ-Քրիսթօ տեսաւ զան, և թեթե ժպիտ մը իւր շրթանց վրայէն անցաւ :

Իսկ Հայտէ վարադոյրը բացուելէն ետե ուրիշ բան չէր տեսներ. նախնական ամեն բնութեանց պէս՝ իւր աչքը և ալկանջը զուարճացընող առարկաները իւր միտքը դրաւեր էին :

Երրորդ արարուածը միւսներուն պէս լմնցաւ :

Նոպլէ, Ժուլիա և Լըրու օրիորդք իրենց սովորական խաչապարը 'ի գործ դրին : Արընաստի իշխանը Բոպէր-Մարիօյէն յասպարէզ կանչուեցաւ : Աերջապէս մեծափառ թաղաւորը իւր աղջկան ձեռքէն բռնելով՝ տեսարանին վրայ շրջան մը ըրաւ իւր թաւշեայ վերարկուն ցուցընելու համար :

Ետքը վարադոյրը իջաւ, և սրահին բաղմութիւնը հանդստեան սրահը և դաւիթներուն մէջ խոնեցան :

Կոմսը իւր օթեակէն դուրս ելաւ և մէկ վայրկեանէն տիկին Տանկլարի օթեակին մէջ երեցաւ :

Տիկինը ուրախութեամբ խառն զարմացման ձայն մը հանեց ակամայ :

— Հրամայեցէք վերջապէս, պարոն կոմս, ըսաւ անոր. ձեզ արդէն ըրած դրաւոր շնորհակալութիւններս բանիւ բերանոյ յայտնելու մեծապէս կը փափաքէի :

— Ո՛հ, տիկին, ըսաւ կոմսը, տակաւին կը յիշէք այն գուզնաքեայ գործը, զոր ես արդէն մոռցեր էի :

— Այո՛, բայց չեմ կրնար մոռնալ, պարոն կոմս, որ հետեւեալ օրն ալ իմ սիրելի բարեկամուհիս տիկին Աիլըֆօրը այն նոյն ձիերուն վտանդէն ազատեցիք :

— Այս անգամ ալ, տիկին, ձեր շնորհակալութեանց ար-

ժանի շեմ, այլ Ալի իմ հուսկիացիս այն երեւելի ծառայութիւնը տիկին Ախլըֆօրի մատուցանելու երջանկութիւնն ունեցաւ :

— Բայց զաւակս աւաղակիաց ձեռքէն ազատողն ալ Ալին է, ըսաւ Մորսէրֆ կոմսը :

— Աչ, պարոն կոմս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ զօրասելտին իրեն երկնցուցած ձեռքը սեղմելով, ոչ, այս անգամ շնորհակալութիւննիդ կ'ընդունիմ, բայց արդէն յայտնեցիք զանոնք ինձի, և ես ընդունեցի, ստուգիւ ամօթով եմ զձեզ այսչափ երախտասարտ տեսներով : Պատիւ ըրէք ինձ, կ'ազաչեմ, տիկին, զիս ձեր օրիորդ աղջկան ներկայացընելու :

— Արդէն ներկայացուած էք, պարոն, զոնէ անուամբ վասն զի երկու երեք օրէ 'ի վեր միայն ձեր վրայօք կը խօսինք : Էօժէնի, շարունակեց տիկինը իւր աղջկան դառնալով, պարոն Մօնթէ-Քրիսթոյ կոմսը — :

Կոմսը խոնարհութիւն մը ըրաւ :

Եւ օրիորդ Տանկլար գլխովը թեթեւ շարժում մը ըրաւ :

— Ձեր հետը եղող զարմանազեղ անձը ձեր աղջիկն է, պարոն կոմս, ըսաւ Էօժէնի :

— Աչ, օրիորդ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ անոր յետին անկեղծութեամբ և զարմանալի համարձակութեամբ ըսած ձեւին վրայ զարմանալով, ողորմելի Յոյն աղջիկ մ'է, որուն խնամածուն ես եմ :

— Եւ անոնք . . . :

— Հայտէ է, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Յոյն աղջիկ մը, մրմնջեց Մորսէրֆ կոմսը :

— Այո՛, կոմս, ըսաւ տիկին Տանկլար, և ըսէք ինձ, միթէ այս գեղեցիկ հաղուստին պէս հաղուստ մը տեսած էիք Տէպէտէլէնի Ալի բաշային պալատին մէջ, ուր դուք այնչափ փառաւորապէս ծառայած էք :

— Ա՛, Եանեա ծառայութիւն ըրած էք, պարոն կոմս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Բաշային գունդերուն քննիչ զօրասելտ էի ես, պատաս-

խանեց Մորսէրֆ, և իմ քիչ մը հարստութիւնս Ալպանա, ցւոց այս մեծանուն իշխանին առատաձեռնութիւններէն ըստացած եմ:

— Ահա, հոն նայեցէք, ըսաւ տիկին Տանկլար:

— Ո՛ւր, կակազեց Մորսէրֆ:

— Տեսէ՛ք —, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

Եւ իւր թեւը կոմսին մէջքը շրջապատելով, անոր հետ օթեակէն դուրս հակեցաւ:

Այն միջոցին՝ Հայտէ, որ կոմսը տեսնելու համար այն կողմը կը դիտէր, Մօնթէ-Քրիսթօյի տոզոյն երեսը տեսաւ Մորսէրֆի քով, զոր պրկած էր:

Այս երեոյթը ծաղկահաս աղջկան վրայ Մեդուզայի դիւին ազդեցութիւնն ըրաւ:

Գէպ 'ի առաջ շարժում մը ըրաւ, կարծես թէ իւր աչքերովը զանոնք երկուքն ալ պիտի կլլէր. դրեթէ անմիջապէս ետքը գէպ 'ի ետեւ նետուեցաւ հառաչանք մը հանելով, թէ և տկար ձայնիւ բայց մօտ եղողներէն լսելի եղաւ, և որու վրայ Ալի անմիջապէս դուռը բացաւ:

— Հոն նայեցէք, ըսաւ Էօթէնի. ինչ սրտասեցաւ արդեօք ձեր որբ աղջկան, պարոն կոմս. կարծես թէ անհանգստութիւն մը ունի:

— Իրօք, ըսաւ կոմսը. բայց մի՛ վախնաք, օրիորդ. Հայտէ խիստ ջղուտ է, հետեաբար հոտերէն շատ դիւրազգած է. հակակիր հոտ մը բաւական է զան նուաղեցընել. բայց, յաւելցուց կոմսը ծոցէն սրուակ մը հանելով, դեղը քովս է —

Եւ տիկինն ու աղջիկը մէկ ողջոյնով բարեւելէն, ու կոմսին և Տըպրէին ձեռքը թոթվելէն ետեւ՝ տիկին Տանկլարի օթեակէն դուրս ելաւ:

Երբ Հայտէի քովը հասաւ, ծաղկահաս աղջիկը դեռ դեղնած էր, և կոմսը տեսնելուն պէս՝ անոր ձեռքը բռնեց:

Մօնթէ-Քրիսթօ դիտեց որ աղջկան ձեռքերը խոնաւ և մի՛ անդամայն սառած էին:

— Արձն հետ կը խօսէիր հոն, տէր իմ, հարցուց ծաղկահաս աղջիկը:

— Մորսէրֆ կոմսին հետ , սրատասխանեց կոմսը , որ մեծանուն հօրդ ծառայած և իւր հարստութիւնը անոր սարսափութեամբ կը խոստովանի :

— Ա՛հ , թշուառականը , սրտաց Հայտէ , ան է որ հայրստաճիկներուն ծախեց , և ստացած հարստութիւնը իւր մատնութեան դինն է , չէ՛րք դիտեր այս , սիրելի տէր իմ :

— Ես իւրոսի մէջ այս սրտամութեան վրայ քանի մը խօսք լսեր էի , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , բայց անոր մանրամասն անդեկութիւնը չեմ դիտեր : Եկու , աղջիկս , երթանք , և սրտով ինձ , անշուշտ հետաքրքրական բան մը պիտի ըլլայ :

— Ա՛հ , այո՛ , եկու , եկու , երկար ատեն այն մարդուն դիմացը կենալով կարծեմ թէ պիտի մեռնիմ — :

Եւ Հայտէ աշխուժիւ ոտք ելնելով , մարդարիտներով և բուստերով բանուած Գաշմիրի սպիտակ կերպասէ վերարկուով փաթթուեցաւ և իսկոյն օթեակէն դուրս նետուեցաւ այն միջոցին որ վարադոյրը կը բացուէր :

— Տեսէք , միթէ ամեն մարդու կը հաւասարի կոմսը , ըսաւ Ա . . . կոմսուհին Ալպերին , որ անոր քովը կը դանուէր . Բօպէրի երրորդ արարուածը ուշադրութեամբ մտիկ կ'ընէ և չորրորդը սկսուած ատենը կը մեկնի :



## ԳԼՈՒԲ ԺԵ.

## ԱՐԺԷԹՂԹՈՑ ԳՆՈՅՆ ԲԱՐՉԲԱՆԱԼՆ ՈՒ ԻԶՆԱԼԸ



Այս տեսակցութենէն քանի մը օր ետքը , Ալպէրտը Մորսէրֆ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին այցելութեան եկաւ Շանդէլիդէի տունը , որ արդէն պալատի ընթացք մը ստացեր էր կոմսին անբաւ հարստութեամբը իւր սովորութեանց մէջ 'ի դործ դրած ձեւերովը :

Ալպէր տիկին Տանկլարի շնորհակալութիւնները նորոգելու եկեր էր , զորոնք արդէն յայտներ էր տիկին Տանկլար՝ ծընեալ Հէրմինի տը Սէրվիէօ ստորագրութեամբ նամակ մը :

Ալպէրի ընկերացած էր Լիւսիէն Տրոյրէ , որ իւր բարեկամին խօսքերուն քանի մը քաղաքավարական խօսքեր ալ յարեց , որոնք անտարակոյս պաշտօնական չէին , բայց կոմսը իւր մտաց կորովութեամբը չէր կրնար անոնց աղբիւրին վրայ կասկածիլ :

Իրեն այնպէս իսկ երեցաւ որ Լիւսիէն հետաքրքրութեան կրկին զգացմամբ շարժեալ զինքը տեսնելու եկեր էր , և թէ այս զգացման կէսը Շոսէ-տ' Անթէն փողոցը կը պատճառէր :

Իրօք՝ առանց երկմտելու կրնար ենթադրել որ տիկին Տանկլար իւր աչքերովը չկրնալով ճանչնալ այնպիսի մարդու մը ներքին դործերը , որ երեսուն հազար Ֆրանքնոց ձիեր կը նուիրէր , և մէկ միլիոն Ֆրանքնոց ադամանդներով զարդարուած Յոյն աղախինի մը հետ թատրոն կ'երթար , Լիւսիէնի աչաց յանձներ էր անոր բնակարանը լաւ մը քննել և անոր վրայ իրեն տեղեկութիւններ տալ :



Բայց կոմսը Լիւսիէնի այցելութեան և տիկին Տանկլարի հետաքրքրութեան մէջ յարնչականութեան կասկած մը ունենալը չյայտանայ :

— Գրեթէ անընդհատ յարարերութեանց մէջ կը դրտնուիք սեպուհ Տանկլարի հետ , հարցուց կոմսը Ալլիէր տը Մորսէրֆին :

— Այո՛ , սլարոն կոմս , դիտէք արդէն ձեզ ըսածս :

— Ուրեմն դործը անսիրտիս մնացած է :

— Անշուշտ , ըսաւ Լիւսիէն , կատարուած դործ մ'է այն — :

Եւ Լիւսիէն անտարակոյս մտածելով որ սյս խօսքով խօսակցութեան մէջ մանե լով՝ կրնար իրաւունք ունենալ անոնցմէ քիչ մը բաժնուելու , ուստի խեցեայ միակնոցը աչքին դրաւ , և իւր նուրբ դաւադանին ոսկի գունդը խածնելով՝ սկսաւ սենեկին շուրջը սլարտիլ զինանշաններն ու սլատիւրները քըննելով :

— Ձեր խօսքերը յիշելով , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , չէի կարծեր որ այսպէս շուտով որոշում մը տաք :

— Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ . դործերը ինքնին կը կատարուին . ձեր անոնց վրայ խորհելէն առաջ անոնք ձեր վրայ կը խորհին , և երբ դուք անոնցմէ կը հեռանաք , անոնք ձեր առջևը զարմանալի ճամբայ մը կը բանան : Հայրս և Պ . Տանկլար 'ի միասին Սպանիոյ մէջ ծառայեցին՝ հայրս բանակին և Պ . Տանկլար ուտելեաց մատակարարութեան : Հայրս յեղափոխութենէ ընչադուրի , և Պ . Տանկլար ժառանգութենէ բոլորովին դուրի իրենց հիմերը հօն դրին՝ հայրս իւր քաղաքական և զինուորական հարստութեան , որ խիստ դոհացուցիչ է , և Պ . Տանկլար իւր քաղաքական և դանձային հարստութեան , որ սքանչելի է :

— Այո՛ , ստոյգ է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . կարծեմ թէ այցելութեանս ժամանակ Պ . Տանկլար ասոնց վրայօք խօսեցաւ ինձ : Բայց օրիորդ Էօժէնին ալ սիրուն աղջիկ մ'է , շարունակեց կոմսը Լիւսիէնի կողմը ակնարկ մը շրջելով , որ նկատ

ըստեան յը երեսները կը դարձնէր, կարծեմ թէ անոր անունը էօժէնի է:

— Խիստ սիրուն կամ թէ ըսենք խիստ դեղերցիկ է, պատասխանեց Ալպէր. բայց այնպիսի դեղերցիութիւն մը ունի, որուն յարող ես չեմ դիտեր:

— Արդէն անոր ամուսինը եղածի պէս կը խօսիք:

— Ո՛հ, ըսաւ Ալպէր իւր բողբոսիքը նայելով որ տեսնէ թէ Լիւսիէն ի՞նչ կ'ընէր:

— Այս ամուսնութիւնը սրտովդ եղած չերեւիր ինձ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ ձայնը ցածցընելով:

— Օրիորդ Տանկլարին ինձմէ խիստ հարուստ ըլլալը կը վախցընէ զիս:

— Բէ՛հ, այդ ի՞նչ զօրաւոր պատճառ մ'է. միթէ դուք ալ հարուստ չէք:

— Հայրս յիսուն հազար Ֆրանքի չափ եկամուտ ունի, ամուսնացած ժամանակս դուցէ տասը կամ տասներկու հազարը ինձ տայ:

— Իրօք դումարը չափաւոր է, բայց աշխարհիս մէջ ամեն բան հարստութենէ կախեալ չէ, բարի անուն և բարձր տիտղոս մը ունենալն ալ մեծ բան է: Ձեր անունը հոչակաւոր է և տիտղոսը փառաւոր. ասոնցմէ զատ Մորսէրֆ կոմսը զինուոր մ'է, և Պէյարի այս ամեն հանդամանքները Տիւկէսքլէնի աղքատութեան հետ միացած տեսնելը սիրելի է ամենուն. անշահախնդրութիւնը ազնուականի մը սուրը շողացընող արևուն պայծառադոյն ճառագայթն է: Սակայն ընդհակառակն, այս միութիւնը խիստ պատշաճ կը դոնեմ ես. օրիորդ Տանկլար կը հարստացընէ զձեզ և դուք կ'ազնուացընէք զան —:

Ալպէր դուրսը շարժեց և մտածութեան մէջ ընկղմեցաւ:

— Ուրիշ պատճառ մը ևս կայ, ըսաւ:

— Շիտակը, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, ծաղկահաս, հարուստ և գեղեցիկ աղջկան մը դէմ ձեր ունեցած այդ դժկամութեան պատճառը ինձ անխմանալի է:

— Մի դարձանաք, սպարոն, այս դժկամութիւնը, եթէ իրօք դժկամութիւն մը կայ, բոլորովին իմ կողմէս չէ:

— Արձու կողմէն է ուրեմն, վասն զի ըսիք ինձ թէ ձեր հայրը այս ամուսնութեան կը բաղձայ:

— Մօրս կողմէն է, սպարոն, և մայրս խորագէտ և անվրիպելի տեսութիւն մը ունի, չեմ դիտեր ինչ է պատճառը որ այս միութեան սիրալիր աչօք չնայիր, և Տանկլարի ընտանեաց վրայ նպաստաւոր համարում չունի:

— Ա՛հ, յայտնի կ'երևի, ըսաւ կոմսը քիչ մը այլայլեալ ձայնիւ. տիկին Մորսէրֆ կոմսուհին բարձրաստիճան, ազնուական և քնքուշ ըլլալով՝ քիչ մը կ'երկմտի ան ազնուական, հաստ և բիրտ ձեռք մը թաթցել, բնական է այս:

— Չեմ դիտեր թէ իրօք ա՛յդ է պատճառը, սակայն այս դիտեմ որ եթէ այս ամուսնութիւնը կատարուի, մայրս դժբաղդ պիտի ըլլայ: Արդէն վեց շաբաթ առաջ այս դործին վրայ խօսելու համար պիտի դուժարուէինք. բայց ես այնպիսի դըլխացաւ մը ունէի . . . :

— Ստոյգ դըլխացաւ, հարցուց կոմսը ժպտելով:

— Ա՛հ, կատարեալ ստոյգ դըլխացաւ մը ունէի՝ անտարակոյս երկիւղէս պատճառեալ . . . , այնպէս որ այս տեսակցութիւնը երկու ամիս ետքը թողուցինք: Ստիպողական դործ չունինք, ես տակաւին քսան և մէկ տարեկան եմ, և Էօժէնի տասն և եօթը, բայց առաջիկայ շաբաթ երկու ամիսը կը լրանայ, պէտք է ներկայ դտնուիլ: Չէք կրնար երեւակայել, սիրելիդ իմ կամս, թէ ս'ըչափ շփոթած եմ . . . : Ա՛հ, ս'ըչափ երջանիկ էք դուք որ ազատ էք:

— Դուք ալ ազատ եղիք, կը հարցընեմ, ո՛վ արգելք կ'ըլլայ ձեզ:

— Բայց եթէ օրիորդ Տանկլարի հետ չամուսնանամ, հայրս դանտնք չարաչար խաբած պիտի ըլլայ:

— Աւրեմն ամուսնացիք, ըսաւ կոմսը ուսերը զարմանալի կերպով շարժելով:

— Այո՛, բայց մօրս ալ մեծ վիշտ մը պատճառած պիտի ըլլամ:

— Ուրեմն մի ամուսնանաք :

— Տեսնե՞նք, ես կրցածս պիտի ընեմ, և դուք ինձ խորհուրդ պիտի տաք, այնպէս չէ, և եթէ կարելի է, զիս այս ներդուծենէն ազատեցէք: Ո՛հ, կարծեմ թէ ազնիւ մայրս չվշտացընելու համար կոմսին հետ պիտի աւրուիմ — :

Մօնթէ-Քրիսթօ երեսը միւս կողմը դարձուց, իւր սիրտը շարժած կ'երևէր :

— Բարեկամ, ըսաւ Տըպրէին, որ սրահին մէկ ծայրը թեւաթողի մը վրայ նստած էր՝ աջ ձեռքը մատիտ մը և ձախը ծոցատետր մը բռնած, ինչ կ'ընէք հող, Բուսէնի նկարը կ'օրինակէք :

— Ե՛ս, ըսաւ Տըպրէ հանդարտութեամբ, այո՛, նկար մը, վասն զի նկարել շատ կը սիրեմ: Բայց այս անգամ նկարին բոլորովին հակառակն է ըրածս, հաշիւներ կ'ընեմ:

— Ի՞նչ հաշիւներ :

— Այս հաշիւները անուղղակի կերպով քեզ կը նկատեն, դերակոմս. կը հաշուեմ թէ Հայիթի արժեթղթոց վերջին բարձրանալուն վրայ Տանկլարի վաճառատունը որչափ շահեցաւ, վասն զի երեք օրուան մէջ անոնց գինը երկու հարիւր վեցէն չորս հարիւր իննի բարձրացաւ, և խորագէտ սեղանաւորը շատ արժեթուղթեր դնած էր երկու հարիւր վեցի, որով երեք հարիւր հազար Ֆրանք շահած պիտի ըլլայ:

— Այնչափ երևելի շահ մը չէ այդ, ըսաւ Մօրսէրֆ, քանզի Սպանիոյ արժեթղթերէն միլիոն մը շահեցաւ այս տարի:

— Մտիկ ըրէ, սիրելիս, ըսաւ Լիւսիէն, ահա Պ. Մօնթէ-Քրիսթոյ կոմսը որ Իտալացւոց հետ քեզ պիտի ըսէ թէ ամենէն մեծ շահը դործը անվտանգ կատարելն է: Միթէ փոքր դումար մ'է այս, և երբ այսպէս խօսքեր կը լսեմ, ուսերս կը բարձրացընեմ:

— Հայիթի խօսքը կ'ընէիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Այո՛, Հայիթի ուրիշ խնդիր մ'է, դաղղիական վաշխային առուտուրի ետեւէ խաղն է այն: Ամեն տեսակ խաղերը կը խաղացուին և կը սիրուին, բայց ամենէն ալ կը ձանձրանայ մարդ,

և միշտ եւրթէին կը դառնայ, որ խաղերուն ղ լիսաւորն է : Այսպէս և Պ. Տանկլար երէկ չորս հարիւր վեցի ծախեց և երեք հարիւր հազար ֆրանք ծոցը դրաւ . եթէ մինչև այսօր սպասէր, անոնց ղինը երկու հարիւր հինգի պիտի իջնէր, և փոխանակ երեք հարիւր հազար ֆրանք շահելու՝ քսան կամ քսան և հինգ հազար ֆրանք պիտի կորսնցընէր :

— Եւ ինչո՞ւ արժեթղթոց ղինը չորս հարիւր իննէն երկու հարիւր վեցի իջաւ, հարցուց Մօնթէ-Քրիսթօ . ներումն կը խնդրեմ, վաճառականաց Ալմբանոցին այս ամեն խորամանկութեանց վրայ անտեղեակ եմ :

— Ասան ղի, պատասխանեց Ալպէր, լուրերը հետզհետէ կը հասնին և իրարու չեն նմանիր :

— Ի՞նչ կ'ըսէք, Պ. Տանկլար օրուան մը մէջ երեք հարիւր հազար ֆրանք շահելու կամ կորսնցընելու խաղերու մէջ կը մտնէ : Ուրեմն խիստ հարուստ մէկն է ան :

— Ինքը չէ խաղացողը, այլ տիկինը, ըսաւ Լիւսիէն աշխուժիւ . ճշմարիտ՝ աներկիւղ կին մ'է :

— Բայց դուն որ խոհեմ մարդ մ'ես, Լիւսիէն, և լուրերուն փոփոխականութիւնը կը ճանչնաս, ըստ որում աղբիւրը կը դանուիս, պէտք էիր արգիլել զան, ըսաւ Մորսէրֆ ծպխով մը :

— Ես ի՞նչ կրնամ ընել, երբ իւր ամուսինն անգամ չյաջողիր, պատասխանեց Լիւսիէն : Տիկնոջ բնութիւնը կը ճանչնաս, ամենեւին մէկէ կախում չունի և ուզածը կ'ընէ :

— Ո՛հ, եթէ ես քու տեղդ ըլլայի, ըսաւ Ալպէր :

— Ի՞նչ կ'ընէիր :

— Անոր պակասութիւնը կ'ուղղէի . իւր ապառնի փեսային ծառայութիւն մը ըրած պիտի ըլլայիր :

— Ի՞նչ կերպով :

— Շատ դիւրին կերպով . պատուական դաս մը կուտայի անոր՝

— Դաս մը :

— Այո՛, պաշտօնէի ատենագւորութեան պաշտօնդ լուրերու մեծ հաստատութիւն կու տայ . հազիւ թէ բերանդ կը բա-

նաս որ սեղանաւորաց զործակալները քու խօսքերդ շուտով  
կը համառօտադրեն . վրայ վրայի հարիւր հազարի շափ ֆրանք  
կորսնցընել տուր , որով խելքը գլուխը պայ :

— Չեմ հասկընար , ըսաւ Լիւսիէն կակաղելով :

— Սակայն և այնպէս խօսքերս յայտնի են , պատասխանեց  
երիտասարդը բոլորովին անկեղծութեամբ . առտու մը չլսուած  
քան մը իմացուր , այնպիսի հեռագրական լուր մը որ քեզմէ  
զատ մէկը չդիտնայ . զոր օրինակ կրնաս ըսել թէ՛ Հէնրի Գ  
երէկ Վասլրիէլի հետ տեսնուեր է . այս լուրը արժեթղթոց  
դիները կը բարձրացընէ , և տիկին Տանկլար անոնցմէ շատ  
մը ժողվելով , անշուշտ պիտի կորսնցընէ երբ հետեւեալ օրը  
Պոշան իւր օրագրին մէջ այս խօսքերը կը հրատարակէ .

« Հէնրի Գ թագաւորին Վասլրիէլի հետ տեսակցութեան  
համար պտըտած լուրը բոլորովին սխալ է . Հէնրի Գ նոր  
կամուրջէն հեռացած չէ » — :

Լիւսիէն իւր շրթանց ծայրովը սկսաւ ծիծաղիլ :

Մօնթէ-Քրիսթօ թէև անտարբեր կ'երևէր , բայց այս խօ-  
սակցութեան մէկ բառը անդամ չկորսնցուց , և իւր խորա-  
զնին աչօքը հաւատարիմ ատենադպրին շփոթութեանը մէջ  
դադտնիք մը տեսնելու կարող եղաւ :

Եւ այս շփոթութիւնը , զոր Ալպէր ամենեին չդիտեր էր ,  
Լիւսիէնի այցելութիւնը համառօտելու պատճառ եղաւ :

Յայտնապէս անհանդստութիւն մը կ'ըզզար :

Կոմսը մինչև գուռը անոր ընկերանալով , ցած ձայնիւ քանի  
մը խօսք ըսաւ անոր , որոնց Լիւսիէն պատասխանեց .

— Յօժարութեամբ , պարոն կոմս , կ'ընդունիմ — :

Ետքը կոմսը Մորսէրֆին քովը վերադառնալով ,

— Կարծեմ թէ աղէկ չըրիք Պ . Տըպրէին առջևը ձեր գո-  
քանչին վրայ այնպէս խօսելնիդ :

— Ա՛ղաչեմ , կոմս , հիմայէն այդ անունը մի տաք :

— Ստոյգ և առանց չափազանցութեան ըսէք , ձեր կոմսու-  
հի մայրը այս ամուսնութեան այն աստիճան հակառակ է :

— Այն աստիճան որ տիկին Տանկլար շատ քիչ անդամ

մեր տունը կու գայ, և մայրս կարծեմ իւր կենացը մէջ երկու անգամ անոր տունը գացած չէ:

— Աւրեմն համարձակ և առանց քաշուելու խօսիմ. սլարոն Տանկլար իմ սեղանաւորս է, և Պ. Ալիլօֆօր խիստ մեծ քաղաքավարութեամբ վարուեցաւ հետս՝ բարեբաղդ գիտուածով մը անոր մատուցած ծառայութեանս համար շնորհակալ ըլլալու ատիւ: Ասոնցմէ կը դուշակեմ որ հետզհետէ ճաշեր և խնջոյքներ տեղի պիտի ունենան: Աւստի փառասէր չերեւելու, և միանգամայն անոնց առաջը առնելու կարող ըլլալու համար՝ մտածեցի որ Պ. և տիկին Տանկլարը, Պ. և տիկին Ալիլօֆօրը Օթէօյլ գիւղի տունս հրաւիրեմ: Եթէ զձեզ ինչպէս նաև Պ. Մորսէրֆ կոմսը և տիկին կոմսուհին այս ճաշին հրաւիրեմ, կերպով մը ամուսնական աղումքի կերպարանքը պիտի առնու գործը, կամ գոնէ տիկին Մորսէրֆ կոմսուհին այն մտօք պիտի առնու, մանաւանդ եթէ Պ. սեպուհ Տանկլար պատիւ ընէ ինձ իւր աղջիկը հետը բերելու: Այն ժամանակ ատելի պիտի երեւիմ ձեր մօրը, և ես ամենեւին չեմ ուզեր այս բանը. ընդհակառակն կը փափաքիմ որչափ կարելի է որ անոր սրտի համակրութիւնն ունենամ, և կը խնդրեմ որ ամեն անգամ առիթը պատահած ժամանակ այս ըսածս կրկնէք անոր:

— Շնորհակալ եմ, կոմս, որ այսպիսի համարձակութեամբ կը վարուիք ինձի հետ, և զմեզ ճաշի չհրաւիրելնիդ իրաւացի է: Ար փափաքիք մօրս սրտի համակրութիւնն ունենալ, կ'ապահովեմ զձեզ որ արդէն ստացած էք զայն:

— Արկարծէք, հարցուց Մօնթէ — Քրիսթօ հետաքրքրութեամբ:

— Հաստատ գիտեմ, սլարոն, անցեալ օր երբ մեզմէ բաժնուեցաք, ժամ մը շարունակ ձեր վրայ խօսեցանք. բայց մեր խօսքին դառնանք: Եթէ մայրս ձեր կողմէն եղած այդ զգուշութիւնը իմանալու ըլլայ, զոր ես անոր ըսելու պիտի համարձակիմ, ապահով եմ որ յանչափս երախտապարտ պիտի ըլլայ ձեզ, իրաւ է որ հայրս ալ ընդ հակառակն խիստ պիտի նեղանայ —:

Կոմսը սկսաւ ծիծաղիլ :

— Աղէկ կը դուշակէք, ըսաւ. բայց կը մտածեմ որ այս դործին միայն հայրդ պիտի չնեղանայ, այլ Պ, և տիկին Տանկլար ալ, որոնք ղիս անմարդավար մէկը պիտի համարին: Գիտեն որ ես ձեզի հետ խիստ մտերմութիւն մը ունիմ, և դուք Բարիզի մէջ իմ ամենէն առջի բարեկամս էք. զձեզ տունս չտեսնելով, պիտի հարցընեն թէ ինչո՞ւ չհրաւիրեցի զձեզ: Գոնէ առաջէն ուրիշ տեղ խօսք տուած եղիք, որ հաւանական երևի, և փոքր տոմսակաւ մը իմացուցէք ինձ. դիտէք աղէկ որ սեղանաւորաց քով դրութիւնները արժէք ունին:

— Ես ատկէ ալ աղէկը կ'ընեմ, պարոն կոմս, ըսաւ Ալպէր: Մայրս ծովու օդը շնչել կը փափաքի. ձեր ճաշը ո՞ր օրուան որոշուած է:

— Շաբաթ օրուան:

— Այսօր երեքշաբթի է. վաղը իրիկուն մենք կը մեկնինք, և հետեւալ առտու Թրէբօր կը հասնինք: Ստուդիւ, պարոն կոմս, ազնիւ բարեկամ մ'էք դուք որ դործերը այսպէս կը կարգադրէք:

— Ո՞ր օրը ձեր հրաւերները ղրկեցիք:

— Այսօր:

— Հոգ չէ, ես հիմա Պ. Տանկլարի տունը կ'երթամ, և կ'իմացընեմ որ վաղը ես ու մայրս Բարիզէն կը մեկնինք: Ես զձեզ տեսած չեմ ըլլար, հետեւաբար ճաշին վրայ տեղեկութիւն չունիմ:

— Ի՛նչ խենթ էք եղեր. հասյա Պ. Տըպրէն, որ զձեզ իմ տունս տեսաւ:

— Ո՛հ, ստոյգ է:

— Ընդ հակառակն՝ ես զձեզ տեսած և պարզապէս հրաւիրած կ'ըլլամ, և դուք անկեղծութեամբ կը պատասխանէք թէ չէք կրնար ինձ սեղանակից ըլլալ, ըստ որում Թրէբօր պիտի մեկնիք:

— Շատ աղէկ, դործը լմնցաւ. բայց դուք վաղուանէն առաջ պիտի գա՞ք մայրս տեսնելու:



— Աստուանէն սուաջ դժուար է ինձ դալ, մանաւանդ որ զձեզ ալ ճանասպարհորդութեան պատրաստութեանց մէջ պիտի դանեմ:

— Դուք մեզի համար աղնիւ անձ մ'էիք, հիմա աւելի սիրելի պիտի ըլլաք:

— Եւ ի՞նչ պէտք եմ ընել այդ պատուոյն հասնելու համար:

— Ի՞նչ պէտք էք ընել:

— Ե.յո՛, կը հարցընեմ:

— Օդի պէս ազատ էք դուք այսօր, եկէք մեր տունը ճաշեմք, միայն երեք հոգի պիտի ըլլանք, դուք, մայրս և ես: Մայրս հազիւ թէ տեսած էք, այս կերպով մօտէն աւելի ազէկ պիտի ճանչնաք զան: Խիստ աղնիւ կ'իմ մ'է ան, և ես մէկ բանի վրայ կը ցաւիմ, որ ինչո՞ւ իւր նմանը չգտնուիր քսան տարի պակաս տարիքով, այն ատեն ճշմարիտ կ'ըսեմ որ խեղոյն Մորսէրֆ կամօուհի մը և դերակոմսուհի մը պիտի ըլլար: Հայրս տունը չէ, այս իրիկուն ժողովի մը մասնակից պիտի ըլլայ և մեծ կնքապահին տունը պիտի ճաշէ: Եկէք, ճամբորդութեանց խօսքերը կ'ընենք, դուք բոլոր աշխարհս տեսած էք, ձեր գլուխը եկածները կը պատմէք, անցեալ իրիկուն ձեր հետը թատրոն եղող այն Յոյն դեղանի կնոջ պատմութիւնը կ'ընէք, զոր ձեր աղախինը կ'անուանէք և իշխանուհւոյ պէս կը վարուիք անոր հետ: Իտալերէն և Սպանիերէն կը խօսինք, ըսէք, կ'ընդունինք առաջարկութիւնս, մայրս շնորհակալ պիտի ըլլայ ձեզ:

— Խիստ շնորհակալ եմ, ըսաւ կոմսը, ձեր հրաւերը քաղցր է ինձ, բայց սրտով կը ցաւիմ որ չեմ կրնար ընդունիլ զայն: Ձեր կարծածին պէս ազատ չեմ ես, ըստ ուրում խիստ կարեւոր ժամագրութիւն մը ըրած եմ:

— Բայց զգուշացէք, կոմս, քիչ մը առաջ սորվեցուցիք ինձ թէ անհաճոյ հրաւերէ մը ազատ ըլլալու համար ի՞նչ միջոց բանեցընել հարկ է: Պէտք է փորձով հաստատէք ինձ, բարեբաղդարար Տանկլարի պէս սեղանաւոր չեմ, բայց կ'իմացընեմ ձեզ որ անոր շափ դժուարահաւատ եմ:

— Շատ աղէկ, հիմա փորձը կը տեսնէք, ըսաւ կոմսը և զանդակը հնչեցուց:

— Այս երկրորդ անդամն է որ մօրս հետ ճաշելու հրաւերը կը մերժէք. կ'երեւի թէ այդպէս որոշում մը ըրած էք —:

Մօնթէ-Քրիսթօ սարսուաց:

— Այդպէս կարծիք մը մի ունենաք, ըսաւ. հիմա փորձը կը տեսնէք —:

Պատիսթէն ներս մտաւ և դրան առջև ոտքի վրայ կեցաւ:

— Ձեր այցելութենէն տեղեկութիւն մը չունէի, այնպէս չէ:

— Գուք այնպիսի տարօրինակ անձ մ'էք, որ չեմ կրնար այդ բանը հաստատել, պատասխանեց Ալպէր:

— Գոնէ չէի կրնար դուշակել որ զիս ճաշի պիտի հրաւիրէք:

— Այդ հաւանական է:

— Ուրեմն մտիկ ըրէք. Պատիսթէն, ինչ ըսի քեզ այս առտու երբ աշխատութեան սենեակս կանչեցի:

— Ժամը հինգ զարնելուն պէս՝ տան դուռը գոցել տալ, պատասխանեց ծառան:

— Ետքը:

— Բայց, պարոն կոմս . . . , ըսաւ Ալպէր:

— Ոչ, ոչ. կ'ուզեմ բացարձակապէս հանել վրայէս դադարնիքներու այն համբաւը, զոր դուք իմ վրաս կը դնէք, սիրելիդ իմ դերակոմս: Միշտ Մանֆրէտի դերը ներկայացընելը խիստ դժուար է. ասպակեայ տան մը մէջ բնակիլ կ'ուզեմ: Շարունակէ, Պատիսթէն, ետքը . . . :

— Ետքը, Պ. Պարթոլոմէօ Գավալդանթի դնդապետէն և իւր որդիէն զատ մէկը չընդունիլ:

— Կը լսէք. Պ. Պարթոլոմէօ Գավալդանթի դնդապետը կը ճանչնաք, Իտալիոյ ամենէն հին ազնուականներէն մէկն է, և իւր որդին ձեր հասակաւ սիրուն երիտասարդ մ'է, դերակոմս. ձեր տիտղոսին նոյնը ունի, և իւր հօրը միլիոններովը Բարիզեան ընկերութեանց մէջ կը մտնէ: Գնդապետը այս իրիկուն իւր Անտրէա որդին հոս բերելով ինձ պիտի

շանձնէ : Եւ ես ընկերութեանց ձեռնս պիտի մայրենեմ զան եթէ  
արժանի ըլլայ . անշուշտ դուք ալ պիտիօղնէք ինձ , այնպէս : Է :

— Ընտարակոյս : Աւրեմն այն Գալալիականթի զնդաստը  
ձեր հին բարեկամներէն մէկն է :

— Աչ , ամենեւին . շատ հին զերդաստաններէ իջած՝ խիստ  
քաղաքակրթեալ , սլարկեշտ և խոհեմ սլարոն մ'է , ինչպէս  
որ Իտալիոյ մէջ խիստ շատ կը գտնուի : Ձինքը շատ անդամ  
Ֆիորէնցա , Պալոնեա և Նուքքա տեսած ըլլալուս՝ իւր գա-  
լուստը ինձ խմայուցեր էր : Ճանատարհորդութեան բարեկամ-  
ները պահանջող կ'ըլլան . կ'ուզեն որ զխոլուածով անդամ  
մը մեր անոնց յայտնած բարեկամութիւնը ամեն տեղ կատա-  
ք'նք , որպէս թէ քաղաքակրթեալ մարդ մը , որ անձանօթ  
որ և է մէկու հետ տեսութիւն կ'ընէ , ուրիշ մտածելու բան  
չունի : Եյս բարի Գալալիականթի զնդաստը , որ Աայսերու-  
թեան ժամանակ Մոսկուա ստուելու համար երթալու ատեն Բա-  
րիդէն անցնելով միայն զայն տեսեր էր , հիմա վերստին կու  
գայ մայրաքաղաքս տեսնելու . ես ալ ընտիր ճաշ մը պիտի  
տամ անոր , իւր որդին ինձ պիտի թողու , որ անոր վրայ  
հսկեմ . և պիտի թողում որ իրեն վայելած ամեն խենթու-  
թիւնները 'ի դործ դնէ , և ասով իմ բարեկամութիւնս կա-  
տարած պիտի ըլլամ :

— Շատ լաւ , կը տեսնեմ որ անդին առաջնորդ մ'էք :  
Մնաք բարեաւ ուրեմն , կիրակի կը վերադառնանք . աղէկ  
միտքս եկաւ . Ֆրանգէն լուրեր ստացայ :

— Իրաւ . Իտալիա շատ սիրած կ'երեւի :

— Ես ալ այնպէս կարծեմ . սակայն կը ցաւի որ դուք ալ  
հոն չէք գտնուիր : Ա՛րսէ թէ դուք Հոռով արեղակն էիք , և  
թէ առանց ձեզի այն քաղաքը մուտ կ'ընէ : Չեմ գիտեր որ  
հոն անձրեւէն ալ պիտի ըսէ :

— Աւրեմն բարեկամիդ համակրութիւն կը ցուցընէ ինձ :

— Ընդ հակառակն կը պնդէ թէ դուք առաջին կարգի ուր-  
ուական մ'էք . ահա այս է պատճառը որ ձեր ներկայութեանը  
կը բաղձայ :

— Սիրուն և բիտասարդ մ'է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ուրուն համար մեծ համակրութիւն մը զղացի առջի իրիկունը որ զինքը տեսայ, երբ ո՛ր և է ընթրիք մը կը փնտոէր, և ինծի հետ ընթրելու հաճեցաւ: Կարծեմ տ' Էրինէ զօրապետին որդին է:

— Ճիշդ ան է:

— 1818ին այնպէս չարաչա՛ր սպաննուողին

— Այո՛, պոնաբարդականներէն

— Շիտակը ըսեմ, սիրեցի զան. կարծեմ անոր համար ալ ամուսնութեան խօսքեր կան:

— Այո՛, օրիորդ Վիլլֆօրի հետ պիտի ամուսնանայ:

— Ստոյգ է:

— Օրիորդ Տանկլարի հետ իմ ամուսնութեանս պէս, կըրօնեցեց Ալպէր:

— Կը ծիծաղիք:

— Այո՛:

— Ինչո՞ւ կը ծիծաղիք:

— Վասն զի ինձ այնպէս կ'երևի թէ այն կողմն ալ ամուսնութեան համար եղած համակրութիւնը իմ և օրիորդ Տանկլարի մէջ եղածին չափ է. բայց ստուղիւ, սիրելիդ իմ կոմս, մարդոց վրայ կանանց խօսեցածին պէս՝ մենք ալ կանանց վրայ կը խօսինք, աններելի է մեզի այս —:

Ալպէր ոտք ելաւ:

— Կը մեկնիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Զարմանալի հարցում մը կ'ընէք. երկու ժամէ 'ի վեր գլուխնիդ կը ցուցրնեմ, և դարձեալ ազնուութեամբ կը հարցընէք թէ կը մեկնիմ. ստուղիւ, կոմս, խիստ քաղաքավար անձ մ'էք, և ձեր ծառաները լաւ կըթեալ են, մանաւանդ Պաթիսթէն. ամենեին անոր պէս մէկը չկըցայ գըտնել: Իմ ծառաներս կարծես թէ Գաղղիական-Թատրոնի ծառաներէն օրինակ առած են, որոնք միայն խօսք մը կ'ուներնան խօսելու, և այն սանդուխին վրայ կը խօսին: Ուստի եթէ Պ. Պաթիսթէնի ճամբայ տաք, կը խնդրեմ որ ինձ շրկէք զան:

— Շատ աղէկ, դերակումս :

— Աեցիք, մոռցայ ըսելու. իմ ողջոյնս մատուցէք ձեր խոհեմ Նուբբայի Գավալղանթի պարոնին, և եթէ միտք ունի իւր որդին ամուսնացընել, իւր մօրը կողմէն խիստ հարուստ և խիստ աղնուական, և կամ հօրը կողմէն սեպուհի աղջիկ մը դաէք, ու ես կ'օղնեմ ձեզ :

— Ո՛հո՛, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, դեր այդ մտաց վրայ էք :

— Այո՛ :

— Ամենեին պէտք չէ բանի մը վրայ երդում ընել :

— Ո՛հ, կոմս, ըսաւ Ալպէր, չէք դիտեր թէ ինչ մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէք և ինչպէս հարիւր անդամ աւելի պիտի սիրեմ զձեզ, եթէ ձեր շնորհիւր այս ամուսնութեանէ ազատ մնամ՝ եթէ տասը տարի ալ սպասել պէտք ըլլայ :

— Ամեն բան կարելի է —, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ ծանրութեամբ :

Եւ Ալպէրէն բաժնուելով իւր սենեակը մտաւ և երեք անգամ զանգակը հնչեցուց :

Պէրթուչիօ երեցաւ :

— Պ. Պէրթուչիօ, ըսաւ, պէտք է դիտնաս որ շաբաթօրը հիւրեր ունիմ — :

Պէրթուչիօ թեթեւ սարսուռ մը զգաց :

— Շատ աղէկ, պարոն, ըսաւ :

— Պէտք է որ ամեն բան վայելչապէս պատրաստել տաս. դիւղի տունս շատ դեղեցիկ է, կամ դոնէ կրնայ խիստ դեղեցիկանալ :

— Ձեր խնդիրքը կատարելու համար ամեն բան փոխել պէտք է, պարոն կոմս, վասն զի ամեն տան կարասիները հին են :

— Ամենն ալ փոխէ, բաց 'ի պառկելու սենեկին մէջիններէն. ընդ հակառակն այն սենեակը ճիշդ եղածին պէս պիտի թողուս — :

Պէրթուչիօ խոնարհութիւն մը ըրաւ :

— Պարտէղին ալ պիտի չդպչիս . բայց դաւիթը ինչ կ'ուզես ըրէ , և կը փափաքէի իսկ որ ամենեւին չկարենան ճանչնալ զայն :

— Պարոն կոմսը դո՛՛հ ընելու համար ամեն կըցածս պիտի ընեմ , և աւելի հանդարտ պիտի ըլլայի եթէ Պ . կոմսը բարեհաճէր ճաշին համար իւր գիտաւորութիւնները յայտնել ինձ :

— Ստուգիւ , սիրելիդ իմ Պ . Պէրթուչիօ , քանի որ Բարիզն ես , բոլորովին փոխուած , և երկիւղի մէջ կը տեսնեմ զքեզ . բայց ալ չե՛ս ճանչնար զիս :

— Բայց վերջապէս Ձեր Ասեմութիւնը կրնայ ըսել ինձ թէ զո՞վ պիտի հրաւիրէ :

— Տակաւին բան մը չեմ գիտեր , և դուն գիտնալու պէտք չունիս : Առկուղղոս Առկուղղոսի տունը պիտի ճաշէ , ահա՛ ըլլալիքը — :

Պէրթուչիօ խոնարհեցաւ և դուրս ելաւ :



ԳՐԱՆԻՒՆԻ ԳՆԳԵՊԵՏԸ

ԳԵՂԱՐԻՆԻ ԳՆԳԵՊԵՏԸ



**Մ**ՈՐԾԷՐԾԷ առաջարկած ճաշը մերժելու պատճառ եղող Լուսբքացի զնդապետին այցելութիւնը դերակոմսին իմացընելով ոչ կոմսը և ոչ Պաթիսթէն սուտ խօսեցած չէին :

Համը եօթը զարկեր էր , և Պ. Պէրթուչիօ իւր ընդունած հրամանին համեմատ երկու ժամէ 'ի վեր Օթէյլի դիւղը մեկնեց էր , երբ վարձու կառք մը կոմսին դրան առջևը կեցաւ , և վանդակին քովը դրեթէ յիսուն երկու տարեկան մարդ մը դուրս հանելէն ետե՛ կարծես ամչնալով աներևոյթ եղաւ անկէ . այս մարդը կանաչ թիկնոց մը հագած էր սև մետաքսեայ կոճակներով , որոնց տեսակը՝ ինչպէս կ'երևի՝ անկորուստ մնացած է Եւրոպիոյ մէջ :

Կանաչ ասուիէ լայն սոնազդեատ մը , բաւական մաքուր բայց անյայտ ապիկեալ և քիչ մը մեծ ներբանով կոշիկ մը , այժեման ձեռնոցներ , ձեռվը զինակրի գլխարկին մօտեցող գլխարկ մը , սպիտակ երիզով ծոպացած սև փողակաս մը , որ երկաթեայ անուր մը պիտի կարծուէր , եթէ անոր տէրը իւր աղատ կամօքը կասած չըլլար . ահա այս էր վանդակապատին դուռը զարնող այն անձին նկարելի հազուստը , որ կը հարցընէր թէ Շանգ-Էլիդէի առջի փողոցին թիւ 30 տունը Մօնթէ-Քրիսթոյին բնակածը չէ՞ , և դռնապանին հաստատական պատասխանին վրայ ներս մտաւ , դուռը գոցեց , և դէպ 'ի սանդուխը ուղղեցաւ :

Այս մարդուն փոքր և անկիւնաւոր դ լուխէն, սպիտակապեալ մաղերէն, խիտ և մոխրագոյն ընչացքէն Պաթիսթէն ճանչցաւ զան, քանզի այցելուին արտաքին այս նշաններն ընդունած էր և դաւիթին վարի կողմը անոր կ'ըստասէր:

Ուստի անոր անունը լսելուն պէս՝ իսկոյն անոր դալուստը Մօնթէ-Քրիսթոյի իմացուց:

Օտարականը ամենէն պարզ սրահը մտցուցին, ուր կոմսը անոր կ'ըստասէր. զան տեսնելով՝ Մօնթէ-Քրիսթօ ծիծաղերես անոր առջևն ելաւ:

— Բարի եկաք, սիրելի պարոն, ըսաւ. ես ալ ձեզ կ'ըստասէի:

— Իրօք Ձեր Վսեմութիւնը կ'ըստասէր ինձ, ըսաւ Լուքսացին:

— Այո՛, այսօր ժամը եօթին ձեր հասնիլը իմացած էի:

— Ի՛նչպէս, իմ հասնիլս իմացած էիք:

— Այո՛:

— Շատ աղէկ. ճշմարիտ, կը վախնայի որ այս փոքր ըղդուշութիւնը մոռցուած է:

— Ո՞ր զղուշութիւնը:

— Ձեզ իմացընելու:

— Ոչ, մոռցուած չէ:

— Բայց ասպահով էք որ չէք սխալիր:

— Այո՛, ասպահով եմ:

— Ուրեմն Ձեր Վսեմութիւնը այսօր ժամը եօթին ինձ կ'ըստասէր:

— Այո՛, ճիշդ ձեզի. եթէ չէք հաւատար, ստուգե՛ք:

— Եթէ ինձ կ'ըստասէիք, խաբուած սխտի ըլլաք:

— Ոչ երբէք —:

Լուքսացին քիչ մը շփոթած կ'երևէր:

— Ըսէք ուրեմն, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, դուք պարոն Պարթոլոմէօ Գավալգանթի մարքէզը չէք:

— Այո՛, ճիշդ Պարթոլոմէօ Գավալգանթին ես եմ:

— Աւտարիոյ ծառայութեան մէջ դնդասլե՛մ էիք:



— Բայց զնդապետ էի ես, հարցուց երկիւղիւ հին զինուորականը:

— Այո՛, սրտասխանեց Մօնթէ-Քրիսթօ, զնդապետ էիք. Իտալիոյ մէջ ձեր ընդունած աստիճանին Գաղղիոյ մէջ զընդապետ անունը կու տան:

— Բարի, ըսաւ Լուքքացին, և ես այդ կը հարցընեմ:

— Ձեր անձնական հաճութեամբն է որ հոս եկաք, կըրկնեց Մօնթէ-Քրիսթօ:

— Անշուշտ:

— Ձձեղ մէկը ինձ զրկեց:

— Այո՛:

— Այն աղնիւ արքայ Պիւզոնին:

— Ճիշդ նոյնը, ըսաւ զնդապետը ուրախ գէմբով:

— Եւ նամակ մը ունիք:

— Ահա՛:

— Կը տեսնէք որ ամեն բան կը համապատասխանէ: Տուէք տեսնեմ ուրեմն —:

Եւ Մօնթէ-Քրիսթօ նամակը առաւ, բացաւ զան և կարդաց: Գնդապետը իւր հիացած մեծ աչքերը մերթ կոմսին վրայ կը տանէր և մերթ հետաքրքրութեամբ սենեկին զանազան առարկաներուն վրայ կը շրջէր:

— Ճիշդ այն սիրելի Պիւզոնին նամակն է:

« Գավալղանթի զնդապետը, որ Լուքքացի արժանաւոր աղնուական մը և Ֆիորէնցայի Գավալղանթիներէն իջած է, շարունակեց Մօնթէ-Քրիսթօ կարդալով, և կէս միլիոն եկամուտ ունի » —:

Մօնթէ-Քրիսթօ աչքը թղթին վրայէն վերցուց և շնորհակցեց զան:

— Ահա միլիոն եկամուտ, սիրելիդ իմ Գավալղանթի:

— Ահա միլիոն եկամուտ գրած է:

— Այո՛, և ստոյգ սէտք է ըլլայ, արքայ Պիւզոնին եւ

ըոպիոյ ամեն մեծ հարստութիւն ունեցողները ամենէն աղէկ  
կը ճանչնայ:

— Ճշմարիտ կ'ըսեմ, չէի կարծեր որ դումարը այդչափ  
ելնէ:

— Ըստ որում դող տնօրէն մը ունիք, ինչ պիտի ընէք,  
սիրելի պարոն Գավալղանթի, համբերել պէտք է:

— Գուք միտքս կը բանաք, ըսաւ ծանրութեամբ Լուքքա-  
ցին, պէտք է որ նենդաւորը ճամբեմ—:

Մօնթէ-Քրիսթօ շարունակեց.

« Եւ երջանիկ ըլլալու համար միայն մէկ բաղձանք ունի »:

— Ա՛հ, այո՛, ճիշդ է, միայն մէկ բաղձանք ունիմ, ըսաւ  
Լուքքացին հառաչանքով մը:

« — Այն է իւր կորսուած սիրելի որդին գտնելը »:

— Սիրելի՛ որդի մը:

« — Որ իւր մանկութեան մէջ դողցուած է կամ իւր աղ-  
նուական ընտանեաց թշնամիէ մը և կամ Պոհեմիացիներէ »:

— Այո՛, պարոն, իւր հինգ տարեկան հասակին մէջ, ը-  
սաւ գնդապետը խորին հառաչանքով մը և աչքը դէպ 'ի եր-  
կինք վերցընելով:

— Խեղճ հայր, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, և շարունակեց.

« Բայց ես յուսադրեցի և կենդանացուցի զան, պարոն  
կոմս, իմացընելով անոր որ իւր տասն և հինգ տարիէ 'ի  
վեր 'ի զուր փնտռած զաւակը դուք կարող էք գտնել » —:

Լուքքացին սրտի անձկութեան անսրատում նշաններով  
Մօնթէ-Քրիսթոյի երեսը կը նայէր:

— Այո՛, ես կարող եմ գտնել ձեզ զան —, կրկնեց կոմսը:

— Ո՛հ, ուրեմն նամակը ծայրէ 'ի ծայր ճշմարիտ է, ը-  
սաւ գնդապետը ոտք ելնելով:

— Ի՛նչ, կը տարակուսէիք, սիրելիդ իմ Պ. Պարթոլովօ:

— Աչ երբէք, միթէ արբայ Պիւղոնիին պէս ծանրարալայ մարդ մը և կրօնաւոր մը կրնայ այսպէս կատակ մը ընել, բայց ամենը չկարգացիր, աէր իմ:

— Ահ, այո՛, Յեաին դրութիւն մ'ալ կայ:

— Այո՛, կրկնեց Լուքքացին, Յեաին դրութիւն մը կայ:

« — Եւ որպէս զի Գալալղանթի դնդապետը շշիոթի և չըստիպուի իւր սեղանաւորին քով ունեցած դրամադլխին դըպչիլ, իւր ճամբորդութեան ծախուց համար երկու հազար Ֆրանքի փոխանակադիր մը կը դրկեմ անոր, և ինծի ունեցած քառասուն և ութ հազար Ֆրանք սլարտուցդ փոխարէն՝ նոյնչափ դրամարի մը համար վարկ մը կը բանամ ձեր վրայ » — :

Գնդապետը որտի յայտնի անձկութեամբ աչքերը Յեաին դրութեան վրայ յարեց:

— Աղէկ, ըսելու բաւականացաւ կոմսը:

— Աղէկ կ'ըսէ, մըմնջեց գնդապետը: Ուրեմն, պարոն, ըսաւ բարձր ձայնիւ:

— Ուրեմն . . . , կրկնեց Մօնթէ-Քրիսթօ:

— Ուրեմն Յեաին դրութիւնը . . . :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Յեաին դրութիւնն ալ նամակին միւս մասերուն պէս կ'ընդունիր:

— Անշուշտ: Արբայ Պիւղոնիին հետ մենք հաշիւ ունինք, չեմ գիտեր թէ անոր ունեցած սլարաքս ճիշդ քառասուն և ութ հազար Ֆրանք է, բայց մենք քանի մը լումայադիրերու համար իրարու խօսքը չենք կարեր: Ուրեմն դուք այս Յեաին դրութեան մեծ կարեւորութիւն մը կ'ընծայէք, սիրե լիդ իմ Պ. Գալալղանթի:

— Ար խոստովանիմ, կամս, որ արբայ Պիւղոնիին ստորադրութեան վրայ կատարեալ վստահութիւն ունենալուս՝ ուրիշ ստակ առած չեմ հետս, որով եթէ այդ օգնութիւնը չունենամ: Բարիցի մէջ շատ պիտի նեղիմ:

— Միթէ ձեզի պէս մարդ մը նեղութիւն կը կրէ որ և է քաղաքի մէջ. ինչ կը վախնար :

— Բայց եթէ մարդ չեմ ճանչնար :

— Ձձեզ ճանչցող կայ :

— Ուրեմն . . . :

— Լրացուցէք խօսքերնիդ , սիրելի պարոն Գավալլանթի :

— Ուրեմն այդ քառասուն և ութ հազար Ֆրանքը պիտի յանձնէք ինձ :

— Երբ որ խնդրէք — :

Լուքսացին իւր ապշեալ նայուածքը բոլորտիքը կը շրջէր :

— Բայց նստէք , կ'աղաչեմ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . սառու գիւ ես ալ ըրածս չեմ դիտեր . . . : Ժամէ մը 'ի վեր ոտքի վրայ էք . . . :

— Հող չէ — :

Գնդապետը թեաթոռ մը առաւ և նստաւ :

— Ըմպելիք մը չէք առներ . Քսէրէսի՞ դինի կ'ուզէք , Բորթուկալի , թէ Սպանիոյ :

— Սպանիոյ , եթէ կը հաճիք . ամենէն աւելի սիրած դինիս այն է :

— Խիստ ընտիր տեսակը ունիմ . հետը պակսիմատ կ'ուզէք , այնպէս չէ :

— Այո՛ , քանի որ կ'առաջարկէք — :

Մօնթէ-Քրիսթօ զանգակը հնչեցուց , Պաթիսթէն ներս մտաւ :

Կոմսը դէպ 'ի անոր յառաջացաւ :

— Ի՞նչ ըրիր , հարցուց ցած ձայնով :

— Երիտասարդը հոս է , պատասխանեց սենեկապանը նոյն ձայնիւ :

— Աղէկ . ո՛ր կը գտնուի :

— Կապոյտ սրահը , ինչպէս որ Ձեր վսեմութիւնը հրամայեց :

— Հատ աղէկ . Սպանիոյ դինի և պակսիմատ բեր — :

Պաթիսթէն դուրս ելաւ :

— Ստուգիւ , պարոն կոմս , ըսաւ Լուքքացին , ձեզ պատճառած նեղութեանս համար շիտթած եմ :

— Խօսքը ընելն անդամ չարթեր — , պատասխանեց կոմսը : Պատիւսթէն դաւաթներով , դինիով և պաքսիմատով վերադարձաւ :

Կոմսը դաւաթ մը լեցուց և երկրորդ դաւաթին մէջ միայն քանի մը կաթիլ դրաւ այն լոյծ սուտակէն , որուն շիշը սարդի սատայններով և դինիին հնութիւնը՝ մարդու մարմնոյ խորշերէն աւելի յայտնի ցուցընող ամեն նշաններով ծածկուած էր :

Գնդապետը ընարութեան մէջ չախալեցաւ . լեցուն դաւաթն ու պակսիմատը առաւ :

Կոմսը հրամայեց Պատիւսթէնի որ ամսեան իւր հիւրին մօտ գնէ , որ շութերուն ծայրովը դինիին համը նայեցաւ , դոհունահոլութեան նշան մը ցուցուց , և պակսիմատը զգուշութեամբ դաւաթին մէջ թաթխեց :

— Ուրեմն , պարոն , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , Լուքքա կը բնակէիք , և հարուստ ու ազնուական էիք , ամենուն յարգանքը կը վայելէիք , և մարդս երջանիկ ընող ամեն պէտք եղածն ունէիք :

— Այո՛ , աէր իմ , ըսաւ գնդապետը իւր պակսիմատը ուտելով , ամեն բան :

— Եւ ձեր երջանկութենէ միայն մէկ բան կը պակսէր :

— Միայն մէկ բան , պարոն :

— Եւ այն՝ ձեր որդին դանելն էր :

— Ա՛հ , կրկնեց գնդապետը երկրորդ պակսիմատ մը առնելով , և այս կորուստը խիստ դժնդակ է ինձ — :

Եւ ազնիւ Լուքքացին աչքերը դէպ 'ի երկինք վերցուց և հառաչելու փորձ փորձեց :

— Հիմա ըսէք ինձ , սիրելի պարոն Գավալդանթի , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . ո՛րկից ստացած էք այդ զաւակը , որուն վրայ այդչափ կը ցաւիք . քանզի լսեր եմ որ գուք ամուրի մնացած էք :

- Ամեն մարդ այնպէս կարծէր, սլարոն, և ես իսկ . . .
- Այո՛, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, և դուք իսկ այդ տարածայնութիւնը հաստատեցիք: Ուղեցիք երիտասարդութեան յանցանք մը դադտնի պահել ամենէն — :
- Լուքքացին (որ կամ իւր ըրածը ստուգելու և կամ իւր երեւակայութեան օղնելու համար՝ պարկեշտութեամբ գլուխը խոնարհեցուցեր էր և աչքին ծայրովը կոմսը կը դիտէր, որուն շրթանց վրայ դրոշմեալ ժպիտը միշտ նոյն բարեսէր հետաքրքրութիւնը կը յայտնէր,) գլուխը բարձրացուց և խիստ ծանրութեամբ մը ըսաւ .
- Այո՛, սլարոն, ուղեցի իմ յանցանքս դադտնի պահել ամենէն :
- Ձէ թէ ձեզի համար ըրիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . քանզի մարդ մը այս բաներուն կարեւորութիւն մը չտար :
- Ո՛հ, անշուշտ, չէ թէ ինծի համար ըրի, ըսաւ գնդապետը ժպիտով մը և գլուխը շարժելով :
- Այլ տղուն մօրը համար դործը դադտնի պահել ուղեցիք, կրկնեց կոմսը :
- Այո՛, անոր մօրը համար, ըսաւ Լուքքացին երրորդ պաքսիմատ մը առնելով . անոր ողորմելի մօրը համար :
- Իմեցէք, սիրելիդ իմ Պ. Փավալլեանթի, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ Սպանիոյ դինիէն երկրորդ դաւաթ մը լեցընելով . քանզի ձեր սրտին յուզմունքը կը տաղնապեցընէ զձեզ :
- Անոր ողորմելի մօրը համար, մրմնջեց Լուքքացին՝ ջանալով կամքի զօրութեամբ կեղծ արտասուքով մը իւր աչաց անկիւնը թրջել :
- Որ Իտալիոյ առաջին ընտանիքներէն մէկուն կը վերաբերէր, կարծեմ :
- Այո՛, Ֆիէզօլի ազնուական դերդաստանէն էր, սլարոն կոմս, Ֆիէզօլի ազնուական դերդաստանէն :
- Եւ ինչ էր անունը :
- Անունը կ'ուղէիք գիտնալ :
- Ըսելնիդ անօգուտ է, ըսաւ կոմսը, ես գիտեմ :

- Ապրոնն կոմսը ամեն բան զիտէ, ըսաւ Լուքքացին խոնարհութիւն մը ընելով:
- Օլիվա Գորսինարի չէր:
- Այո՛, Օլիվա Գորսինարի:
- Մարբէղուհի էր:
- Այո՛, պարոն:
- Այսու ամենայնիւ ընտանիքին ընդդիմութեանը հակառակ վերջապէս ամուսնացաք անոր հետ:
- Է՛հ, այո՛, վերջապէս ամուսնացայ անոր հետ:
- Եւ ձեր օրինաւոր վկայադիրերը բերիք:
- Ի՞նչ վկայադիր:
- Օլիվա Գորսինարիին հետ ձեր ամուսնութեան և ձեր որդւոյն ծննդեան վկայադիրերը:
- Որդւոյս ծննդեան վկայադիրը:
- Անտրէա Գալալղանթիին, ձեր որդւոյն ծննդեան վկայադիրը, անոր անունը Անտրէա չէ:
- Կարծեմ այնպէս է:
- Կը կարծէք կ'ըսէք:
- Մի զարմանաք, կոմս, չեմ համարձակիր հաստատել ըստ որում երկար ժամանակէ ՚ի վեր կորսուած է:
- Ստոյգ է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, բայց վերջապէս անշուշտ այդ վկայադիրերն ունիք:
- Յաւով կ'իմացընեմ, պարոն կոմս, որ չդիտնալով թէ այն թուղթերուն պէտք պիտի ըլլայ, զանոնք հետս առնելու հոգ չբրի:
- Ո՛հ, ինչ կ'ըսէք:
- Ուրեմն խիստ կարեւոր էին այդ թուղթերը:
- Անհրաժեշտ պէտք էին —:
- Լուքքացին իւր ճակատը քերեց և ըսաւ.
- Անհրաժեշտ պէտք էին կ'ըսէք:
- Անտարակոյս, ի՞նչ պիտի ընէք եթէ ձեր ամուսնութեան վաւերականութեան և ձեր որդւոյն հարազատութեան վրայ կատկած մը ունենան:

- Սառայդ է, ըսաւ Լուքքացին, կրնան կասկած իլ:
- Երիտասարդին համար դժբաղդութիւն մը կրնայ ըլլալ:
- Կրնայ աղետալի ըլլալ:
- Եւ բարեբաղդ ամուսնութենէ մը կրնայ զրկել զան:
- Ո՛հ, ինչ դժբաղդութիւն:
- Գաղղիոյ մէջ զործերը անաչառութեամբ կը կատարուին. Իտալիոյ մէջ եղածին սէս բաւական չէ երթալ քահանայ մը դտնել և ըսել թէ՛ Մենք զիրար կը սիրենք, միացուր զմեզ: Գաղղիոյ մէջ քաղաքային ամուսնութիւն կայ, քաղաքային օրինաց համեմատ ամուսնանալու համար՝ նոյնութիւնը հաստատող վկայագիրեր սէտք են:
- Ի՛նչ դժբաղդութիւն որ թուղթերը հետս առած չեմ:
- Բարեբաղդաբար այդ թուղթերը իմ քովս են, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:
- Չե՛ր քովը:
- Այո՛:
- Ի՛նչ բարեբաղդութիւն ուրեմն, ըսաւ Լուքքացին, որ վկայագիրերը հետը չունենալովք իւր ճամբորդութեան նպատակը անյաջող տեսնելով, վախցեր էր որ քառասուն և ութ հազար Ֆրանքի խնդրոյն մէջ դժուարութիւններ սխալ կրէր: Այո՛, բարեբաղդութիւն մ'է այս, վասն զի իմ մտքէս անցած չէր այն:
- Կը հաւատամ, բարեկամ, ամեն բան մարդուս մտքէն չանցնիր. բայց բարեբաղդաբար աբբայ Պիւզոնին ձեզի ահամար մտածեր է:
- Կը տեսնէք սա սիրելի աբբան:
- Ամեն բանի հոգ տանող մարդ մ'է:
- Սքանչելի մարդ մը, ըսաւ Լուքքացին, և այն վկայագիրերը ձեզ զրկած է:
- Ահա՛ հոս են —:
- Ի նշան զարմացման Լուքքացին իւր ձեռքերը միացուց:
- Մօնթէ-Գաթիինի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ Օլիվա Գորսինարիի հետ ամուսնացեր էք. ահա ձեր վկայագիրը:



— Այո՛, ճիշդ այդպէս է, ըսաւ գնդապետը վարմայմամբ վկայադիրը գիտելով:

— Եւ ահա՛ Սարավէղղայի ժողովրդապետէն տրուած Անտրէա Գավարդանթիի մկրտութեան վկայադիրը:

— Ամեն բան կանոնին է, ըսաւ գնդապետը:

— Աւրեմն առէք այս թուղթերը որոնք ինձի շին ծառայեր, ձեր սրղւոյն տուէք որ զղուշութեամբ սլահէ զանոնք:

— Անշուշտ . . . : Բայց եթէ կորսնցընէ . . . :

— Ի՞նչ պիտի ընէք, եթէ զանոնք կորսնցընէ, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Այն ատեն հոն գրել պէտք պիտի ըլլայ, և ուրիշ վկայադիր բերել տալը երկար ժամանակի կարօտ է:

— Իրօք դժուար ալ է:

— Գրեթէ անկարելի է:

— Շատ ուրախ եմ որ այս թուղթերուն արժէքը կը ճանչնաք:

— Այսինքն թէ վճարելով զանոնք ձեռք բերելը անկարելի կը համարիմ ես:

— Բայց երկտասարդին մօրը համար ի՞նչ պիտի ըսէք:

— Երկտասարդին մօրը համար . . . , կրկնեց գնդապետը անհանդստութեամբ մը:

— Գորսինարի մարքէզուհւոյն համար ըսել կ'ուզեմ:

— Ա՛յլ Աստուած, ըսաւ Լուքքացին, որուն քայլերուն առջևը դողցեա դժուարութիւնները կը ծաղէին. բայց արդեօք անոր պէտք պիտի ըլլայ:

— Այ, սրտոն, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ. մանաւանդ որ արդէն ան . . . :

— Այո՛, այո՛, ըսաւ Լուքքացին, մարքէզուհին . . . :

— Իւր հարկը բնութեան վճարեց (մեռաւ) . . . :

— Ափսո՛ս, այո՛, ըսաւ Լուքքացին աշխուժիւ:

— Անոր տասը տարի առաջ մեռնիլը իմացած էի:

— Եւ տակաւին անոր մահուանը վրայ կ'ողջամ, պարոն, ըսաւ գնդապետը՝ դրսեանէն քառակուսի գիծերով թաշկինակ մը հանելով և փոփոխակի նախ ձախ աչքը և ետքը աջը սրբելով:

— Ի՞նչ կրնանք ընել, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, ամենքս ալ մահացու ենք: Հիմա պէտք է դիտնանք, սիրելի պարոն Գաւլալդանթի, որ տասն և հինգ տարիէ 'ի վեր ձեր որդին կորսնցուցած ըլլալնիդ Գաղղիոյ մէջ յայտնելը օգուտ չըներ: Փոքր տղաներ յափշտակող Պոհեմիացւոց կամ գնչուներու պատմութիւնները մեր մէջը ընդունելութիւն չեն գտներ: Այլ կրնաք ըսել թէ դաստիարակուելու համար դաւառի դպրոց մը ղրկած էք զան, և կ'ուզէք որ իւր դաստիարակութիւնը Բարիղեան ընկերութեանց մէջ լրացընէ: Եւ այս պատճառաւ Արիա-Բէճիօյէն մեկնած էք, ուր կը բնակիք ձեր կնոջ մեռնելէն 'ի վեր: Այսչափս բաւական է:

— Կը կարծէք:

— Անշուշտ:

— Շատ աղէկ ուրեմն:

— Բայց եթէ այս կորստեան վրայ բան մը իմացուի . . .

— Ո՛հ, այժ, ի՞նչ պիտի ըսեմ այն ատեն:

— Թէ նենդաւոր վարժապետ մը ձեր ընտանեաց թշնամիներէն թելադրուելով . . .

— Գորսինարիներէն:

— Անշուշտ . . ., ձեր անունը ջնջելու համար զաւակնիդ աներևոյթ ըբեր էր:

— Ստոյգ է, ըսաւ որում միակ զաւակս է:

— Ուրեմն հիմա որ ամեն բան որոշուեցաւ, և դուք ամեն բան յիշելով պիտի շտապիք, անտարակոյս դուշակած էք որ ես զարմանք մը պատրաստած եմ ձեզ:

— Հաճելի՛ զարմանք մը, հարցուց Լուքքացին:

— Ո՛հ, կը տեսնեմ որ հօր մը սրտին պէս աչքն ալ խաբել անկարելի է:

— Անտարակոյս:

— Արդեօք անխոհեմութեամբ յայտնեցի՞ն ձեզ, և կամ դուշակեցի՞ք անոր հոս ըլլալը:

— Ար՞ն:

— Ձեր զաւակին, Անտրէային:

— Ա՛հ, այո՛, դու շահեցի, սլառասխանեց Լուքսացին ա-  
մենայն հանդարտութեամբ. բայց հո՛ս է :

— Այս տանը մէջն է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. սենեկա-  
պանը հիմա ներս մտած ժամանակ անոր դաշուստը իմացուց ինձ :

— Հաս աղէկ, շատ աղէկ ուրեմն, ըսաւ դ՛նդապետը իւր  
վերարկուին կոճակները դներ լով :

— Սիրելի պարոն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, կը հասկընամ  
որ սիրտե ընիդ շարժած է, սէտք է քիչ մը ատեն սպասէք  
որ հանդարտեցընէք զայն. կ'ուզեմ երիտասարդն ալ այս  
ցանկալի տեսակցութեան սլառաստեւլ. քանզի կարծեմ թէ  
ան ալ ձեզմէ նուազ անհամբերութեան մէջ չդտնուիր :

— Աս ալ այնպէս կարծեմ :

— Աւրեմն քառորդէ մը հաս տխտի դանք :

— Գո՛ւք տխտի բերէք զան, և այն աստիճան աղնիւ տխ-  
տի ըլլաք որ դուք ձեր ձեռքով տխտի ներկայացընէք ինձ :

— Աչ, հօր մը և իւր զաւկին մէջ մտնել չեմ ուզեր,  
դուք առանձին տխտի ըլլաք, պարոն դ՛նդապետ. բայց ան-  
հոգ եղիք, երբ արեան ձայնը լռէ անդամ, չէք կրնար խաբուիլ.  
այս դուռէն ներս տխտի մանէ ան : Գեղեցիկ երիտասարդ-  
մ'է խորտեաշ գոյնով գուցէ քիչ մը չափէն աւելի, բայց  
ամեն վայելուչ ձեերն սենի, տխտի տեսնէք :

— Աղէկ միտքս եկաւ. դիտէք որ արբայ Պիւզոնիին ինձ  
դրկած երկու հազար Ֆրանքը միայն հետս առնելով ճամ-  
բորդութիւնս բրած եմ, և . . . :

— Աւ ստակի սէտք ունիք . . . շատ ճիշդ է, սիրելի Պ.  
Գալալղանթի : Ահա առէք իբր առհաշիւ հազարական Ֆրանք-  
նոց այս ութը լումայադիրերը — :

Գ՛նդապետին աչքերը կարկեհանի սէս փայլեցան :

— Քառասուն հազար Ֆրանք մնաց պարտքս, ըսաւ Մօն-  
թէ-Քրիսթօ :

— Չեր Ասեմութիւնը ընկալադիր մը կ'ուզէ, ըսաւ դ՛նդա-  
պետը վերարկուին ներքին դրայանին մէջ լումայադիրերը տե-  
ղաւորելով :

— Ի՞նչ ընելու համար :

— Ձեր պարտքին փոխարէն արբայ Պիզոնիին յանձնելու համար :

— Շատ աղէկ , երբ քառասուն հազար Ֆրանքն ալ ընդունիք , ամենուն մէկէն անդորրագիր մը կու տաք . բարի մարդոց համար այդ զղուշութեանց պէտք չկայ :

— Ո՛հ , ստոյգ է , բարի մարդոց համար :

— Հիմա վերջին խօսք մը ունիմ , մարքէզ :

— Ըսէք :

— Կը ներէք ինձ որ փոքր յանձնարարութիւն մը ընեմ , այնպէս չէ :

— Ինչո՞ւ չէ , կը խնդրեմ որ ընէք :

— Աղէկ կ'ընէք եթէ այդ լեհական ձեռով վերարկուն փոխէք :

— Իրա՞ւ , ըսաւ գնդապետը հաճութեամբ մը իւր զգեստին նայելով :

— Այո՛ , Ալիա-Բէճիօյի մէջ այդ զգեստը տակաւին կը հագնին , բայց Բարիզի մէջ ատոր ձեռ՝ որչափ ալ վայելուչ ըլլայ՝ հինցած է :

— Մեղք , ըսաւ Լուքսացին :

— Ո՛հ , եթէ այդչափ կը սիրէք այդ ձեռ , կրնաք Բարիզէն մեկնելու ժամանակնիդ վերստին հագնիլ :

— Բայց հիմա ի՞նչ պիտի հագնիմ :

— Ձեր մորթարկղերուն մէջ գտնուած որ և է զգեստ մը :

— Ո՛ր մորթարկղերուս մէջ . վերարկուի պարկէ մը զատ հետս բան մը առած չեմ :

— Անշուշտ հետերնիդ անկէ զատ բան մը առած չէք . քանզի նեղութիւն է , մանաւանդ որ հին զինուոր մը թեթեւ զգեստները կը սիրէ :

— Ահա ճիշդ այդ է պատճառը . . . :

— Բայց դուք նախազգուշացող մարդ մ'էք , և ձեր մորթարկղերը առաջէն դրկած էք , որոնք երէկ Բարիզ հասան

Նիշը լի է փողոցը, Եշխանաց սլանդոնիքը, ուր բնակարան մը վարձեցիք :

— Աւրեմն այն մտրթարկղերուն մէջ . . . :

— Կարծեմ թէ ձեր սենեկասլանը ամեն պէտք եղածը, այսինքն ձեր քաղաքային և զինուորական զղեստները դրած է : Մեծ սարսաղաներու մէջ աղէկ կ'ընէք եթէ զինուորական համազղեստնիդ հաղնիք, մի մտնաք նաև խաչ պատուանշանները . Գաղղիոյ մէջ թէև կը ծաղրեն, բայց միշտ կը կրեն զանոնք :

— Շատ աղէկ, շատ աղէկ, շատ աղէկ, ըսաւ զնդապետը, որ տեսածներուն և լսածներուն վրայ մեծ զարմացման մէջ ինկեր էր :

— Եւ հիմա որ ձեր սրտի եռանդաղին աղդեցուծ իւննները հանդարտած են, պատրաստուեցէք, սիրելի պարոն Գավալդանթի, ձեր Անտրէա որդին տեսնելու — :

Եւ Մօնթէ—Քրիսթօ՝ հիացման մէջ մնացած Լուքքացին շնորհալի կերպով ողջունելով, գրան վարազոյրին ետին աներևոյթ եղաւ :



## ՄԱՐԿՈՍ

## ԸՆՏՐԷԱ ԳԸՎԸԼԳԸՆԹԻ



**Մ**ՕՆԹԷ-ՔՐԻՍՏՈՅ Պաթիսթէնի կապոյտ կոչած մտակայ սրահը մտաւ, ուր կ'ըստասէր բաւական վայելուչ հաղուած և ազատ երկւոյթով երիտասարդ մը, որ կէս ժամ առաջ կառքով մը նոյն տունը եկեր էր:

Պաթիսթէն զան ճանչնալու դժուարութիւն չունեցեր էր: Խարտեաշ կարճ մազերով, խանձրադոյն մօրուքով, սև աչուի ճիշդ այն բարձրահասակ երիտասարդն էր, որուն դիմաց շոտադոյն և մարմնոյ հիանալի ճերմկութիւնը կամսին իւր սենեկապանին յայտնած նշաններուն կը համաստասխանէին:

Կամսին ներս մտած ժամանակը՝ երիտասարդը անհողութեամբ բազմոցի մը վրայ երկնցեր էր և զբօսնելու համար ոսկի պնտակով եղէգնեայ փոքրիկ գաւազանով մը իւր կոշիկները կը ծեծէր:

Մօնթէ-Քրիսթօն տեսնելուն պէս՝ աշխուժիւ ոտք ելաւ:

— Պարոնը Մօնթէ-Քրիսթոյ կոմսն է, ըսաւ:

— Այո՛, պարոն, պատասխանեց կամսը, և ես կարծեմ պատիւ ունիմ պարոն դերակոմս Անտրէա Գալալղանթիին հետ խօսելու:

— Գերակոմս Անտրէա Գալալղանթին եմ, պարոն, կըրկնեց երիտասարդը պարզ և շնորհալի շարժումով մը:

— Յանձնարարական նամակ մը պիտի ունենաք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:



քրական են, ըսաւ կոմսը, որ տխուր դոհունակութեամբ կը դիտէր այն աղատ երևոյթով դէմքը, որ շար սատանայի նըման դեղեցկութիւն մը ունէր, և շատ աղէկ ըրիք որ իմ Սէնպատ նաւաստի բարեկամիս խրատներուն ըստ ամենայնի համակերպեցաք, ըստ որում իրօք ձեր հայրը հոս է և զձեզ կը փնտռէ — :

Կոմսը սրահը մտնելէն 'ի վեր աչքը երիտասարդին վրայէն վերցուցած չէր :

Անոր նայուածքին և ձայնին համարձակութեանը վրայ զարմացեր էր. բայց կոմսին՝ « Իրօք ձեր հայրը հոս է և զձեզ կը փնտռէ » պարզ խօսքերուն վրայ երիտասարդ Անտրէա դէպ 'ի վեր ցատկեց պոռալով.

— Հայրս հոս է, հայրս հոս է կ'ըսէք :

— Այո՛, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, ձեր հայրը, Գավալդանթի զնդապետը հոս է — :

Երիտասարդին դիմաց վրայ տարածուած սոսկումի տպաւորութիւնը դրեթէ անմիջապէս աներևոյթ եղաւ :

— Ո՛հ, այո՛, ստոյգ է, ըսաւ, Պարթոլոմէօ Գավալդանթի զնդապետը : Եւ այս բարի հայրը հոս կը գտնուի կ'ըսէք, պարոն կոմս :

— Այո՛, պարոն, կրնամ ըսել իսկ որ հիմա անոր քովէն եկայ, և իւր ժամանակաւ կորսնցուցած սիրելի որդւոյն վրայ ըրած պատմութիւնը սիրտս շարժեց. ստուղիւ այս պարագայիս մէջ անոր զղացած վիշտերը, երկիւղները և յոյսերը սրտաշարժ վիպասանութիւն մը կրնան շինուիլ : Աերջապէս օր մը նամակ մը կ'ընդունի որ կ'իմացընէր իրեն թէ իւր որդւոյն յափշտակիչները բաւական մեծ գումար մը պահանջելով կ'առաջարկէին յանձնել զան կամ անոր գտնուած տեղը ցուցընել : Ձեր բարի հայրը բանի մը չխնայեց. պահանջուած գումարը Իտալիոյ համար շինուած անցագրով մը Բիէմօնթի սահմանազուխը ղրկուեցաւ : Արժեմ գուք այն ատեն Գաղղիոյ հարաւային կողմը կը գտնուէիք :

— Այո՛, պարոն, պատասխանեց Անտրէա բաւական այլայլ-



լեալ կերպարանքով, այո, Գաղղիոյ հարաւային կողմը կը  
 դանուէի :

— Նիսի մէջ կառք մը պիտի սպասէր ձեզ :

— Քիշիկ այդպէս եղաւ, պարոն, կառքը դիտ նիսէն ճե-  
 նովա տարաւ, Ճե՛նովայէն Թիւրէն, Թիւրէնէն Շամպէրի,  
 Շամպէրիէն Բօն-տը-Պօլուաղէն, և Բօն-տը-Պօլուաղէնէն  
 Բարիզ :

— Շատ աղէկ, ձեր հայրը կը յուսար այդ ճամբուն վրայ  
 ձեզ պատահիլ, քանզի ան ալ նոյն ճամբան բռնած էր, այս  
 է պատճառը որ զձեզ նոյն ճամբով կը բերէին :

— Բայց եթէ հայրս հանդիպէր ինձ, չեմ կարծեր որ  
 ճանչնար դիտ, ըստ որում դիտ տեսներէն ՚ի վեր անշուշտ  
 քիչ մը փոխուած պիտի ըլլամ :

— Ա՛հ, արեան ձայնին ոյժը մեծ է :

— Այո, ստոյգ է, արեան ձայնը միտքս չեկաւ :

— Հիմա, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, Գալլալիանթի մարքէզը  
 անհանդիսաւ ընողը միայն այն է թէ իրմէ բաժնուած ժա-  
 մանակնիդ ինչ ըրիք, զձեզ յափշտակողները ինչ կերպով  
 վարուեցան ձեր հետը, ձեր ծննդեան արժան եղած յար-  
 դանքը պահեցին, վերջապէս արդեօք ձեր կրած բարոյական  
 նեղութիւնները, որոնք Ֆիլիքական նեղութիւններէն աւելի  
 գէշ են, ձեր մտային կարողութեանցը ախարութիւն մը պատ-  
 ճառեցին, և թէ ձեզ սեփհականեալ սպառուոյ ատտիճանը  
 ընդունելու և դան ընկերութեանց մէջ արժանատիւս պաշտ-  
 պանելու կարող էք :

— Պարոն, կակաղեց երիտասարդը ասլէալ, կը յուսամ  
 որ ամենեին սխալ տեղեկութիւն մը . . . :

— Ձեր վրայօք առաջին անգամ Աիլմօր այն մարդասէր  
 բարեկամիս բերանէն խօսուիլը լսեցի : Ա՛րքէր թէ խիստ ցա-  
 ւալի վիճակի մը մէջ գտած էր զձեզ, բայց ինչ բանի հա-  
 մար խօսիլը չեմ գիտեր, և ես ամենեին հարցուցի անոր,  
 քանզի հետաքրքիր չեմ : Ձեր թշուառութիւնները անոր հա-  
 մակրութիւնը դրաւեր են, ուստի ձեր կորուսած վիճակը

վերստին ձեռք բերելով, ձեր հայրը պիտի փնտռէր և գրաս-  
նէր, ինչպէս որ փնտռեց և դտաւ. քանզի ձեր հայրը հոս  
է հիմա. վերջապէս լորտ Ախլմոր երէկ ձեր Բարիզ հասնիլը  
իմացուց ինձ, և ձեր հարստութեան վերաբերեալ քանի  
մը ուրիշ տեղեկութիւններ ալ տուաւ: Գիտեմ որ Ախլմոր  
բարեկամս տարօրինակ մէկն է, բայց որովհետեւ միանդամայն  
ոսկւոյ հանքի մը շափ հարուստ և ապահով մարդ մ'է, և  
կարող է իւր այլանդակ կամքերը դո՛հ ընել առանց մեաս,  
ուելլու, խոստացայ անոր որ տուած տեղեկութեանցը համե-  
մատ դործը կատարեմ: Ուստի կը խնդրեմ որ չվերաւորուիք  
իմ հարցմունքէս, և որովհետեւ պիտի պարտաւորուիմ քիչ  
շատ ջատագովել զձեզ, կ'ուզէի դիտնալ թէ ձեր գլուխը  
եկած դժբաղդութիւնները, որոնք ձեր կամքէն կախեալ չէին,  
և իմ ձեր վրայ ունեցած յարդանքս ամենէին չեն նուազեր:  
արդեօք քիչ շատ կ'օտարացընե՞ն զձեզ այս աշխարհէս, ուր  
ձեր հարստութեամբն ու անունովը փառաւոր երեւելու կոչ-  
ուած էք:

— Պարոն, պատասխանեց երիտասարդը՝ կոմսին խօսեցած  
միջոցին համարձակութիւն առնելով, ապահով եղիք այս մա-  
սին. զիս յափշտակողները, որոնք ետքը զիս վերստին հօրս  
ծախելու դիտաւորութիւն ունէին, հաշիւ բրած են որ ինձմէ  
աղէկ օգուտ քաղելու համար՝ պէտք էր արժանաւորութեանս  
համեմատ վարուիլ ինձի հետ, և եթէ կարելի է՝ աւելի ար-  
ժանաւորութիւն տալ ինձ. ուստի անոնց խնամքովը բաւա-  
կան լաւ դաստիարակութիւն մը առի, և տղայոց դողերը ին-  
ձի հետ այնպէս վարուեցան, ինչպէս կը վարուէին Փոքր Ա-  
սիոյ մէջ դերիներուն հետ, որոնց տէրերը կը ջանային դա-  
նոնք գրադէտ, բժիշկ և փիլիսոփայ ընել, որպէս զի Հռոմի  
վաճառանոցին մէջ աւելի սուղ ծախեն —:

Մօնթէ-Քրիսթօ դոհունակութեամբ ժպտեցաւ. ըստ երե-  
ւութից՝ Պ. Անտրէա Գալալղանթիէն այնչափ չէր յուսար:

— Մանաւանդ որ, կրկնեց երիտասարդը, եթէ իմ վրաս  
դաստիարակութեան և կամ ընկերային սովորութեան պակաս

սութիւն մը տեսնուի, կարծեմ թէ անոնց ներողամիտ պիտի ըլլան՝ իմ ծննդեանս և երիտասարդութիւնս պատող դժբաղդութեանց նկատմամբ:

— Աւզածնիդ ըրէք, դերակումս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ անհողութեամբ, վասն զի դուք ձեր անձին տէրն էք, և այս բանս ձեզ կը նկատէ. բայց ճշմարիտ կ'ըսեմ, այս ամեն զխտուածոց վրայ ըսելիք չունիմ, պատմութիւննիդ վիպասանութիւն մ'է, և հասարակ տատեանով վիպասանութիւնները կարդացող հետամուտները չեն սիրեր ընտիր մաղաղածով կաղմուածները կարդալ՝ եթէ ոսկեղօծեալ իսկ ըլլան, ինչպէս է ձերը: Հոս անպատեհութիւն մը կայ զոր ձեր առջևը դնել պիտի համարձակիմ, ձեր սրտաշարժ պատմութիւնը մէկու պատմելուդ պէս՝ բոլորովին փոխուելով աշխարհի մէջ պիտի հրատարակուի. այն ատեն չէ թէ դանուած այլ կորուած երիտասարդ մը պիտի ըլլաք, այն ատեն Անթոնիին պէս ընել պիտի ուզէք, բայց Անթոնիներուն ժամանակը քիչ մը անցած է: Կարելի է որ հետաքրքրութիւն մը պատճառելու յաջողիք, բայց ամեն մարդ չուզեր դիտողութեանց կեդրոնը և մեկնութեանց առարկայն ըլլալ: Այս բանս դուցէ ձանձրացընէ զձեզ:

— Կարծեմ թէ իրաւունք ունիք, պարոն կումս, ըսաւ երիտասարդը Մօնթէ-Քրիսթօյի անողոք նայուածքէն ահամադեղնելով. մեծ անպատեհութիւն մ'է այդ:

— Պէտք չէ նաև չափը անցընել, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. վասն զի երբեմն սխալմունքէ մը խուսափելով, յիմարութեան մէջ կրնայ իյնալ մարդ: Պէտք է ամենուն հետ վարուելու եղանակ մը որոշել, և ձեզի պէս հանճարեղ մարդու մը համար այդ եղանակը որոշելը այնչափ դիւրին է որչափ որ պատշաճ է ձեր օգտին. ձեր անցեալին մութ մասերը դործելով և պատուաւոր բարեկամութիւններով ծածկել պէտք էք —:

Անտրէա յայտնապէս վհատութիւն մը զգաց:

— Յօժարութեամբ զիս պատասխանատու և երաշխաւոր կ'ընծայեմ ձեզ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. սակայն ես բարո-

յական սովորութիւն մը ունիմ որ իմ ամենէն սերտ բարեկամացս վրայ կը կասկածիմ և կ'ուզեմ որ ուրիշներն ալ իմ վրաս կասկածին . այս կերպով՝ ինչպէս կ'ըսեն ողբերգուները՝ իմ բնութենէս դուրս դեր մը պիտի ներկայացընեմ, հետեաբար սուլուելու վտանգին մէջը պիտի խնամ, որ ախորժելի չէ :

— Սակայն, սլարոն կոմս, ըսաւ Անտրէա համարձակութեամբ, 'ի շնորհս լորտ Վիլմորի որ զիս ձեզ յանձնարարութիւն ըրաւ . . . :

— Այո՛, անտարակոյս . սակայն լորտ Վիլմորը դիպուածալի երիտասարդութիւն մը ունենալնիդ ինձմէ զազանի պահած չէ, սիրելի Պ. Անտրէա : Բայց ես չեմ խնդրեր որ զանոնք խոտովանիք ինձ, շարունակեց կոմսը՝ Անտրէային ըրած շարժումը տեսնելով . Պ. Գավալդանթի մարքէզ ձեր հայրը հիմա պիտի տեսնէք . թէև քիչ մը անաչտու և պճնասէր է, բայց երբ իմացուի որ տասն և ութ տարիէ 'ի վեր Աւստրիացոց ժառայութեան մէջ կը գտնուի, ամեն բան կը ներուի անոր . ընդհանրապէս Աւստրիացոց այս պակասութիւնները ներելի են : Վերջապէս կ'ապահովեմ զձեզ որ բաւական տիրելի հայր մը ունիք :

— Այնչափ երկար ատենէ 'ի վեր անորմէ բաժնուած եմ, որ ամենեին չեմ յիշեր զան :

— Ասկէ զատ դիտէք որ մեծ հարստութիւն մը շատ բաներու վրայ մէկ աչքը դոցել կու տայ :

— Ուրեմն հայրս իրօք հարո՛ւստ է :

— Միլիոնատէր մ'է . . . հինգ հարիւր հազար Ֆրանք եկամուտ ունի :

— Ուրեմն քիչ ժամանակէն հաճելի վիճակի մը մէջ պիտի գտնուիմ :

— Խիստ հաճելի, սիրելի սլարոն . Բարիզ կենալու համար ձեզ տարին յիսուն հազար Ֆրանք եկամուտ պէտք է :

— Ուրեմն միշտ Բարիզ պիտի կենամ :

— Է՛հ, ո՛վ կրնայ սլարադաները երաշխաւորել, մարդս

կը յառաջադրէ և Աստուած կը տնօրինէ — :

Անտրէա հառաչանք մը հանեց :

— Բայց վերջապէս , ըսաւ , որչափ ժամանակ որ Բարիզ մնամ , և . . . եթէ ամենեւին պարտադայ մը չպարտաւորէ զիս որ ասկէ հեռանամ , այդ ձեր ըսած դումարը ինծի համար ապահովուած է :

— Կատարելապէս :

— Հօրսէս , հարցուց Անտրէա անհանդստութեամբ մը :

— Այո՛ , բայց լորտ Ալիքսորէն երաշխաւորուած , որ ձեր հօրը խնդրանօքը ամիսը հինգ հազար ֆրանքի վարկ մը բացած է ձեզի Բարիզի ամենէն ապահով սեղանաւորներէն մէկուն Պ . Տանկլարի վրայ :

— Եւ հայրս երկար ժամանակ Բարիզ մնալու միտք ունի :

— Քանի մը օր միայն , իւր պաշտօնը չներէր իրեն որ երկու կամ երեք շաբաթէն աւելի մնայ :

— Ո՛հ , սիրելի հայրս , ըսաւ Անտրէա՝ իւր հօրը շուտով մեկնելուն վրայ ուրախանալով :

— Աւստի ձեր միութիւնը վայրկեան մը յասպարել չեմ ուզեր , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՝ ինքզինքը այս խօսքերէն խաբուած ցուցնելով : Այն արժանաւոր Պ . Գավալդանթին դրուկելու պատրաստուած էր :

— Կը յուսամ որ տարակոյս չունիք :

— Աւրեմ սրահը մտիք , երիտասարդ բարեկամ , և ձեր հայրը պիտի դանէք որ ձեզ կ'ըստասէ — :

Անտրէա խորին խոնարհութիւն մը ըրաւ կոմսին և սրահը մտաւ :

Կոմսը անոր ետեւէն նայեցաւ , և աներեւոյթ ըլլալը տեսնելով պատկերի մը համապատասխանող զսպանակ մը հրեց , և ճարտարութեամբ շինուած ծակէ մը սրահին մէջը կը տեսնէր :

Անտրէա դուռը իւր ետեւէն դոցեց , և դէպ 'ի դնդապետը յառաջացաւ , որ մօտեցող քայլերուն ձայնը առնելով ոտք ելաւ :

— Ո՛հ , պարոն և սիրելի հայր , ըսաւ Անտրէա՝ դոց դըռն :

նէն դուրս կոմսին լսելի ըլլալու չափ բարձր ձայնիւ :

— Բարի եկար , սիրելի զաւակս , ըսաւ զնդապետը ծանրութեամբ :

— Երկար տարիներ իրարմէ բաժնուելնէս ետքը , ըսաւ Անտրէա միշտ դրան կողմը նայելով , որչափ երջանիկ ենք որ վերստին զիրար կը տեսնենք :

— Իրօք երկար ժամանակ է որ իրարմէ բաժնուած ենք :

— Չգրկուինք , պարոն :

— Ինչպէս որ կը հաճիս , զաւակս — :

Եւ այս երկու մարդերը Գաղղիական-թատրոնին մէջ դրոկուողներուն պէս զիրար գրկեցին , այսինքն զլուսնին ուսին վրայ դնելով :

— Այսպէս ուրեմն վերջապէս զիրար դտանք :

— Վերջապէս զիրար դտանք , կրկնեց զնդապետը :

— Մէկ մ'ալ չբաժնուելով համար , հայր իմ :

— Այո , սիրելի զաւակս . կարծեմ թէ հիմա Գաղղիան իբր երկրորդ հայրենիքդ պիտի նկատես :

— Ստոյգ է որ պիտի յուսահատիմ եթէ Բարիզէն մեկնիմ :

— Եւ ես Նուքքայէն բացակայ ըլլալ չեմ կրնար . ուստի կարելի եղածին չափ շուտով Իտալիա պիտի վերադառնամ :

— Բայց մեկնելէդ առաջ , ամենասիրելի հայր իմ , անտարակոյս իմ ծննդեանս վկայագիրը պիտի յանձնես ինձ :

— Անտարակոյս . քանզի ես դիմամբ ասոր համար եկայ , և զքեզ գտնելու համար այնչափ նեղութիւն կրեցի որպէս զի զանոնք քեզ յանձնեմ , որ վերստին զիրար փնտռելու օկսիլը դժուար կ'երևի ինձ , և կենազս վերջին մասը պիտի պարապեցընէ :

— Ո՞ւր են վկայագիրերը :

— Ահա ա՛ն — :

Անտրէա իւր հօրը ձեռքէն անոր ամուսնութեան և իւր մկրտութեան վկայագիրերը եռանդեամբ յափշտակեց , և բարի գլուկի մը բնական եղած անհողութեամբ զանոնք բանալով , երկու գրութիւնները այնպիսի արագութեամբ և այնպիսի ե-

դանակաւ աչքէ անցուց, որ իւր վարժ զննութիւնը և միանալով  
 դամայն անկէ խիստ մեծ օգուտ ստասելը կը յայտնէր:

Արբ ընթերցումը լինցուց, ուրախութեան անսահման զղա-  
 ցում մը իւր ճակատին վրայ փայլեցաւ, և զարմանալի ժպի-  
 տով մը գնդապետին նայելով՝

— Աւրեմն Իտալիոյ մէջ թիասլարտութեան պատիժ չկայ,  
 հայր իմ . . . , ըսաւ ընտիր Թոսկաներէն լեզուաւ — :

Գնդապետը սարսուաց:

— Ինչո՞ւ կը հարցընես, ըսաւ:

— Ար զարմանամ թէ ինչպէս անպատիժ այսպիսի վկայա-  
 դիրեր կը շինուին: Աթէ Գաղղիոյ մէջ ասոր կէսը անգամ  
 ընէ մէկը, հինգ տարի թիասլարտութեամբ Թուլոնի օդը շըն-  
 չելու կը դրկուի:

— Ինչ ըսիր, ըսաւ Լուք. քացին՝ ջանալով ծանրութիւն  
 ձեայընել:

— Սիրելի պարոն Գալալղանթի, ըսաւ Անտրէա գնդա-  
 պետին թեք սեղմելով, ստոյգ ըսէ, ինչ տուին քեզ որ հայրս  
 ըլլաս — :

Գնդապետը ուղեց խօսիլ:

— Լուէ, ըսաւ Անտրէա ձայնը ցածընելով, հիմա վստա-  
 հացընեմ գ. քեզ, քու որդիդ ըլլալու համար տարին յիսուն  
 հազար ֆրանք կու տան ինձ, հետեաբար կընաս մակաբերել  
 որ հայրս ըլլալդ ուրանալու երբէք պիտի չյօժարիմ — :

Գնդապետը անհանդատութեամբ իւր բոլորտիքը նայեցաւ:

— Մի վախնար, մինակ ենք, ըսաւ Անտրէա. մանաւանդ  
 որ Իտալերէն կը խօսինք:

— Ինձ ի ալ մէկ անգամուան համար յիսուն հազար ֆրանք  
 կու տան:

— Պ. Գալալղանթի, ըսաւ Անտրէա, վհուկներու պատ-  
 մութեան կը հաւատայիր:

— Ժամանակաւ չէի հաւատար, բայց հիմա պէտք է որ  
 հաւատամ:

— Փորձը տես՞ր — :

Գնդապետը իւր դրպանէն լիաբուռն ոսկի հանեց :

— Ահա, շոշափելի փորձեր ունիմ :

— Ուրեմն կը կարծես որ ինձ եղած խոստմանց պէտք եմ հաւատալ :

— Այնպէս կը կարծեմ :

— Եւ այն ազնիւ կոմսը իւր խոստման վրայ պիտի կենայ :

— Անտարակոյս, բայց այն նստատակին հասնելու համար պէտք է որ մեր դերը խաղանք, կը հասկընամ :

— Ի՞նչ կերպով :

— Ես քու խանդակաթ հայրդ պիտի ըլլամ :

— Եւ ես սիրելի զաւակդ :

— Քանի որ անոնք այնպէս կ'ուզեն :

— Անոնք ըսածդ ո՞վ են :

— Է՛հ, ինչ գիտնամ . . . քեզ դիր դրողները, նամակ մը ջընդուներցիր :

— Այո :

— Որմէ :

— Աբբայ Պիւզոնիէ մը :

— Չես ճանչնար դան :

— Ամենեին տեսած չեմ :

— Ի՞նչ դրած էր այն նամակին մէջ :

— Ձիս պիտի մատնես :

— Ի՞նչ կ'ըսես, երկուքնուս շահը մի և նոյնն է :

— Ուրեմն կարդա՛ — :

Գնդապետը երիտասարդին նամակ մը տուաւ :

Անտրէա ցած ձայնիւ կարդաց .

« Աղքատ մարդ մ'ես դուն, ու ողորմելի ծերուծիւն մը քու բաժինդ է :

« Եթէ ոչ հարուստ՝ դոնէ անկախ ըլլալ կ'ուզես :

« Հիմա ելի՛ր Բարիզ դնա, Շանդ-Ելիզէ, թիւ 30 տունը, ու Պ. Մօնթէ-Քրիսթոյ կոմսէն խնդրէ Գորսինարի մարքէզուհիէն ունեցած զաւակդ, որ հինդ տարուան հասակին մէջ գողցան քեզմէ :



« Այս դուալիդ անունն է Անարէա Գալաղանթի :

« Եւ որպէս զի ստորագրելոյն քեզ հաճելի ըլլալու զի-  
տաւորութենէն չկասկածիս , ներիակեալ պիտի դանեսս

« 1<sup>0</sup>. Երկու հազար չորս հարիւր Թոսկանայի Ֆրանքի լու-  
մայադիր մը՝ վճարելի Ֆիորէնցայի մէջ կոծծիին դրամասե-  
ղանք :

« 2<sup>0</sup>. Յանձնարարական նամակ մը Մօնթէ-Քրիսթոյի ուղ-  
ղեալ , որու վրայ քառասուն և ութ հազար Ֆրանքի վարկ  
մը կը բանամ քեզ :

« Կոմսին տունը դանուէ Մայիսի 26<sup>էն</sup> իրիկուան ժամը  
եօթին :

« ստորագրելու Արքայ ՊիՒՁՈՆԻ » :

- Ո՛հն :
- Ի՞նչ ըսել կ'ուզես , հարցուց զնոյապեար :
- Ըսել կ'ուզեմ թէ ասոր նոյնը ես ալ ընդունած եմ :
- Գո՞ւն :
- Այո՛ , ես :
- Արքայ Պիւզոնիէն :
- Ոչ :
- Հասցա որմէ :
- Լորտ Վիլմոր անուն Անգղիացիէ մը , որ Սէնպատ նա-  
ւաստի անունը կը կրէ :
- Արքայ Պիւզոնին իմ չճանչնալուս պէս դուն ալ այդ-  
չորտ Վիլմորը չես ճանչնար :
- Ես քեզմէ աւելի բաղդաւոր եմ եղեր :
- Տեսա՞ր զան :
- Այո՛ , մէկ անգամ :
- Ո՞ւր տեղ :
- Չեմ կրնար ճիշդ ըսել , դուն ալ ինձմէ աւելի պիտի  
չկրնաս հասկընալ և անօգուտ պիտի ըլլայ ըսելս :
- Եւ ի՞նչ դրուած էր այն նամակին մէջ :
- Կարդա՛ :

« Աղքատ ես դուն , և ողորմելի ապաղայ մը ունիս . կ'ուզես անուն մը ստանալ , աղատ և հարուստ ըլլալ » :

— Անշուշտ , ըսաւ երիտասարդը իւր կրօնկներուն վրայ խաղալով՝ իրեն այսպէս հարցում մը եղածի պէս :

« Ճենովայի ըսուած Նիսի դռնէն դուրս ելնելուդ պէս՝ պատրաստ դանուած կառքը մտիր , ու Թիւրէնէն , Շամպէրիէն և Բօն-տը-Պօլուաղէնէն անցնելով Բարիդ եկու :

« Շանդ-Ելիզէի առջի փողոցը , Թիւ 30 , Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տունը ներկայացիր Մայիսի 26<sup>ին</sup> իրիկուան ժամը եօթին , և հայրդ անոր հարցուր :

« Դուն Պարթոլոմէօ Գավալղանթի մարքէզին և Օլիւա Գորսինարի մարքէզուհւոյն որդին ես , ինչպէս որ պիտի հաստատեն մարքէզին քեզ յանձնելու վկայադիրերը , որոնց միջոցաւ կարող պիտի ըլլաս այս անունով Բարիդեան ընկերութեանց մէջ ներկայանալ :

« Տարին յիսուն հազար Ֆրանքի եկամուտ մը պիտի յանձնուի քեզ :

« Ներփակեալ պիտի դանես հինգ հազար Ֆրանքնոց լուծայադիր մը՝ վճարելի ՚ի դրամասեղանն Պ. Փէրրէայի , որ Նիսի մէջ սեղանաւոր է . պիտի դանես նաև յանձնարարական նամակ մը Մօնթէ-Քրիսթոյ կոմսին վրայ , որ իմ խնդրանքս յանձնառու եղած է քեզի պէտք եղածը հողալ :

« ՍԷՆՊԱՏ ՆԱԻԱՍՏԻ » :

- Պատուական նամակ մ'է այդ :
- Այնպէս չէ :
- Կոմսը տեսա՞ր :
- Հիմա քովէն կու դամ :
- Վաւերացո՞ւց :
- Ամեն բան :
- Այս դործէն բան մը հասկըցա՞ր :

- Ճշմարիտ ոչ :
- Մէջերնէս մէկը խարուած սլիախի ըլլայ :
- Ոչ ես եմ և ոչ դուն :
- Ոչ, անտարակոյս :
- Ուրեմն :
- Մեր ինչ հոգը, այնպէս չէ :
- Ճիշդ ես ալ այդպէս ըսել կ'ուզէի, ուրեմն դորձը մինչև և վերջը տանինք, և միշտ համամիտ ըլլանք :
- Շատ աղէկ, սլիախ տեսնես որ քեզի մասնակից ըլլալու արժանաւոր եմ :
- Ամենեին տարակոյս չունիմ, սիրելի հայր իմ :
- Ար ճանչնամ ինչ ըրած սրտիւդ, սիրելի որդեակս — :  
Մօնթէ-Քրիսթօ սրահը մանկընդ համար այս ժամս յարմար սեպեց :
- Անոր քայլերուն ձայնը առնելով, երկու մարդերը իրարու դրկաց մէջ նետուեցան. կոմօր զանոնք դրկընդխառնած դտաւ :
- Ա'երեի թէ, սարոն մարքէզ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, դտած զաւակնիդ ձեր փափաքած ին համեմատ է :
- Ա'հ, սարոն կոմս, ուրախութենէս այլայլած եմ :
- Հասցա դո՞ք, երիտասարդ :
- Ո'հ, սարոն կոմս, երջանկութիւնս կատարեալ է :
- Երջանիկ հայր, երջանիկ զաւակ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :
- Միայն մէկ բանի վրայ կը ցաւիմ, ըսաւ գնդապետը, որ շուտով Բարիզէն մեկնելու պարտաւորեալ եմ :
- Գոնէ, սիրելի սարոն Գավալղանթի, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, կը յուսամ թէ զձեզ քանի մը բարեկամացս ներկայացընելէս առաջ չէք մեկնիր :
- Պարոն կոմսին հրամանները կատարելու պատրաստ եմ, ըսաւ գնդապետը :
- Հիմա, երիտասարդ, ամեն բան խոստովանեցէք :
- Որո՞ւ :
- Չեր հօրը, ձեր եկամտից վրայ քանի մը խօսք խօսեցէք անոր :

— Ո՛հ, պարոն կոմս, կարևոր խնդիրը կը բանաք, ըսաւ Անտրէա:

— Կը լսէք, դնդապետ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Անշուշտ:

— Բայց կը հասկընա՞ք:

— Շատ աղէկ կը հասկընամ:

— Ստակի պէտք ունի կ'ըսէ այս սիրելի որդին:

— Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ:

— Զարմանալի բան, տուէք անոր:

— Ե՞ս:

— Այո՛, դուք —:

Մօնթէ-Քրիսթօ երկու մարդոց մէջ տեղը մտաւ:

— Ահա, ըսաւ Անտրէային՝ ծրար մը լումայաղիր տալով անոր:

— Ի՞նչ են ասոնք:

— Ձեր հօրը պատասխանը:

— Իմ հօ՞րս:

— Այո՛, միթէ հիմա չէիք ըսեր թէ ստակի պէտք ունիք:

— Այո՛:

— Ձեր հայրը ասոնք ինձ կը յանձնէ որ ձեզ տամ:

— Իմ եկամուտէս իբր առ հաշիւ:

— Բարիդի մէջ հաստատուելու ծախուցդ համար:

— Ո՛հ, սիրելի հայր իմ:

— Լռեցէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, կը տեսնէք որ իւր կողմէն տուած ըլլալս չուզեր որ ըսեմ:

— Այդ ազնուութեան յարդը կը ճանչնամ, ըսաւ Անտրէա լումայաղիրերը իւր դրպանին մէջ դնելով:

— Շատ աղէկ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, հիմա կրնաք երթալ:

— Եւ ե՞րբ պատիւ պիտի ունենանք պարոն կոմսը վերստին տեսնելու, հարցուց Գավալղանթի:

— Այո՛, հարցուց Անտրէա, ե՞րբ պիտի ունենանք այդ պատիւը:

— Շաբաթ օրը՝ եթէ կը հաճիք . . . այո՛, ճիշդ շաբաթ

օրը . . . : Օթեշլ, Փօնթէն փողոցը, թիւ 28 սանս մէջ քանի մը հողի ճաշի հրաւիրած եմ, որոնց մէջ Պ. Տանկլար ձեր սեղանաւորն ալ կայ. հոն ղձեղ անոր կը ներկայացընեմ. անշուշտ պէտք է որ ղձեղ երկուքդ ալ ճանչնայ, որպէս զի ձեր ստակը համբէ :

— Փատաւօր հաղուստով, հարցուց զնդասկեար կէս ձայնիւ :

— Այո՛. միազղեամնիդ, խաչ նշաննիդ և կարճ սունազղեամնիդ պիտի հաղնիք :

— Հասցա ես, հարցուց Անտրէա :

— Գուք խիստ սրարդ պիտի հաղուիք, այսինքն սև սունազղեամ, սպիկեալ կոշիկներ, սպիտակ բաճկոն, սև կամ կապոյտ թիկնոց և երկար փողկասլ. հաղուելու համար՝ Պլէն կամ Ալերոնիք զղեստայարդարները կանչեցէք : Թէոր անոնց դանուած տեղը չէք գիտեր, Պաթիսթէնի հարցուցէք, ան գիտէ : Եւ որովհետև հարուստ էք՝ ձեր հաղուստին ձեր սրչափ պարզ ըլլայ, այնչափ աւելի ազդեցութիւն կ'ընէ : Եթէ ձեր գնէք՝ Տրվտէօէն զնեցէք, և Պաթիսթի քով լաւ կ'առքեր կը դանուին :

— Ժամը քանիին պիտի կարենանք ներկայիլ, հարցուց Երիտասարդը :

— Ժամը վեց ու կէսին :

— Շատ աղէկ, ժամը վեց ու կէսին հոն ենք —, ըսաւ զնդասկեար ձեռքը գլխարկին տանելով :

Երկու Գավարդանթիները կոմսը բարեկցին և մեկնեցան :

Կոմսը պատահանին մօտեցաւ, և տեսաւ զանոնք որ իբրտու թեր մտած դաւիթէն դուրս կ'երնէին :

— Սաուդիւ, ըսաւ, երկու մեծ թշուառներ են ասոնք. ինչ դժբաղդութիւն որ իբօք հայր և որդի չըլլան — :

Եւ վայրկեան մը տխուր մտածութենէ ետև՝

— Մորէլի տունը երթամ, ըսաւ. վասն զի տաղակութիւնը տակըթենէ աւելի սիրտս կը նեղէ :



## ՔՐԻՍՏՈՅ

## ԱՌՈՒՆԵՑԻ ՊԵՐՏԵՂԸ



**Ս**ԵՏՔ է որ մեր ընթերցողները ներեն մեզ որ դիրենք վերստին Պ. Ախլեֆօրի տանը սլաակից պարտեղը տանինք, և այն շաղանակենիներով դրաւուած վանդակապատին ետին՝ մեզի ծանօթ երկու երիտասարդները գտնենք:

Այս անդամ առաջ Մաքսիմիլիէն հասեր էր:

Վանդակապատին ճեղքուածքէն իւր աչքը Պ. Ախլեֆօրի տան պարտիզակին մէջ թափանցելով՝ ծառերուն մէջ ստուեր մը տեսնելու և ծառուղիներուն աւազին վրայ մետաքսեայ կէս կոշիկներու ձայնը առնելու կ'ըսպասէր:

Վերջապէս այնչափ անհամբերութեամբ սպասուած կոշիկներու ձայնը լսուեցաւ, և մէկ ստուերի տեղ՝ երկու ստուեր կը մօտենային:

Վալանթինի յապաղման պատճառն էր տիկին Տանկլարի և Էօժէնիին այցելութիւնը, որ խիստ երկարելով՝ Վալանթինի սպասուած ժամը անցուցեր էր:

Ուստի իւր ժամադրութենէն չվրիպելու համար՝ ծաղկահասա աղջիկը առաջարկեր էր օրիորդ Տանկլարին որ պարտեղին մէջ շրջադայութիւն մը ընէ, ուզելով ցուցնել Մաքսիմիլիէնի որ ամենեւին յանցանք չունէր իւր յապաղմանը մէջ, որուն համար անտարակոյս իւր սիրահարը կը տաղնապէր:

Երիտասարդը սիրահարներու յատուկ եղած խելամուռ թեան արագութեամբը ամեն բան հասկըցաւ, և իւր սիրտը հանդարտեցաւ :

Ասիէ զատ՝ Աալանթին՝ առանց ձայնը հասնելու չափ մտտենալու, իւր շրջադայութիւնը այնպիսի ճանապարհներէ կ'ուզղէր որ Մաքսիմիլիէն իւր անցնելը և վերադառնալը կը տեսնէր, և ամեն անգամ անցնելուն՝ իւր ընկերուհիէն անտեսանելի նայուածք մը դէպ 'ի անոր կ'ուզղէր, որ վանդակապատին միւս կողմը կը թափանցէր և երիտասարդին կ'ըսէր . « Համբերէ, բարեկամ, կը տեսնես որ յանցանքը իմս չէ » :

Եւ Մաքսիմիլիէն իրօք կը համբերէր և կը զարմանար այն երկու նորատի աղջկանց հակապատկերը տեսնելով, մէկը գեղեցիկ ու ինչ նման խոնարհ կեցուածքով, տկար նայուածքով խարտեաշ անձ մ'էր, միւսը կաղամախի պէս ուղղորդ կեցուածքով, դոռող նայուածքով թուխ անձ մը :

Աւելորդ է ըսել որ այսպիսի ընդդիմապատկեր երկու անձանց բաղդատութեանը մէջ գերազանցութիւնը դոնէ երիտասարդին սրտին մէջ Աալանթինի կը վերաբերէր :

Կէս ժամ շրջադայութեանէ ետեւ՝ երկու աղջիկները հեռացան Մաքսիմիլիէն հասկըցաւ որ տիկին Տանկլարի այցելութեան վախճանը հասեր էր :

Իրօք՝ վայրկեան մը ետքը՝ Աալանթին առանձին երեցաւ :

Իւր վերադարձը դիտող չարամիտ նայուածքէ մը վախնալով՝ օրիորդը կամաց կը քալէր, և փոխանակ ուղղակի վանդակապատին մտենալու՝ դնաց նստարանի մը վրայ նըստաւ՝ առանց յայտնի ընելու՝ խիստ ծառերը քննելէն և իւր նայուածքը ամեն ծառուղիներուն խորերը թափանցելէն ետեւ :

Այս նախադրուշութիւնները ընելով վանդակապատին քովը վաղեց :

— Բարի լոյս, Աալանթին, ըսաւ ձայն մը :

— Բարի լոյս, Մաքսիմիլիէն, սպասեցուցի քեզի, բայց սպասճառը տեսար :

— Այո՛, օրիորդ Տանկլար հետդ էր, չէի կարծեր որ ա-

նոր հետ այնչափ սիրով կապուած ըլլաս :

— Ա՛յլ ըսաւ որ անոր հետ սիրով կապուած եմ, Մաքսիմիլիէն :

— Աչ մէկը . բայց անոր թեւ ժանելէդ և անոր հետ խօսելու կերպէդ ինձ այնպէս երևցաւ . և կարծես թէ մէկ դըպրոցի երկու ընկերակիցներ էիք ու դադանիքնիդ իրարու կը յայտնէիք :

— Իբօք մեր դադանիքը իրարու կը յայտնէինք . օրիորդը Պ. Մորսէրֆի հետ իւր ամուսնութեան դժկամութիւնը կը յայտնէր , և ես կ'ըսէի անոր թէ Պ. տ' Էրինէի հետ ամուսնանալը թշուառութիւն մը կը համարեիմ :

— Սիրելի Վալանթին :

— Ահա ինչ է պատճառը , սիրելիս , որ իմ ու Էօժէնիին մէջ մտերմութեան երևոյթ մը տեսար . վասն զի շտիրած անձիս վրայ խօսելու ժամանակս՝ սիրած անձիս վրայ կը մտածէի :

— Ամեն բանի մէջ ազնիւ ես , Վալանթին , և դուն այնպիսի ձիրք մը ունիս որ օրիորդ Տանկլար բնաւ պիտի չունենայ , այսինքն այն յանկուցիչ անսահման վայելչութիւնը որ կ'նոջ մը կը վայելէ , ինչպէս հոտը ծաղկին և համը պտղոյ : Վասն զի բաւական չէ ծաղկի մը որ գեղեցիկ ըլլայ և պտղոյ մը որ գեղեցիկ տեսք ունենայ :

— Քու սէրդ է որ այսպէս կ'երևցընէ , Մաքսիմիլիէն :

— Աչ, Վալանթին , կ'երդնում : Հիմա երկուքնիդ ալ կը դիտէի , և ճշմարիտ կ'ըսեմ որ օրիորդ Տանկլարի գեղեցկութիւնը տեսնելովս ալ՝ չէի համոզուեր որ մարդ մը կարենայ անոր սիրահարիլ :

— Աչ, Վալանթին . . . բայց ըսէ , կ'աղաչեմ . . . պարզ հետաքրքրական հարցում մ'է ըրածս , որ օրիորդ Տանկլարի վրայ ունեցած կարծիքներէս յառաջ եկած է :

— Առանց դիտնալու թէ որո՞նք են ըրած կարծիքներդ , կ'ըսեմ քեզի որ իրաւունք չունիս : Երբ մարդիկ մեր վրայ դատողութիւն կ'ընեն , մենք ողորմելի կանայքս պէտք չենք դժութեան սպասել :



- Այս խնդրոյն մէջ դուք իրարու իրաւունք կու տաք :
- Վասն զի դրեթէ միշտ մեր դատողութեանց մէջ կիւրք կայ : Բայց դառնանք քու խօսքիդ :
- Օրիորդ Տանկլար մէկ ուրիշը սիրելուն համար է որ պարոն Մորսէրֆը կ'ատէ :
- Մաքսիմիլիէն, քեզ ըսի որ Էօժէնիին բարեկամը չեմ :
- Է՛հ, միթէ առանց բարեկամ ըլլալու՝ ծաղկահաս աղջիկները իրարու դաղանիք չեն յայտներ, անշուշտ այսպիսի հարցում մը ըրիր : Ար տեսնեմ որ կը ժպտիս, ըսէ ուրեմն ինչ ըսաւ :
- Ըսաւ թէ ամենեին մէկը չսիրեր, թէ ամուսնանալ չուզեր, և իւր ամենէն մեծ ուրախութիւնը պիտի ըլլայ ազատ և անկախ կեանք մը վարելը և թէ կը փափաքէր որ իւր հայրը հարստութիւնը կորսնցընէր, որպէս զի օրիորդ Աուիզ տ'Արմիյի իւր բարեկամուհւոյն պէս արուեստաւոր մը ըլլար :
- Ար տեսնես :
- Բայց ինչ կը ցուցընեն այս խօսքերը :
- Ոչինչ, պատասխանեց Մաքսիմիլիէն ժպտելով :
- Ուրեմն դուն ինչո՞ւ ժպտեցար հիմա :
- Ոչինչ :
- Կ'ուզէս որ հեռանամ :
- Ո՛հ, ոչ, ոչ, թողունք այս խօսքերը և մեր խնդրոյն դառնանք :
- Այո՛, սառայ է, վասն զի հազիւ տասը վայրկեան ունինք միատեղ անցընելու :
- Ինչ դժբաղդ եմ եզեր, ըսաւ Մաքսիմիլիէն սրտաբեկ :
- Այո՛, Մաքսիմիլիէն, իրաւունք ունիս, ըսաւ Վալանթին տխրութեամբ, և դուն սղորմելի բարեկամուհի մը ունիս : Խեղճ Մաքսիմիլիէն, ինչ կեանք է այդ որ ինձի համար կ'անցընես, դուն որ երջանիկ ըլլալու արժանի ես : Հաւատա ինձ, այս բանիս համար չարաչար կը մեղադրեմ զիս :
- Ինչո՞ւ կը տաղնասպիս, սիրելիդ իմ Վալանթին, երբ

ես այս կերպով երջանիկ կ'ըլլամ, երբ այնչափ երկար ժամանակ սպասելով դո՛՛հ կ'ըլլամ քու հինգ վայրկեանի տեսութենէդ, քու երկու խօսքերէդ, և այն խորին ու մշտնջենաւոր համոզումէն, որ Աստուած մերինին պէս ներդաշնակեալ երկու սրտեր ստեղծած չէ, մանաւանդ դրեթէ հրաշքով զանոնք միացուցած չէ որ իրարմէ բաժնէ:

— Անորհակալ եմ, Մաքսիմիլիէն. երկուքնուս համար ալ յուսամ. այս կերպով կ'իսով չափ երջանիկ կ'ըլլամ ես ալ:

— Ի՞նչ ունիս դարձեալ, Աալանթին, որ այսպէս շուտով ինձմէ բաժնուիլ կ'ուզես:

— Ձեմ դիտեր. տիկին Աիլըֆօր աղաչեր է որ իւր սենեակն երթամ ըսելով թէ խօսք մը ունի ինձ հաղորդելու, ուրկից կախեալ է եղեր հարստութեանս մէկ մասը: Ո՛հ, տէր Աստուած, թող առնուն հարստութիւնս, հող չէ, ես շատ հարուստ եմ, բայց առնելէ ետեւ զիս հանդարտ և ազատ թողուն. աղքատութեանս մէջ ալ պիտի սիրես զիս, այնպէս չէ, Մորէլ:

— Ո՛հ, ես միշտ պիտի սիրեմ զքեզ. ինչ հոյս է հարստութիւնը կամ աղքատութիւնը, երբ Աալանթինս քովս ըլլայ, և ես ապահով ըլլամ որ իմ ձեռքէս մէկը պիտի չառնու զան: Բայց այն հաղորդելու խօսքը, Աալանթին, չի՞ս վախնար որ ամուսնութեանդ վերաբերեալ լուր մը ըլլայ:

— Ձեմ կարծեր:

— Սակայն մտիկ ըրէ ինձի, Աալանթին, և մի վախնար. վասն զի որչափ որ ապրիմ, ուրիշը պիտի չսիրեմ:

— Ար կարծես որ կ'ապահովեն զիս այդ խօսքով, Մաքսիմիլիէն:

— Ներէ, իրաւունք ունիս, քիչ մը տմարդի եմ. ըսել կ'ուզէի թէ անցեալ օր պարոն Մորսէրֆը տեսայ:

— Ետքը:

— Ինչպէս դիտես՝ Պ. Քրանզ իւր բարեկամն է:

— Այո՛, շարունակէ:

— Քրանզէն նամակ մը ընդուներ է, որ իւր մերձաւոր դարձը կ'իմացընէ —

Աւալանթին գեղնեցաւ , և ձեռքը վանդակներուն կոթընց  
 ցուց :

— Ո՛հ , տէր Աստուած , ըսաւ , արդեօք այս է ինձ ըսելու  
 խօսքը , բայց ոչ , տիկին Ախլըֆօր երբէք չհաղորդեր ինձ  
 այսպիսի լուր մը :

— Ինչո՞ւ :

— Ինչո՞ւ . . . չեմ գիտեր . . . բայց ինձ այնպէս կ'երևի  
 որ տիկին Ախլըֆօր թէև բացարձակապէս այն ամուսնութեան  
 շնորհիմանար , բայց համակիր չէ անոր :

— Բայց գիտես , Աւալանթին , որ տիկին Ախլըֆօր սիրելի  
 կին մը կ'երևի ինձ :

— Ո՛հ , այդչափ մի արտորար , Մաքսիմիլիէն , ըսաւ Աւա-  
 լանթին տխուր ժպտով մը :

— Աերջապէս եթէ այն ամուսնութեան հակակիր է , և  
 կ'ուզէ աւրել զայն , գուցէ ականջը ուրիշ առաջարկութեան  
 մը բացած է :

— Մի այդպէս կարծեր , Մաքսիմիլիէն , տիկին Ախլըֆօրի  
 մերժածը ամուսինները չէ , այլ ամուսնութիւնը :

— Ինչպէս , եթէ այդ աստիճան ամուսնութիւնը կ'ատէ ,  
 ինքը ինչո՞ւ ամուսնացեր է :

— Չես հասկընար , Մաքսիմիլիէն , երբ ասկէ տարի մը  
 առաջ վանք մը քաշուելու խօսքը ըրի , թէև պարտաւորեալ  
 քանի մը գիտողութիւններ ըրաւ , բայց ուրախութեամբ ա-  
 ռաջարկութիւնս ընդունեց . ապահով եմ որ հայրս անդամ  
 անոր թելադրութեամբը համազուեցաւ . միայն հաւս արդիւնց  
 զիս : Չես կրնար երևակայել , Մաքսիմիլիէն , թէ ինչպէս աչ-  
 քերովը իւր զգացումները կը յայտնէր այն ողորմելի ծերու-  
 նին , որ աշխարհիս մէջ միայն զիս կը սիրէ և ( թող ներէ  
 ինձ Աստուած՝ եթէ ըրածս հայհոյութիւն մ'է ) ինձմէ զատ  
 մէկը չսիրեր զան : Տեսնէիր , Մաքսիմիլիէն երբ իմ դիտա-  
 ւորութիւնս խնայաւ , ինչպէս երեսս նայեցաւ , ինչ յանդի-  
 մանութիւն կար այն նայուածքին մէջ , և ինչ յուսահատու-  
 թիւն իւր անշարժ այտերուն վրայէն անհառաչ և անարտունջ

վար դըրած արտասուացը մէջ: Ա՛հ, Մաքսիմիլիէն, սրտիս մէջ խղճի խայթ մը զգացի, ու անոր ոտքերուն ինկայ սլոռալով. « ներէ, ներէ, հայր. ինչ որ կ'ուզեն թող ընեն ինձի, երբէք չեմ բաժնուիր ես քեզմէ »: Այն ատեն իւր աչքերը դէպ 'ի երկինք վերցուց: Մաքսիմիլիէն, ես կրնամ շատ նեղութիւններ կրել. քանզի հաւիս այն նայուածքը կրելու նեղութեանցս փոխարէնը կանխաւ հատոյց ինձ:

— Սիրելիդ իմ Վալանթին, հրեշտակ մ'ես դուն, և չեմ դիտեր ճշմարիտ թէ ինչպէս այն Պէտուիները յաջ և յահեակ զարնելէս ետև արժանի եղայ զքեզ ճանչնալու: Բայց վերջապէս ըսէ ինձի, Վալանթին, չկարողուելովդ տիկին Վիլլեֆորի օգուտը ինչ է:

— Չլսեցիր հիմա, Մաքսիմիլիէն, որ քեզի հարուստ եմ ըսի, այո՛, խիստ հարուստ: Մօրմէս ինձ մնացած ժառանգութենէն յիսուն հազար ֆրանք եկամուտ ունիմ. նոյնչափ մը ևս պիտի թողուն Սէն-Մէրանի մարքէզ հաւս և մարքէզուհի հանիս. Պ. Նուարթիէ յայտնապէս միտք ունի իւր միակ ժառանգն ընել զիս: Հետևաբար Էտուար եղբայրս, որ տիկին Վիլլեֆորի կողմանէ հարստութիւն մը չունի, ինձի հետ բաղդատելով աղքատ է: Եւ որովհետև տիկին Վիլլեֆոր իւր զաւակը չափազանց կը սիրէ, եթէ ես վանքը մտած ըլլայի, իմ բոլոր հարստութիւնս Էտուարին պիտի մնար. քանզի հայրս մարքէզին, մարքէզուհոյն և իմ հարստութիւններս իւր վրայ պիտի կեդրոնադրնէր:

— Ա՛հ, երիտասարդ և դեղեցիկ կնոջ մը վրայ այս ընչասիրութիւնը ո՛չափ այլանդակ կ'երևի:

— Ուշ դիր, Մաքսիմիլիէն, որ այս ընչասիրութիւնը իրեն համար չէ, այլ իւր որդւոյն համար, և քու իբր յանցանք մը նկատածդ՝ մայրական սիրոյ նկատմամբ գրեթէ առաքինութիւն մ'է:

— Ի՛նչ կ'ըսես, Վալանթին, արդեօք այդ հարստութեան մէկ մասը Էտուարին թողո՞ւս:

— Բայց ո՞րն է այդպիսի առաջարկութիւն մը ընելու մի-

Չոյր, մանաւանդ այնպիսի կնոջ մը, սրուն բերանէն անշահասիրութեան խօսքը կը լսուի միայն:

— Աւլանթին, իմ սէրս միշտ նուիրական սլահած եմ, և ամեն ուրիշ նուիրական բաներու պէս յարդանաց քողովը ծածկած սրտիս մէջ սլահած եմ. աշխարհիս մէջ մէկը և ոչ իսկ քոյրս իմ սիրոյս վրայ կասկածած չէ, և ես ամենեւին մէկու յայանած չեմ: Աւլանթին, հրաման կու տամ ինձ որ մեր սիրոյն վրայ բարեկամի մը խօսիմ —:

Աւլանթին սարսուաց:

— Բարեկամի մը կ'ըսես, Մաքսիմիլիէն, միայն այդպէս խօսիլդ լսելով կը սարսուամ. բարեկամի մը, և ո՞վ է այդ բարեկամը:

— Մտիկ ըրէ, Աւլանթին, երբէք զդացած ես մէկու համար այնպիսի անդիմադրելի համակրութիւն մը, որ այնպիսի ազդեցութիւն կ'ընէ սրտիդ որ մարդ մը առաջին անգամ տեսնելով կարծես թէ երկար ժամանակէ 'ի վեր ճանչցած ես զան, և ինքնիրենդ կը հարցընես թէ ո՞ւր տեղ և ի՞նչ ժամանակ զան տեսեր ես, և սակայն ոչ տեղը և ոչ ժամանակը յիշելով, այնպէս կը կարծես թէ մերինէն յառաջադոյն աշխարհի մը մէջ ճանչցած ես զան, և թէ այն համակրութիւնը յիշատակ մ'է որ սրտին մէջ կը ծաղի:

— Այո՛:

— Ես ալ նոյն համակրութիւնը զգացի այն տարօրինակ մարդը առաջին անգամ տեսնելով:

— Տարօրինակ մարդ կ'ըսես:

— Այո՛:

— Ուրեմն երկար ժամանակէ 'ի վեր կը ճանչնաս զան:

— Հազիւ ութ կամ տասը օրէ 'ի վեր:

— Եւ ութ օրէ 'ի վեր ճանչցած մարդդ բարեկամդ կ'անուանես: Ա՛հ, Մաքսիմիլիէն, բարեկամի դեզեցիկ անունը մէկու տալու համար զքեզ աւելի ազահ կը կարծէի:

— Ճիշդը խորհելով իրաւունք ունիս, Աւլանթին. բայց ուզածդ ըսէ, ամենեւին բան մը չկայ որ այս բնազդումս արդիլէ:

Ինձ այնպէս կ'երևի թէ այն մարդը ասլաղայ երջանկութեանս նսլաստակից պիտի ըլլայ, զոր իւր խորին նայուածքովը առաջէն ճանչցած և իւր զօրաւոր ձեռքը սնորինս ինձ է:

— Ուրեմն դուշակիչ մ'է այդ մարդը, ըսաւ Աալանթին ժպտելով:

— Ճշմարիտ, Աալանթին, կը համարձակիմ հաւատալ որ կը դուշակէ. . . դ լիաւորաբար բարի բաները:

— Ճանչցուր ինձ ուրեմն այդ մարդը, Մաքսիմիլիէն, ըսաւ Աալանթին տրտմութեամբ, որպէս զի իմանամ անորմէ թէ կրած նեղութեանցս փոխարէնը ընդունելու չափ բաւական սիրելի պիտի ըլլամ:

— Խեղճ սիրուհիս, բայց դուն կը ճանչնաս զան:

— Ե՛ս:

— Այո՛, մօրուիդ և անոր որդւոյն կեանքը ազատողն է:

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսը:

— Ճիշդ ան է:

— Մօրուիս սերտ բարեկամը ըլլալուն՝ չկրնար երբէք իմն

ըլլալ:

— Կոմսը մօրուիդ բարեկամը ըլլայ, Աալանթին. բնազդովս չկրնար այդ աստիճան խաբուիլ, ասլահով եմ որ կը սխալիս:

— Ո՛հ, չես դիտեր, Մաքսիմիլիէն. տան մէջ տիրողը ետուարը չէ ալ, այլ կոմսը. տիկին Աիլըֆօր կը յարդէ զան, ու մարդկային զիտութեանց բովանդակութիւնը անոր վրայ կը տեսնէ. հայրս կ'ըզմայլի անոր վրայ, կը լսես, հայրս կ'ըսէ թէ երբէք լսած չէ մէկէ որ ամենէն վսեմ գաղափարները այնչափ ճարտարախօսութեամբ բացատրէ. ետուար կը սիրէ զան, և կոմսին սև մեծ աչքերէն ունեցած երկիւղը արհամարհելով, զան տեսնելուն պէս՝ անոր քովը կը վազէ, ձեռքը կը բանայ, և միշտ գեղեցիկ խաղալիկ մը կ'ընդունի. Մօնթէ-Քրիսթօ այս տունը եկած ժամանակը՝ «Աիլըֆօրի կամ տիկին Աիլըֆօրի տանը մէջ չդանուիր, այլ իւր տանը մէջ կը դանուի»:

— Ուրեմն եթէ այդպէս է, սիրելիդ իմ Աւլանթին, աւար ներկայութեան ազդեցութիւնը արդէն զգացած պիտի ըլլաս, կամ շատ չանցած պիտի զգաս: Իտալիոյ մէջ Ալպէրտը Մորսէրֆին կը հանդիպի, և աւաղակաց ձեռքէն կ'ազատէ զան, աիկին Տանկլարը կը տեսնէ, և ալքայական նուէր մը կ'ընէ անոր, մօրուդ և եղբայրդ անոր դրան առջեւէն կ'անցնին, և իւր նուպիացին անոնց կեանքը կ'ազատէ: Այս մարդը ամեն իրաց վրայ իւր ազդեցութիւնը զգացընելու համար յայտնասպէս զօրութիւն մը ունի: Իւր ձեւերը սարդ և վսեմ են: Իւր ժպիտը՝ երբ ինձ կ'ուղղէ, այնպէս քաղցր կ'երևի, որ ուրիշներուն զայն դառն համարելնին կը մոռնամ: Ո՛հ, ըսէ, Աւլանթին, քեզ ալ այսպէս ժպտեցաւ: Կ'աստիճանով զքեզ որ այն ատեն երջանիկ պիտի ըլլաս:

— Ո՛հ, Մաքսիմիլիէն, կոմսը երեսս անդամ չնայիր, և եթէ դիպուածով անոր առջեւէն անցնիմ, իւր նայուածքը միւս կողմը կը դարձընէ: Ո՛հ, կոմսդ ազնիւ սիրտ չունի, և կամ արտին խորերը թափանցող այն խորին զննութենէ զուրկ է, զոր դուն կը հաստատես և սխալմամբ ենթադրութիւններ կ'ընես: Ասան զի եթէ ազնիւ սիրտ ունենար, զիս այս բոլոր տանս մէջ մինակ և տխուր տեսնելով, իւր ունեցած ազդեցութեամբը անշուշտ պիտի պաշտպանէր, և որովհետեւ ինչպէս որ կը հաստատես՝ արեւուն դերը կը ներկայացընէ, իւր մէկ ճառագայթովը իմ սիրտս պիտի տաքցընէր: Չքեզ կը սիրէ կ'ըսես, Մաքսիմիլիէն, բայց ո՛ւր դիտես, մարդիկ քեզի պէս երկար ընչացքով, մեծ սուբով և հինգ ոտք ութ բթաչափ բարձրահասակ պաշտօնատարի մը կը ժպտին, բայց լացող ողորմելի աղջիկ մը աներկիւղ ոտքի տակ առնելու չեն խլճար:

— Ո՛հ, Աւլանթին, ճշմարիտ կը սխալիս:

— Եթէ ըսածիս պէս չըլլար, Մաքսիմիլիէն, և եթէ ինձի հետ ուրիշ եղանակաւ վարուէր, այսինքն այնպիսի մարդու մը պէս, որ ո՛րեւէ կերպով տան մէջ տիրանալ կ'ուզէ, անշուշտ զոնէ միայն մէկ անչամ քու այնչափ դոված ժպիտովդ զիս

պիտի պատուէր . բայց ոչ, տեսաւ որ ես թշուառ մ'եմ, հասկըցաւ որ իրեն օգուտ մը չունիմ, և ինձ ուշադրութիւն անդամ չըրաւ : Ա՛վ դիտէ իսկ որ հօրս, արիւն Ախլըֆօրի կամ եղբօրս հաճելի երևելու համար իւր զօրութիւնը ներածին չափ ինծի թշնամութիւն մը պիտի չընէ : Անշուշտ այսպէս առանց պատճառի նախատուելու աղջիկ մը չեմ, դուն ալ այնպէս չըսիր, Մաքսիմիլիէն, ներէ ինծի, սիրելիս, շարունակեց ծաղկահաս աղջիկը իւր խօսքերուն երիտասարդին պատճառած ազդեցութիւնը տեսնելով, երբեք անհաճոյ խօսքեր կ'ընեմ, և այն մարդուն վրայ հիմա այնպիսի խօսքեր ըրի որ երբէք մտքէս անդամ անցած չէին : Քեզի ըսեմ՝ անոր այնպիսի ազդեցութիւն մը ունենալը և ինծի համար ալ ՚ի դործ դնելը չեմ ուրանար . բայց եթէ այդ ազդեցութիւնը ՚ի դործ դնէ՝ աղէկ համոզուած եմ որ ինձ մեասելու և զիս կործանելու համար պիտի ընէ :

— Շատ աղէկ, Աալանթին, ըսաւ Մորէլ ժպիտով մը, խօսքը չընենք ալ, ու ես բան մը չեմ ըսեր անոր :

— Աիսո՛ս, սիրելիս, ըսաւ Աալանթին, կը տեսնեմ որ սիրտդ կը վիրաւորեմ . ինչո՞ւ չկարենայի ձեռքդ սեղմել քեզմէ ներուձն խնդրելու համար : Բայց վերջապէս ես ալ կ'ուզեմ որ համոզես զիս . ըսէ, ինչ ըրաւ քեզ այդ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը :

— Ստուդիւ, Աալանթին, կոմսին ինձ ըրածը հարցընելով կը շփոթես զիս . դիտեմ՝ աղէկ որ երևնալու բան մը չըրաւ . իմ անոր վրայ ունեցած համակրութիւնս ալ բնազդական է և ամենեին ասպացոյցներով չհաստատուիր : Միթէ արեղակը բան մը ըրած է ինձ . ոչ, միայն թէ զիս կը տաքցընէ և իւր լուսովը զքեզ կը տեսնեմ, Միթէ այս կամ այն բուրմունքը բան մը ըրած է ինձ . ոչ, իւր հոտը իմ զգայարանացս մէկը հաճոյապէս կը հեշտացընէ, երբ այս բուրմունքը դովելու պատճառը հարցընեն ինձ՝ ուրիշ բան չունիմ պատասխանելու : Իմ անոր վրայ ունեցած սէրս տարօրինակ է, ինչպէս նաև անոր իմ վրաս ունեցածը : Գաղտնի



ձայն մը կ'իմացընէ ինձ թէ այս անակնունելի և փոխադարձ սիրոյն մէջ դիպուածէ աւելի ուրիշ բան մը կայ: Իւր ամենէն սարդ դործոցը և ամենէն դաղանի մտածութեանցը և իմ դործոցս ու մտածութեանցս մէջ յարընչականութիւն մը կը նշմարեմ: Գարձեալ պիտի ծիծաղիս իմ վրաս, Աալանթին, բայց այս մարդը ճանչնալէս 'ի վեր այլանդակ կարծիք մը կ'ընեմ թէ ամեն ունեցած յաջողութիւններս անկէ կը բղխին: Այսու ամենայնիւ առանց այս պաշտպանին պէտք ունենալու՝ երեսուն տարի ասրեր եմ, այնպէս չէ: Բայց ինչ հոգ, հիմա օրինակ մը տամ, շարաթ օրուան համար զիս ճաշի հրաւիրեց, բարեկամաց մէջ սովորաբար այսպիսի հրաւերներ կ'ըլլան, այնպէս չէ: Բայց իմացայ որ հայրդ այն ճաշին հրաւիրուած է, մայրդ ալ պիտի գայ: Հոն անոնց պիտի հանդիպիմ, և մի գիտէ թէ ասպողային մէջ այս սեփականութեանէն ինչ պիտի հեռեի: Ըստ երևութից սարդ սարդաներ են ասոնք, սակայն ես անոնց մէջ այնպիսի բան մը կը նշմարեմ, որ զիս կը զարմացընէ. այն տեսականութեանէն զարմանալի մտերմութիւն մը կը գուշակեմ. ինքնիրենս կ'ըսեմ թէ կոմսը՝ այն եղական մարդը, որ ամեն բան կը գուշակէ, ուղած է որ ես Պ. և աիկին Աիլըֆօրի հետ գտնուիմ, և ճշմարիտ կ'ըսեմ՝ երբեմն անոր աչաց մէջ կը փնտռեմ թէ արդեօք իմ սէրս գուշակած է:

— Սիրելի բարեկամ, ըսաւ Աալանթին, եթէ միշտ նոյնօրինակ դատողութիւններդ լսած ըլլայի, պիտի ըսէի թէ կը ցնորես, և ստուգիւ ուղղամտութեանդ վրայ պիտի վախնայի: Մտածէ քիչ մը, յիշաւի այս հանդիպման մէջ դիպուածէ աւելի ուրիշ բան կը նշմարես: Հայրս, որ ամենեւին դուրս չելէնք, տասը անգամ այս հրաւերը մերժեց աիկին Աիլըֆօրի, որ ընդ հակառակն մեծ փափաք ունի այն տարօրինակ նասպալը անոր տանը մէջ տեսնելու, և մեծ դժուարութեամբ հօրս խօսքը առաւ որ իրեն ընկերանայ: Աչ, ոչ, հաւատա ինձ, Մաքսիմիլիէն, այս աշխարհիս մէջ քեզմէ զատ ուրիշ յոյս չունիմ բայց եթէ հաւիս օղնութիւնը, որ դիակ մ'է, և ողորմելի մօրս պաշտպանութիւնը, որ ստուեր մ'է:

— Կ'ըզգամ որ իրաւունք ունիս , Վալանթին , և ուղիղ դատողութիւն կ'ընես , ըսաւ Մաքսիմիլիէն . բայց քու քաղցր ձայնդ , որ իմ վրաս այնչափ զօրաւոր է , այսօր չկրնար համոզել զիս :

— Եւ ոչ քուկդ զիս , և կը խոստովանիմ որ եթէ յառաջ բերելու ուրիշ օրինակ չունիս . . . .

— Օրինակ մը ունիմ , ըսաւ Մաքսիմիլիէն երկմտելով , բայց յիրաւի , Վալանթին , ինքնին խոստովանելու պարտաւորեալ եմ որ առաջինէն աւելի այլանդակ է :

— Աւելի գէշ , ըսաւ Վալանթին ժպտելով :

— Սակայն այս ալ առաջինին չափ ստոյգ կ'երևի ինձ , որ դիւրազգած մարդ մ'եմ , և տասը տարիէ 'ի վեր զինուորութեան ծառայելով , կեանքս պարտաւորած եմ այն ներքին ձայնին որ կ'ըզգուշացընէ զիս դէս 'ի յառաջ կամ ետև շարժում մը ընելու , որպէս զի այն գնտակը որ պիտի մոցընէր զիս՝ քովէս անցնի :

— Սիրելիդ իմ Մաքսիմիլիէն , ինչո՞ւ այդ գնտակներէն ազատելու համար ըրած աղօթքներս չես յարդեր : Երբ Ափրիկէ կ'երթաս , այնուհետև ոչ ինձի և ոչ մօրս համար կ'աղօթեմ , այլ միայն քեզի համար :

— Ջքեզ ճանչնալէս 'ի վեր իրաւունք ունիս , ըսաւ Մորէլ ծիծաղելով . բայց զքեզ ճանչնալէս առաջ , Վալանթին :

— Ըստ որում չես ուղեր ինձ պարտաւոր ըլլալ , անդուծ , դարձիր ուրեմն այն օրինակը պատմելու , որուն այլանդակ ըլլալը ինքնին խոստովանեցար :

— Ուրեմն հոն ծառիս կապուած ձիս նայէ :

— Ո՛հ , ինչ սքանչելի կենդանի մ'է , ըսաւ Վալանթին , ինչո՞ւ վանդակներուն մօտ չբերիր որ հետը խօսէի :

— Ինչպէս որ կը տեսնես՝ խիստ թանկազին ձի մ'է , ըսաւ Մաքսիմիլիէն . Գիտես , Վալանթին , որ իմ հարստութիւնս սահմանաւոր է , և ես վիճակս ճանչցող մարդ մ'եմ . ձիավաճառի մը քով այս սքանչելի Մէֆեան տեսայ , (ձիիս այս անունը տուի) , անոր զինը հարցուցի , և չորս հազար

Հինգ հարիւր ֆրանք սլատասխանեցին . ինչպէս որ կը հաս-  
կընան՝ գնոյն բարձրութեանը սլատաճառաւ ետ կենալու սլար-  
տաւորեցայ , սակայն ստուղիւ սրաի ցաւով բաժնուեցայ ա-  
նորմէ . ըստ սրում ձին մտերմութեամբ մը ինձ նայեցաւ , իւր  
գլխովը զիս դդուեց , և խիստ շնորհալի և սիրուն եղանակաւ  
բոլորաիքս դարձաւ : Նոյն իրիկունը՝ տունս քանի մը բարե-  
կամներ ունէի , որոնք էին Պ . Շաթո-Ռընօ , Պ . Տըպրէ և  
քանի մը ստահակներ , որոնց անունը անդամ չճանչնա-  
լուդ բաղդաւոր ես : Առաջարկեցին որ թուղթ խաղանք .  
եւ ամենեկին թուղթ շեմ խաղար . վասն զի այնչափ հարուստ  
շեմ որ կարենամ կորսնցընել , և ոչ այնչափ աղքատ որ շա-  
հիլ ուղեմ : Ի՛նչ կընայի ընել , իմ տանս մէջն էի . թուղթ  
բերել տուի : Բայց խաղալ սկսելու ատեն Մօնթէ-Քրիսթոյ  
կամար հասաւ , ան ալ իւր տեղը նստաւ , միատեղ խաղացինք ,  
և ես շահեցայ . հաղիւ կը համարձակիմ խոստովանիլ քեզ  
այս բանս , Աալանթին , քանզի հինգ հաղար ֆրանք շահե-  
ցայ : Աէս գիշերին իրարմէ բաժնուեցանք . բայց ես չկըցայ  
համբերել , կառք մը բռնեցի , և ձիավաճառին քովը գացի .  
սրաի բարախամբը զանդակը հնչեցուցի , դուռը բանալու ե-  
կողը անշուշտ զիս խենթ կարծած է . քանզի հաղիւ բացուած  
դրան ներսը ցատկեցի : Ախոտը մտայ , ինչ ուրախութիւն ,  
Մեթեան մսուրին առջևը իւր խոտը կ'ուտէր : Իսկոյն ձեռօքս  
թամբը առի , անոր վրայ դրի , և սանձը գլուխը անցուցի .  
Մեթեան այս գործողութեանս խիստ շնորհաշի կերպիւ կը հը-  
նազանդէր : Նտքը՝ ապշեալ ձիավաճառին ձեռքը չորս հաղար  
հինգ հարիւր ֆրանքը համբեցի , Շանդ-Ելիզէ վերադարձայ և  
կամ թէ ըսեմ՝ բոլոր գիշերը այն կողմերը շրջադայեցայ . Ի՛նչ  
կ'ըսես , սիրելիս , կոմսին սլատուհանը լուսաւորուած տեսայ ,  
ինձ այնպէս երեցաւ թէ վարագոյրներուն ետին անոր ստուերը  
նշմարեցի : Հիմա սլիաի երդնում , Աալանթին , որ այն ձիոյն  
փափաքիլս կամար հասկըցած և դիտամբը կորսնցուցած է որ  
եւ շահիմ :

— Միքելի Մաքսիմիլիէն , յիրաւի դուն մտացածին իրաց

Հաւատացող մարդ մ'իս եղեր . . . : Երկար ատեն պիտի չսիրես  
զիս . . . : Այս դաղափարներու տէր մարդ մը մերինին պէս  
միօրինակ կենցաղավարութեան մէջ հաստատ չկրնար կենալ . . .  
Բայց , ով Աստուած , մտիկ ըրէ , զիս կը կանչեն . . . կը լսես :

— Ո՛հ , Աալանթին , վանդակաց ճեղքուածքէն ամենէն  
փոքրիկ մատդ երկնցուր որ համբուրեմ :

— Մաքսիմիլիէն , արդէն ըսինք թէ իրարու երկու ձայն  
և երկու ստուեր պիտի ըլլանք :

— Ինչպէս որ կը հաճիս , Աալանթին :

— Միթէ այդ ընելովս երջանիկ պիտի ըլլաս :

— Ոհ , այո — :

Աալանթին նստարանին վրայ ելաւ , և ոչ թէ իւր փոքր  
մատը ճեղքուածին մէջէն , այլ իւր ամբողջ ձեռքը վանդակին  
վրայէն երկնցուց :

Մաքսիմիլիէն ձայն մը հանեց , և վանդակներուն առջևի  
քարին վրայ ելնելով , այն պաշտելի ձեռքը բռնեց և իւր կի-  
զիչ շուրթերը անոնց յարեց :

Բայց այն փոքրիկ ձեռքը իսկոյն սահելով , Աալանթին փա-  
խաւ՝ գուցէ իւր զղացած աղդեցութենէն սոսկալով :



Ք Լ Ո Ւ Թ Ե Ժ Բ .

Պ . ՆՈՒԵՐԹԻԻ ՏԸ ՎԻԼԸՓԹԹ



Ս ԷՍ ինչ պատահեր էր թաղաւորի դոր, ծակալին տունը տիկին Տանկլարի և իւր աղջկան մեկնելէն ետև և երկու սիրահարներուն խօսակցութեանը միջոցին :

Պ . ար Վիլքֆօր կնոջը հետ իւր հօրը սենեակը դացեր էր . իսկ Վալանթինի ո՛ւր ըլլալը արդէն գիտեհք :

Երկու ամուսինները ծերունին բարեւելէն և Պարուա հին ծառային ճամբայ տալէն ետև , որ քսան և հինգ տարիէ 'ի վեր Պ . Նուարթիէի ծառայութեան մէջ կը գտնուէր , ծերունւոյն երկու կողմը նստան :

Պ . Նուարթիէ , իւր անուակաւոր մեծ թեւթոռին վրայ , ուր առաւ կը նստեցընէին և իրիկունը կը հանէին , և հայելի մը առջևը նստած , որուն մէջ բոլոր սենեակը կ'երեւէր , ու անարդել և առանց շարժում մը ընելու՝ թէև անկարող , կը տեսնէր թէ ո՛վ իւր սենեակը կը մտնէ , ո՛վ կ'ելնէ , և իւր բոլորախօսքը ինչ կ'ընեն . Պ . Նուարթիէ գիակի մը պէս անշարժ կեցած՝ հանճարալի և աշխոյժ աչօք՝ իւր զաւակները կը գիտէր , որոնց ըրած ակնածական խոնարհութիւնը պաշտօնական և տնականներէ յայտարարութիւն մը կը յայտնէր անոր :

Երեք քառորդով դէպ 'ի դերեզմանը հակեալ այս մարդկային մարմինը կենդանացընողն էին երկու կայծերու նման

իւր երկու զղայարանքը, այսինքն՝ լսողութիւնը և տեսողութիւնը, և այն երկու զղայարանքէն միայն մէկը արձանը կենդանացընող ներքին կեանքը կ'արտայայտէր, և այն էր իւր աչքը, որ այն հեռաւոր լոյսերուն կը նմանէր, որոնք զիշեր ժամանակ՝ անապատի մը մէջ կորսուած ճանապարհորդի մը կ'իմացընեն թէ այն լուծեան և մթութեան մէջ տակաւին կենդանի էակ մը կը դանուի:

Ինչպէս որ կը պատահի միւս գործարաններէն զրկուած մէկ գործարանի մը՝ ժամանակաւ Պ. Նուարթիէի մարմնոյ և մտացունեցած գործունէութիւնը, ճարտարութիւնը, ոյժը և հանճարը հիմա միայն իւր աչաց մէջ կենդրոնացած էին. ծերունւոյն աչքը՝ ինչպէս նաև յօնքը սև էին, իսկ ուսերուն վրայ երկնցած ու կախուած գլխի մազերը ճերմկած էին:

Յիրաւի՝ իւր բազկաց շարժումը, ձայնին հնչիւնը և մարմնոյ կեցուածքը կորսնցուցած էր, բայց իւր զօրաւոր աչքը անոնց սակասը կը լեցընէր. քանզի իւր աչօքը կը հրամայէր, և անոնցմով շնորհակալ կ'ըլլար:

Կենդանի աչօք դիակ մ'էր ան, և իւր մարմարիտնի նման դէմքը սոսկալի կ'երևէր, որուն վերի կողմը բարկութիւն մը կը բորբոքէր կամ ուրախութիւն մը կը փայլէր:

Միայն երեք հոգի այն ողորմելի կաթուածահարին լեզուն կը հասկընային, որոնք էին Աիլըֆօր, Աալանթին և այն հին ծառան, որուն վրայ արդէն խօսեցանք:

Բայց որովհետև Աիլըֆօր շատ քիչ անդամ իւր հայրը կը տեսնէր, կամ թէ ըսենք պարտաւորեալանոր քովը կ'երթար, և դացած ժամանակն ալ չէր ջանար անոր միտքը հասկընալով հաճելի երևելու. ուստի ծերունւոյն բոլոր երջանկութիւնը իւր թոռ աղջկան վրայ կայացած էր, և Աալանթին իւր անձնուիրութեամբը, սիրովն ու համբերութեամբը Նուարթիէի նայուածքէն անոր ամեն դիտաւորութիւնները հասկընալու կարող եղեր էր:

Այս համր և ուրիշներէ անիմանալի լեզուին Աալանթին ձայնով, շարժութեանով և յօժարութեամբ կը պատասխանէր:

այնպէս որ կատարեալ խօսակցութիւններ տեղի կ'ունենային այն ծաղկահաս աղջկան և այն կաւեղէն կեղծ արձանին մէջ, որ գրեթէ փոշիացեր էր, սակայն տակաւին մարդ մ'էր ան անսահման դիտութեամբ, անլուր կորովամտութեամբ և այնպիսի դօրաւոր կամքով մը, որչափ կրնայ ունենալ հնազանդեցրնելու անկարող մարմին մը:

Այսպէս Աալանթին ծերունւոյն միտքը հասկընալու եղանակը սորված ըլլալով, քիչ անդամ կը պատահէր որ սովորական խօսակցութեանց մէջ այն կէս անզղայ գիակին բաղձանքը և պէտքը ճշդիւ չյուշակէր:

Իսկ Պարուա, որ քսան և հինգ տարիէ 'ի վեր իւր տիրոջը կը ծառայէր, անոր սովորութիւնները այնչափ աղէկ գիտէր, որ գրեթէ չէր պատահեր որ Նուարթիէ իրմէ բան մը խնդրելու պէտք ունենայ:

Հետեւաբար Ախլըֆօր ոչ մէկին և ոչ միւսին կարօտութիւն ունէր իւր հօրը հետ ընելու զարմանալի խօսակցութեան ըսկսելու համար:

Ինչպէս ըսինք՝ Ախլըֆօր ալ ծերունւոյն հետ խօսակցելու կերպը կատարեալ գիտէր, և եթէ շատ անդամ չէր զործածեր զայն, պատճառը իւր ձանձրութիւնը և անտարբերութիւնն էր:

Աւտի թողուց որ Աալանթին պարտէզը իջնէ, Պարուան անոր քովէն հեռացուց, և իւր հօրը աջ կողմը նստելէն ետեւ, ինչ ատեն տիկին Ախլըֆօր ձախ կողմը նստեր էր, ըսաւ:

— Պարոն, Աալանթին մեզի հետ չդալուեն և Պարուան ասկէ հեռացընելուս համար մի զարմանար. քանզի մեր մէջը ընելու խօսակցութիւննիս ծաղկահաս աղջկան կամ ծառայի մը առջև տեղի ունենալու խօսքեր չեն. տիկին Ախլըֆօր և ես քեզ հաղորդելու լուր մը ունինք —:

Նուարթիէի գէմքը այս յառաջաբանին վրայ բան մը չյայտնեց, իսկ ընդ հակառակն Ախլըֆօրի աչքը կարծես թէ ծերունւոյն սրտին ամենէն խորը թափանցել կ'ուզէր:

— Այս լուրը, շարունակեց թաղաւորի դործակալը իւր ցուրտ ձայնովը, որ կարծէր թէ ամենեին ընդդիմութիւն պիտի չունենայ, տիկին Աիլըֆօր և ես ասլահով ենք որ քեզ հաճելի պիտի երևի — :

Ծերունւոյն աչքը միշտ անշարժ կեցած էր. նուարթիէ մտիկ կ'ընէր և ուրիշ բան չէր յայտնէր :

— Պարոն, կրկնեց Աիլըֆօր, Աալանթինը պիտի ամուսնացընենք — :

Մոմէ դէմք մը այնչափ սառած պիտի չմնար, որչափ ծերունւոյն դէմքը այս լուրին վրայ :

— Երեք ամիսէն առաջ ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ — , կրկնեց Աիլըֆօր :

Ծերունւոյն աչքը անշարժ մնաց :

Տիկին Աիլըֆօր ալ խօսքը շարունակելով ըսաւ :

— Մտածեցինք որ այս լուրը քեզ կարևոր կրնայ ըլլալ. ըստ որում Աալանթին միշտ քու համակրութիւնդ ստացած կ'երևի. կը մնայ միայն անոր ամուսինը ըլլալու երիտասարդին անունը քեզ ըսելու : Աալանթինի համար խիստ մեծ բաղդաւորութիւն մ'է այս, և մեր սահմանած ամուսինը մեծ հարըստութիւն, բարի համբաւ և բարօրութեան կատարեալ վստահութիւններն ունի, և որուն անունը քեզ անծանօթ չէ. քանզի Պ. Ֆրանզ տը Բէսնէլ, սեպուհ տ'Էքինէն է :

Աիլըֆօր իւր կնոջ այս փոքրիկ աստեղաբանութեան ժամանակ առաջուանէն աւելի ուշադիր նայուածք մը յարեր էր ծերունւոյն վրայ :

Երբ տիկին Աիլըֆօր Ֆրանզին անունը արտասանեց, նուարթիէի աչքը, որուն ամեն շարժումները իւր որդին աղէկ կը ճանչնար, սարսուաց, և արտեանունքը կարծես փայլակ մը արձակուելու տեղի տալու համար ընդարձակուեցան, ինչպէս կ'ըլլան շուրթերը խօսք մը խօսելու ատեն :

Թաղաւորի դործակալը, որ իւր և Ֆրանզին հօրը մէջ տեղի ունեցած քաղաքական թշնամութեանց հին պատմութիւնները դիտէր, իւր հօրը աչաց հրոյն և յուզման պատճառը հաս-



կրցաւ , սակայն չտեսնել ձեացոյց , և իւր կնոջը կիսատ թողուցած խօսքը շարունակելով ,

— Պարոն , ըսաւ , ըստ որում Վալանթին իւր իննեւտասներորդ տարին պիտի մանէ , պէտք է որ ամուսնանայ : Սակայն ամենեին մոռցած չենք զքեզ որ մեր խորհուրդին մասնակից ըլլաս , ասլահով ենք որ Վալանթինի ամուսինը եթէ չուզէ մեր քովը կենալ , որ զուցէ նեղութիւն սրտաճառենք երիտասարդ ամուսնացելոյ , գոնէ պիտի ուզէ որ դուն անոնց քովը կենաս , քանզի Վալանթին մասնաւորապէս կը սիրէ զքեզ և դուն ըստ երեութից անոր սիրոյն կը պատասխանես , այս կերպով քու սովորութիւններդ ամենեին չես կորսրնցրներ , և քու վրադ հսկող մէկի տեղ երկու դաւակ պիտի ունենաս — :

Նուարթիէի նայուածքը ահարկու երեցաւ :

Անտարակոյս ծերունւոյն սրտին մէջ ահաբեղի բան մը անցեր էր , անտարակոյս իւր ցաւոյ և բարկութեան ձայնը մինչև կոկորդը կը բարձրանար , բայց դուրս ելնել չկրնալով , կը խեղդէր զան . վասն զի գէմքը ծիրանեղոյն ներկուեցաւ և շուրթերը կասկուտացան :

Վիլլեֆօր սրտի հանդարտութեամբ պատուհան մը բացաւ ըսելով .

— Օդը շատ տաք է հոս , և այս տաքութիւնը Պ . Նուարթիէի կը մեասէ — :

Նաքը վերադարձաւ , բայց իւր տեղը չնստաւ :

— Պ . տ'Երինէ և իւր ընտանիքը , յաւելցուց տիկին Վիլլեֆօր , այս ամուսնութեան սրտով կը բաղձան , թէ և իւր ընտանիքը մօրեղբայրէ մը և մօրաքոյրէ մը կը բաղկանայ միայն . իւր մայրը զինքը ծնած ատեն մեռեր է , և հայրը 1843ին այսինքն մանկան հազիւ երկու տարեկան եղած ժամանակը սպաննուեր է . ուստի այս ամուսնութիւնը միայն իւր կամքէն կախեալ է :

— Գաղտնի սպանութիւն մը , կրկնեց Վիլլեֆօր , որուն

հեղինակները անծանօթ մնացին, թէև շատ մարդիկ կասկածուեցան —

Նուարթիէ այնպիսի ջանք մը ըրաւ, որ իւր շուրթերը ժրատելու պէս ձեացան :

— Արդ՝ ճշմարիտ յանցաւորները, շարունակեց Ա. իլըֆօր, անոնք որ դիտեն թէ յանցանքը իրենք գործեցին, և որոնց վրայ կրնայ իրենց կենացը մէջ մարդկային դատաստանը և իրենց մեռնելէն ետև Աստուծոյ դատաստանը իջնել, երջանիկ պիտի ըլլային եթէ մեր անողը ըլլային, և եթէ աղջիկ մը ունենային որ կասկածի երևոյթն անգամ ջնջելու համար Պ. Ֆրանզ տ'Էբինէին տան — :

Նուարթիէ այնպիսի ուժով ինքզինքը զսպեց և հանդարտ երեցաւ որ իւր տկար կացութենէն չէր սպասուեր :

— Այո՛, կը հասկընամ, պատասխանեց ծերունին իւր նայուածքովը Ա. իլըֆօրին — :

Եւ այս նայուածքը իւր խորին արհամարհանքը և իրաւացի բարկութիւնը կը յայտնէր :

Իսկ Ա. իլըֆօր թեթև կերպով իւր ուսերը շարժելու էր՝ ի պատասխանի այն նայուածքին, որուն նշանակութիւնը շատ աղէկ հասկըցեր էր :

Ետքը նշան ըրաւ իւր կնոջը որ ոտք ելնէ :

— Աւրիմն, պարոն, ընդունէ իմ ակնածական յարդանքս : Կը հաճիս որ Էտուարս ալ դայ իւր յարդանքը մատուցանելու — :

Ծերունին աչքը դոցելով իւր հաճութիւնը, դանձնք ստէպքթթելով՝ իւր մերժումը, և դէպ'ի երկինք վերցընելով՝ իւր բաղձանքը կը յայտնէր :

Եթէ վալանթինը ուզէր, իւր աջ աչքը միայն կը դոցէր :

Իսկ եթէ Պարուան ուզէր, ձախ աչքը կը փակէր :

Տիկին Ա. իլըֆօրի այս առաջարկութեան վրայ ծերունին աշխուժիւ իւր աչքը քթթեց :

Տիկին Ա. իլըֆօր յայտնի մերժում մը տեսնելով, իւր շուրթերը խածաւ :

— Աւրեմն Աւալանթինը դրիեմ, ըսաւ :

— Այո՛ — , սրատասխանեց Նուարթիէ աչքը ուժղնութեամբ գոցելով :

Պ. և տիկինն Ալիլըֆօր դան բարեւելով դուրս ելան , և հրամայեցին որ Աւալանթինը կանչեն , որ թէև արդէն խմացեր էր թէ՛ Պ. Նուարթիէի քովը նոյն օրը դորձ մը պիտի ունենայ :

Անոնց դուրս ելնելէն ետև՝ Աւալանթին իւր սրտի յուզմունքէն բոլորովին կարմրած ծերունւոյն սենեակը մտաւ :

Մէկ նայուածքը բաւական եղաւ ծաղկահաս աղջկան իւր հաւին սրանեղութիւնը և իրեն ըսելու խօսքեր ունենալը հասկընարու :

— Ա՛հ, ի՛նչ սրատահեցաւ , բարի հայր , ըսաւ Աւալանթին , միթէ նեղացուցի՛ն դքեղ . բարկացած կ'երևիս :

— Այո՛ , սրատասխանեց ծերունին աչքերը գոցելով :

— Ար՞ու բարկացար , հօ՛րս . ոչ , տիկինն Ալիլըֆօրի . ոչ . կնձի՛ — :

Ծերունին նշան ըրաւ թէ՛ այո՛ :

— Ինձի՛ բարկացար — , կրկնեց Աւալանթին զարմանքով :

Ծերունին իւր նշանը նորագեց :

— Եւ ի՛նչ ըտի ես քեզի , սիրելի հաւս , ըսաւ Աւալանթին , բայց սրատասխան չընդունելով շարունակեց . Այսօր չտեսայ դքեղ , արդեօք իմ վրայօքս բան մը ըսին քեզ :

— Այո՛ , ըսաւ ծերունւոյն նայուածքը ուժղնութեամբ :

— Ա՛հ , տէր Աստուած , ի՛նչ կայ արդեօք . կ'երդնում , բարի հայր , որ . . . : Ա՛հ , հասկըցայ . . . Պ. և տիկինն Ալիլըֆօր հիմա ասկէ մեկնեցան , այնպէս չէ՛ :

— Այո՛ :

— Եւ անո՞նք դքեղ բարկացընելու խօսքեր ըրին : Արդեօք ի՛նչ ըսին . կ'ուզե՞ս որ երթամ հարցընեմ անոնց , որպէս զի իմ անմեղութիւնս յայտնեմ քեզ :

— Աչ , ոչ , սրատասխանեց նայուածքը :

— Բայց դուն կը վախցընես զիս . ո՛հ , ի՛նչ ըսին արդեօք :

է՛հ, հասկըցայ, ըսաւ աղջիկը աչքը խոնարհեցընելով և ասոր մօտենալով. արդեօք ամուսնութեանս վրայ խօսեցան :

— Այո՛, պատասխանեց նայուածքը բարկութեամբ :

— Կը հասկընամ, քեզի չըսելու համար կը նեղանաս. բայց ինչ կընայի ընել, ինծի պատուիրեր էին որ քեզ բան մը չըսեմ, և այս պատճառաւ ինծի իսկ բան մը չըսին, և ես հետաքրքրութեամբ կերպով մը այս դաղտնիքը խմացայ, և ասոր համար քեզմէ ալ դաղտնի պահեցի. ներէ ինծի, սիրելի հայր նուարթիէ — :

Ծերունին հաստատ և անշարժ նայուածք մը յարելով, այս պատասխանը տալ կ'երեւէր.

— Միայն լռութիւնդ չէ որ զիս կը նեղացընէ :

— Ի՞նչ բան է ուրեմն, հարցուց ծաղկահաս աղջիկը. դուցէ կը կարծես որ զքեզ պիտի թողո՞ւմ, բարի հայր, և ամուսնանալով պիտի մոռնամ զքեզ :

— Ոչ, ըսաւ ծերունին :

— Ուրեմն ըսին թէ Պ. տ'Էբինէն կը հաւանի որ միատեղ կենանք :

— Այո՛ :

— Ուրեմն ինչո՞ւ բարկացար — :

Ծերունւոյն աչքը անսահման քաղցրութիւն մը յայտնել կուզէին :

— Այո՛, կը հասկընամ, ըսաւ Վալանթին. վասն զի դուն զիս կը սիրես — :

Ծերունին նշան ըրաւ թէ այո՛ :

— Եւ կը վախնաս որ դժբաղի չըլլամ :

— Այո՛ :

— Ֆրանզը չե՞ս սիրեր :

Նուարթիէի աչքը երեք չորս անգամ կրկնեցին

— Ոչ, ոչ, ոչ :

— Ուրեմն խիստ վշտացած ես :

— Այո՛ :

— Մտիկ ըրէ ուրեմն, ըսաւ Վալանթին նուարթիէի առջև.

Յնկան վրայ դալով, և իւր բաղուկներովը անոր տարանոցին փաթթուելով, ես ալ վշտացած եմ, քան զի ես ալ չեմ սիրեր Պ. Ֆրանզ տ'Էրինէն:

Աւրախութեան նշոյլ մը հաւին աչաց մէջ փայլեցաւ:

— Երբ վաճառ մը քաշուիլ ուղեցի, կը յիշե՞ս, ինձի խիստ բարկացար —:

Արտասուաց կաթիլ մը ծերունւոյն չոր արտւանուները թրջեց:

— Այս ամուսնութենէն խոյս տալու համար էր որ այնպէս ընել ուղեցի, և այն տատճառաւ յուսահատութեան մէջ կը գտնուէի —:

Նուարթիէ դժուարաւ շունչ կ'առնուր:

— Այս ամուսնութիւնը ուրեմն կը վշտացընէ՞ զքեզ, սիրելի հայր իմ: Ա՛հ, երանի թէ կարենայիր օղնել ինձ, երանի թէ կարենայինք միատեղ անոնց խորհուրդը արդիլել՝ թէև ողջամիտ հանճար մը և հաստատ կամք մը ունիս, բայց անոնց դէմ դնելու ոյժ չունիս: Անոնց հետ մրցելու համար ինձի սէս և ինձմէ ալ աւելի տկար ես: Ափսո՛ս, քու զօրութեանդ և առողջութեանդ օրերուն մէջ պիտի կարենայիր զօրաւոր պաշտպան կանդելիլ ինձի, բայց այսօր իմ խօսքերս հասկընալէն և ինձի հետ ուրախանալէն կամ ցաւելէն ուրիշ բան չես կրնար ընել: Այս ալ իմ վերջին երջանկութիւնս է, զոր Աստուած թողուցած է ինձ միւսներէն զբկելէն ետեւ —:

Այս խօսքերուն վրայ Նուարթիէի աչաց մէջ այնպիսի բարկութիւն մը նկարուեցաւ, որ ծաղկահաս աղջիկը այս խօսքերս կարծեց կարդալ անոնց մէջ:

— Ար սխալիս, ես քեզի համար տակաւին խիստ զօրաւոր եմ՝

— Զիս պաշտպանելու կարող ես, սիրելի հաւս, ըսաւ Աւալանթին:

— Այո՛ —:

Նուարթիէ աչքը դէպ 'ի երկինք վերցուց, որ բան մը խնդրելու նշանն էր:

— Ի՞նչ կ'ուզես, սիրելի հայր, ըո՛հ — :

Վալանթին վայրկեան մը մտածեց թէ ի՞նչ է ուզածը, և հետզհետէ միտքը եկածը բարձր ձայնիւ կը հարցընէր անոր, և տեսնելով որ իւր ամեն խօսքերուն ծերունին «չ կը պատասխանէ» :

— Աւրեմն միւս միջոցը ձեռք առնենք, ըսաւ, քանի որ չեմ հասկընար ըսածդ — :

Այն ատեն այբուբենին բոլոր դիրերը մի առ մի արտասանեց Աէն մինչև Ն, միանգամայն կաթուածահարին աչքը ուշադրութեամբ կը քննէր. Ն դրին Նուարթիէ նշան ըրաւ թէ այո՛ :

— Աւրեմն ուզած քանդ Ն դիրով կ'ըսկսի. տեսնենք հիմա Ն դիրով ինչ պիտի կապենք : Նա-նե-նէ-նը-նի-նո-նո :

— Այո՛, այո՛, այո՛, ըսաւ ծերը :

— Նո՛ է :

— Այո՛ — :

Վալանթին դնաց բառդիրք մը բերաւ ու Նուարթիէի առջին դրքակալի մը վրայ դրաւ :

Բայաւ զան, և երբ ծերին աչքը երեսներուն վրայ յարած տեսաւ, իւր մատը աշտուծիւ էջերուն վրայ դնելով վերէն վար կը պտըտցընէր :

Վեց տարիէ 'ի վեր, որ Նուարթիէ այս ցաւալի վիճակին մէջ կը գտնուէր, յաճախ կրթութիւնը փորձերը այնչափ դիւրացուցեր էր որ ծերին իւր ձեռօքը բառդիրքին մէջ փնտուել կրցածին չափ շուտով Վալանթին անոր միտքը կը դուշակէր :

Նուարթիէ նշան ըրաւ որ Նօթաբ բառին կենայ :

— Նօթաբ, կարդաց Վալանթին. ուզածդ նօտաբ մ'է, բարի հայր — :

Ծերունին նշան ըրաւ թէ իրօք նօտար մը կը խնդրէր :

— Աւրեմն մարդ զրկենք նօտաբ մը կանչենք, հարցուց Վալանթին :

— Այո՛, պատասխանեց կաթուածահարը :

— Հայրս դիտնալ պէտք է :

— Այո՛ :

— Հիմա կ'ուզես որ կանչուի :

— Այո՛ :

— Ուրեմն հիմա կանչել տամ, սիրելի հայր : Ամեն ուզածդ այս է :

— Այո՛ — :

Վալանթինը զանդակը հնչեցուց և ծառայ մը կանչեց որ երթայ Պ. կամ տիկին Վիլլեֆորը իւր հաւին սենեակը կանչէ :

— Գո՞հ ես, ըսաւ Վալանթին, այո . . . այնպէս չէ՞, այս բանը դու շահելը գիւրին չէր — :

Եւ ծաղկահաս աղջկիւր իւր հաւին ժպտեցաւ մանկան մը երեսին ժպտելու պէս :

Պ. Վիլլեֆոր Պարուային հետ ներս մտաւ :

— Ի՞նչ կ'ուզես, սարոն, հարցուց կաթուածահարին :

— Պարոն, ըսաւ Վալանթին, հաւս նօտար մը կը խնդրէ — :

Այս տարօրինակ և անահնունելի խնդրոյն վրայ Պ. Վիլլեֆոր կաթուածահարին երեսը նայեցաւ :

— Այո՛ —, ըսաւ այս վերջինը այնպիսի հաստատամտութեամբ մը, որ կը յայտնէր թէ Վալանթինի և իւր ծառային օգնութեամբը, որոնք իւր բաղձացածը հասկըցած էին, ինքը պատրաստ էր իւր կամքը կատարել տալ :

— Նօտար մը կը խնդրես, կրկնեց Վիլլեֆոր :

— Այո՛ :

— Ի՞նչ պիտի ընես — :

Նուարթիէ պատասխան չտուաւ :

— Բայց ի՞նչ պէտք ունիս նօտարի —, հարցուց Վիլլեֆոր : Վաթուածահարին նայուածքը անշարժ կեցաւ, որով ըսել կ'ուզէր. — Անշուշտ կ'ուզեմ որ կամքս կատարուի :

— Մեզ խաղ մը խաղալու համար, այնպէս չէ՞, ըսաւ Վիլլեֆոր :

— Բայց վերջապէս երբ պարոնը նօտար մը կը խնդրէ, ըսաւ Պարուա՝ հին ծառաներու սովորական հաստատամտութեամբը իւր տիրոջը հրամանը պնդելով, յայտնի կ'երևի որ

պէտք ունի անոր: Երթամ ես նստար մը կանչեմ — :

Պարուա Նուարթիէէն զատ ուրիշ տէր չէր ճանչնար, և չէր համբերեր որ փուճ տեղը անոր կամաց դէմ դրուի:

— Այո՛, նստար մը կ'ուզեմ, ըսաւ ծերը վստահութեամբ աչքը դոցելով, և որպէս թէ ըսած ըլլար. — Տեսնե՞ք, ով պիտի կարենայ ուզածս մերժել:

— Հիմա նստարը կու դայ, քանի որ անշուշտ նստար մը կ'ուզես, պարոն. բայց ստուգիւ ծաղրելի տեսարան մը պիտի ունենանք, ըստ որում ես ինքզինքս պիտի ջատագովեմ ու զքեզ ջատագովողն ալ ես պիտի ըլլամ:

— Հոգ չէ, ըսաւ Պարուա, ես կ'երթամ նստարը կանչելու — :

Եւ ծառան յաղթութեամբ դուրս ելաւ:





ՔԼԱՌԻ Բ.

ԿՑԸԿԸ



ՍՄՈՒՄՅԻ դուրս ելնելէն ետե՛ նուարթիէ  
Վալանթինի երեսը կը նայէր այն  
աղղու նայուածքով որ շատ բաներ  
կ'իմացընէր :

Օտղիահաս աղջիկը անոր միտքը հասկըցաւ և Վիլըֆօր  
խակ , ըստ որում իւր ճակատին վրայ տխրութիւն մը պատեց ,  
և յօնքը կնճռեց :

Աթոռ մը առաւ , կաթուածահարին սենեկին մէջ տեղաւոր  
ուեցաւ և սպասեց :

Նուարթիէ կատարեալ հանդարտութեամբ անոր ըրածը կը  
դիտէր , բայց իւր աչքին պոչովը Վալանթինի նշան ըրաւ որ  
հոգը չընէ և հոն սպասէ :

Երեք քառորդ ետքը ծառան նօտարին հետ ներս մտաւ .  
— Պարոն , ըսաւ Վիլըֆօր զիրար ողջունելէն ետե , զքեզ  
հոս կանչողը Պ . Նուարթիէ տը Վիլըֆօրն է . ընդհանուր կաթ-  
ուած մը իւր անդամոց և ձայնին դործածութիւնը կորսնցընել  
տուաւ և միայն մենք մեծ դժուարութեամբ հազիւ իւր մտաց  
մէկ մասը կը հասկընանք — :

Նուարթիէ աչօքը այնպիսի ծանրութեամբ և հրամայական  
կերպիւ Վալանթինը կանչեց որ օրիսրդը իսկոյն պատաս-  
խանեց .

— Պարոն , ես հաւիս ամեն ըսել ուզած խօսքերը կը հաս-  
կընամ :

— Ստոյդ է , յաւելցուց Պարուա , ստոյդ է , ամեն բան  
կը հասկընայ , ինչպէս որ ճամբան քեզ ըսի :

— Ներէ , պարոն , դուն ալ , օրիորդ , ըսաւ նոտարը Ալի-  
լըֆօրի և Աւալանթինի դառնալով . այս այնպիսի պարագայ մ'է  
որ տէրութեան պաշտօնատար մը առանց վտանգաւոր պատաս-  
խանատուութեան մը տակ մնալու չկրնար անխոհեմութեամբ  
այսպիսի գործ ածեսնել : Արձանադրութիւնը վաւերական ըլ-  
լալու էական բանը այն է որ նոտարը ազէկ համոզուած բը-  
լայ թէ արձանադրել տուողին կամքը հաւատարմութեամբ 'ի  
գործ կը դնէ : Արդ որովհետեւ ես ալ չեմ կրնար համը անձի  
մը հաճութիւնը կամ տհաճութիւնը ստուգել , և համրու-  
թեանը պատճառաւ իւր բաղձանայ կամ դժկամութեանց  
առարկայն ինձի յայտնապէս հաստատուած չըլլալուն իմ ը-  
նելու գործս բոլորովին անօգուտ է և օրինաւոր կերպով կա-  
տարուած պիտի չըլլայ — :

Նոտարը քայլ մը առաւ որ մեկնի :

Թաղաւորի գործակալին շրթանց վրայ յաղթութեան հաղիւ-  
նշմարելի ժպիտ մը նկարուեցաւ :

Իսկ Նուարթիէ այնպիսի տրամութեամբ մը Աւալանթինի  
նայեցաւ որ ծաղկահաս աղջիկը նոտարին ճամբան կտրեց :

— Պարոն , ըսաւ անոր , հաւիս հետ խօսեցած լեզուս այն-  
պիսի եղանակ մ'է , որ դիւրաւ կը սորվուի , և կրնամ քանի  
մը վայրկեանի մէջ կարող ընել զքեզ որ հասկըցած իս պէս  
դուն ալ հասկընաս : Ըսէ , պարոն , խիղճդ կատարեալ հան-  
գարտ բլալու համար ինչ կը խնդրես :

— Մեր արձանադրութիւնը վաւերական ըլլալու համար  
պէտք եղածը կը խնդրեմ , օրիորդ , պատասխանեց նոտարը :  
այսինքն՝ իւր հաճութեան կամ տհաճութեան ապահովու-  
թիւնը : Ասակ ընելու ատեն հոգ չէ եթէ մարդուս մարմինը  
հիւանդ է , բայց խելքը ողջ ըլլալ պէտք է :

— Աւրեմն , պարոն , երկու նշաններով այդ ապահովու-  
թիւնը պիտի ընդունիս , և պիտի տեսնես որ հաւս մինչև այս  
ժամն իւր իմացականութեան ամբողջութիւնը կը վայելէ : Պ .

Նուարթիէ իւր ձայնէն և մարմնոյ շարժումներէն զրկուած ըլլալով այն ըսել ուղած ատենը աչքը կը դոցէ և ոչ ըսելու համար զանոնք քանի մը անդամ կը քթթէ : Այսչափ զխանարդ բաւական է Պ. Նուարթիէի հետ խօսելու համար . հիմա կրնաս փորձել — :

Երբունոյն Աւլանթիինի ուղղած նայուածքը խանդակաթ սիրոյ և երախտաղ խառթեան զղայմամբ լեցուն էր , որ նօսարն անդամ հասկըցեր էր :

— Աղջիկ թոտանդ ըսածները լսեցիր և հասկըցար , սարուն , հարցուց նօսարը — :

Նուարթիէ մեղմով աչքը դոցեց և վայելեան մը ետքը բացաւ զանոնք :

— Եւ անոր ըսածը կը հաստատենս , այսինքն՝ ճիշդ անօր ըսած նշաններով քու միտքդ կը հասկըցընենս :

— Այո՛ , պատասխանեց վերստին ծերը :

— Գո՛ւն զիս կանչեցիր :

— Այո՛ :

— Կտակաղիրդ շինելու համար :

— Այո՛ :

— Եւ չէս ուղեր որ կտակաղիրդ չըրած մեկնիմ — :

Կաթուածահարը աշխուժիւ և շատ անդամ աչքերը քթթեց :

— Հասկըցար հիմա , սարուն , ըսաւ աղջիկը , և խիղճդ հանդարտ է — :

Բայց նօսարը անոր պատասխան տալէն առաջ՝ Ախլըֆօր մէկ կողմ քաշեց զան :

— Պարոն , ըսաւ , կը կարծենս որ մէկը Պ. Նուարթիէ տը Ախլըֆօրի ընդունածին սէս ֆիզիքական սոսկալի հարուած մը ընդունի և իւր մտաւորական վիճակը չխանդարուի :

— Զիս անհանդիտ ընտղք այդ չէ , սարուն , պատասխանեց նօսարը , այլ կը մտածեմ թէ հարցումները ընելէ առաջ ինչպէս կարող պիտի ըլլանք անոր միտքը դուշակելու :

— Ար տեսնես որ անկարելի է — , ըսաւ Ախլըֆօր :

Աւլանթիին և ծերը անոնց խօսակցութիւնը կը լսէին :

Նուարթիէ իւր նայուածքը այնպէս անշարժ և հաստատ

Վալանթինի վրայ յարեց, որով կը հրաւիրէր զան որ պատասխան տայ :

— Պարոն, ըսաւ աղջկիկը, հոգ մի՛ ըներ այդ մասին. հաւիս միտքը հասկընալը որչափ և դժուար ըլլայ կամ որչափ և դժուար երևի, ես սիտի յայտնեմ քեզ զանոնք, որպէս զի այս մասին ունեցած տարակոյսդ փարատեմ : Վեց տարի է որ Պ. Նուարթիէի քոֆէ եմ, թող ըսէ թէ վեց տարիէ 'ի վեր իւր բաղձանաց միայն մէկը ինձ հասկըցընել չկրնալուն համար իւր սրտին մէջ մնացած է :

— Այ, պատասխանեց ձերը :

— Փորձենք ուրեմն, ըսաւ նօտարը. պարոն, օրիորդը իբր թարղման կ'ընդունիս — :

Կաթուածահարը նշան ըրաւ թէ այո՛ :

— Նաւ. ըսէ ուրեմն, պարոն, ինչ կը խնդրես ինձմէ և ինչ արձանագրութիւն կ'ուզես որ ընեմ — :

Վալանթին այբուբէնին գիրերը մի առ մի մինչև ի արտասանեց :

Նուարթիէի ճարտարախօս աչքը այս դիրին կեցուց զան :

— Պարոնին խնդրածը ի գիրն է, ըսաւ նօտարը. յայտնի կ'երևի :

— Կեցիր, ըսաւ Վալանթին — :

Ետքը դնաց բառքիրքը առաւ : և ուշադիր նօտարին առջեւը անոր թուղթերը դարձուց :

Վալանթինի մատը բառերուն վրայ ստըտած ժամանակ՝ Նուարթիէի աչքը կտակ բառին կեցուց զան :

— Կտակ, ըսաւ նօտարը, գործը յայտնի կ'երևի, պարոնը իւր կտակը ընել կ'ուզէ :

— Այո՛, ըսաւ Նուարթիէ քանի մը անգամ կրկնելով :

— Ստուգիւ զարմանալի բան է այս, պարոն, ըսաւ նօտարը՝ ասպէս Վիլլեֆօրին դառնալով, այնպէս չէ՛ :

— Այո՛, իրօք զարմանալի է, պատասխանեց Վիլլեֆօր, և կտակագիրը աւելի զարմանալի սիտի ըլլայ. վասն զի վերջապէս չեմ կարծեր թէ առանց աղջկանս հանճարեղ աղդե-

յու թեանը յօղուածները բառ առ բառ թղթին վրայ ինքնին  
դան շարուելու : Եւ Աւալանթին այս կտակին մէջ գուցէ շահ  
մը ունենալուն՝ Պ. Նուարթիէ տը Ալիլըֆօրի անյայտ կա-  
մայը արժանաւոր թարգմանը շիրնար ըլլալ :

— Աչ, ոչ, ոչ, ըսաւ կաթուածահարը :

— Ի՛նչպէս, ըսաւ Ալիլըֆօր, Աւալանթին կտակիդ մէջ  
շահ մը չունի :

— Աչ, ըսաւ Նուարթիէ :

— Պարոն, ըսաւ նօտարը, որ իւր տեսած փորձէն դո՛՛հ  
ըլլալով՝ կը յուսար այս զարմանալի դէպքը ընկերութեանց  
մէջ մանրամասնարար պատմել, պարոն, տակէ առաջ անկա-  
րելի կարծածս հիմա խիստ դիւրին կ'երևի ինձ, և այս կը-  
տակը պարզապէս խորհրդաւոր կտակ մը պիտի ըլլայ, քան  
դի օրէնքը պիտի քննէ և պիտի վաւերացընէ զայն, միայն թէ  
եօթը վկաներու առջև կարգացուի, անոնց առջևը կտակա-  
բարէն հաստատուի, և նօտարի մը ձեռօք կատարուի միշտ ա-  
նոնց առջին : Սովորական կտակէն հազիւ քիչ մը աւելի ժա-  
մանակ պէտք է զան կատարելու համար, ըստ որում կտակաց  
օրինակը միշտ մի և նոյնը կ'ըլլայ, բայց մանրամասն տեղե-  
կութիւնները կտակարարին գործոց վիճակէն և քեզմէ պիտի  
ընդունինք, քանզի դուն անոր գործոց խնամածու ըլլալով՝  
կը ճանչնաս զանոնք : Եւ որպէս զի այս կտակագիրը բոլո-  
րովին հաստատ ըլլայ, պէտք է որ կատարեալ վաւերականու-  
թիւն մը տանք, պաշտօնակիցներէս մէկը կրնայ օղնել ինձ,  
և սովորութեանց հակառակ՝ կտակը գրուած ժամանակը ներկայ  
դանուելու : Պարոն, դո՛՛հ ես, շարունակեց նօտարը ծերին  
դառնալով :

— Այո՛, պատասխանեց Նուարթիէ իւր միտքը հասկըցուե-  
լուն ուրախ երևելով :

— Ի՛նչ պիտի ընէ արդեօք, ըսաւ ինքնիրեն Ալիլըֆօր,  
որուն բարձր պաշտօնը կ'ըստիպէր զինքը որ զյոյշ կենայ,  
բայց չէր կրնար դուշակել թէ իւր հայրը ի՛նչ նպատակ ունի :

Ռւստի առաջին նօտարին նշանակած երկրորդ նօտարը կան-

չելու համար մէկը զրկեց . բայց Պարուա ամեն բան լսելով  
և իւր տիրոջ բաղձանքը դուշակելով, արդէն մեկներ էր :

Այն ատեն թաղաւորի դորձակալը իւր կնոջը խնայքներ  
տուաւ որ վեր ելնէ :

Քառորդէ մը ամեն մարդ կաթուածահարին օնեակը գու  
մարուեցաւ . երկրորդ նօտարն իսկ եկեր էր :

Քանի մը խօսքով տէրութեան պաշտօնատարները իրարու  
համաձայնեցան :

Անոճ և անորոշ դրուած կտակի մը օրինակը նուարթիէի  
կարդացին . ետքը անոր խելքը դուրսը ըլլալը քննել սկը  
սելու համար՝ առաջին նօտարը անոր կողմը դառնալով ըսաւ .

— Երբ մէկը իւր կտակը կ'ընէ, պարոն, 'ի շնորհս մէկուն  
և 'ի մեաս մէկ ուրիշին կ'ընէ :

— Այո՛, ըսաւ նուարթիէ :

— Հարստութիւնդ սրչափ ըլլալը զիտնս :

— Այո՛ :

— Ուրեմն հիմա քանի մը դումարներ պիտի ըսեմ, որոնք  
հետզհետէ պիտի աւելցընեմ, քու հարստութիւնդ նշանակող  
դումարին հասած ժամանակս կեցուր զիս :

— Այո՛ — :

Այս հարցուփորձը դրեթէ հանդիսաւոր կերպով կը կատա  
րուէր . մարմնոյ դէմ խնայականութեան մըցումը դուցէ երբէք  
այնչափ յայտնի երեցած չէր, և եթէ այս տեսարանը վսեմ  
ալ չկարենանք ըսել, դոնէ հետաքրքրական էր :

Նուարթիէի բոլորտիքը շրջան մը կազմած էին :

Երկրորդ նօտարը սեղանի մը առջև նստած դրելու պատ  
րաստ կը դտնուէր . առաջին նօտարը անոր առջևը ոտքի վրայ  
կանդնած հարցուփորձ կ'ընէր :

— Հարստութիւնդ երեք հարիւր հազար Ֆրանքէն աւել  
է, այնպէս չէ՞ —, հարցուց նօտարը :

Նուարթիէ նշան ըրաւ թէ այո՛ :

— Չորս հարիւր հազար Ֆրանք ունիս —, հարցուց նօտարը  
Նուարթիէ անշարժ կեցաւ :

— Հինգ հարիւր հազար — :

Նուարթիէ նշան բրաւ թէ այո՛ :

— Աւելի հարիւր հազար , եօթը հարիւր հազար , ութը հարիւր հազար , ինը հարիւր հազար — :

Նուարթիէ նշան բրաւ թէ այո՛ :

— Ինը հարիւր հազար ֆրանք ունիս :

— Այո՛ :

— Անշարժ կալուածք ե՛ն — , հարցուց նօտարը :

Նուարթիէ նշան բրաւ թէ ոչ :

— Մուրհակներ ե՛ն — , հարցուց նօտարը :

Նուարթիէ նշան բրաւ թէ այո՛ :

— Այդ մուրհակները քո՛ւ ձեռքդ ե՛ն — :

Նուարթիէ նայուածք մը ուղղեց Պարուային , և ծառան սենեկէն դուրս ելաւ , ու վայրկեան մը ետքը արկղիկով մը վերագարձաւ :

— Կ'ուզե՛ս որ այս արկղիկը բանանք — , հարցուց նօտարը :

Նուարթիէ նշան բրաւ թէ այո՛ :

Արկղիկը բացին և ինը հարիւր հազար ֆրանքի մուրհակներ դտան :

Առաջին նօտարը ամեն մուրհակները մի առ մի իւր պաշտօնակցին առաւ . նուարթիէի յայտնած ին համեմատ հաշիւը ճիշդ էր :

— Շատ աղէկ , ըսաւ . յայտնի կը տեսնուի որ խնայողութիւնը իւր ամեն զօրութեանը և ընդարձակութեանը մէջն է — :

Ետքը կաթուածահարին դառնալով ,

— Աւրեմն , ըսաւ , ինը հարիւր հազար ֆրանք դրամադ լուխ ունիս , որոնք շահու դրուած ըլլալով՝ պէտք ե՛ն դրեթէ քառասուն հազար ֆրանք եկամուտ բերեն :

— Այո՛ , ըսաւ նուարթիէ :

— Այս հարստութիւնը որո՞ւ կ'ուզես թողուլ :

— Ա՛հ , ըսաւ արկին Ալիքֆօր , տարակուսելի բան չկայ . Պ . նուարթիէ իւր միակ աղջիկ թողը օրիորդ Աալանթին Ալիքֆօրը կը սիրէ , վեց տարեէ 'ի վեր օրիորդը կը խնամէ :

զան և իւր հանասպաղօրեայ խնամքովը հաւին սէրը և կրնամ ըսել գրեթէ երախտադ իտութիւնը գրաւելու արժանի եղած է . ուստի իրաւացի է որ իւր անձնուիրութեան փոխարէնը ընդունի — :

Նուարթիէի աչքը կարծես փայլակ մը արձակեց ցուցընելու համար որ տիկին Վիլլեֆօրի այս կեղծ զգացումներէն խարուած չէր :

— Ուրեմն օրիորդ Վալանթին տը Վիլլեֆօրին պիտի թողուս այս ինը հարիւր հազար ֆրանքը — , հարցուց նօտարը , որ այս սլայմանը արձանադրել տալու պատրաստ էր , սակայն կ'ըսպասէր որ Նուարթիէի հաւանութիւնը առնու , և կ'ողջէր այս հաւանութիւնը այն զարմանալի տեսարանին ամեն վկաներուն հաստատել տալ :

Վալանթին քայլ մը ետ քաշուեր էր և զլուխը խոնարհեցուցած կու լար :

Ծերուհին վայրկեան մը խորին խանդաղատութեան նշանով անոր նայեցաւ . ետքը նօտարին դառնալով , խիստ յայտնի կերպով աչքը քթթեց :

— Չէ կ'ըսես , ըսաւ նօտարը , միթէ օրիորդ Վալանթին տը Վիլլեֆօրը քու ընդհանուր ժառանգդ չէ — :

Նուարթիէ նշան ըրաւ թէ ոչ :

— Չես սխալիր , ըսաւ նօտարը զարմանքով . ո՛չ է ըսածդ :

— Ոչ , կրկնեց Նուարթիէ , ոչ — :

Վալանթին գլուխը վերցուց . ողորմելին ասլշեալ մնացեր էր չէ թէ ժառանգութենէ զրկուելուն , այլ այնպիսի կտակագիրէ մը յառաջ եկած զգացումը գրգռած ըլլալուն համար :

Բայց Նուարթիէ այնչափ խանդաղատանօք անոր նայեցաւ , որ Վալանթին պատասխանեց .

— Ո՛հ , բարի հայր , յայտնի կը տեսնեմ . միայն ժառանգութենէդ կը զրկես զիս , այլ սիրտդ ինձ կը թողուս :

— Ո՛հ , այո՛ , անշուշտ , ըսին կաթուածահարին աչքերը զոյցուելով այնպիսի նշաններով , որոցմէ Վալանթին չէր կրնար խաբուիլ :



— Ընտրհակալ եմ —, մրմնջեց ծաղկահաս աղջիկը :  
Սակայն այս մերժումը տիկին Վիլլեֆորի սրտին մէջ անա-  
կնկալ յոյս մը սրամաճստեր էր :

Ուստի ձերին մտաեցաւ :

— Ուրեմն հետուար ար Վիլլեֆոր թողնդ կը թողուս հարս-  
տութիւնդ, սիրելի Պ. հուարթիէ —, հարցուց մայրը :

Աչաց դոցուիլ բացուիլը սոսկալի եղաւ, դրեթէ ատելու-  
թիւն մը կը յայտնէր :

— Ա՛չ, հարցուց հոտարը, ուրեմն Պ. Վիլլեֆոր քու որդւոյդ  
սխալ թողուս, որ հոս ներկայ է :

— Ա՛չ —, սրտասխանեց ձերունին :

Երկու հոտարները աղչեալ իրարու երես նայեցան :

Վիլլեֆոր և իւր կինը զղացին որ կարմբեցան՝ մէկը ամբը-  
նալէն, միւսը բարկութենէն :

— Բայց ի՞նչ ըսինք քեզի, հայր, ըսաւ Վալանթին, ու-  
րեմն ալ չես սիրեր զմեզ — :

Ծերունին իւր նայուածքը արագութեամբ իւր որդւոյն և  
հարսին վրայ շրջեց ու խորին խանդաղատանօք Վալանթինի  
վրայ յարեց :

— Ուրեմն եթէ կը սիրես զիս, սիրելի հայր, ըսաւ ծաղ-  
կահաս աղջիկը, քու սէրդ զործով միացուր : Իմ սիրտս կը  
ճանչնաս, գիտես որ ես երբէք քու հարստութեանդ չմտա-  
ծեցի, մանաւանդ կ'ըսեն թէ մօրս կողմանէ հարուստ եմ ես  
և չափէն աւելի, բացառել ուրեմն միտքդ — :

հուարթիէ իւր սիրալիր նայուածքը Վալանթինի ձեռքին  
վրայ յարեց :

— Ձեռքս, ըսաւ :

— Այո՛, ըսաւ հուարթիէ :

— Վալանթինի ձեռքը, կրկնեցին ամեն հանդիսականները՝

— Ա՛հ, պարոններ, կը տեսնէք որ ամեն բան անօդուտ  
է, և հայրս խենթ մ'է, ըսաւ Վիլլեֆոր :

— Ա՛հ, ըսաւ յանկարծ Վալանթին, հասկըցայ, ամուս-  
նութիւնս ըսել կ'ուզես, այնպէս չէ՞, բարի հայր :

— Այո՛, այո՛, այո՛, կրկնեց երեք անգամ կաթուածա,

հարը , և ամեն անդամ իւր արտեանունքը բանալուն կարծես  
փայլակ մը արձակելով :

— Ամուսնութեանս համար բարկացած ես մեղ , այնպէս չէ :

— Այո :

— Բայց անտանելի է այս , ըսաւ Աիլըֆօր :

— Ներէ , պարոն , ըսաւ նօտարը , ընդ հակառակն ամեն  
բան օրինաւոր է , և ինձ այնպէս կ'երևի թէ զործերը կա-  
տարեալ իրարու հետ կը շղթայուին :

— Զես ուզեր որ Ֆրանզ տ' Էբինէին հետ ամուսնանամ :

— Ոչ , չեմ ուզեր , յայտնեց ծերին աչքը :

— Եւ կամացդ հակառակ ամուսնանալուն համար թողդ  
ժառանգութեանէ կը զրկես , ըսաւ նօտարը :

— Այո , պատասխանեց նուարթիէ :

— Ուրեմն առանց այս ամուսնութեան քու ժառանգդ պի-  
տի ըլլայ :

— Այո — :

Այն ատեն ծերին բոլորտիքը խորին լռութիւն մը տիրեց :

Երկու նօտարները իրարու խորհուրդ կը հարցընէին :

Վալանթին ձեռքերը միացուցած երախտադէտ ժպտով իւր  
հաւին կը նայէր :

Աիլըֆօր իւր նուրբ շուրթերը կը խածնէր :

Տիկին Աիլըֆօր չէր կրնար իւր դիմաց վրայ ահամայ տա-  
րածուած ուրախութեան զգացումը զսպել :

— Բայց , ըսաւ վերջապէս Աիլըֆօր առաջինը լռութիւնը  
խզելով , ինձ այնպէս կ'երևի թէ այն ամուսնութեան սլա-  
շաճութիւնները քննելը միայն ինձ կ'իյնայ : Աղջկանս տէրը  
միայն ես եմ . կ'ուզեմ որ Պ . Ֆրանզ տ' Էբինէին հետ ամուս-  
նանայ , և պիտի ամուսնանայ — :

Վալանթին լալով թեւթոռի մը վրայ ինկաւ :

— Պարոն , ըսաւ նօտարը ծերին դառնալով , եթէ օրինորդ  
Վալանթին տը Աիլըֆօր Պ . Ֆրանզին հետ ամուսնանալու  
ըլլայ , հարստութիւնդ որո՞ւ թողելու միտք ունիս — :


Նուարթիէ անշարժ կեցաւ :

— Սակայն անշուշտ մէկու պիտի թողուս :

- Այո՛, ըսաւ 'նուարթիէ՛ :
- Ընտանիքէ՛դ մէկուն :
- Ոչ :
- Աղքատաց ուրեմն :
- Այո՛ :
- Բայց , ըսաւ նոտարը , դիտե՛ս որ օրէնքը չնկեր որ զաւակդ ժառանգութեանէ բոլորովին զբէս :
- Այո՛ :
- Աւրեմն օրէնքին հրամայածին չափը ուղած մարդիդ պիտի թողու — :
- 'նուարթիէ անշարժ կեցաւ :
- Բոլորը ուղածիդ պէս տնօրինել կ'ուզես :
- Այո՛ :
- Բայց մահուանէ՛դ ետե կտակդ կը ջրեն :
- Ոչ :
- Հայրս կը ճանչնայ դիս , պարոն , ըսաւ Պ . ար Ա . իլլեֆօր , դիտէ որ իւր կամքը ինձի նուիրական պիտի ըլլայ , և կը հասկընայ որ իմ կայութեանս մէջ չեմ կրնար աղքատաց դէմ դատ բանալ — :
- 'նուարթիէի աչքը յաղթութիւն յայանեց :
- Աւերջապէս ինչ պիտի ընես , պարոն , հարցուց նոտարը Ա . իլլեֆօրին :
- Աչինջ , պարոն , հայրս իւր մտացը մէջ որոշում մը ըրած է , և ես դիտեմ որ իւր որոշումը չփոխեր : Աւտի իւր որոշմանը պիտի հնազանդիմ : Այս ինը հարիւր հազար ֆրանքը աղքատները պիտի հարստացընեն , բայց ես ձերի մը մտային հաճոյիցը չեմ թողուր , ու իմ խղճիս համեմատ 'ի դորժ պիտի դնեմ — :
- Եւ Ա . իլլեֆօր իւր կնոջը հետ դուրս ելաւ աղաա թողլով իւր հայրը որ ուղածին պէս կտակը ընէ :
- 'նոյն օր կտակը շինուեցաւ :
- Ա . կաներ կանչուեցան , անոնց առջին ձերուներն իւր կամքը հաստատեց , և վերջապէս կտակը կատարուելով իրենց ընտանեաց նոտարին Պ . Տէշանին յանձնուեցաւ :

### ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

| ԳԼՈՒԹ |                                      | Երբ- |
|-------|--------------------------------------|------|
| Ա.    | ՆԵՒԼՃԱԸԸ                             | 4    |
| Բ.    | ՆԵՐԿԱՅԵՑՈՒՄԸ                         | 48   |
| Գ.    | ՊԱՐՈՆ ՊԷՐԹՈՒՉԻՕ                      | 37   |
| Գ.    | ՕԹԷՕՅԼԻ ՑՈՒՆԸ                        | 44   |
| Ե.    | ՎՐԷՃԻՆԴԵՐՈՒԹԻՒՆԸ                     | 53   |
| Զ.    | ԱՐԵՆ ԱՆՉՐԵՒ                          | 84   |
| Է.    | ԱՆՍԵՀՄԱՆ ՎԱՐԿԸ                       | 101  |
| Ը.    | ԿԱՌԱՉԻԳ ՃԱՐՑՈՒԿ ՉԻԵՐԸ                | 118  |
| Թ.    | ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ                    | 134  |
| Ժ.    | ՀԱՅՏԷ                                | 149  |
| ԺԱ.   | ԽՈՐԷԼԻ ԸՆՏԱՆԻՔԸ                      | 155  |
| ԺԲ.   | ԲԻՐԱՄ ԵՒ ԹԻՉՊԷ                       | 169  |
| ԺԳ.   | ԽՈՒՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ                       | 183  |
| ԺԴ.   | ԲՕՊԷՐ ՍԵՏԱՆԱՆ                        | 203  |
| ԺԵ.   | ԱՐՃԷԹՂԹՈՑ ԳՆՈՑՆ ԲԱՐՉՐԱՆԱԼՆ ՈՒ ԻՋՆԱԼԸ | 224  |
| ԺԶ.   | ԳԱՎԱԼԳԱՆԹԻ ԳՆԴԱՊԵՑԸ                  | 239  |
| ԺԷ.   | ԱՆՑՐԷԱ ԳԱՎԱԼԳԱՆԹԻ                    | 254  |
| ԺԸ.   | ԱՌՈՒՈՅՑԻ ՊԱՐՑԷՉԸ                     | 270  |
| ԺԹ.   | Պ. ՆՈՒԱՐԹԻԷ ՑԸ ՎԻԼԸՓՕՐ               | 285  |
| Ի.    | ԿՑԱԿԸ                                | 297  |










AII  
59545-59546

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220059545

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220059546